



# 21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

## 6 (70)

ԵՐԵՎԱՆ

2016

# 21-ՐԴ ԴԱՐ

## տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

6 (70), 2016

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լրատվամատչելիության կենտրոնի վարիչ, փ.գ.թ.  
(Մոսկվա, ՌԴ)

### Ալեքսանդր Կորնիլով

Նիժնի Նովգորոդի Ն.Ք. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆեսոր  
(Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

### Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆեսոր

### Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

### Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ.

### Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական  
Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

### Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

### Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.թ.

### Կարեն Վ. Կարապետյան

ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

### Հրանուշ Հակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.թ.

### Միհրան Դաբաղ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

### Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

### Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

### Սեյրան Օհանյան

Գեներալ-գնդապետ

### Մերգեյ Գրիկյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

### Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար,

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ,  
պ.գ.թ., դոցենտ

### Վարդան Աթոյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

### Վարդան Հարությունյան

ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

# 21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 6 (70), 2016թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն
Գլխավոր խմբագիր <b>Գագիկ Հարությունյան</b>	<i>Զավեն Եկավյան</i> Ահազանգ հայերեն լեզվի մասին ..... 4
Գլխավոր խմբագրի տեղակալներ <b>Վահագն Ազյան</b> <b>Վարդան Աթոյան</b>	<i>Հրանտ Տեր-Աբրահամյան</i> Ազգային անկախությունը. նպատակ և միջոց ..... 10
Պատասխանատու խմբագիր <b>Խոնարհիկ</b> <b>Քարաուղլանյան</b>	<i>Էդգար Հովհաննիսյան</i> Հայաստան-սփյուռք հարաբերությունների զարգացումը 2008-2016 թվականներին ..... 25
Պատասխանատու քարտուղար <b>Լուսինե Բաղդասյան</b>	<i>Մհեր Սահակյան</i> Չինաստանը որպես 21-րդ դարի պատասխանատու ուժ ..... 42
<b>Արեստակես Սիմավորյան</b> <b>Դիանա Գալստյան</b> <b>Կարեն Վերանյան</b> <b>Վահրամ Հովյան</b>	<i>Աստղիկ Գևորգյան</i> Ղարաբաղյան հակամարտությունը համաշխարհային քաղաքականության համատեքստում. մեծ խաղի փոքր մասը .... 49
	<i>Աշոտ Թավադյան</i> Գիտության ֆինանսավորման նվազագույն շեմը և գիտության արդյունքների նկատմամբ պահանջարկի ձևավորման ու ներդրման հիմնախնդիրները ..... 63
	<i>Վարդան Աթոյան, Ռուզաննա Թադևոսյան</i> Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում ..... 70
	<i>Նունուֆար Ստեփանյան</i> Քաղաքական որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոնները ..... 85
	<i>Գևորգ Մկրտչյան</i> «Հոգևոր անվտանգություն» հասկացության ժամանակակից ուսումնասիրությունները ՀՀ-ում ..... 99
	<i>Լիլիթ Շաքարյան</i> «Մեդիատիկացիայի» սահմանման և կիրառման առանձնահատկություններն արդի տեղեկատվական հասարակության վերլուծության համատեքստում ..... 110
	<i>Մասուն Մարիբեկյան</i> Պետության աշխարհաքաղաքական անվտանգության մասին .. 128
	<i>Հասմիկ Խուրշուդյան</i> Մրցունակություն հասկացությունը և նրա տնտեսագիտական բովանդակությունը ..... 140
	<i>Հուշագիր հեղինակին</i> ..... 151

## ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻ ԱՀԱԶԱՆԳԸ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Արևմտահայերենը արևելահայերենի դեմ: Այլևս բավական է: Հայախոսության մտահոգիչ նահանջը մատնանշելով՝ հայերեն լեզվի մասնագետը կոչ է ուղղում հայերեն լեզվի բոլոր ուսուցիչներին՝ վերջ դնել երկու կողմերը բաժանող վեճերին և մնայուն համագործակցություն ձեռնարկել Հայաստանի հետ:

*- Հայաստանում և սփյուռքում վերջին կես դարի քաղաքական և աշխարհաքաղաքական փոփոխություններն իրենց ժխտական ազդեցությունն ունեցան հայախոսության վրա ողջ աշխարհում, մանավանդ խախտեցին հավասարակշռությունն արևմտահայերենի և արևելահայերենի միջև: Այս փոփոխությունների հետևանքներն ի՞նչ կացություն պարզեցին:*

- Վերջին 50 տարիներին հայերի ժողովրդագրական ուղղությունը ձգվում է Արևելքից դեպի Եվրոպա և Միացյալ Նահանգներ: Մեծ թվով հայրենակիցներ լքեցին իրենց երկրորդ հայրենիքները, ինչպես Սև ծովը եզերող երկրները, Հունաստանը, Կիպրոսը և Միջին Արևելքը, ներառյալ Իրանը: Մեծ թվով հայեր այս երկրներից գաղթեցին Արևմուտք՝ այդ երկրներում հայերենի ուսուցումն ապահովող հայկական դպրոցների փակման պատճառ դառնալով: Այս կացությանն ավելացավ հայերի արտագաղթը Հայաստանից՝ Խորհրդային Միության փլուզումից հետո և անկախության տարիներին: 1970-ական թվականներից մինչև 1990 և դրանից հետո մինչ օրս մեծ թվով հայեր, որոնք խոսում էին արևելահայերեն, արտագաղթեցին, միշտ նույն ուղղությամբ՝ Եվրոպա և Նոր աշխարհ: 1970-ական թթ. արտագաղթին զուգահեռ մի շարժում սկսվեց՝ գլխավորաբար դեպի Միացյալ Նահանգներ և Կանադա՝ 1975-ին ծայր առած Լիբանանի քաղաքացիական պատերազմի և 1979-ին տեղի ունեցած Իրանի հեղափոխության հետևանքով: Եվ ի վերջո, մեր ժամանակներում, արդեն 5 տարի տևող պատերազմի պատճառով հայերը գաղթում են Սիրիայից, ինչպես նաև Հորդանանից, միշտ նույն ուղղությամբ՝ դպրոցների փակվելու և արևմտահայերենի ուսուցման դադարեցման պատճառ դառնալով:

- *Թվերով կներկայացնե՞ք:*

- 1960-ից առաջ Սիրիայում մենք ունեինք 55 կրթական կենտրոն (մանկապարտեզներ, նախակրթական և երկրորդական վարժարաններ և այլն), և այս բոլորը ողբալիորեն կրճատվեցին: Այսօր միայն երկու դպրոց է գործում Հալեպում, սակավաթիվ աշակերտներով: Մենք կորցրինք նաև մանկավարժական ուսումնական կենտրոններ, որ մենք էինք հիմնել: Ես Հալեպի Հայագիտական ուսումնական հիմնարկի հիմնադիրներից մեկն էի՝ Առաջնորդարանի և Համազգայինի հովանավորությամբ: Ուրիշ որևէ այլ կենտրոն չկարողացավ փոխարինել հայագիտական այս դասընթացներին Հալեպում և Բեյրութում: Մենք մեծ խնդիրների առջև ենք կանգնելու մոտ ապագայում, որովհետև այլևս չենք ունենա ուսուցիչներ, որոնք կկարողանան արևմտահայերեն լեզուն փոխանցել մեր նոր սերունդներին: Ընդհանուր առմամբ, մենք արդեն կորցրել ենք շուրջ 40 մասնագետ:

Մյուս կողմից, մենք ունենք նկատելի թվով երիտասարդներ, որոնց ծնողները, Հայաստան ներգաղթելով և մոտ 40 տարի Հայաստանում ապրելով, խոսում են արևելահայերեն, այն դեպքում, երբ նրանց սկզբնական լեզուն արևմտահայերենն էր:

Մենք պարտավոր ենք լուծում գտնել այս խնդիրներին: Չենք կարող պարտադրել արևմտահայերենը մեկին, ով խոսում է արևելահայերեն, ինչպես և հակառակը: Պետք է մտածել նոր մոտեցումների մասին և վերանայել հայերեն լեզվի դասավանդման հնարավորությունները, որովհետև ինձ համար հայերենը մեկ լեզու է երկու ճյուղերով: Մեկը՝ արևմտահայերենը, խոսվել է նախկին Օսմանյան կայսրությունում՝ որպես ազգային լեզու, և տակավին գործածվում է աշխարհի չորս ծագերում սփռված սփյուռքահայերի կողմից, և մյուսը՝ արևելահայերենը, պետական լեզու է շուրջ 100 տարի:

- *Ո՞րն է երկու ճյուղերի տարբերությունը:*

- Տարբերությունների մեծ մասը վերաբերում է ուղղագրությանը, հնչյունաբանությանը, խոնարհումներին, հոլովումներին և բառապաշարին: Դժբախտաբար, 1922-ին Խորհրդային Հայաստանը ստալինյան հրամանագրով որդեգրեց «բարեփոխումներ», որոնք տակնուվրա արեցին հայերեն լեզվի մեսրոպյան ուղղագրությունը: Բայց նա, ով խոսում է արևմտահայերեն, ինքնաբերաբար, հասկանում է նաև արևելահայերենը, և հակառակը:

Անշուշտ, Սփյուռքը գլխավորաբար կազմված է արևմտահայերեն խոսող հայերից: Հետևաբար, պետք է հնարավորինս պահպանել արևմտահայերենը որպես գրական, հաղորդակցական և մտածողության լեզու: Բայց պետք է մտածել նաև ապագայի մասին: Պետք է նկատի ունենալ Սփյուռքի այն համայնքները,

որոնք կազմված են արևելահայերից, որոնց մեջ երիտասարդը պետք է կարողանա սովորել արևելահայերենը: Շատ հաճախ աշակերտների ծնողները չեն տիրապետում հայերենին՝ որպես մայրենի լեզվի: Նրանց համար հայերեն սովորելը օտար լեզու սովորելու պես մի բան է: Սփյուռքում ապրող արևելահայ երիտասարդները նաև պետք է հնարավորություն ունենան հետևելու արևելահայերեն լեզվի դասընթացներին, որպեսզի կարողանան գոնե կարգալ Սփյուռքում տպված թերթերը, որովհետև դրանք արևմտահայերեն են և դասական ուղղագրությամբ:

*- Հայաստանում կրթություն ստացած երիտասարդները չեն կարող և՛ արևմտահայ ուսուցիչների բացը լրացնել:*

- Չենք կարող ժխտական կեցվածք որդեգրել այն անձանց հանդեպ, որոնք Երևանի պետական համալսարանի կամ Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ճյուղի շրջանավարտներ են, որովհետև նրանք իրենց ուսման ընթացքում սովորել են արևմտահայերեն: Մինչդեռ մի շարք պարագաներում այդ երիտասարդները, որոնք պատրաստ են աշխատելու Սփյուռքի դպրոցներում, մանավանդ Ֆրանսիայում, մերժվում են ուսուցչի պաշտոն ստանալ այն պատճառով, որ իրենց ուսումը ստացել են արևելահայերենով: Միայն պատրվակ, որովհետև Երևանում ուսանած բոլոր այդ երիտասարդները տիրապետում են նաև արևմտահայերենին: Չպետք է մոռանալ, որ վերջին 50 տարիներին Հայաստանի Հանրապետությունը (խորհրդային և ապա անկախ) ավելի քան 1000 սփյուռքահայ ուսանողի համալսարանական կրթաթոշակ է տրամադրել, որոնք իրենց ուսումն ստացել են արևելահայերենով և եղել են արևմտահայերենի շատ լավ ուսուցիչներ: Լավագույն քերականագետները, մասնագետները, դասախոսներն ու ուսուցիչները, որ ունենք այսօր, սփյուռքահայ երիտասարդներ են, որոնք պատրաստվել են Հայաստանի ուսումնական հաստատություններում, և որոնք դասավանդում են արևմտահայերեն: Այս երիտասարդներին ուսուցչի պաշտոն չտալու պատճառաբանությունն անհիմն է: Նրանց հանդեպ չպետք է ունենալ բարդույթ, չհասկանալու զգացում կամ արհամարհանք: Ընդհակառակը, Սփյուռքի այսօրվա պատկերի համար պարտական ենք նրանց, ինչպես նաև արտագաղթող հայերին, որոնք մշակութային բարձր մակարդակ ունեն: Այսօր Եվրոպայում, Միացյալ Նահանգներում, Կանադայում և Միջին Արևելքում այս արտագաղթողները բերել են հայկական մշակույթի և արվեստի իրենց գիտելիքները և դրանք ի սպաս են դնում Սփյուռքի պահպանման գործին:

*- Ուսուցիչներ պատրաստող Հայաստանը չի և՛ կարող կարևոր դեր խաղալ արևմտահայերենի զարգացման մեջ:*

- Շուրջ 15 տարի առաջ Սփյուռքում սկսեցինք կազմակերպել հանդիպումներ արևմտահայերենի պահպանման և զարգացման համար: Բայց քաղաքական դեպքերը մեզնից առաջ անցան: Լիբանանն ու Սիրիան այլևս նպատակահարմար չեն, ես կարծում եմ, որ լավագույն տեղը Հայաստանն է: Եվ այս առումով Հայաստանը պետք է ստանձնի իր պատասխանատվությունը, որովհետև ունի արևմտահայերենի մասնագետներ, ինչպես, օրինակ՝ Սուրեն Դանիելյանը, որն ամեն ճիգ գործադրում է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում արևմտահայերեն ուսուցանելու համար Հայաստանի երկրորդական վարժարանների ուսանողներին:

Այս աշխատանքը պետք է նախատեսվի երկար ժամանակի համար, որովհետև մի շարք հակասություններ պետք է հաղթահարվեն: Այսօր Հայաստանի Սփյուռքի նախարարությունն աշխատում է պահպանել և տարածել արևմտահայերենը: Խորհրդային Հայաստանի ժամանակներում Սփյուռքահայության հետ Մշակութային կապի կոմիտեն մեծ գործ էր կատարում՝ հրատարակելով բազմաթիվ գրքեր Սփյուռքի դպրոցների համար: Այս կոմիտեն մեծապես օգնել է դպրոցներին՝ ուղարկելով ուսուցիչներ, երաժշտական գործիքներ, նոտաներ, խաղալիքներ և այլն: Պետք է վերակենդանացնենք համագործակցության այս քաղաքականությունը Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև: Սակայն Հայաստանի Կրթության և գիտության նախարարությունը երբեմն հակասության մեջ է Սփյուռքի նախարարության աշխատանքների հետ: Կրթության նախարարությունը համոզված չէ արևմտահայերենի դասավանդման նպատակահարմարության հարցում: Այս ժխտական տրամադրությունից ելնելով պետք է ճշտենք մեր քայլերը և որոշենք, թե ինչ ենք ուզում: Պետք է արևմտահայերենի ուսուցման մի նոր ռազմավարություն զարգացնենք:

- *Ի՞նչ կառաջարկեք այս ուղղությամբ:*

- Ես առաջարկում եմ ստեղծել իրավասու մարմին, որը կհամախմբի մասնագետներ երկու կողմից. Հայաստանից՝ Երևանի պետական համալսարանի գրականության ճյուղի, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի, Գրականության ինստիտուտի (որտեղ գտնվում է արևմտահայերենի գլխավոր ամբիոնը), Գիտությունների ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և կրթության նախարարության կողմից մասնագետներ, Սփյուռքից որպես ներկայացուցիչներ՝ պետք է ստեղծել Արևմտահայերենի պաշտպանության կոմիտե, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. կաթողիկոսի հովանավորությամբ:

Պետք է գիտակցենք, թե ինչ ենք կորցնում: Դեռևս մի քանի տարի առաջ Համագայինի կրթական բյուջեն հասնում էր \$10 միլիոնի, և այս գումարի մեծ մասը

հատկացվում էր Միջին Արևելքին: Շուրջ 20 տարի առաջ Համագրայինի, Բերիո թեմի (աթոռանիստը՝ Հալեպ) առաջնորդ Մուրեն արք. Քաթարոյանի և Գյուլպենկյան հիմնարկության (որի հայկական բաժնի տնօրենն էի) միացյալ նախաձեռնությամբ ստեղծեցինք Հայագիտական հիմնարկը, որտեղ պատրաստում էինք ուսուցիչներ, մանկավարժներ, լրագրողներ և հայկական միությունների և հաստատությունների համար քարտուղարներ: Ուսման մակարդակը ինչպես Բեյրութում, այնպես էլ Հալեպում համապատասխանում էր Երևանի պետական համալսարանի երրորդ տարվան: Ամեն տարի ունեինք մոտ 25 շրջանավարտ Միրիայում և Լիբանանում, այսինքն՝ տարեկան 50 շրջանավարտ: Ա՛յս է, որ մենք կորցրինք: Հալեպում 5 տարի առաջ 4 կմ<sup>2</sup> տարածքում մենք ունեինք 12 կրթական հաստատություն՝ 12-15 հազար աշակերտով, մանկապարտեզից մինչև բակալավրիատ:

- *Այսինքն՝ այսօր վտանգի տակ է մեր մարդուժի հավանականությունը...*

- Այո, բայց դժվարությունները բազմատեսակ են: Միրիայի և Լիբանանի դեպքերի հետևանքով աշակերտների ծնողները հետզհետե ավելի հակում ունեն իրենց զավակներին ուղարկել օտար դպրոց, հատկապես անգլիախոս թեքումով: Որովհետև նրանց ծրագիրն է՝ գաղթել դեպի Միացյալ Նահանգներ կամ Կանադա: Այսօր եթե Լիբանանի դպրոցների վիճակն ընդունելի է՝ շուրջ 8000 աշակերտով, դրա համար պարտական ենք գաղթական սիրիահայերին: Չավակներին օտար դպրոց ուղարկելն ազգային ինքնասպանություն է: 2016-ի երկրորդ եռամսյակում 28.000 սիրիահայ գաղթեց Կանադա: Նույնիսկ արևելահայերենն է վտանգի տակ՝ Հայաստանից մեր հայրենակիցների զանգվածային արտագաղթի պատճառով: Մենք բավարար դպրոցներ չունենք Ռուսաստանում և Եվրոպայում:

Այս իմաստով է, որ ասում եմ, թե ամբողջությամբ պետք է վերակազմակերպենք արևելահայերենի և արևմտահայերենի ուսուցման ռազմավարությունը:

- *Ամփոփելով ուզում եք ասել, թե զուտ լեզվական տեսակետից վերլուծելով՝ երկու կողմերի պայքարը միմյանց դեմ ժամանակավրե՛պ է:*

- Մենք այսօր անձնակազմի խնդիր ունենք, հետևաբար չենք կարող մերժողական քաղաքականություն ունենալ մեկի կամ մյուսի հանդեպ: Եվ հատկապես ինչ վերաբերում է Ֆրանսիայի հայ մանուկներին, որոնց ծնողներն արդեն իսկ հայերեն չեն խոսում: Այնքան կարևոր չէ՝ նրանք արևելահայերեն են սովորում, թե արևմտահայերեն, կարևորն այն է, որ նրանք հայերեն գիտենան: Մեր նպատակն է հայերեն սովորել, ո՛ր ճյուղը որ լինի: Չպետք է երեխայի հայերեն սովորելու հնարավորության առջև պատնեշ դնել, ինչպես որ եղան դեպքեր՝ պատճառաբանելով, թե նա մեկ կամ մյուս տարբերակով է խոսում: Մեր մարդուժի աշ-



խարհատարած ցրումով և Միջին Արևելքի մեր հնարավորությունների կորստով հայերենի ուսուցումն այսօր ծայրահեղորեն տկարացել է, պետք է բացառել ամեն հակառակություն արևելահայերենի և արևմտահայերենի միջև, որովհետև դա շատ վնասակար, հակազգային, հակահայրենասիրական և ոճրային երևույթ է:

- *Մտավորականներն ի՞նչ դեր կարող են խաղալ այս ուղղությամբ:*

- Հայաստանի և Սփյուռքի մտավորականները պետք է քաջալերեն այս շարժումը՝ նախապատվությունը տալով հայերենի ուսուցմանը՝ արևելահայերեն, թե արևմտահայերեն: Դժբախտաբար, նրանցից ոմանք կարծեք զվարճանում են տարբերություն դնելով, երևույթ, որի դեմ պետք է պայքարել:

*Հարցազրույցը վարեց Վարուժան Մարտիրոսյանը  
Հայերենի վերածեց Գրիգոր Դավիթյանը*

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՏԱԿ ԵՎ ՄԻՋՈՑ

### *Հրանտ Տեր-Աբրահամյան\**

*Բանալի բառեր*՝ անկախություն, ազգային և համամարդկային, ազգային-պետական համակարգեր:

Արդյո՞ք ինքնանպատակ է ազգային անկախությունը, թե՞ միջոց է մեկ այլ՝ ավելի բարձր ու կատարյալ՝ վերջնական նպատակի ճանապարհին:

Այս հարցին պատասխանելու համար հնարավոր չէ շրջանցել «ի՞նչ է ազգայինը» հարցը, քանի որ, առանց դրա թեկուզ ամենանախնական պատասխանն ունենալու, ստիպված ենք լինելու մեկ անհայտը՝ անկախությունը, սահմանել մեկ այլ անհայտի՝ ազգայինի միջոցով: Հետևաբար, համառոտ անդրադարձն այս հարցին անխուսափելի է, ավելին՝ հենց դրանից էլ կարող է ի հայտ գալ բուն՝ անկախության՝ նպատակ, թե՞ միջոց լինելու հարցի պատասխանը:

Ազգայինի գիտական սահմանումները բազմազան են, և բոլորն էլ՝ վիճարկելի: Անդրադառնալը դրանց մանրամասներին շեղում կլինի հիմնական թեմայից: Բայց գործնական՝ քաղաքական տեսակետից էականն այն է, որ, անկախ տեսական սահմանումների վիճարկելիությունից, ազգային ինքնությունները տրված փաստ են, որոնց գոյությունը քաղաքականությունը չի կարող անտեսել: Եվ եթե տեսությունը չի կարող վերջնական սահմանում տալ որևէ առարկայական փաստի, ապա խնդիրը ոչ թե բուն առարկայականի, այլ տեսության անկատարության մեջ է. մենք իրավունք չունենք և չենք էլ կարող հաշվի չառնել ոչ միայն գոյություն, այլև անհերքելի գործնական ազդեցություն ունեցող երևույթը միայն այն պատճառով, որ այն, ինչպես և հասարակական փաստերի մեծամասնությունը, գիտությունը վերջնականապես չի սահմանել [1]: Մենք պարտավոր ենք ոչ միայն գործնականորեն հաշվի նստել, այլև այդ փաստի նկատմամբ որոշ աշխատանքային-տեսական մոտեցում ունենալ, որը, չհավակնելով գիտականորեն սահմանված վերջին խոսք լինելուն, այդուհանդերձ, հիմնված կլինի առողջ բանականության վրա և թույլ կտա գործնական մոտեցումն իրականացնել ոչ թե կուրորեն, այլ իմաստավորված հիմքով [2]:

---

\*Վերլուծաբան:

Եթե փորձենք զուտ տրամաբանորեն մոտենալ ազգային ինքնության խնդրին, ապա կարող ենք պնդել, որ քանի դեռ մարդկությունը մեկն է, իր տեսակով՝ եզակի, և չկա մեկ այլ «մարդկություն» (օրինակ՝ այլմոլորակային)՝ մի այնպիսի ընդհանրություն, որը կարող ենք համարժեք և համաչափ համարել մեր իմացած միակ մարդկությանը՝ հակադրելով երկուսը միմյանց, ուրեմն համամարդկային ինքնությունը մնալու է չնյութականացված վերացականություն՝ անուն, բայց ոչ կենդանի իրականություն: Եվ քանի դեռ դա այդպես է, մարդկությունն իր նյութական գոյության մեջ կա և մնալու է կազմված առանձին «ճյուղերից»՝ ազգերից (ստուգաբանորեն ազգը հենց ճյուղ է նշանակում), որոնց թիվն ու որակները կարող են փոխվել, բայց ճյուղավորման փաստը՝ բաժանումն ինքը չի վերանալու, քանզի իրապես (ոչ թե զուտ վերացականորեն) գոյություն ունեցող ինքնություն կարող է ձևավորվել միայն իրար համարժեք՝ նման, և միաժամանակ հենց նմանությամբ մեջ իրար հակադիր ինքնությունների գոյությամբ [3]: Որևէ «ես» մի կողմից գոյություն ունի որպես բացարձակ տարբերակման, ինքնահաստատման, ինքնակենտրոնության ձգտում, բայց մյուս կողմից՝ չի կարող լինել այդպիսին՝ տարբերվող, եթե չկան իրեն համարժեք այլ «ես»-եր, որոնցից էլ ինքը պետք է տարբերվի, և որոնց հետ համեմատած է ինքը «Ինքը»: Տարբեր «ես»-երը մի կողմից՝ համաչափ են իրար, որով և՛ համեմատելի, մյուս կողմից՝ ամեն «ես» է՝ ինքն իր մեջ ու իր համար՝ որպես «եսության»՝ ինքնաբավության սկզբունքի մարմնավորում: Որևէ «այլ»-ի չհակադրվող կամ համարժեք «այլ»-եր չունեցող ընդհանրությունների ինքնությունը, այդու, կարող է միայն վերացական (պատկերացման մեջ) լինել, բայց ոչ երբեք՝ նյութական-իրական [4]:

Սա չի նշանակում, որ մարդկությունը գոյություն չունի. մարդկությունն իր նյութական տեսքով գոյություն ունի՝ հենց որպես ազգային բազմազանություն, որպես բարդ, միջնորդավորված, ոչ թե անմիջականորեն տրված միավոր: Համամարդկային պատմության գործող անձերն ազգերն են, ոչ թե մարդկությունն ընդհանրապես, և հենց ազգերի արարմամբ էլ առաջ է շարժվում համամարդկային պատմությունը, որի ընդհանրական գոյությունը չի ժխտվում «ճյուղավորմամբ» [5-7]:

Ազգային միավորների, որպես անհատների, «բնական» (որքանով «բնական» եզրը կիրառելի է հասարակական երևույթի նկատմամբ) մղումներն են՝ ա. ինքնապահպանումը, բ. զարգացում-ծավալումը, գ. ինքնարտահայտումը: Բնական-բնագոյականից վերածվելով գիտակցվածի՝ այդ մղումները դառնում են ազգային-քաղաքական առաջնային նպատակներ՝ ա. անվտանգություն, բ. առաջընթաց, գ. ստեղծագործություն:

Բայց արդյո՞ք այս նպատակների իրացման համար պարտադիր է անկախ ազգային պետականությունը:

### ***Պետությունները և ազգերը***

Խնդրին նետված պատմական հայացքը հուշում է, որ բոլոր այն միավորները, որոնց, թեկուզ առանց գիտական վերջնական ճշգրտության, բայց, համենայն դեպս, ներհայեցողությամբ կոչում ենք ազգեր՝ տարբերակելով ազգը ցեղային, համայնքային և նման այլ միավորներից, սերտորեն կապված են գոյություն ունեցող կամ ունեցած որևէ պետության հետ: Ի սկզբանե ոչ թե ազգերն են ստեղծել պետություններ, այլ պետությունները՝ ազգեր: Այլ բան է, որ ազգերը գոյատևում են նաև իրենց ձևավորած պետությունների անկումից հետո՝ որպես որոշակի ներքին կազմակերպում ունեցող միավորներ, սակայն ազգի ձևավորման սկզբնական ազդակը, որպես կանոն, տալիս է պետությունը, որը, միասնական քաղաքական, ռազմական, հոգևոր, մշակութային, տնտեսական համակարգերի մեջ միավորելով առանձին՝ ազգակից կամ ոչ ազգակից ցեղերը, համայնքները և այլն, դարերի ընթացքում «կոում-կոփում» է նրանց միասնական ինքնությունը: Խոսքը տվյալ դեպքում ոչ միայն արդիական, այլև հին և միջնադարյան պետությունների մասին է (ի հակադրություն այսօր նորաձև համարվող «կոնստրուկտիվիստական» տեսությանը, որն իրականում այլ բան չէ, քան ամենևին էլ ոչ շատ նոր՝ դասական մարքսիստական մոտեցում ազգային խնդրին [8], և որն ազգերի գոյացումը կապում է միայն նոր ժամանակների պետությունների հետ): Անշուշտ, սա բարդ ու բազմերանգ գործընթացի ուրվագծային ու պարզեցված նշում է. պետությունից բացի, կարևոր նախնական դեր են կատարում այլ գործոններ ևս՝ կրոնը, լեզուն, ծագումը, տնտեսությունը և այլն, սակայն այս ամենը չի ժխտում պետության վճռական և մեծ մասամբ՝ վերջնական դերն ազգային ինքնությունների կայացման գործում:

Հայկական ազգային ինքնության պատմությունը լավագույնս ներկայացվում է հենց այս կադապարի միջոցով: Եթե նույնիսկ ընդունենք, որ նախնադարում ամբողջ Հայկական լեռնաշխարհը (ՀԼ) բնակեցված էր միայն բնիկ հայախոսներով (ինչը հազիվ թե այդպես եղած լիներ), ապա, միևնույն է, լեռնաշխարհի տարածքը հին ժամանակների հաղորդակցման միջոցների տեսակետից այնքան ընդարձակ է, իսկ ռելիեֆը՝ այնքան կտրտված, որ դրա տարբեր մասերում (ասենք՝ Ծովքում և Սյունիքում) ապրող մարդկանց փոխադարձ կանոնավոր շփումը չափազանց խնդրահարույց է: Բնական պայմաններում, առանց «վերնի» միջամտության, այստեղ կձևավորվեին ոչ թե մեկ, այլ մի քանի առանձին ինքնություններ, թեկուզ՝ նույն հայալեզվության հիմքի վրա, ինչպես տարբեր, հաճախ նույնիսկ՝ հակադիր կամ թշնամական ազգային ինքնություններ են ձևավորվել Հնդեվրոպական լեզվաընտանիքի այլ ճյուղերի՝ սլավոնականի, գերմանականի,

կելտականի հիման վրա (չէ՞ որ հայերենը հնդեվրոպական ընտանիքում իր դիրքով ոչ թե սուկ լեզու է, ինչպես անգլերենը, գերմաներենը, ռուսերենը, այլ նախ՝ ճյուղ, խումբ, ինչպես գերմանականը կամ իրանականը):

Ճիշտ է, որպեսզի պետական գործոնի բացարձակացման տպավորություն չստեղծվի, նշենք, որ պետություններն ու ինքնությունները հաճախ ձևավորվում են աշխարհագրական քիչ թե շատ բնական միավորների սահմաններում (պետականից դուրս այլ գործոններից՝ լեզու, կրոն և այլն, կարծում ենք՝ հենց աշխարհագրականը պետք է առանձնացնենք որպես առավել կարևոր): Օրինակ, Հարավային Եվրոպայում Պիրենեյան, Ապենինյան, Բալկանյան թերակղզիներից յուրաքանչյուրը, չնայած պատմական-քաղաքական զարգացումների վայրիվերումներին, ի վերջո հայրենիք դարձավ մեկ ազգային ինքնության (Պիրենեյներում՝ երկու, բայց դա աշխարհաքաղաքական որոշակի զարգացումների՝ անգլո-խսպանական հակամարտության արդյունք էր, այսինքն, ինչ-որ տեղ, պատահականություն): Նույնը՝ Իրանական լեռնաշխարհում, Հնդկաստանում և այլուր: Իսկ, օրինակ, Եվրասիական տափաստանի բնական միասնությունը նախահիմք դարձավ Ռուսաստանի տարածքային ծավալման [9]: Բայց նախահիմքն իրենով դեռ չի կարող ստեղծել ինքնություն. դրա համար պետք է մարդկային՝ քաղաքական կամք և ստեղծագործություն: Հայկական լեռնաշխարհը, իր ներքին բազմազանությամբ ու հակադրություններով հանդերձ, նույնպես բնական միասնություն է՝ հարևան բնական միջավայրերին հակադրված շեշտված առանձնահատկություններով (իհարկե, նման բնական միավորների սահմանները բացարձակ չեն, ինչպես բացարձակ չէ որևէ ընդհանրացում. բոլորն էլ ունեն անցումային գոտիներ, որտեղ մեկը սահուն կերպով անցնում է մյուսին, սակայն դա չի ժխտում ուրույնությունը, քանզի իրար են հակադրվում ոչ թե սահմանները, այլ կենտրոնները, ուր խտացված են շեշտված տարբերությունները) [10, 11]:

Հայկական ինքնության բուն պատմությունը սկսվում է այն պահից, երբ ՀՀ մեծ մասը միավորվում է մեկ պետության սահմաններում, ինչի մեկնարկն էական չէ, թե որ կետից կհաշվենք՝ Ուրարտուից (անկախ դրա վերնախավի էթնիկ պատկանելության հարցից), Երվանդունիներից, թե Արտաշեսյաններից. էական է միայն՝ ո՞ր միասնական պետության սահմաններում է սկսվում և խորանում այն հաղորդակցությունը, որը հիմքն է դառնում հետագա միասնական ինքնության: Գործընթացի սկիզբ է դառնում մեկ արքայի հպատակների՝ ռազմական և տնտեսական հողի վրա կայացող հաղորդակցումը՝ նույն բանակում ծառայելը, նույն արշավանքներին մասնակցելը, նույն հարկերը վճարելը և այլն: Ապա հաղորդակցությունը խորանում է, ստանում ավելի նյութական-շոշափելի բովանդակություն՝ ռազմական, տնտեսական, քաղաքական խորացող միությանն ավել-

լանում են լեզվական, մշակութային, կրոնական միությունները<sup>1</sup>:

Երբ 428թ. հայոց թագավորությունն ընկնում է և երկիրը կորցնում է իր արտաքին՝ իրավական անկախությունը, հաջորդող դարերի ընթացքում հայկական թագավորության սահմաններում ձևավորված ազգային ինքնությունը չի վերանում և անգամ շարունակում է զարգանալ ու ամրապնդվել<sup>2</sup>: Թվում է, թե սա հակասում է ազգերի կյանքում պետության վճռական դերի մասին մեր պնդմանը: Պետք է հասկանալ, սակայն, որ թագավորության անկումից հետո հայոց ինքնությունը պահպանվեց ոչ թե ինքն իրեն՝ «բնականորեն» կամ ինչ-որ հրաշքով, այլ հե՛նց շնորհիվ թագավորության գոյության ընթացքում ստեղծված համակարգերի: Այլ կերպ ասած՝ ընկավ միայն թագավորության արտաքին «կեղևը», սակայն թագավորությունը պահպանվեց այնքանով, որքանով շարունակեցին գործել ու զարգանալ դրա օրոք առաջացած ազգային համակարգերը: Պատահական չէ Եղիշեի ձևակերպումը, թե Արշակունիների անկումից հետո թագավորությունն ընկավ «ի նախարարսն հայոց անկանէր թագաւորութիւնս. զի թեպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» («իշխանությունն անցավ հայոց նախարարներին. որովհետև թեպետև հարկը Պարսից արքունիքն էր գնում, սակայն Հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ») [12], իմա՝ Հայաստանի ներքին անկախությունն ու ինքնիշխանությունը պահպանվեցին (սա չի նշանակում, թե թագավորության կորուստն անհետևանք անցավ, այլ՝ որ դրա կորստյամբ հայկական քաղաքական սուբյեկտությունը լիովին չվերացավ, ինչի մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև):

### ***Միջնադարյան Հայաստանի ազգային համակարգերը***

Թագավորության անկումից հետո երկար դարեր պահպանվեց նախարարական համակարգը՝ հայկական ինքնուրույն ռազմական և ներքին կառավարման ուժը: Պարսկական տիրապետության շրջանում (5-7-րդ դդ.) հայ նախարարներից յուրաքանչյուրը շարունակեց իշխել իր գավառում, և յուրաքանչյուրը՝ իր ռազմական ուժով, որոնք միասին կազմում էին Հայոց բանակը: Նախարարական իշխա-

<sup>1</sup> Լեզվական միասնության հարցի հետ կապված. էթե մի պահ ենթադրենք, թե ՀՀ բոլոր բնակիչներն ի սկզբանե հայախոս են եղել, իսկ մյուս կողմից հիշենք, թե նույնիսկ նոր շրջանի հայկական բարբառները որքան բազմազան ու տարբեր են (որոշները՝ միմյանց կրողների համար անհասկանալիության աստիճանի), ավելի հեշտ կլինի պատկերացնել, որ նույնիսկ լեզվական միությունը Հայաստանում հնարավոր չէ և չէր՝ առանց պետության ու նրա համակարգերի միավորիչ գործոնի:

<sup>2</sup> Հատկանշական է, որ հետագա դարերի ընթացքում Մեծ Հայքի թագավորության տարածքից հայկական ինքնությունը վերացավ կամ թուլանալու միտում ունեցավ միայն մի քանի ծայրամասային վայրերում, որոնք բոլորն էլ Հայկական լեռնաշխարհի բնական միության տեսակետից անցումային և անշաֆտներ են:

նության՝ փաստացի տեղական ինքնիշխանության վրա հիմնված ռազմական այս համակարգը հայկական ներքին անկախության ողնաշարն էր դարերի ընթացքում. դրա խոշոր մնացորդները Ղարաբաղում և Սյունիքում պահպանվեցին ընդհուպ մինչև 18-րդ դարի վերջ - 19-րդ դարի սկիզբ: Դրա շնորհիվ էր, որ թագավորությունից զուրկ հայերը մնացին կարևոր ռազմական, հետևաբար՝ քաղաքական գործոն: Եվ սա էր հայոց անկախության, հայոց պետության գոյության յուրահատուկ կերպը. վերացել էր պետության վերնահարկը՝ թագավորական իշխանությունը (որն անկախությունն էր մարմնավորում նախ և առաջ միջազգային իրավական հարաբերություններում), բայց շարունակում էին գործել պետության «միջին» հարկերը, այդ թվում՝ ռազմական համակարգը, որով անկախության և պետության կորուստը մասնակի էր: Հայաստանն իր անկախությունը կորցրեց միջազգային հարաբերությունների տեսակետից, բայց ներքին դիտանկյունից անկախությունը պահպանվում էր, քանզի ամեն հայ իշխան շարունակում էր մնալ իր գավառի և իր ռազմական ուժի տերը, իսկ Հայոց բանակը շարունակում էր գործել որպես առանձին միավոր՝ իր առանձին հրամանատարով: Եթե այս ապակենտրոն համակարգը մի կողմից՝ թուլացնում էր հայոց պետությունը Հայոց թագավորության շրջանում, ապա մյուս կողմից՝ նույնքան թուլացնում էր ցանկացած օտար տիրապետություն [13]: Կարևոր է հասկանալ, որ քանի դեռ գոյություն է ունեցել հայկական նախարարական համակարգը, որը ենթադրել է՝ ա. յուրաքանչյուր նախարարության տեղական ինքնիշխանություն, բ. սեփական ռազմուժի գոյություն, Հայաստանն ընկել է օտար լծերի տակ, բայց բառիս բուն իմաստով չի նվաճվել [14]: Սա է պատճառը, թե ինչու չի կարելի նույնացնել 5-9-րդ դդ. օտար տիրապետության տակ եղած Հայաստանն ավելի ուշ շրջանների նվաճված Հայաստանին, երբ հայկական ռազմական համակարգն արդեն վերացել էր գավառների մեծ մասում, իսկ որտե՛ղ առկա էր և ո՛ր չափով՝ առկա էր, նախկին կիսանկախ վիճակը շարունակում էր պահպանվել:

Մյուս համակարգը, որը պահպանվեց թագավորության անկումից հետո, հոգևոր համակարգն էր՝ Եկեղեցին՝ որպես հասարակական հաստատություն, «բարձր» մշակույթը՝ գիր-գրականություն, գիտություն, արվեստ և այլն, որոնք հնում հենց Եկեղեցու տիրույթում էին: Այս համակարգում ոչ միայն պահպանում, այլև զարգացում արձանագրվեց՝ որպես անկախ թագավորության անկման յուրահատուկ փոխհատուցում և թագավորության շրջանում ներդրված ջանքերի արգասիք<sup>1</sup>: Այստեղ միայն նշենք (առանց հետագա մանրամասնեցման), որ

<sup>1</sup> Չենք անդրադառնում ավելի «ստորին» հարկերի համակարգերին, օրինակ, գյուղական համայնքին, որը թեև քաղաքական ինքնուրույնության ներուժից զուրկ էր, բայց նույնպես ինքնակազմակերպման կարևոր ձև պետք է համարել առնվազն ազգային ինքնապահպանության տեսակետից:

երկու՝ ռազմական և հոգևոր համակարգերի գոյությունն ու գործը չի կարելի պատկերացնել անջատ-անջատ, իրարից բացարձակ անկախ: Իրականում դրանք սերտորեն կապված և միմյանցից կախված են. հոգևոր գործունեությունը և հոգևոր ոլորտի առաջընթացն ապահովվում էին մեծ մասամբ ռազմական համակարգի ուժով: Հայկական եկեղեցու ինքնուրույն դիրքը, նրա հեղինակության աստիճանը, ինքնուրույն հայ գրականության և արվեստի ստեղծումն ու զարգացումը և այլն հնարավոր էին միայն շնորհիվ սեփական ռազմական ուժով ապահովված ներքին անկախության, յուրահատուկ «կիսապետական» դրության [15]: Հետագա դարերում էլ այս հարաբերությունը զգալի չափով նույնն է մնում. մշակութային ձեռքբերումների մեծ մասը կենտրոնանում է այն տեղերում, ուր պահպանվում էր հին հայկական համակարգը, իսկ դրանից դուրս մշակութային վերելքները, ապահովված օտար ուժերի հովանավորությամբ, որպես կանոն, կարճատև և ընդհատուն են լինում<sup>1</sup>: Մյուս կողմից՝ հոգևոր համակարգն իր լավագույն դրսևորումներում հիմնավորում, զարգացնում և ամրապնդում էր հայոց անկախությունը, ինչի դրսևորումն էին դավանաբանական վեճերում ինքնուրույն դիրքը, ինքնուրույն գրի, գրականության և գիտության, ինքնատիպ եկեղեցական ճարտարապետության ձևավորումն ու զարգացումը և այլն: Այս ամենը եթե մի կողմից՝ հնարավոր էր հայկական ռազմուժի հիմամբ, ապա մյուս կողմից՝ իրենով իսկ ուժաստեղծ էր և ամրացնում էր ազգային քաղաքական ինքնուրույնությունը, նաև դասելով հայերին աշխարհի այն ազգերի շարքին, որոնք ազգայինի միջոցով ունիվերսալ, համամարդկային արժեքներ են ստեղծել (իսկ այդպիսի արժեքներ, որքան էլ հակասական թվա առաջին հայացքից, ի գործ են ստեղծել նախ անկախ ազգերը. կախյալները սովորաբար «արտադրում» են միայն տեղական նշանակության, «զավառական» մշակույթ):

Այս երկու հիմնական՝ ռազմական և հոգևոր համակարգերի հիմքով հետագա դարերում մի քանի անգամ վերածնվեց հայկական անկախությունը: Այսինքն՝ Հայոց թագավորության շրջանում ձևավորված և թագավորության անկումից հետո իրենց գոյությունը պահպանած համակարգերը բավականաչափ ներուժ ունեցան նպաստավոր պայմաններում վերականգնելու պետության «վերին հարկը»՝ թագավորությունը, միջազգային իրավական անկախ կարգավիճակը: Դարերի ընթացքում հայոց անկախ պետությունը վերականգնվել է ոչ թե գրոյից, այլ շնորհիվ սկզբնական պետության սահմաններում արդեն մեկ անգամ ձևավորված համակարգերի: Այլ կերպ ասած՝ հայոց պետությունը վերականգնել է ինքն

<sup>1</sup> Հետագա դարերի առումով պետք է հաշվի առնենք նաև հայկական միջազգային-առևտրական համակարգի ազդեցությունը, ինչը որոշ չափով լրացնում էր կործանվող ռազմական համակարգի բացը և մասնակիորեն ապահովում էր հայոց ինքնավար դիրքն ու հոգևոր ձեռքբերումների հնարավորությունը: Բայց դա, անշուշտ, շատ ավելի թույլ ուժ էր:



իրեն, որովհետև թագավորության անկման պայմաններում նշյալ համակարգերի գոյությունն այլ բան չէր, քան նույն այդ պետության գոյության մի կերպ, պարզապես զուրկ վերնահարկից՝ թագից: Նույնիսկ այսօր, գիտակցենք, թե ոչ, մեր անկախության և, ընդհանրապես, որպես ազգ գոյության նախահիմքը միջնադարի այդ համակարգերն են:

Տեսնում ենք, ուրեմն, որ եթե մի կողմից՝ ազգը ձևավորվում է անկախ պետության սահմաններում, ապա մյուս կողմից՝ դա չի նշանակում, որ ազգի գոյությունը դադարում է պետության անկումից հետո. ավելին, պետության կողմից ձևավորված ազգն արտաքին բարենպաստ պայմաններում ինքն է վերականգնում պետական անկախությունը: Ի դեպ, հետաքրքիր է, որ այդ ներուժն անուղղակիորեն գիտակցվել է հենց միջնադարում. համենայն դեպս, անթույլատրելի չի թվում նման մեկնաբանություն տալ միջնադարում տարածված այն տեսիլքներին, որոնցում խոսվում է հայոց թագավորության անկման և ապագայում վերականգնման մասին: Որպես դրանց համեմատաբար վաղ օրինակ կարող ենք հիշել Ղազար Փարպեցու մատյանում զետեղված Սբ. Սահակին վերագրվող տեսիլքը, ուր հայոց թագավորության անկմանն անմիջական վկա սրբի անունից կանխատեսվում է ապագայում Արշակունյաց թագավորության վերականգնում [16]:

### ***Հայկական միջնադարյան համակարգերի անկումը***

Անկախ թագավորության կորուստը, որքան էլ չի նշանակել ազգի վերացում «այսօր ու այստեղ» և նույնիսկ չի բացառել ինքնության հետագա զարգացումը, այդուհանդերձ, երկարատև կտրվածքով հանգեցրել է հայկական համակարգերի անկմանը: Այդպես դարերի ընթացքում թուլանում և մաշվում է հայկական ռազմական համակարգը. այն նախ վերանում է որոշ ծայրամասային շրջաններում, հատկապես արևմուտքում և հարավում, ուր արտաքին գործոնների ազդեցությունն առավել ուժեղ էր: Հատկապես հակասական են եղել հայկական ռազմական համակարգի հարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ: Եթե մի կողմից՝ հայ նախարարները պարսից և արաբական տիրապետության դեմ իրենց պայքարում հենվել են բյուզանդական աջակցության վրա, ապա մյուս կողմից՝ Հայաստանի հենց բյուզանդական տիրապետության տակ ընկած մասերում հայկական ներքին ինքնավարությունը, հիմնված նախարարական համակարգի վրա, առավել արագ է վերացել: Խնդիրն այն է, որ հայկական ավատական-ազնվական համակարգը և կայսերական բյուրոկրատական պետության համակարգն իրար հակասում են (ի տարբերություն, օրինակ, ծագմամբ և կառուցվածքով իրար շատ մոտ հայկական և իրանական համակարգերի): Եթե հայ-բյուզանդական մշակութային հարաբերությունները շարունակաբար հարստացրել են

մեզ (մշակութապես մենք, ըստ էության, բյուզանդական աշխարհի մասն ենք), ապա քաղաքական հարաբերություններում կարելի է ձևակերպել հետևյալ օրինակափոխությունը. մեզ համար հավասարապես վնասակար է եղել և՛ Բյուզանդիայի չափից ավելի թուլացումը, և՛ չափից ավելի ուժեղացումը: Ձեռնտու եղել է միայն միջին դիրքը. ոչ այնքան ուժեղ, որ Հայաստանը նվաճվի բյուզանդացիների կողմից, բայց ոչ այնքան թույլ, որ կտրվեն մշակութային ու քաղաքական կապերը քրիստոնյա մեծ աշխարհի հետ, և խախտվի մեծ տերությունների հավասարակշռությունը: Հայկական անկախության համար առավել բարենպաստ վիճակ է ստեղծել երկուսի՝ Արևմուտքի և Արևելքի աշխարհաքաղաքական հավասարակշռությունը: Ի տարբերություն Արևելքի՝ Արևմուտքը, երբ իր անմիջական տիրապետությունն է հաստատել Հայաստանում, չի բավարարվել արտաքին գերակայությամբ, այլ փորձել է իրապես նվաճել երկիրը՝ գիտակցաբար քայքայելով դրա ռազմական և հոգևոր ինքնավար համակարգերը, ինչին էլ միտված էին Հուստինիանոսի ռեֆորմը, Վասպուրականի 11-րդ դ. գաղթը, դավանական վեճերի հարուցումը և այլն [17-19]. հետագայում՝ Բյուզանդիայի անկմամբ, նույն երկակի դերն է կատարել կաթոլիկ Արևմուտքը<sup>1</sup>:

Իհարկե, բյուզանդական գործոնը միակը չէր, որ թուլացնում էր հայկական համակարգերը: Հաշվի պետք է առնել ոչ միայն բյուզանդական կամ այլ արտաքին գործոնները, այլև զուտ «մաշվելու» ներքին միտումը. որքան էլ թագավորության ներսում ստեղծված համակարգերն օժտված լինեին պետականագուրկ պայմաններում գոյատևելու և նույնիսկ զարգանալու ներուժով, միևնույն է, կորցնելով իրենց բնական հենքն ու միջավայրը՝ անկախ թագավորությունը, չէին կարող տևական կտրվածքով ներգծված լինելով օտար համակարգերի մեջ՝ չկորցնել իրենց նախնական ուժը:

Ինքնիշխան, այսինքն՝ հայկական իշխանական-ռազմական համակարգով ապահովված Հայաստանի տարածքն աստիճանաբար կրճատվում էր: Արդեն Բագրատունիների անկումից հետո՝ 11-րդ դարից այս կողմ, այդ համակարգը պահպանվում է միայն Հայաստանի հյուսիս-արևելքում՝ 13-րդ դարում հիմք տալով հայկական նոր վերածննդին, իսկ մյուս՝ Հայաստանից գաղթեցված կամ գաղթած հայկական ռազմուժի հատվածն էլ դառնում է բուն Հայաստանից դուրս վերածնված Կիլիկյան հայկական պետության կորիզը: Կիլիկիայի օրինակը հատկապես կարևոր է: Ինչո՞ւ հայկական պետությունը վերածնվեց հենց Կիլիկիայում, այլ ոչ, օրինակ, Վասպուրականում կամ Տարոնում: Իհարկե, կային բարենպաստ արտաքին հանգամանքներ, բայց հիմնական պատճառն այն էր, որ

<sup>1</sup> Մա հարցի շատ թռուցիկ ակնարկն է, մինչդեռ իրականության ողջ բազմակողմանիությունը հնարավոր է արծարծել առանձին հետազոտությամբ միայն:

այդ պահին Կիլիկիայում և դրա շուրջն էր կուտակվել «հայոց գորքը»՝ հայ ազնվականության մի մեծ հատված, որը բուն Հայքից գաղթել էր Բագրատունյաց և Արծրունյաց թագավորությունների անկումից հետո: Ո՛րտեղ հայկական գորքն էր, այնտե՛ղ էլ վերածնվեց հայոց պետությունը. ոչ մի բարենպաստ արտաքին հանգամանք ինքնին չի կարող որևէ գործընթացի ազդակ դառնալ, եթե չկաներքին բավարար հիմք:

Կիլիկիային զուգահեռ՝ հայկական ռազմական համակարգը նոր վերածնունդ է ապրում 13-րդ դարում Արևելյան Հայաստանում՝ Զաքարյանների, ապա Օրբելյանների և մյուս իշխանական տների գլխավորությամբ: Այստեղ նույնպես վերելքին հաջորդում է հաջորդ դարի աստիճանական անկումը, կրկին՝ Կիլիկիային զուգահեռ: Բայց նույնիսկ 18-րդ դարում երբեմնի համահայկական իշխանական համակարգի մնացորդները Ղարաբաղում, Ղափանում և մասամբ՝ Լոռիում հայկական ռազմաքաղաքական նոր վերածննդի հիմք են դառնում՝ այս կետում ստեղծելով հնագույն հայկական համակարգն ու այսօրվա Հայաստանը կապող կամուրջը:

Հայաստանի ա՛յն վայրերում, ուր հայկական իշխանական համակարգը վերանում էր, հայությունը ռազմաքաղաքական գործոնից վերածվում էր կրոնամշակութային համայնքի, մեծ մասամբ՝ զուրկ քաղաքական ազդեցությունից: Սա ընդհանուր միտումն է, որովհետև որպես կրոնական համայնք էլ հայությունն ամեն տվյալ վայրում որոշակի գործունակություն կարող էր պահպանել, նախ՝ շնորհիվ այն վայրերի անուղղակի ազդեցության, ուր հայոց իշխանական համակարգը դեռ կենդանի էր, և երկրորդ՝ շնորհիվ ուշ միջնադարում ձևավորված հայկական միջազգային առևտրական համակարգի ազդեցիկության, որի միջոցով հայությունը կարողանում էր Արևմուտքի և Արևելքի միջև կարևոր միջնորդի դեր ստանձնել՝ ոչ միայն զուտ առևտրական, այլև, մասամբ, դիվանագիտական, ինչպես նաև հոգևոր արժեքների փոխանակման ոլորտներում, ինչով որոշ դեպքերում ցանկալի և հովանավորյալ տարր էր դառնում եվրոպական ու արևելյան շատ տիրակալների համար: Ընդհանուր միտումը, սակայն, դրանով չի ժխտվում. հայությունը քաղաքական գործոնից, այսինքն՝ ազգից, կրոնական համայնքի վերածվելու ճանապարհին էր, թեև այդ միտումը երբևէ չհասավ կատարյալ իրականացման:

Միայն հոգևոր՝ կրոնամշակութային համակարգի «հույսին մնացած» ազգը կորցնում է իր գործունակությունը և վերածվելով այլոց քաղաքականության առարկայի՝ զգալի չափով զրկվում է իր «ազգային կարգավիճակից» այնքանով, որքանով ազգայինը ենթադրում է ինքնուրույն որոշումներ ընդունելու և կարևորը՝ դրանք գործադրելու և պաշտպանելու հնարավորություն:

## **Ուշ միջնադարի և նոր շրջանի հայկական համակարգերն ու հայկական պետությունը**

Վերջապես, 19-րդ դարի վերջից սկիզբ առան և զարգացան հայկական նոր համակարգերը՝ քաղաքական, ռազմական և հոգևոր, բայց դրանց անգամ համառոտ տեսությունը հասկանալի պատճառներով այստեղ բաց ենթ թողնում: Պարզ պետք է լինի մի բան, սակայն. այն, ինչ այսօր ունենք որպես Հայաստան, արդյունք է վերը նկարագրված հին ու նոր համակարգերի պատմական զարգացման: Ոչինչ անհետ և անհետևանք չի անցել, և այսօրն արդյունք է անցած օրերի, ինչպես այսօրը վաղվա հիմքն է: Այսօրվա անկախ Հայաստանը մի կողմից՝ գոյացավ պատմական Հայաստանի այն հողակտորի վրա, ուր հին շրջանի հայկական համակարգերը կամ դրանց մնացորդներն ամենից երկար էին պահպանել իրենց գոյությունը և առավել ուժեղ՝ իրենց դիրքերը<sup>1</sup>, մյուս կողմից էլ՝ արդյունք է նոր շրջանի պայքարի: Նորագույն շրջանի հայկական պետությունը, որը, անկախ իր իրավական կարգավիճակից, փաստացի անընդմեջ գոյատևում է 1918-ից ցայսօր<sup>2</sup>, արդյունք է մի կողմից՝ հնից ժառանգված, մյուս կողմից՝ նոր շրջանում ստեղծված համակարգերի գործունեության: Իսկ ունենք ա՛յն չափի և ա՛յն ուժի պետություն, որքան կարողացել ենք նախաանկախական շրջանում գործածել մեր ազգային համակարգերը: Համենայն դեպս, երբ դժգոհ ենք մնում՝ համեմատելով մեր ներկայիս չափն ու ուժը նախորդ դարերի հետ, պետք է հասկանանք, որ մեր ճակատագիրը՝ որպես Մերձավոր Արևելքի երբեմնի հզոր քրիստոնեության մնացորդ, կարող էր առավել նման լինել ոչ թե մեր ներկայիս, այլ այսօրվա ասորիների վիճակին. ոչ միայն պետությունից, այլև հիմնականում կոմպակտ բնակության տարածքից զուրկ, աննշան ռազմական և քաղաքական գործոն հանդիսացող կրոնական փոքրամասնության ճակատագիր [20]:

Ուրեմն, ազգային պետությունը վերացականություն չէ՝ գրոյից գոյացած ու գրոյի վրա կառուցված դատարկ անվանում չէ, այլ պատմական զարգացման ամբողջության նյութական արդյունք: Այն օդում կախված չէ, միայն ներկայի մաս չէ, այլ սերունդների կողմից կատարված ներդրումների համահավաք: Անցած սերունդների ջանքերն ու պայքարները, հաղթանակներն ու պարտություններն այստեղ նույնքան նյութական են, որքան ներկան [21]: Եթե մեր պետությունը կոչում ենք Հայաստանի, այլ ոչ, օրինակ, Վրաստանի Հանրապետություն, դրանով իսկ փաստում ենք, որ այն չի կարող լինել ընդամենը մե՛կը մյուս նման պետու-

<sup>1</sup> Օրինակ՝ 15-րդ դարում Գրիգոր Տաթևացու ծրագրով ու նրա աշակերտների ջանքերով և Օրբելյան իշխանի աջակցությամբ կաթողիկոսական գահը Էջմիածին վերադարձնելը կարող ենք համարել ՀՀ ապագա անկախության նախահիմքերից մեկը:

<sup>2</sup> Մովսեսյան Հայաստանը, իր բոլոր առանձնահատկություններով հանդերձ, նույնպես հայկական պետություն էր, որի վարչական համակարգը փոխանցվեց ներկայիս Հայաստանին:

թյուններից՝ նրանցից ոչնչով չտարբերվող, անհատականությունից զուրկ հանրապետություն: Այն պահից, երբ ճանաչում ենք որևէ պետության առանձին գոյության իրավունքը և համարում դրա անկախությունն արժեք, լռելյայն ընդունում ենք, որ այդ պետությունը, բացի ընդհանուրին բնորոշ պետականից, ունի նաև այլ՝ հավելյալ իմաստ ու նպատակ, որը տարբերում է նրան այլ պետություններից: Հակառակ դեպքում պետք է ընդունենք, որ տարբերությունը զուտ անվանական է, հետևաբար՝ առանձին գոյությունը՝ անիմաստ («զի անունն նշանակութիւն է իրաց ինչ, և աննշանական ձայնն ոչ ինչ իր նշանակէ... անունն զմի իր նշանակէ որոշաբար» [22]): Ուրեմն, բացի վերացական ընդհանուրից, պետությունը պետք է ունենա իր անհատական իմաստն ու նպատակը, և եթե խոսքն ազգային պետության մասին է, ապա՝ ազգային անհատական նպատակը: Անհատի, տվյալ դեպքում՝ ազգային անհատականության բնական ձգտումը, իսկ կատարյալ վիճակում՝ նաև գիտակցված նպատակն ինքնաբացահայտումն է՝ ա. ինքնապահպանում, բ. ինքնակազմակերպում, գ. զարգացում՝ արժեքներ ստեղծելու, կուտակելու և կատարելագործելու միջոցով, դ. ազգային անհատականության ծավալում՝ ներքին բովանդակության հարստացում և իրենից դուրս՝ արտաքինին ուղղված ազդեցություն, ե. ազգային ներուժի և գ. ճակատագրի բացահայտում:

Բայց, ի վերջո, այն, ինչն արտահայտվում է ազգայինի միջոցով, հատկապես իր բարձրակետում, նույն ընդհանուրն է՝ համամարդկայինը: Եվ ազգային բարձրագույն արժեքներն են ոչ թե նեղ իմաստով ուրույն-ազգագրականները, այլ համամարդկային տարողություն ունեցողները: Սա պատահական չէ, քանի որ ընդհանուրը, ինչպես տեսանք, ինքնաբացահայտվելու այլ կերպ չունի՝ անհատականից բացի: Վերացական համամարդկայինը գոյություն չունի ինքն իրենով. այն նյութականացված է առանձին միավորներով, անհատներով («զի տեսակս ի ներքոյ իւր բազում անհատ նշանակէ» [23]), որով, եթե մի կողմից՝ ամեն տվյալ ազգի բարձրագույն արժեքներն առավել մեծ համամարդկային չափում ունեցողներն են, ապա մյուս կողմից՝ համամարդկային արժեքներից յուրաքանչյուրը մի որևէ մարդկային «ճյուղի» անհատական ստեղծագործությունն է: Հակասությունը համամարդկայինի և ազգայինի միջև այս՝ առավել բարձր մակարդակում զուտ վերացական-պայմանական է. իրականում դրանք նյութական անքակտելի միասնություն են<sup>1</sup> [24]:

<sup>1</sup> Եվ մյուս կողմից՝ քանի որ մարդը հանրային էակ է, ապա մարդկությունը նյութապես գոյություն ունի ոչ թե որպես առանձին մարդ անհատների հավաքույթ, այլ հանրային անհատականությունների «համերգ», որոնց միջոցով տեղի է ունենում համամարդկայինի զարգացումը: Մարդ անհատը նույնիսկ մեծագույն ցանկության դեպքում չի կարող իրեն դնել ոչ հանրությունից, ոչ էլ մասնավորապես ազգությունից դուրս. նա կարող է պարզապես մի ազգությունից տեղափոխվել մյուսը՝ լեզուն, մշակույթը և այլնը փոխելու միջոցով, բայց չի կարող լինել պարզապես մարդ՝ ինքն իրենով:

## **Հետևություն**

Ազգերը ոչ միայն գոյանում են պետությունների միջոցով, այլև ձևավորված լինելով շնորհիվ պետության մեջ ստեղծված համակարգերի, «բնական» ձգտում ունեն պետականանալու, վերադառնալու դեպի կորսված անկախ պետության գոյությունը, դեպի «թագավորությունը»: Բայց պետությունը միայն ձև չէ, վերացականություն չէ՝ նրա նյութական բովանդակությունն ազգային համակարգերն են, որոնց կառուցման միջոցով իրականացվում են ազգային գոյության պահպանման, զարգացման և ինքնաբացահայտման գործառույթները:

Այստեղից գալիս ենք մեր սկզբնական հարցադրման պատասխանին:

Ինքնիշխան պետությունը մի կողմից՝ ազգային քաղաքականության բարձրագույն ձգտումն ու նպատակն է, մյուս կողմից՝ ազգային անհատականության ինքնաբացահայտման միջոց: Բուն նպատակն է նախ՝ ազգի պահպանումն իր հայրենիքում, երկրորդ՝ ազգային զարգացումը, որն էլ ոչ թե իր վերացական համապատասխանությունն է ինչ-ինչ արտաքին ստանդարտներին, այլ ազգային համակարգերի կայացումն ու արդյունավետ գործունեությունը, և այս երկուսով՝ պահպանմամբ և զարգացմամբ, ազգային անհատականության հնարավորինս կատարյալ ինքնաբացահայտումը՝ որպես համամարդկային արժեքներ և «պատմություններ» ստեղծող միավոր<sup>1</sup>: «Մենք ունենք մեր առաքելությունը, մեր խորհուրդը... Մենք ունենք մեր կարելի արքայությունը... Կազմենք մեր մեծությունները: Կազմենք զանոնք մեր հայրենիքին ամենեն նուրբ ու ամենեն տոկուն տարրերեն... Մեր Տառուսը ո՞վ գիտե ո՞ր վանքին անկյունը սատանաներուն հետ իր մտերմությունը կապրի հիմա: ...Մեծ գործավորներ, ազգի շինողներ, ահա՛ մեզի պակասը» [26]:

*Հոկտեմբեր, 2016թ.*

## **Աղբյուրներ և գրականություն<sup>2</sup>**

1. *Գ.Խաժակ*, «Ի՞նչ է ազգությունը», Կ.Պոլիս, 1912, էջ 26:
2. *Հ.Քաջազնունի*, «Ազգ և հայրենիք», «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923 # 7, էջ 83-102, նույնը՝ առանձին գրքով, Երևան 2014, էջ 44-46:

<sup>1</sup> Համեմատեք. «Հայ ժողովուրդն ազատություն է ուզում... և այս խոսքը միակ այբն է, որի անհրաժեշտությունը բոլորի կողմից ընդունված պետք է համարել: Դա, իհարկե շատ որոշ պայման է, բայց արդյոք ք ... ազատության ձգտելով մեր ժողովուրդը ուզում է միայն ազգային ինքնասիրությանը բավարարություն տալ, թե՛ այդ դրության հետ նա կապում է առհասարակ իր կեցության ընդհանուր բարեփոխումը: ...Սա այն բեռն է, որի վրա անհրաժեշտ է կանգ առնել» [25]:

<sup>2</sup> Հղումների ցանկը կազմելիս նպատակադրված կերպով շեշտը դրել ենք հայալեզու հեղինակների վրա, ոչ թե որովհետև անձանոթ ենք արտասահմանյաններին կամ անտեսում ենք դրանք, այլ խնդիր ունենալով ընթերցողի ուշադրությունը հրավիրել հողվածում արժարժվող թեմաների վերաբերյալ այսօր մեծ մասամբ մոռացված կամ անտեսված հայալեզու տեսական գրականության վրա, որի բովանդակությունն ու մակարդակը, ըստ մեզ, չեն զիջում մեզանում առավել հայտնի օտար գրականությանը, սակայն որին դիմելուն տեսական հարցերում խանգարում են մեր գավառական բարդույթները «ֆիրմա տղա» երևալու քաղքենիական ձգտումը:

3. *Լ.Շանթ*, «Ի՞նչ է ազգությունը», «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, #3:
4. *Գ.Փ.Գ. Գերել*, “Наука логики”, т. 1, Москва, 1970, с. 231-241.
5. *Լ.Շանթ*, «Ազգությունը հիմք մարդկային ընկերության», Երկեր, հ. 5, Ընկերաբանական և գրաբանական հարցեր, Բեյրութ, 2008, էջ 24-25:
6. *Մ.Նալբանդյան*, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», Երկեր, Երևան, 1985, էջ 504:
7. *Թ.Ավդալբեկյան*, «Միքայել Նալբանդյան», Բանասիրական և հրապարակախոսական երկեր, նամակներ, Երևան, 2011, էջ 192-197:
8. *Ի.Տալին*, «Марксизм и национальный вопрос», Сочинения, т. 2, Москва, 1947, с. 290–367.
9. *Ս.Սավիցկի*, «Географический обзор России-Евразии», «Континент Евразия», Москва, 1997, с. 279-292.
10. *Հ.Ասատրյան*, «Հայկական բարձրավանդակի ընդհանուր բնութագիրը», Հատընտիր, Երևան, 2004, էջ 32-35:
11. *Ռուբեն (Ռուբեն Տեր-Մինասյան)*, «Հայաստան միջցամաքային ուղիներու վրա», Բեյրութ, 1984, էջ 127-134:
12. *Եղիշե*, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի», Երևան, 1989, էջ 12-13:
13. *Հ.Մանանդյան*, «Ֆեոդալիզմը Հայաստանում», Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 406-407:
14. *Ն.Ադոնց*, «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 220-221:
15. *Ե.Տեր-Մինասյանց*, «Հայոց եկեղեցու հարաբերությունները Ասորվոց եկեղեցիների հետ», Սբ. Էջմիածին, 1908, էջ 105:
16. *Ղազար Փարպեցի*, «Հայոց պատմություն», Երևան, 1982, էջ 79:
17. *Լ.Տեր-Պետրոսյան*, «Խաչակիրները և հայերը», հ. Բ, Երևան, 2007, էջ 6-10:
18. *Ն.Ադոնց*, «Հայաստանը Հուստինիանոսի» դարաշրջանում, Երևան, 1987, էջ 227-239:
19. *Վ.Իսկանյան*, «Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VIIդդ.», Երևան, 1991:
20. *Մ.Օրմանյան*, «Հայ ազգություն», Կ.Պոլիս, 1880, էջ 12:
21. *Ա.Ստեփանյան*, «Պատմության հետազոծը», Երևան, 2014, էջ 44:
22. *Յովհան Որոտնեցի*, «Համառատ լուծմունք «Պերի Արմենիաս» գրոցն», Երևան, 2014, էջ 76:
23. *Յովհաննու Որոտնեցույ* վերլուծություն ստորագութեանց Արիստոտելի, Երևան, 1956, էջ 60:
24. *Վ.Նավասարդյան*, «Հայաստանի Անկախությունը», Ժնև, 1924, էջ 38-41:
25. *Ռոստոմ*, «Այբ ու Բեն», Երկեր, Բեյրութ, 1979, էջ 36-37:
26. *Հ.Օշական*, «Հայաստանյայց գրականություն», «Անգղիի կտուցին տակ (տեսական գրություններ)», Բեյրութ, 2008, էջ 37-39:

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ. ՆՊԱՏԱԿ ԵՎ ՄԻՋՈՑ**

**Հրանտ Տեր-Աբրահամյան**

**Ամփոփագիր**

Հոդվածում պաշտպանվում են այն դրույթները, որ՝ ա. ազգերի վերջնական կայացումը տեղի է ունենում պետություններում և պետությունների միջոցով, բ. պետության մեջ ազգերը կայանում են այլազան՝ քաղաքական, ռազմական, հոգևոր, տնտեսական համակարգերի միջոցով, գ. պետության անկումից հետո պահպանվող ազգային համակարգերը նպաստավոր պայմաններում դառնում են ազգային անկախության

վերականգնման հիմք, դ. ազգերը պահպանվում և զարգանում են իրենց ազգային համակարգերի գոյությամբ ու գործունեությամբ, իսկ դրանց մաշվելով և խորտակվելով՝ անկում է ապրում նաև «ազգային կարգավիճակը», ե. ազգը նախ և առաջ քաղաքական՝ ինքնուրույն որոշումներ ընդունելու և գործադրելու կարողություն ունեցող միավոր է, գ. որպես քաղաքական միավոր՝ ազգի բնական միտումն է կազմավորվել կամ վերակազմավորվել իբրև պետություն:

## НАЦИОНАЛЬНАЯ НЕЗАВИСИМОСТЬ: ЦЕЛЬ И СРЕДСТВО

*Грант Тер-Абраамян*

### Резюме

В статье рассматриваются теоретические аспекты вопроса о национальной независимости, анализируется связь национального и государственного. Акцентируется роль исторически сложившихся национальных институтов и структур. Подчеркивается, что независимое государство не может возникнуть и развиваться на пустом месте, а вбирает в себя исторический опыт и результаты деятельности предшестующих поколений, причем связь между настоящим и прошлым, политическим и историческим не только формальна, но и содержательна и существенна. Будучи органическим результатом национальной истории, независимое государство имеет своей целью дальнейшее раскрытие национальной индивидуальности на основе не только стратегии сохранения, а прежде всего развития и движения вперед. Национальное развитие не только не противоречит универсальному, но, напротив, именно через национальное развитие раскрывается универсальное измерение.

## NATIONAL INDEPENDENCE: GOAL AND MEANS

*Hrant Ter-Abrahamyan*

### Resume

The article advocates the concepts that: (a) final establishment of a nation occurs in states and through states; (b) in a state, the nations become accomplished through various systems, such as political, military, spiritual and economic; (c) after the collapse of a state, the preserved national systems may become a basis for restoration of national independence, if conditions favor; (d) nations persevere and develop through existence and activities of their national systems, while the decay and collapse of the latter leads to decline of the “nation status”; (e) nation is first of all a political entity capable of making and implementing stand-alone decisions; and (f) as a political entity, a nation naturally tends to structure and restructure itself into a state.



# ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 2008-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## *Էդգար Հովհաննիսյան՝*

*Բանալի բառեր՝* հայկական սփյուռք, Հայաստան-Սփյուռք հարաբերություններ, Սփյուռքի նախարարություն, Մերժ Սարգսյան:

Տարբեր պատճառներով օտար երկրներում հայտնված զանգվածների սփյուռքացման գործում կարևոր դերակատարում ունեն Հայրենիքի գաղափարը և հարաբերությունները հայրենի պետության հետ: Մեր հայրենակից, սփյուռքի հարցերի հայտնի տեսաբան Խաչիկ Թեղեղյանը *սփյուռք* երևույթի բնութագրական կողմերից է համարում «ինստիտուցիոնալ կապը սփյուռքյան տարբեր համայնքների և հայրենիքի միջև» [1, p. 10-11]: Իսկ ըստ ֆրանսիացի տեսաբան Ստեֆան Դյուֆուայի. «Սփյուռքը որևէ այլ բան չի նշանակում, քան տեղափոխման գաղափար և կապերի պահպանում իրական կամ մտացածին հայրենիքի հետ» [2, p. 2]: Այսինքն՝ ցանկացած սփյուռքի համար հայրենիքի հետ կապերն ունեն կենսական նշանակություն:

Հայկական սփյուռքի ձևավորումից սկսած՝ կապերը Հայրենիքի հետ գոյություն են ունեցել, սակայն քաղաքական պատճառներով պայմանավորված՝ այդ հարաբերությունները տարբեր ժամանակաշրջաններում ունեցել են բովանդակային տարբեր դրսևորումներ, հաճախ էլ հարաբերություններ որպես այդպիսին գրեթե գոյություն չեն ունեցել: Եթե 1920-1930-ական թթ. Սփյուռքի հարաբերությունները խորհրդայնացված հայրենիքի հետ կարելի է բնութագրել որպես *բարեգործական գործունեության* շրջան<sup>1</sup>, ապա 1960-1980-ական թվականները հիմնականում կարելի է բնորոշել որպես *մշակութային հարաբերությունների* շրջան<sup>2</sup>: 1988թ. արցախյան շարժման մեկնարկով և 1991թ. Հայաստանի անկախացումով, ի թիվս այլ բնույթի հարաբերությունների, սկիզբ է դրվում Հայաստան-Սփյուռք քաղաքական հարաբերությունների ժամանակաշրջանին:

<sup>1</sup> Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ:

<sup>1</sup> 1920-1930-ական թթ. Խորհրդային Հայաստանում սփյուռքյան կազմակերպություններից գործունեության իրավունք էր տրված միայն Հայկական բարեգործական ընդհանուր միությանը:

<sup>2</sup> 1964թ. հիմնադրվում և մինչև 1980-ական թթ. վերջն ակտիվ գործունեություն է ծավալում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որի գործունեությամբ էլ հենց պայմանավորվում են Հայաստան-Սփյուռք հարաբերություններն այդ ժամանակահատվածում:

Այսպիսով, 1991թ. Հայաստանի քաղաքական անկախացումից հետո Հայկական սփյուռքի հետ հարաբերությունների զարգացման նոր հնարավորություններ ստեղծվեցին: Անկախության տարիներին ստեղծվեցին նաև մի շարք պետական գործիքներ և ձևաչափեր, որոնք պետք է իրականացնեին և համակարգեին ՀՀ պաշտոնական քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ:

Մակայն հարկ է նշել, որ անկախության քառորդարյա գոյության ընթացքում Հայաստան-Սփյուռք հարաբերությունները չընթացան կայուն զարգացման հետագծով: Դրանում երբեմն արձանագրվեցին վայրէջքներ, երբեմն՝ վերելքներ, որոնք պայմանավորված էին ներքաղաքական, ինչպես նաև արտաքին մի շարք գործոններով: Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում կարևոր հանգամանք է Հայաստանում իշխանության ղեկին գտնվող քաղաքական ուժի դիրքորոշումը Սփյուռքի նկատմամբ: Վերջին 25 տարիներին Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման դինամիկան մեծ մասամբ կապված է եղել ՀՀ երեք նախագահների՝ Հայկական սփյուռքի նկատմամբ դիրքորոշումների և մոտեցումների հետ: Այդ դիրքորոշումներում գլխավոր դերակատարում է ունեցել այն հարցադրումը, թե արդյոք ինչպիսի քաղաքական հարաբերություններ պետք է ունենալ Սփյուռքի հետ, և ինչ դերակատարում պետք է ունենա հայկական սփյուռքը Հայաստանի Հանրապետության թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական կյանքում: Պետք է նշել, որ անկախության նվաճումից հետո տարբեր ժամանակաշրջաններում հանրապետությունում իշխանության ղեկին հայտնված քաղաքական ուժերը երբեմն նույնիսկ միմյանցից արմատապես տարբերվող մոտեցումներ են ունեցել այս հարցերում: Ուստի, ելնելով դրանից՝ անկախության տարիներին Հայաստան-Սփյուռք հարաբերությունները կարելի է բաժանել երեք շրջափուլի՝ պայմանավորված երեք նախագահների կառավարման տարիներով և Սփյուռքի նկատմամբ վերջիններիս իրականացրած քաղաքականությամբ:

Այսպես, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հիմնականում դեմ է եղել Սփյուռքի քաղաքական դերակատարության մեծացմանը ՀՀ ներքաղաքական կյանքում: Իսկ ինչ վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին, որը կարևոր կռվան է հանդիսանում Հայաստան-Սփյուռք հարաբերություններում, ապա դրանք բնորոշվեցին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում բավական զուսպ քաղաքականությամբ: Վերջինս գտնում էր, որ Սփյուռքի հետ փոխադարձ անհասկացողությունն ու անվստահությունն այնքան ժամանակ կլինեն, քանի դեռ Սփյուռքի առաջնորդները չեն հաշտվել այն մտքի հետ, որ քաղաքականությունն արվում է Հայաստանում [3, էջ 105]:

Սփյուռքի հետ կապված հարցերում հանրապետության առաջին նախագահից տարբերվող դիրքորոշում ուներ 1998թ. նախագահ դարձած Ռոբերտ Քո-

չարյանը: Վերջինիս կատարած մի շարք քայլեր Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ջերմացման ազդակներ հանդիսացան: Մասնավորապես, Ռոբերտ Քոչարյանը կոշտացրեց դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը հռչակեց ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից [4, էջ 548-549], իսկ սփյուռքյան առանցքային քաղաքական կազմակերպություններից մեկը՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, դարձավ իշխանության մաս: ՀՀ երկրորդ նախագահը փորձեց նաև Հայաստան-Սփյուռք երեք համաժողովների միջոցով ավելի սերտացնել հարաբերությունները Սփյուռքի հետ: Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին վերացվեց երկքաղաքացիության սահմանադրական արգելքը, իսկ 1998թ. Արտաքին գործերի նախարարությունում ձևավորվեց Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն, այնուհետև՝ գործակալություն, որը հանդիսանալու էր առաջին պետական մարմինը, որը համակարգելու էր Հայաստան-Սփյուռք հարաբերությունները:

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների երրորդ փուլը համընկնում է նախագահ Սերժ Սարգսյանի կառավարման տարիների հետ, որի ընթացքում, պայմանավորված Սերժ Սարգսյանի ունեցած մոտեցումներով և իրականացրած քաղաքականությամբ, Հայաստան-Սփյուռք հարաբերություններն էական որակական և կազմակերպական բնույթի փոփոխություններ կրեցին:

2008թ. նախագահական ընտրությունների արդյունքում ՀՀ երրորդ նախագահ դարձավ Սերժ Սարգսյանը: Շատ փորձագետների կանխատեսմամբ՝ նոր նախագահը պետք է ուղղակի շարունակողը հանդիսանար նախորդ նախագահի ներքին և արտաքին քաղաքականության: Սակայն իշխանության գալով՝ Սերժ Սարգսյանը որդեգրեց միանգամայն նոր մոտեցումներ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական մի շարք հարցերում:

Նախորդ երկու նախագահներից տարբեր էին նաև Սերժ Սարգսյանի դիրքորոշումները Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում: Հանրապետության երրորդ նախագահի քաղաքական ծրագրերի կարևոր մասը կազմեց Հայկական սփյուռքի հետ հարաբերությունների ակտիվացումը: Նշենք, որ 2008թ. նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում նախագահի գրեթե բոլոր թեկնածուներն իրենց ծրագրերում առանձին բաժիններ էին հատկացրել Հայաստան-Սփյուռք հարաբերություններին<sup>1</sup>: Սերժ Սարգսյանը 2008թ. նախագահական ընտրություններից առաջ հրապարակած իր նախընտրական ծրագրում,

<sup>1</sup> *Բայառյան Հ.*, «Հայաստան-Սփյուռք հարաբերությունների» թեման նախագահի թեկնածուների ծրագրերում, 11 փետրվարի 2008, հասանելի է՝ <http://hetq.am/arm/news/31708/hayastan-spyurq-haraberutyunneri-teman-nakhagahi-teknatsuneri-tsragrerum.html>

անդրադառնալով Հայկական սփյուռքի հետ կապված հարցերին, նշում է, որ «...այսուհետ հնարավոր չէ մշակել և իրականացնել որևէ գլոբալ ծրագիր՝ առանց այս գործունը (սկստի ունի Հայկական սփյուռքը- Է.Հ.) հաշվի առնելու»<sup>1</sup>: Վերջինիս նախընտրական ծրագրից ակնհայտ էր, որ նախագահ դառնալու դեպքում Սերժ Սարգսյանը Սփյուռքի նկատմամբ իրականացնելու է այնպիսի քաղաքականություն, որտեղ էապես կարևորվելու էր Սփյուռքի դերը ՀՀ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Նախագահ ընտրվելուց հետո, արդեն երդման արարողության ժամանակ՝ 2008թ. ապրիլի 9-ին, նորընտիր նախագահը հայտարարում է. «Կառուցելու ենք այն Հայաստանը, որը կմիավորի համայն հայությանը, այնպիսի Հայաստան, որ կլինի բոլոր հայերի հայրենիքը: Իմ ջանքերն ուղղված են լինելու համագգային նպատակների իրագործմանը, սերունդների միջև կապն առավել ամրապնդելուն, տարբեր սոցիալական խմբերի շահերը համատեղելուն, ազգային փոքրամասնությունների ու հայապահպանության խնդիրներին»<sup>2</sup>: Իր նախընտրական ծրագրում Սերժ Սարգսյանը հայտարարել էր նաև Սփյուռքի նախարարություն ստեղծելու մասին: Վաղուց հասունացել էր անհրաժեշտությունը՝ ունենալու մի կառույց, որը կհանդիսանար Հայաստանի Հանրապետության՝ Սփյուռքի նկատմամբ քաղաքականության անմիջական իրականացնողն ու համակարգողը: Նախագահ ընտրվելուց հետո Սերժ Սարգսյանի առաջին ձեռնարկներից մեկը եղավ այդ նախարարության հիմնումը: Նման նախարարություն ունենալու միտքը հնչել էր դեռևս Հայաստան-Սփյուռք երկրորդ համաժողովի ժամանակ, սակայն դրա իրագործողը հանդիսացավ Սերժ Սարգսյանը: 2008թ. հոկտեմբերից արդեն ՀՀ կառավարության կազմում սկսեց գործել Սփյուռքի նախարարությունը<sup>3</sup>: Նորաստեղծ նախարարությունը հանդիսանալու էր «...որպես պետական գործիք Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականությունն ամբողջական և արդյունավետ դարձնելու» [5, էջ 20]: Սփյուռքի նախարարությունը Հայաստանի Հանրապետության նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակում և իրականացնում է Հայաստանի և Սփյուռքի հետ կապերի ամրապնդման, Սփյուռքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ գործակցության զարգացման, հայապահպանության, Սփյուռքի ներուժի հայտնաբերման, հայրենադար-

<sup>1</sup> Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիր (2008), [http://www.president.am/u\\_files/file/docs/program\\_arm.pdf](http://www.president.am/u_files/file/docs/program_arm.pdf)

<sup>2</sup> ՀՀ նախագահի պաշտոնական կայք, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի երդմանկալության օրը, ապրիլի 9, 2008թ., <http://www.president.am/hy/domestic-visits/item/2008/04/09/news-32/>

<sup>3</sup> ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ Սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ Սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» (ընդունվել է 2008թ. սեպտեմբերի 11-ին): <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78354>

ձույթյան ծրագրերի մշակման և նախարարության իրավասությանը վերապահված այլ բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը<sup>1</sup>: Այս քայլը դրականորեն ընդունվեց Սփյուռքի հասարակական-քաղաքական շրջանակների կողմից: Սփյուռքի նախարարության ստեղծումով բացվում էր նոր փուլ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում:

Նախարարության ստեղծումից հետո, 2009թ. օգոստոսին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվում է Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համար մի կարևոր փաստաթուղթ՝ «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը» [6]: «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը» սահմանում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, գերակա ուղղությունները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները: Պետական քաղաքականությունը Հայաստան-Սփյուռք գործակցության բնագավառում իրավական, տնտեսական, դիվանագիտական, կրթական, մշակութային, տեղեկատվական, կազմակերպչական հարաբերությունների ամբողջությունն է, որն ուղղված է հայապահպանության խնդիրների լուծմանը և ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող հարցերում Սփյուռքի համակարգված մասնակցությանը: Հայեցակարգը հռչակում է Հայաստան-Սփյուռք «հայաստանակենտրոն» գործակցության զարգացման մասին:

«Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգում» նախանշված է, որ Հայաստան-Սփյուռք գործակցությանը համահայկական ընդգրկում հաղորդելու, համագգային, համամարդկային խնդիրները համատեղ քննարկելու և սկզբունքները որոշելու, պետական մարմինների գործունեությանը համահայկական բնույթ հաղորդելու և դրանց միջև Հայաստան-Սփյուռք գործակցությանը նվիրված համագործակցություն ապահովելու նպատակով ՀՀ նախագահի ղեկավարությամբ նախատեսվում էր ստեղծել համահայկական կենտրոնական մարմին՝ Ազգային խորհուրդ [6, էջ 27]: Ազգային խորհուրդն ունենալու էր ազգային-հասարակական խորհրդատվական բնույթ, որը քննության առարկա էր դարձնելու համազգային առաջնահերթությունները, համահայկական հիմնահարցերը: ՀՀ և ԼՂՀ պետական կառույցները Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնեն Ազգային խորհրդի երաշխավորությունները: Ազգային խորհուրդը դառնալու էր համահայկական ներկայացուցչական մարմին, որը, թեև ըստ այս հայեցակարգի ունենալու էր խորհրդատվական բնույթ, սակայն կարևոր դերակատարում էր ունենալու համահայկական բնույթի հարցերում կայացված որոշումներում: Ազգային խորհրդում ընդգրկվելու էին ՀՀ և ԼՂՀ պետական պաշտոնյաներ, Սփյուռքի

<sup>1</sup>Նույն տեղում:

կառույցների ներկայացուցիչներ, հայտնի անհատներ, հոգևորականներ: Ապագայում նման համահայկական կառույցի ստեղծումը լիովին համապատասխանում է Սփյուռքի նկատմամբ իրականացվող քաղաքականության հարցում Սերժ Սարգսյանի ունեցած դիրքորոշումներին: Դատելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի Ազգային խորհրդի ստեղծման վերաբերյալ դրույթներից՝ կարելի է ենթադրել, որ հենց այս կառույցին էր վերապահվելու Հայաստան-Սփյուռք միասնական քաղաքական օրակարգի մշակման հարցը, որն օրակարգային խնդիր է նաև այսօր:

Բացասական ձևակերպումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք այս հատվածը շարադրել հետևյալ կերպ. «Ազգային խորհրդի գաղափարը գործնականում կյանքի կոչելու նպատակով՝ Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովի ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանն առաջարկեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը<sup>1</sup> հետագայում վերանվանել «Համահայկական խորհուրդ»<sup>2</sup>:

Սփյուռքի նախարարություն ստեղծելուց հետո Սփյուռքի նկատմամբ ՀՀ քաղաքականության համակարգման և միասնականացման անհրաժեշտություն էր առաջացել: Ուստի, 2013թ. Սերժ Սարգսյանի հրամանագրով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով Սփյուռքի նախարարությունը ճանաչվում էր որպես գլխադասային մարմին հայկական սփյուռքի հետ հարաբերությունների բնագավառներում<sup>3</sup>: Նույն այդ հրամանագրով Սփյուռքի նախարարությանն իրավունք էր վերապահվում ուղղակիորեն աշխատել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների հետ Հայաստան-Սփյուռք գործակցությանն առնչվող հարցերով, իսկ ՀՀ գործադիր իշխանության և տարածքային կառավարման մարմիններին հանձնարարվում էր Սփյուռքի նախարարության հետ նախապես քննարկել Հայաստան-Սփյուռք գործակցության ուղղությամբ իրականացվող ծրագրերը: Նշված հրամանագրում կարևոր էր ևս մեկ կետ, որը նախատեսում էր Սփյուռքի ներկայացուցիչների ներգրավումը Սփյուռքին առնչվող միջգերատեսչական հանձնաժողովների, աշխատանքային խմբերի և այլ մարմինների կազմում: Սրանով կարևոր քայլ էր կատարվում Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում. Սփյուռքի կառույցների ներկայացուցիչները հնարավորություն էին ստանում ան-

<sup>1</sup> ՀՀ նախագահի 2011թ. ապրիլի 23-ի ՆՀ-67-Ս հրամանագրով ՀՀ նախագահի գլխավորությամբ ստեղծվում էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով:

<sup>2</sup> ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովի փակման ժամանակ, տե՛ս <http://www.mindiaspora.am/am/Conferences/3418>

<sup>3</sup> ՀՀ նախագահի հրամանագիրը հայկական սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին, տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86167>

միջազգային մասնակցություն ունենալ հայկական սփյուռքի նկատմամբ ՀՀ քաղաքականության մշակման գործընթացին: Պետք է նշել, որ Սփյուռքի նախարարության ստեղծումից հետո որոշ նախարարություններ շարունակեցին համակարգել հարաբերությունները Սփյուռքի հետ իրենց գերատեսչական ոլորտների շրջանակներում: Մասնավորապես, Մշակույթի նախարարությունն ակտիվ աշխատանքներ է իրականացնում Հայաստան-Սփյուռք մշակութային կապերի բնագավառում, իսկ Կրթության և գիտության նախարարության կազմում մինչ օրս գործում է Սփյուռքի հետ կապերի բաժինը, որին էլ վերապահված է Հայրենիք-Սփյուռք կրթական ոլորտի գործունեության համակարգումը<sup>1</sup>:

2008թ. նախագահ Սերժ Սարգսյանը նախաձեռնեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված քաղաքական գործընթաց: Հայ-թուրքական հարաբերությունները թե՛ Հայաստանի, թե՛ Սփյուռքի համար կարևորագույն խնդիր են: Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ցանկացած զարգացում ուղղակիորեն առնչվում է նաև Սփյուռքին, ուստի հայ-թուրքական հարաբերությունները ոչ միայն Հայաստան-Թուրքիա, այլև Հայաստան-Սփյուռք-Թուրքիա հարաբերություններ են:

2008թ. հունիսի 25-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը մտադիր է բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ, և ինքը պատրաստվում է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին հրավիրել Երևան՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների՝ նույն տարվա աշնանը տեղի ունենալիք հանդիպումը<sup>2</sup>: Այս հայտարարությամբ սկիզբ դրվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված «ֆուտբոլային» դիվանագիտությանը: Այս ամենի արդյունքում 2009թ. ապրիլի 22-ին ՀՀ և Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունները Շվեյցարիայի արտաքին գործերի դեպարտամենտի միջնորդությամբ կնքեցին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզ» [7, c. 12]: Իսկ օգոստոսի 31-ին Հայաստանը և Թուրքիան նախաստորագրեցին «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները<sup>3</sup>:

<sup>1</sup> Հայաստան-Սփյուռք կրթական կապերի զարգացման տեսանկյունից կարևոր դերակատարում ունեն Համահայկական կրթական խորհրդաժողովները, որոնք կազմակերպվում են 2004թ. սկսած, երկամյա պարբերականությամբ: Վերջին 7-րդ կրթական խորհրդաժողովը տեղի է ունեցել 2016թ. օգոստոսին Աղվերանում:

<sup>2</sup> *Գեղամյան Վ.*, Հայ-թուրքական հարաբերությունները 2008-2010թթ., հետահայաց ամփոփում, տե՛ս [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5338](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5338)

<sup>3</sup> ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, Երկկողմ հարաբերություններ, <http://www.mfa.am/hy/country-by-country/tr/>

Այս փաստաթղթերի վերաբերյալ Սփյուռքի արձագանքը հիմնականում խիստ բացասական էր: Հասկանալի է, թե ինչ էմոցիոնալ մոտեցում ունի Սփյուռքը ցեղասպանության հետ կապված հարցերում, և նման արձագանքը կանխատեսելի էր: Սփյուռքի հասարակական-քաղաքական շրջանակները գտնում էին, որ ՀՀ քաղաքական ու տնտեսական շահերով պայմանավորված չպետք է անարգվի ցեղասպանության զոհերի հիշատակը: Այս պայմաններում, 2009թ. հոկտեմբերի սկզբին պաշտոնական հայտարարություն տարածվեց այն մասին, որ Սերժ Սարգսյանը մեկնում է համահայկական ուղևորության՝ հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ Սփյուռքի հետ քննարկումներ անցկացնելու համար<sup>1</sup>: Հոկտեմբերի 2-ին մեկնարկեց նախագահի ուղևորությունը հետևյալ երթուղով՝ Փարիզ, Նյու Յորք, Լոս Անջելես, Բեյրութ և Դոնի Ռոստով: «Ուզում եմ լսել աշխարհասփյուռ հայերի մտահոգությունները, որովհետև այսօրինակ ցավոտ հարցում այդպիսիք չլինել չեն կարող, ուզում եմ մտովի համադրել դրանք իմ սեփական մտահոգությունների հետ, ստուգել՝ արդյո՞ք կան կողմեր, որ հաշվի չեն առնվել կամ բաց են մնացել, արդյո՞ք կան հարցեր, որոնց լուծման համար հնարավորությունների ստեղծման փոխարեն հնարավոր է անզգուշաբար դռներ փակենք այս փուլում», - ասել է նախագահ Սարգսյանը համահայկական ուղևորության ընթացքում Սփյուռքի ներկայացուցիչների հետ հանդիպումներից մեկի ժամանակ<sup>2</sup>: Հայաստանի անկախության ընթացքում սա, թերևս, ամենանշանակալի դեպքն էր, երբ ՀՀ իշխանությունները, երկրի նախագահի մակարդակով, փորձում էին երկրի արտաքին քաղաքականության իրականացման հարցում կարևորել Սփյուռքի դիրքորոշումը: Նախագահի այս այցելությունը նպատակ ուներ տարհամոզել Սփյուռքին հայ-թուրքական հարաբերությունների հարցում՝ դա հիմնավորելով ստեղծված մի շարք սոցիալ-տնտեսական և քաղաքական անհրաժեշտություններով:

Սակայն հանդիպումները գրեթե չփոխեցին Սփյուռքի վերաբերմունքն այդ հարցում: Պաշտոնական Հայաստանը ևս չիրաժարվեց իր որդեգրած քաղաքականությունից, որն ուղղված էր հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Սակայն Սերժ Սարգսյանի համահայկական ուղևորությունը մեր անկախ պետականության պատմության մեջ, թերևս, առաջին դեպքն էր, երբ փորձ էր արվում ՀՀ արտաքին քաղաքականության կոնկրետ դրվագում ընդհանրացնել և նույնացնել Հայաստանի և հայկական սփյուռքի դիրքորոշումները, Հայաստանը: Նախագահի համահայկական ուղևորության ընթացքում նշված քաղաքներում տեղի ունեցան բողոքի ցույցեր: Կոշտ հայտարարություններով հանդես եկավ

<sup>1</sup> Նախագահի համահայկական ուղևորությունը սփյուռքահայ գաղթօջախներ, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2009/10/01/news-69/>

<sup>2</sup> Լույս տեղում:



Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն, արձանագրությունների վավերացմանը դեմ արտահայտվեցին Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Ռամկավար Ազատական և Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունները, ինչպես նաև մի շարք այլ կուսակցություններ ու միավորումներ: Իսկ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, որն այդ ժամանակ հանդիսանում էր հայաստանյան կոալիցիոն կառավարության մաս, դուրս եկավ կառավարության կազմից:

Այնուամենայնիվ, 2009թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում ԱՄՆ, ՌԴ, ԵՄ և Շվեյցարիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարների ներկայությամբ Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանը և Ահմեդ Դավութօղլուն ստորագրում են հայ-թուրքական արձանագրությունները: Այս արձանագրությունների հետագա ճակատագիրը հայտնի է, երբ 2010թ. ապրիլի 24-ի նախօրյակին՝ ապրիլի 22-ին Հայաստանի իշխող կոալիցիան որոշում է կայացնում ՀՀ Ազգային ժողովում առկախել արձանագրությունների վավերացման ընթացքը [7, c. 13]: Դրան էլ հետևում է նախագահ Ս.Սարգսյանի կոչը, որով հայտարարվում էր ՀՀ-ի կողմից արձանագրությունների վավերացման ընթացքի կասեցման մասին<sup>1</sup>:

2013թ. Հայաստանում տեղի ունեցան հերթական նախագահական ընտրությունները: Սերժ Սարգսյանն իր նախընտրական ծրագրում հայտարարում էր. «Առաջիկա տարիներին կմշակվեն Սփյուռքի հետ համագործակցության նոր ձևաչափեր»<sup>2</sup>: Պարզ էր դառնում, որ հանրապետության երրորդ նախագահին չեն բավարարում Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների արդյունավետության մակարդակը, և անհրաժեշտ էր փնտրել համագործակցության նոր ձևաչափ, որն արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների և ինստիտուտների հետ միասին խորացնելու էր Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները: Հայաստանյան քաղաքական էլիտան սկսեց այդ ձևաչափի մշակման կամ փնտրտուքի աշխատանքները: Այս ամենը որոշակիորեն արտացոլվեց նաև Սերժ Սարգսյանի նախագահության տարիներին կազմակերպված Հայաստան-Սփյուռք համաժողովների ժամանակ վերջինիս արած առաջարկություններում, նաև որոշակիորեն ՀՀ նոր Սահմանադրության դրույթներում:

Սերժ Սարգսյանի նախագահության տարիներին շարունակեցին կազմակերպվել Հայաստան-Սփյուռք համաժողովներ<sup>3</sup>, որպես արդեն ավանդույթ դար-

<sup>1</sup> ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2015թ. փետրվարին ԱԺ-ից հետ է կանչել հայ-թուրքական արձանագրությունները:

<sup>2</sup> Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիր. Դեպի ապահով Հայաստան (2013), [http://www.president.am/u\\_files/file/docs/election-programm-2013-hy.pdf](http://www.president.am/u_files/file/docs/election-programm-2013-hy.pdf)

<sup>3</sup> Հայաստան-Սփյուռք առաջին համաժողովը տեղի է ունեցել 1999թ. սեպտեմբերի 22-24-ը Երևանում, երկրորդը՝ 2002թ. մայիսի 27-28-ը, երրորդը՝ 2006թ. սեպտեմբերի 18-20-ը:

ձած կարևոր ձևաչափի Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում: 2011թ. սեպտեմբերի 19-20-ը տեղի ունեցավ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովը: Այն կազմակերպվել էր նորաստեղծ Սփյուռքի նախարարության անմիջական նախաձեռնությամբ և Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների ու ներկայացուցիչների համահայկական համաժողով էր հանդիսանում: Համաժողովին մասնակցում էր Սփյուռքի շուրջ 550 ներկայացուցիչ մոտ 50 երկրներից, որոնք ներկայացնում էին Սփյուռքի 151 կազմակերպություն [8]:

Հանդիսավոր նիստում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ նախագահը: Ողջունելով և շնորհավորելով Հայաստանի անկախության 20-րդ տարեդարձի առթիվ՝ նա համաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց Հայրենիք-Սփյուռք գործակցությանն առնչվող այն հիմնախնդիրների վրա, որոնք կենսական են Հայրենիքի և Սփյուռքի հզորացման, ազգային միասնության, Ցեղասպանության ճանաչման, հայապահպանության համար: Իր խոսքում նախագահը նշեց. «Սփյուռքն ու Հայաստանը պետք է դառնան միմյանց շարունակություն» [8, թ. 6]: Համաժողովի բացմանը ելույթներով հանդես եկան Սփյուռքի քաղաքական կազմակերպությունների, եկեղեցական ու բարեգործական կառույցների ղեկավարներ:

Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովի հանդիսավոր բացմանը հաջորդեց լիազուրկում նիստը: Համաժողովի մասնակիցները կամավորության ու նախընտրության սկզբունքով բաժանվեցին չորս (լեզվի և կրթության հիմնախնդիրներ, երիտասարդության հիմնախնդիրներ, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ տարածաշրջանային հանձնախմբերի գործունեության մասին, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման կառուցակարգերի մասին) թեմատիկ խմբերի:

Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովը տեղի ունեցավ 2014թ. սեպտեմբերի 18-21-ը: Հերթական այս համաժողովին մասնակցում էր ավելի քան 1000 ներկայացուցիչ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից: Ընդլայնվել էր մասնակցության աշխարհագրությունը, համաժողովին մասնակցելու նպատակով Հայրենիք էին ժամանել աշխարհի շուրջ 60 երկրների հայկական կազմակերպությունների ու կառույցների ղեկավարներն ու ներկայացուցիչները՝ 741 մասնակից, Արցախը ներկայացնում էր 20 մասնակցից բաղկացած պատվիրակությունը, Հայաստանի Հանրապետությունից համաժողովին մասնակցում էին 310 պետական, քաղաքական, մշակութային գործիչներ, գիտնականներ ու լրագրողներ: Համաժողովի բացմանը ելույթով հանդես եկան հայաստանյան և սփյուռքյան պետական և հասարակական-քաղաքական կառույցները ներկայացնող անձինք: Բացման պաշտոնական միջոցառումից հետո համաժողովի ընթացիկ աշխա-

տանքներն այս անգամ ևս զուգահեռաբար շարունակվեցին չորս թեմատիկ նիստերով, որոնք կրում էին հետևյալ խորագրերը.

1. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման գործընթացը
2. Հայաստան-Սփյուռք գործակցության ներկա հիմնախնդիրներն ու հեռանկարները
3. Սիրիահայ համայնքի հիմնախնդիրները
4. Հայրենիք-Սփյուռք 5-րդ համաժողովի թեմատիկ նիստերից մեկի շրջանակներում տեղի ունեցավ Լրագրողների համահայկական 7-րդ համաժողովը<sup>1</sup>:

Հայրենիք-Սփյուռք 5-րդ համաժողովը տեղի ունեցավ Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, մեծապես կարևորվեց համահայկական նշանակություն ունեցող այդ տարելիցին պատշաճ պատրաստվելու անհրաժեշտությունը: Փաստորեն, 100-րդ տարելիցի միջոցառումների մեկնարկը տրվեց հենց այս համաժողովում, երբ ընդունված Հայտարարության մեջ հռչակվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին հսկայածավալ շարժում սկսելու մասին՝ «Հիշում եմ և պահանջում...» կարգախոսով:

Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովի փակման արարողությանը հանդես եկավ ՀՀ նախագահը, որը կարևորեց համաժողովի աշխատանքները, անդրադարձավ սիրիահայերի խնդիրներին, Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին, Հայաստան-Սփյուռք հարաբերություններին, միասնական ուժերով գործելու և հայության առջև ծառայած խնդիրները լուծելու անհրաժեշտությանը: Նախագահ Սարգսյանն առաջարկեց նաև, ինչպես արդեն վերը նշվեց, ստեղծել Համահայկական խորհուրդ, որը կդառնա համահայկական հրատապ խնդիրների քննարկման ազգային մշտական հարթակներից մեկը<sup>2</sup>: Նշենք, որ համաժողովի ընթացքում սփյուռքահայ գործիչների կողմից բազմիցս առաջարկություն էր հնչել ՀՀ Ազգային ժողովում Սփյուռքի ներկայացուցիչների խումբ ստեղծելու մասին: Համաժողովի վերջում ընդունված Հայտարարության մեջ<sup>3</sup> հավանություն տրվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկին, որպեսզի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը 2015թ. ապրիլի 24-ից հետո վերանվանվի Համահայկական խորհուրդ՝ համակարգելու համազգային հրատապ խնդիրները: Նման կառույցի

<sup>1</sup> Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողով, տե՛ս <http://www.mindiaspora.am/am/Conferences/3418>

<sup>2</sup> ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը համաժողովի փակման արարողությանը, <http://www.mindiaspora.am/am/Conferences/3418>

<sup>3</sup> «Հայաստան-Սփյուռք» համահայկական 5-րդ համաժողովի հայտարարությունը, հասանելի է՝ <http://www.mindiaspora.am/am/Conferences/3418>

ստեղծումը կդառնա նոր ձևաչափ՝ համակարգելու Հայաստան-Միյուռք հարաբերությունները և արդյունավետ լուծելու համահայկական նշանակության խնդիրները: Միյուռքի նախարար Հ. Հակոբյանը հայտարարեց նաև, որ ձեռնամուխ են եղել համահայկական հեռուստաընկերության ստեղծման աշխատանքներին: Նման հեռուստաընկերության ստեղծումը կարող է կարևոր գործիք դառնալ համահայկական տեղեկատվական անվտանգության համատեքստում: Հայաստան-Միյուռք 5-րդ համաժողովից ավելի քան երկու տարի անց դեռևս չի ստեղծվել Համահայկական խորհուրդը, սակայն, մեր ունեցած տեղեկություններով, այդ ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են տարվում:

2015թ. դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում Հայաստանն ունեցավ նոր, բարեփոխված Սահմանադրություն, որով արմատապես փոփոխվում էր երկրի կառավարման համակարգը: Ինչպես հայտնի է, առաջարկվող բարեփոխումներով Հայաստանը դառնալու էր պառլամենտական հանրապետություն: Հանրաքվեի ներկայացված նոր Սահմանադրության նախագծում տեղ էին գտել նաև ՀՀ իշխանությունների մոտեցումները ՀՀ Միյուռքի նկատմամբ իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Հայաստանի անկախացումից հետո տարիների ընթացքում Միյուռքի հետ հարաբերությունների կարևորությունը բարձրացվեց սահմանադրական նորմի աստիճանի, ինչն իր արտահայտությունը գտավ սահմանադրական փոփոխություններում: Այսպես, ՀՀ 1995թ. ընդունված առաջին Սահմանադրության մեջ չկա որևէ խոսք Միյուռքի կամ էլ Հայաստան-Միյուռք հարաբերությունների մասին<sup>1</sup>: 2005թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում Միյուռքի մասով ՀՀ Սահմանադրության մեջ տեղ գտավ հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»<sup>2</sup>: Ակնհայտ էր, որ այս փոփոխությունով Հայաստան պետությունը հավակնում էր Միյուռքի հետ կապերի հետագա ամրապնդմանը, նաև հայտարարվում էր հայկական մշակութային ժառանգությանը տեղ կանգնելու մասին: Նոր Սահմանադրությամբ հանվում էր նաև երկքաղաքացիության արգելքը:

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրություն (1995), <http://www.arlis.am/documentview.aspx?docID=1>

<sup>2</sup> ՀՀ Սահմանադրություն (2005), Գլուխ 1՝ Սահմանադրական կարգի հիմունքները, հոդված 11, տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>

Հաջորդ սահմանադրական փոփոխությունը մեր երկրում, ինչպես վերը նշվեց, տեղի ունեցավ արդեն 2015թ. դեկտեմբերի 6-ին՝ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ: Մինչ հերթական սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն, 2014թ. հոկտեմբերին ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից հռչակվեց սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, որտեղ խոսվում էր ՀՀ նախագահի ընտրությանը Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցության հնարավորության մասին<sup>1</sup>: Նշենք, որ դեռևս 2011թ. հունվարին պաշտոնական այցով ԱՄՆ-ում գտնվող ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Լոս Անջելեսում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ աննախադեպ հայտարարություն էր արել այն մասին, որ Հայաստանի դեկավարությունը մտադիր է սահմանադրական փոփոխություններ կատարել, որոնք թույլ կտան ներգրավել սփյուռքահայերին ՀՀ պետական կառավարման համակարգում<sup>2</sup>: Նախարարը մասնավորապես նշում էր, որ խորհրդարանը պետք է կազմված լինի երկու՝ ներքին և վերին պալատներից. վերջինում էլ հենց պետք է ներգրավվեն սփյուռքահայերը: Նրա խոսքով, վերին պալատը կլինի Սենատը, որտեղ պետք է ընդգրկվեն Սփյուռքի ներկայացուցիչները: «Նախագահի առաջին քայլը եղել է Սփյուռքի նախարարության ստեղծումը, որից հետո մշակվել է լուրջ քաղաքականություն Հայաստան-Սփյուռք հարաբերություններում: Այնուհետև ներմուծվել է երկքաղաքացիության ինստիտուտը, իսկ երրորդ քայլը լինելու է խորհրդարանի վերին պալատի ստեղծումը, որի միջոցով Սփյուռքի հայերը հնարավորություն են ունենալու մասնակցել պետական կառավարմանը, քաղաքականության մշակմանը», - ասել է Սփյուռքի նախարարը<sup>3</sup>:

Հայկական սփյուռքի հասարակական-քաղաքական շրջանակների ներկայացուցիչները հիմնականում ողջունել են երկպալատ խորհրդարան ստեղծելու գաղափարը:

Սակայն հետագայում համաժողովրդական հանրաքվեի դրված Սահմանադրության նախագծում վերը նշված դրույթը համապատասխան ձևակերպում չէր ստացել: Ակնհայտ էր, որ առաջարկվող բարեփոխումների հեղինակները դժվարացել էին գտնել արդյունավետ ձևաչափ, որով Սփյուռքը ներկայացուցչական մասնակցություն կունենար ՀՀ նախագահի ընտրություններին, թեև նոր Սահմանադրությամբ այդ պաշտոնն ավելի շատ կրում է խորհրդանշական բնույթ: Հա-

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ,

<http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

<sup>2</sup> Զ. Յակոբեան Կը Հրապարակէ Սփիւռքը Ներառող Երկպալատ Խորհրդարան Ստեղծելու Նախագահի Ծրագիրը, <http://www.armenia.com.au/news/Armenia-News/Armenian/2081/>

<sup>3</sup> Երկպալատանի խորհրդարան. Պատրա՞ստ են արդյոք Հայաստանը և Սփյուռքը, փետրվարի 19, 2011թ., <http://panarmenian.net/arm/politics/details/61991>

յաստանի քաղաքական գործընթացներին Սփյուռքի ներգրավման և կառավարմանը մասնակից դարձնելու գաղափարը, թեկուզև խորհրդակցական ձայնի իրավունքով, հիմնականում հանդիսացել է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի ծրագրային դրույթներից մեկը: Սակայն, կարծում ենք, այս խնդիրը Հայաստան-Սփյուռք հարաբերություններում ամենաբարդ հարցերից մեկն է: Քանզի, նախ, դժվար է ապահովել բազմաշերտ և ոչ միատարր հայկական սփյուռքի ներկայացուցչական մասնակցությունը: Հետո հստակեցված չեն ՀՀ կառավարմանը Սփյուռքի մասնակցելու ձևաչափը և լիազորությունների շրջանակը: Այս հարցում անհրաժեշտ է ցուցաբերել ծայրահեղ գգուշավորություն, որպեսզի այս քայլը չդառնա Սփյուռքի պառակտմանը նպաստող հավելյալ գործոն և չվտանգի Հայաստան-Սփյուռք հարաբերությունները:

2015թ. դեկտեմբերին ընդունված նոր Սահմանադրությունում ևս տեղ գտան դրույթներ Սփյուռքի վերաբերյալ: 19-րդ հոդվածը, որն անդրադառնում է հայկական սփյուռքի հետ կապերին, բաղկացած է երկու կետից.

1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:
2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը<sup>1</sup>:

ՀՀ նոր Սահմանադրության հայկական սփյուռքին վերաբերող դրույթը համեմատելով Սահմանադրության նախորդ տարբերակի հետ՝ պարզ է դառնում, որ նոր տարբերակում ավելացել է երկու կարևոր շեշտադրում՝ մեկը հայրենադարձության, մյուսը՝ հայապահպանության քաղաքականության մասով: Սրանով ցույց է տրվում, որ Հայաստան պետությունը հավակնում է Սփյուռքի հարցերում «Էապես մեծացնել իր քաղաքական դերակատարությունը»: Այլ հարց է, թե իրականում, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որքանով է հաջողվում այդ քաղաքականությունն իրագործել, կամ որքան է իրականացվող քաղաքականության արդյունավետության աստիճանը:

Այսպիսով, հետազոտության խնդրո առարկա հանդիսացող ժամանակահատվածում Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման ուղղությամբ Հայաստանի քաղաքական ղեկավարության որդեգրած մոտեցումներն

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրություն (2015), Գլուխ 1՝ Սահմանադրական կարգի հիմունքները, հոդված 11, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

ունեցան նաև ակնառու գործնական դրսևորումներ: Կարևոր քայլեր կատարվեցին համակարգելու և ջերմացնելու Հայաստան-Սփյուռք հարաբերությունները, այդ նպատակով ստեղծվեցին մի շարք նոր պետական գործիքներ: Հարաբերությունները Սփյուռքի հետ ոչ միշտ ընթացան հարթ և առանց խնդիրների, սակայն մի բան հասակ է, որ Սփյուռքը և նրա կարծիքը երբեք չարհամարհվեցին համագլխին նշանակություն ունեցող կարևոր հարցերում: Նշենք նաև, որ ՀՀ երրորդ նախագահի՝ համահայկական նոր կառույց ունենալու գաղափարի իրագործման եղանակների և ձևաչափի փնտրտուքը դեռևս շարունակվում է: Փաստենք նաև, որ դեռևս լուծված չէ Հայաստան-Սփյուռք միասնական քաղաքական օրակարգի ձևավորման հարցը: Կարծում ենք, եթե հաջողվի մշակել նոր համահայկական կառույցի արդյունավետ ձևաչափ, ապա վերջինիս կվերապահվի Հայաստան-Սփյուռք նոր միասնական քաղաքական օրակարգի մշակումը՝ ներքին և արտաքին արդի մարտահրավերներին համահունչ: Առաջիկա տարիներին հենց այս խնդրի իրագործմանը պետք է ուղղված լինեն համահայկական քաղաքական և մտավոր շրջանակների ջանքերը:

*Հոկտեմբեր, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Tölölyan Kh.*, Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context, London, Armenian Institute, 2002.
2. *Stephan Dufoix*, Diasporas, Los Angeles, 2008.
3. *Մելքոնյան Է.*, Հայաստանի երրորդ հանրապետության և սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Տարեգիրք, Երևան, 2012:
4. *Պողոսյան Է.*, Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1991-2001թթ.), Երևան, 2003:
5. *Հակոբյան Հ.*, ՀՀ-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, Տարեգիրք, Երևան, 2012:
6. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ, Հավելված ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 20-ի նիստի N34 արձանագրային որոշման, Երևան, 2010:
7. *Искандарян А., Минасян С.*, Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс, Ереван, 2010.
8. Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, Համաժողովի նյութեր, Երևան, 2011:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 2008-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

### *Էդգար Հովհաննիսյան*

#### Ամփոփագիր

Վերջին 25 տարիներին Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման դինամիկան որոշակիորեն կապված է եղել ՀՀ երեք նախագահների հայկական սփյուռքի նկատմամբ ունեցած դիրքորոշումների հետ: Այդ դիրքորոշումներում գլխավոր է եղել այն հարցադրումը, թե ինչ դերակատարում պետք է ունենա հայկական սփյուռքը Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական կյանքում:

Հանրապետության երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի քաղաքական ծրագրերի կարևոր մաս է կազմել հայկական սփյուռքի հետ հարաբերությունների ակտիվացումը: Այդ ուղղությամբ իրականացվել են մի շարք գործնական քայլեր, ստեղծվել է Սփյուռքի նախարարությունը, տեղի են ունեցել Հայաստան-Սփյուռք համաժողովներ և այլն:

Սերժ Սարգսյանի նախագահության տարիներին հարաբերությունները Սփյուռքի հետ ոչ միշտ են ընթացել հարթ և առանց խնդիրների, սակայն մի բան հստակ է, որ Սփյուռքը և նրա կարծիքը միշտ էլ կարևորվել են համազգային նշանակություն ունեցող կարևոր հարցերում: Ավելին, ՀՀ երրորդ նախագահը հանդես է եկել նոր համահայկական կառույցի՝ Համահայկական խորհրդի ստեղծման առաջարկով, որը կդառնա նոր ձևաչափ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում:

Այսպիսով, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները Սերժ Սարգսյանի կառավարման տարիներին հասել են որակական նոր մակարդակի:

## РАЗВИТИЕ ОТНОШЕНИЙ АРМЕНИЯ-ДИАСПОРА В 2008-2016ГГ.

*Эдгар Оганисян*

#### Резюме

В течение последних 25 лет динамика развития отношений Армения-Диаспора явно была связана с позицией трех президентов относительно диаспоры. В их позициях важное место занимал вопрос о том, какую роль должна играть армянская диаспора как во внутренней, так и во внешней политической жизни.

Важную роль в политических программах третьего президента республики Сержа Саргсяна играла активизация отношений с армянским спюрком. В этом направлении был осуществлен ряд практических шагов, создано Министерство диаспоры, проведены конференции и др.



В годы президентства Сержа Саргсяна взаимоотношения с диаспорой не всегда были беспроблемными. Однако очевиден тот факт, что Диаспора и мнение последней всегда были очень значимы в важных вопросах, имеющих общенациональное значение. Более того, третий президент Республики Армения выступил с предложением создать новую общеармянскую структуру – Всеармянский комитет, которая станет новой формой взаимоотношений Армения-Диаспора.

Таким образом, отношения Армения-Диаспора в годы правления Сержа Саргсяна вышли на качественно новый уровень.

## THE DEVELOPMENT OF RELATIONS BETWEEN ARMENIA AND ARMENIAN DIASPORA IN 2008-2016

*Edgar Hohannisyan*

### Resume

Over the last 25 years, the patterns of development in relations between Armenia and the Armenian Diaspora have been clearly connected with the approaches the three Presidents of Armenia have had towards the latter. These approaches were mainly determined with consideration of the role the Armenian Diaspora would have in both internal and external political issues of the Republic of Armenia.

The improvement of the relationships with the Armenian Diaspora is a crucial part of the political program of Serzh Sargsyan, the third President of the Republic. Several practical steps have been taken in this respect, such as the establishment of the Ministry of Diaspora, as well as the organization of Armenia-Diaspora Conferences, etc.

During the presidency of Serzh Sargsyan, the relations between Armenia and Diaspora were not without problems. Nonetheless, one thing is clear: Diaspora and its opinion have been important in the issues of nationwide significance. Moreover, the third president of Armenia made a suggestion to establish a new pan-Armenian organization, the Pan-Armenian Council, which will be a new format in the relations of Armenia and Diaspora.

Thus, during presidency of Serzh Sargsyan, the relations between Armenia and Diaspora have reached a new quality level.

## ՉԻՆԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ 21-ՐԴ ԴԱՐԻ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՈՒԺ

### *Մեք Սահակյան՝*

*Բանալի բառեր՝* պատասխանատու ուժ, չինական տնտեսական բարեփոխումներ, գերտերության պատասխանատվություններ, տնտեսական գործոն, խաղաղապահ Չինաստան:

Արդյո՞ք Չինաստանը կարելի է դիտարկել որպես պատասխանատու ուժ (*responsible power*), և ինչպե՞ս է արտացոլվում այդ հանգամանքը ժամանակակից միջազգային հարաբերություններում: Որո՞նք են չինական արտաքին քաղաքականության դրական կողմերը, որոնք նպաստում են միջազգային հանրությանը հուզող հիմնախնդիրների լուծմանը:

Փորձենք հասկանալ, թե ինչ է նշանակում պատասխանատու ուժ հասկացությունը ժամանակակից միջազգային հարաբերություններում, ո՞ր երկրները կարող են հավակնել այս անվանմանը համաշխարհային քաղաքականության թատերաբեմում: Արդի միջազգային հարաբերություններում պատասխանատու ուժ կոչվում են այն պետությունները, որոնք, օգտագործելով սեփական միջոցներն ու լծակները, նպաստում են միջազգային հանրությանը հուզող հիմնախնդիրների լուծմանը: Որպես այդպիսիք կարելի է հիշատակել միջուկայնացման, ահաբեկչության, ծովահենության դեմ պայքարը, ՄԱԿ խաղաղապահ առաքելություններին մասնակցելը, համաշխարհային տնտեսական համակարգի առողջացմանը նպաստելը և այլն:

### *Ինչպե՞ս և ինչո՞ւ Չինաստանը դարձավ պատասխանատու ուժ*

1978 թվականից սկսած՝ տնտեսական բարեփոխումների շնորհիվ Չինաստանը դարձավ տարածաշրջանային կարևոր խաղացող, իսկ 21-րդ դարում այն արդեն աշխարհի երկրորդ տնտեսությունն է, ակտիվորեն ներգրավվել է համաշխարհային քաղաքականության հորձանուտում և վերածվել է գերտերության:

Դեռևս 1995թ.՝ ՄԱԿ 50-ամյակին նվիրված միջոցառումների ընթացքում, ԱՄՆ նախագահ Բիլ Կլինթոնը հայտարարեց, որ ԱՄՆ-ը ողջունում է Չինաստանին գերտերությունների սեղանակիցը դառնալու առթիվ, նշելով նաև, որ գերտե-

---

<sup>1</sup> Չինաստանում հայկական համայնքի նախագահ:

րություններն ունեն նաև մեծ պատասխանատվություններ<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, համաշխարհային քաղաքական դաշտում գերտերություն լինելը դեռևս իրավունք չի տալիս կրել պատասխանատու ուժ տիտղոսը: Հարց է ծագում՝ արդյո՞ք Չինաստանը պատասխանատու ուժ է, թե՞ միայն նորաթուխ գերտերություն:

Քննարկենք մի շարք պատճառներ, որոնց շնորհիվ Չինաստանը կարող է համարվել պատասխանատու ուժ: Պաշտոնական Պեկինն ակտիվորեն մասնակցում է միջուկայնացման դեմ պայքարին, այն բանակցող կողմ է Իրանի և Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետության<sup>2</sup> (ԿԺԺՀ) միջուկային ծրագրերի շուրջ ծավալված բանակցություններում, մեծացնում է իր ներգրավվածությունը ՄԱԿ խաղաղապահ առաքելություններում, «Մետաքսի ճանապարհ» տնտեսական գոտու (ՄՃՏԳ), «Օովային մետաքսի ճանապարհ» (ՕՄՃ) ծրագրերի միջոցով փորձում է տնտեսական կայունություն մտցնել Ասիայից Եվրոպա և Աֆրիկա ընկած տարածաշրջաններում:

### ***Չինաստանը զսպում է պայքար միջուկայնացման դեմ***

Միջուկայնացման դեմ պայքարը կարևորվում է Չինաստանում, որն ընդգծվում է Սի Չինփինի արտահայտած հետևյալ մտքում. «Ինչքան մենք ամրապնդում ենք միջուկային անվտանգությունը, այնքան ավելի ենք փոքրացնում ահաբեկիչների հնարավորությունները»<sup>3</sup>:

Չինաստանը դեմ է թե՛ Իրանի կողմից միջուկային զենքի հնարավոր ձեռքբերմանը, թե՛ ԿԺԺՀ միջուկային զինանոցին: Պեկինը Միավորված Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդում (ՄԱԿ ԱԽ) կողմ քվեարկեց Իրանի և ԿԺԺՀ-ի դեմ ուղղված բանաձևերին, որոնք մամլիչի տակ դրեցին վերջիններիս տնտեսական, ռազմական և միջուկային համակարգերը: Կարելի է փաստել, որ չնայած Չինաստանը տնտեսական և քաղաքական լավ հարաբերություններ ունի Իրանի և ԿԺԺՀ-ի հետ, բայց և այնպես հանդես եկավ որպես պատասխանատու ուժ՝ պաշտպանելով միջազգային հանրության շահերը, որի շնորհիվ ամրապնդվեց Միջուկային զենքերի չտարածման ռեժիմը: Միևնույն ժամանակ, ՄԱԿ ԱԽ բանաձևերը քննարկելու ընթացքում Պեկինը բանակցությունների միջոցով հնարավորինս թուլացրեց պատժամիջոցները՝ թույլ չտալով ԱՄՆ-ին տնտեսական և քաղաքական ավելի խիստ պատժամիջոցներով վերջնական կործանման

<sup>1</sup> Yong Deng, "China: The Post-Responsible Power," The Washington Quarterly, Winterer 2015, p. 129.

<sup>2</sup> Մեկը Սահակյան, «Չինաստան-ԿԺՀ տնտեսական հարաբերությունները ՄԱԿ ԱԽ պատժամիջոցների համատեքստում», Գլոբուս, #11-12, 2014,

[http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=13069](http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13069)

<sup>3</sup> Xi Jinping, The Governance of China, Beijing, Foreign Language Press, 2014, p. 281.

տանել Թեհրանի և Փհենյանի քաղաքական համակարգերը: Չինաստանին ԵՄ-ի, Ռուսաստանի հետ հաջողվեց թե՛ Իրանի, թե՛ ԿԺԺՀ-ի հարցում բացառել ռազմական գործողությունների անհրաժեշտությունը, որոնք Իրանի պարագայում հնչում էին ԱՄՆ-ի<sup>1</sup> և Իսրայելի, իսկ ԿԺԺՀ-ի դեպքում՝ ԱՄՆ-ի կողմից:

### **Խաղաղապահ Չինաստան**

21-րդ դարում Չինաստանը մեծացրեց ներգրավվածությունը ՄԱԿ խաղաղապահ առաքելություններում: Մինչև 2011թ. չինացի խաղաղապահները կառուցել են 7300 կմ ճանապարհ, 200 կամուրջ, բժշկական օգնություն են ցուցաբերել ավելի քան 28 հազար հիվանդի և վնասագերծել են 7500 պայթուցիկ<sup>2</sup>: Չինաստանի խաղաղապահ առաքելությունների անձնակազմի թիվը 2013թ. հասավ 22 հազարի: Չինական ստորաբաժանումներն ընդգրկված են եղել ՄԱԿ 23 խաղաղապահ առաքելություններում: Կարևոր է նշել նաև, որ Չինաստանը ՄԱԿ ԱԽ մշտական անդամներից ամենասովորաբար անձնակազմ տրամադրողն է: Այն նաև խաղաղապահ առաքելություններում մասնակցող 115 երկրների մեջ ամենաշատ բժշկական, ինժեներական բեռնափոխադրման ստորաբաժանումներն է տրամադրում<sup>3</sup>:

Չինաստանը 2013-2015թթ. տրամադրել է ՄԱԿ խաղաղապահ առաքելությունների բյուջեի 6,64%-ը<sup>4</sup>:

Եթե մինչև 2013թ. Չինաստանը դեմ էր մարտական ստորաբաժանումներ տրամադրելուն, ապա 2014թ. չինական առաջին մարտական ջոկատը գործուղվեց Սուդան: Սա ազդանշան էր միջազգային հանրությանը, որ Չինաստանը հետզհետե մեծացնելու է իր պատասխանատվության բաժինը ՄԱԿ խաղաղապահ առաքելություններում մարտական գործողությունների միջոցով խաղաղության հաստատման գործում:

Ներկայում ՄԱԿ խաղաղապահ առաքելությունների զգալի մասն անցնում է Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում: Սառը պատերազմից հետո Չինաստանը զգալի ֆինանսական ներդրումներ է կատարում Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում, հատկապես էներգակիրների ոլորտում, այս պատճառով Չինաստանը հետաքրքրված է Աֆրիկյան և Մերձավոր Արևելքը կայուն և անվտանգ տեսնելու հարցով:

<sup>1</sup> Mher Sahakyan, "The USA Policy on Iranian Nuclear Issue (2000-2014)," 21st Century, #2 (16), 2014, p. 51, from [http://noravank.am/upload/pdf/3.Mher\\_Sahakyan\\_21\\_CENTURY\\_02\\_2014.pdf](http://noravank.am/upload/pdf/3.Mher_Sahakyan_21_CENTURY_02_2014.pdf)

<sup>2</sup> UNGA, "Position Paper of the People's Republic of China," from <http://gd.china-embassy.org/eng/zyxw/t858193.htm>

<sup>3</sup> Ministry of National Defense the People's Republic of China, "Safeguarding World Peace and Regional Stability," in White Papers (白皮书), from [http://eng.mod.gov.cn/Database/WhitePapers/2013-04/19/content\\_4443470.htm](http://eng.mod.gov.cn/Database/WhitePapers/2013-04/19/content_4443470.htm)

<sup>4</sup> UNGA, "Scale of Assessments for the Apportionment of the Expenses of the United Nations Peacekeeping Operations," from [http://www.un.org/en/ga/search/view\\_doc.asp?symbol=A/67/224/Add.1](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/67/224/Add.1)

Չինաստանի տնտեսության զարգացումը հնարավոր է երաշխավորել միայն էներգակիրների ներկրումների ծավալների պահպանման դեպքում, իսկ էներգակիրների զգալի հատվածը ներկրում է հենց աֆրիկյան և մերձավորարևելյան երկրներից: Ինչպես նշել է Շանհայի Ֆուդան համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի փոխդեկան Շեն Դինլին, «Չինաստանը մեծացնում է իր դերը խաղաղապահ գործողություններում, որպեսզի դրանց միջոցով ևս ապահովի իր կատարած ներդրումների, բեռնափոխադրումների անվտանգությունը»<sup>1</sup>:

ՄԱԿ դեկավարությունը ևս շահագրգռված է, որպեսզի Չինաստանը մեծացնի իր ներգրավվածությունը խաղաղապահության բնագավառում, քանի որ արևմտյան երկրները տարեցտարի փոքրացնում են խաղաղապահ առաքելություններում ներգրավված իրենց ստորաբաժանումների քանակը, իսկ Չինաստանն այն երկիրն է, որը կարող է տրամադրել թե՛ քանակ, թե՛ որակ:

### ***Տնտեսական գործոնը որպես պատասխանատու ուժի գործառույթ***

2013թ. Մի Ձինփինն առաջ քաշեց ՄՃՏԳ և ԾՄՃ հավակնոտ ծրագրերը: Դրանց հիմնական նպատակն է իրար կապել Ասիայից Եվրոպա ընկած տարածաշրջանները՝ նպաստելով Հեռավոր Արևելքի, Մերձավոր Արևելքի, Եվրոպայի մասնակից երկրների տնտեսությունների զարգացմանը և այս ահռելի տարածքում անվտանգության ամրապնդմանը: Անկասկած, վերոհիշյալ տարածաշրջաններում կմեծանա Չինաստանի ազդեցությունը, քանի որ վերջինս իր վրա է վերցրել մեծածավալ ներդրումներ կատարելու պարտականությունը:

Պատժամիջոցների պատճառով ծանր դրության մեջ հայտնված ռուսական տնտեսության համայնապատկերում՝ չինական ներդրումները մասնավորապես Կենտրոնական Ասիայում Չինաստանին հնարավորություն կտան հետզհետե Ռուսաստանին դուրս մղել տարածաշրջանից:

Վերոշարադրյալի վերաբերյալ Միջազգային գործերի ռուսաստանյան խորհրդի գլխավոր տնօրեն Անդրեյ Կորտունովը հետևյալ կարծիքը հայտնեց. «Չինացիները հավաստիացնում են, որ ՄՃՏԳ ծրագիրն ինտեգրացիոն չէ, ուստի այն չի կարող հակադրվել, բայց կարող է փոխլրացնել Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ), որի շնորհիվ ծրագիրը կարող է դառնալ տնտեսությունների զարգացման կարևոր գոտի»: Այնուամենայնիվ, Կորտունովն ավելացրեց. «Իրականում ԵՏՄ-ից է կախված, թե ինչպես հետագայում կզարգանան իրադարձությունները, եթե ԵՏՄ-ն դանդաղ զարգանա, ապա «Մետաքսի ճանապարհ» տնտեսական գոտին ավելի կարևոր կդառնա, և վտանգ կա, որ չինական

<sup>1</sup> Հարցազրույց Շանհայի Ֆուդան համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի փոխդեկան Շեն Դինլիի հետ, Չինաստան, 2016թ. հունվարի 6:

տնտեսությունը կուլ կտա այս գոտում ընկած տնտեսությունները»<sup>1</sup>: Իր հերթին, չինագետ Ռախսա Եպիխինան կարծում է, որ չինացիները նախաձեռնել են ՄՃՏԳ-ն, որպեսզի նոր լիցք հաղորդեն չինական տնտեսությանը, որի աճը դանդաղելու միտումներ է գրանցում: Ներդրումներ կատարելով մերձավոր և հեռավոր երկրների արդյունաբերություններում և ենթակառուցվածքներում՝ չինացիներն իրենց ապրանքների համար ճանապարհ են հարթում դեպի այդ երկրներ<sup>2</sup>:

Հայաստանի Ամերիկյան համալսարանի փոխնախագահ Դոնալդ Ֆուլերը, անդրադառնալով Չինաստանի տնտեսական ծրագրերին, ասաց, որ քանի որ նվազել է չինական արտադրանքի հանդեպ պահանջարկը, Չինաստանը պետք է նոր ուղիներ գտնի տնտեսությունը զարգացնելու համար: Իրականում Չինաստանն աշխատատեղերի պահանջարկ ունի, այլ ոչ թե ռազմական արկածախնդրությունների, ինչպես և ԱՄՆ-ը: Կարևոր է, որ Չինաստանում ռազմական գործողությունների փոխարեն նախապատվությունը տալիս են առևտրին: Այս համատեքստում Չինաստանի և ԱՄՆ-ի միջև փոխըմբռնումն օգտակար կլինի բոլորի համար<sup>3</sup>:

Չինաստանը ՄՃՏԳ-ում և ԾՄՃ-ում միլիարդավոր ներդրումներ է նախատեսում, ինչը կամրապնդի նրա քաղաքական և տնտեսական ազդեցությունը երկու ծրագրերին մասնակցող երկրներում: Կարևոր է նշել նաև, որ Չինաստանն իր այս քայլով կնպաստի նաև համաշխարհային տնտեսության կայունացմանը և զարգացմանը, ինչն, անխոս, պատասխանատու ուժի գործելառճ է:

Չինաստանը և BRICS-ում (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն) նրա գործընկերները, լինելով ոչ արևմտյան, հասկանում են, որ Արևմուտքի կողմից վերահսկվող ֆինանսատնտեսական համակարգը հավասարակշռող ևս մեկ՝ ոչ արևմտյան երկրների կողմից վերահսկվող համակարգ է պետք ստեղծել: Այս նպատակին հասնելու համար BRICS-ը ստեղծեց «BRICS զարգացման նոր բանկը», որի կենտրոնը գտնվում է Չինաստանի Շանհայ քաղաքում, ունի սեփական արժույթային պահուստներ և ապահովելու է BRICS երկրների ֆինանսական համակարգերի կայունությունը<sup>4</sup>: Բանկի նախնական հայտարարագրված կապիտալը \$100 մլրդ

<sup>1</sup> Հարցազրույց Միջազգային գործերի ռուսաստանյան խորհրդի գլխավոր տնօրեն Անդրեյ Կորտունովի հետ, Մոսկվա, 2015թ. ապրիլի 16:

<sup>2</sup> Հարցազրույց Մոսկվայի պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի հետազոտող Ռախսա Եպիխինայի հետ, Մոսկվա, 2015թ. ապրիլի 18:

<sup>3</sup> Հարցազրույց Հայաստանում Ամերիկյան համալսարանի փոխնախագահ Դոնալդ Ֆուլերի հետ, 2015թ. հունիսի 29:

<sup>4</sup> Մեկը Սահակյան, «Ո՞ւր է տանում Չինաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի և ՀԱՀ-ի կառուցած ձևաչափը», Գլոբուս # 8-9:

[http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=13854&sphrase\\_id=51461](http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13854&sphrase_id=51461)

է, կնքվել է նաև պայմանագիր ընդհանուր արտարժութային պահուստներ ստեղծելու մասին, նախնականը՝ \$100 մլրդ-ի չափով<sup>1</sup>: Այսպիսով, Չինաստանը Ռուսաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի, ՀԱՀ-ի հետ փորձում է նաև ստեղծել ևս մեկ ֆինանսական համակարգ, որի շնորհիվ ոչ արևմտյան երկրները կկարողանան փոքրացնել իրենց կախումն Արևմուտքի կողմից թելադրվող խաղի կանոններով գործող ֆինանսական աշխարհից:

### **Ամփոփենք արդյունքները**

Չինաստանը որպես պատասխանատու ուժ իր մասնակցությունն է բերում միջուկային զենքերի չտարածման գործում, պայքարում է ծովահենության<sup>2</sup>, ահաբեկչության<sup>3</sup> դեմ, մեծացնում է ներգրավվածությունը ՄԱԿ խաղաղապահ առաքելություններում, մասնակցում է համաշխարհային տնտեսության առողջացման գործընթացին, կրթաթոշակներ է տրամադրում արտասահմանցի ուսանողներին<sup>4</sup> և այլն:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ կարելի է փաստել, որ Չինաստանը երրորդ աշխարհից ծագած առաջին պատասխանատու ուժն է, որը կարևոր դերակատարում ունի արդի միջազգային հարաբերություններում: Կարևոր է նշել, որ Չինաստանն, ի տարբերություն «դասական» պատասխանատու ուժի տիտղոսը կրող մյուս գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի, նպատակ չունի զբաղվել ժողովրդավարության, մարդու իրավունքերի սեփական մոդելների տարածմամբ:

*Փետրվար, 2016թ.*

## **ՉԻՆԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ 21-ՐԴ ԴԱՐԻ ՊՍՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՈՒԾ**

### **Մենք Սահակյան**

#### **Ամփոփագիր**

Հոդվածը նվիրված է արդի դարաշրջանում Չինաստանի՝ որպես պատասխանատու ուժի ունեցած դերակատարությանը, որը նպաստում է համընդհանուր խաղաղության, անվտանգության և կայունության պահպանմանն արդի աշխարհի տրանսֆորմացիայի պայմաններում:

<sup>1</sup> *Г.Д. Толорая*, Зачем России БРИКС? Россия в глобальной политике, #2. Январь-февраль, 2015. <http://www.globalaffairs.ru/number/Zachem-Rossii-BRIKS-17309>

<sup>2</sup> *CCTV*, “Chinese Navy Soldiers Celebrate 1st Anniversary of Fleet’s Escort Mission in Gulf of Aden,” from <http://english.cctv.com/program/chinatoday/20091227/100762.shtml>

<sup>3</sup> *Yitzhak Shichor*, Ethno-Diplomacy: The Uyghur hitch in Sino-Turkish relations, East-West Center, Honolulu, 2009.

<sup>4</sup> *St’u* 中国政府奖学金生 (Չինաստանի պետական կրթաթոշակ), from <http://www.csc.edu.cn/News/1987a3fe91914d75bffa318358eb9c75.shtml>

Չինաստանն ակտիվորեն մասնակցում է Իրանի և ԿԺԺՀ-ի միջուկային խնդիրների վերաբերյալ բանակցություններին, շարունակում է ակտիվացնել իր դերակատարությունը ՄԱԿ խաղաղապահ առաքելություններում: Չինաստանը մասնակցում է նաև ծովահենության և ահաբեկչության դեմ պայքարին: Ասվածը նկատի ունենալով՝ նշվում է, որ Չինաստանը պատասխանատու ուժ է, որն ակտիվորեն նպաստում է խաղաղության պահպանմանը և փորձում է իրականացնել տնտեսական ծրագրեր, որոնք ընդհանուր առմամբ կարող են բարելավել տնտեսական իրավիճակն աշխարհում:

## КИТАЙ КАК ОТВЕТСТВЕННАЯ СИЛА XXI ВЕКА

*Мгер Саакян*

Резюме

Автор посвятил свое исследование роли Китая в современной эпохе в качестве *ответственной силы*, которая способствует поддержанию всеобщего мира, безопасности и стабильности в условиях трансформации современного мира под воздействием глобализации.

Стоит упомянуть, что Китай активно участвует в переговорах по ядерным проблемам Ирана и КНДР, продолжает увеличивать свою роль в операциях ООН по поддержанию мира. Китай также участвует в борьбе против пиратства и терроризма. Имея в виду вышеуказанное, можно отметить, что Китай – *ответственная сила*, которая активно способствует сохранению мира и пытается реализовать экономические программы, способные в целом улучшить экономическую ситуацию в мире.

## CHINA AS A RESPONSIBLE POWER OF THE 21<sup>ST</sup> CENTURY

*Mher Sahakyan*

Resume

The article focuses on analyses of some aspects of the China's foreign policy. It is worth mentioning, that after the end of the Cold War, China has been actively involved in the world affairs. It participates in negotiations on nuclear issues of Iran and DPRK. Beijing has an increasing role in the UN Peacekeeping operations. China is also involved in struggle against piracy and terrorism. In summary, China is a Responsible Power, which actively contributes to peace-building in the world and it tries to implement economic programs which can improve the global economic situation.



# ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՄԵԾ ԽԱՂԻ ՓՈՔՐ ՄԱՍԸ

## *Աստղիկ Գևորգյան՝*

*Բանալի բառեր՝* ղարաբաղյան հակամարտություն, սիրիական ճգնաժամ, ամերիկյան փափուկ ուժ, ԱՄՆ-ՌԴ հարաբերություններ, Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններ:

Տարածաշրջանային հակամարտությունների քննարկման ժամանակ անհրաժեշտ է նաև հաշվի առնել տիրող աշխարհաքաղաքական դրությունը խնդրի էությունը հասկանալու համար: Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերվանից սրված իրադրությունը և ռազմական գործողությունների բռնկումը, որը ստացավ քառօրյա պատերազմ անվանումը, ևս հարկ է դիտարկել համաշխարհային քաղաքականության համատեքստում՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական կենտրոնների միջև գործող հարաբերությունները:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակն ավելի վաղ Ուկրաինայում, Սիրիայում տեղի ունեցած և շարունակվող իրադարձությունների շարունակությունը կարող ենք համարել: Այստեղ բախվող շահերը պրոյեկտվեցին Լեռնային Ղարաբաղի վրա:

Երբ Ռուսաստանը 2015թ. սեպտեմբերի 30-ին<sup>1</sup> ներգրավվեց Սիրիայում ռազմական գործողությունների մեջ, Մերձավոր Արևելքում արդեն իսկ ներգրավված ԱՄՆ-ի<sup>2</sup> հետ հարաբերությունները զգալիորեն լարվեցին: Դրա պատճառն այն էր, որ երկու կողմերի՝ Ռուսաստանի և ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների դիրքորոշումները Սիրիայում հակամարտության լուծման շուրջ հակասում էին միմյանց:

---

<sup>\*</sup> ԵՂՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Համաշխարհային քաղաքականության մագիստրոս:

<sup>1</sup> ՌԴ Դաշնային խորհուրդը հավանություն տվեց Ռուսաստանի սահմանից դուրս ռուսական զինված ուժերի կիրառմանը՝ նպատակ ունենալով աջակցել ՄԱՀ կառավարական ուժերին «Բալամական պետություն» ահաբեկչական խմբավորման դեմ պայքարում, <http://council.gov.ru/press-center/news/59272/>: Նույն օրը Սիրիայում ռուսական օդուժն առաջին հարվածը հասցրեց ԲՊ դիրքերին, <http://syria.mil.ru/syria.htm?f=111&blk=12059235&objInBlock=5>:

<sup>2</sup> ԱՄՆ-ը իր դաշնակիցների հետ Սիրիայում ԲՊ-ի դեմ պայքարը սկսել է 2014թ. սեպտեմբերի 22-ից, <http://www.defense.gov/News-Article-View/Article/603300/us-begins-airstrikes-against-isil-in-syria>:

Մերձավոր Արևելքում պայքարելով «Իսլամական պետություն» (ԻՊ) ահաբեկչական խմբավորման դեմ՝ կողմերը միաժամանակ տարբեր հեռանկարներ էին տեսնում Սիրիայում: ԱՄՆ-ը պահանջում էր Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հրաժարականը<sup>1</sup> և կառավարության փոփոխությունը: Ռուսաստանն աջակցում էր Սիրիայի նախագահին և կառավարությանը՝ հայտարարելով, որ նպատակ ունի կայունացնել երկրում օրինական իշխանությունը<sup>2</sup>: Ռուսաստանի համար բավարար հիմքեր կային քննադատելու ԱՄՆ-ին և ամրապնդելու դիրքերը միջազգային հանրության առջև՝ հաշվի առնելով Իրաքում [1, p. 39, 88, 155] և Լիբիայում<sup>3</sup> ԱՄՆ սխալ քաղաքականության ողբերգական հետևանքները տարածաշրջանի անկայունացման գործում: Ըստ էության, ԱՄՆ-ը Սիրիայում սկսել էր նույն քաղաքականությունը, ինչ Իրաքում և Լիբիայում. տապալել բռնապետին և ստեղծել ժողովրդավարական պետություն:

Մյուս կողմից, Ռուսաստանը հաջողության էր հասնում ռազմական գործողություններում: Ռուսաստանի օդուժի աջակցությամբ սիրիական կառավարական ուժերը կարողանում էին հաջողությամբ պայքարել ԻՊ-ի դեմ: Պատահական չէ, որ քարոզչական դաշտում սկսեցին շրջանառվել արևմտյան այն թեզերը, որ ռուսական օդուժը հարվածում է ոչ միայն ահաբեկիչներին, այլև Սիրիայի ընդդիմադիրներին և խաղաղ բնակչությանը<sup>4</sup>: Այս լուրերի ճշմարտացի լինելու հավանականությունն այլ խնդիր է: Այստեղ կարևորն այդ թեզերի առաջբերման և շրջանառման փաստն է, որի նպատակն էր ցույց տալ, որ Ռուսաստանը չի պայքարում միայն ահաբեկիչների դեմ, այլև ընդդիմադիրներին, որոնք ցանկանում են Սիրիան «ազատ տեսնել բռնապետից»: Սրանով ընդգծվում է ոչ թե ԱՄՆ-ՌԴ համագործակցությունն ահաբեկչության դեմ պայքարում, այլ ԱՄՆ-ՌԴ հակասությունները սիրիական ճգնաժամի կարգավորման հարցում:

Հաշվի առնելով Ռուսաստանի կողմից ընդգծվող երկու գործոնները՝ միջազգային հանրության ուշադրության հրավիրումը Իրաքի և Լիբիայի համանման դեպ-

<sup>1</sup> Սիրիայի նախագահ Ասադը պետք է հեռանա. Օբամայի առաջին հայտարարությունը Սիրիայում քաղաքացիական պատերազմի բռնկումից 5 ամիս անց, Obama: Syrian President Assad must step down, 2011թ., օգոստոսի 18, [https://www.washingtonpost.com/blogs/checkpoint-washington/post/obama-syrian-president-assad-must-step-down/2011/08/18/gIQAM75UNJ\\_blog.html](https://www.washingtonpost.com/blogs/checkpoint-washington/post/obama-syrian-president-assad-must-step-down/2011/08/18/gIQAM75UNJ_blog.html)

<sup>2</sup> ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հայտարարությունը, Путин назвал основную задачу российских военных в Сирии, <http://www.interfax.ru/russia/472593>:

<sup>3</sup> Fox News-ի հարցազրույցը ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ, որտեղ Օբաման խոստովանում է, որ Լիբիա ներխուժումը սխալ քայլ է եղել, <http://video.foxnews.com/v/4839779084001/exclusive-president-barack-obama-on-fox-news-sunday/?sp=show-clips>:

<sup>4</sup> The Syrian Observatory for Human Rights, Մարդու իրավունքների սիրիական դիտորդական խումբ, գտնվում է Լոնդոնում, պարբերաբար տեղեկություններ է տալիս ռուսական օդուժի ավիահարվածների արդյունքում տուժած քաղաքացիական բնակչության մասին, <http://www.syriahr.com/en/?s=Russian>: Ուշագրավ է նաև բրիտանական Telegraph-ի «Russian air strikes «kill more civilians than Isil fighters» վերնագրով հոդվածը, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/syria/12113905/Russian-air-strikes-kill-more-civilians-than-Isil-fighters.html>:

քերին և Ռուսաստանի ռազմական հաջողությունները, ԱՄՆ-ը սկսեց նոր խաղ. ներքաշել Սիրիայում ներգրավված Ռուսաստանին Թուրքիայի հետ ռազմական գործողությունների մեջ: Ի վերջո, Ռուսաստան-Թուրքիա պատերազմը նշանակում է Ռուսաստան-ՆԱՏՕ պատերազմ, ինչը կլինի Ռուսաստանի վերջի սկիզբը:

ԱՄՆ-ը հմտորեն օգտագործեց իր դաշնակիցներ Թուրքիայի և Սաուդյան Արաբիայի խաղաքարտերը, որպեսզի Սիրիայում իրադրությունը սրի այնքան, որ Ռուսաստանը ցամաքային պատերազմի մեջ մտնի Սիրիայում, ապա բախվի նաև թուրքական ուժերի հետ: Իսկ եթե դա տեղի ունենար, կարող ենք ասել, որ Ռուսաստանի հաղթանակելու հավանականությունը, իր ռազմական ուժով և առավել ևս՝ իր ներկայիս տնտեսական բարդ դրության պայմաններում, կտրուկ կնվազեր: Ցամաքային պատերազմը Սիրիայում, առավել ևս՝ բախումը Թուրքիայի հետ, ծուղակ էին Ռուսաստանի համար, որից նա կարողացավ հմտորեն խուսափել: Մինչդեռ դա այնքան էլ հեշտ գործ չէր այն դեպքում, երբ ԱՄՆ-ը Սիրիայում դեռևս հիմնականում գործում էր անուղղակիորեն՝ օգտագործելով Սաուդյան Արաբիային և Թուրքիային: Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում լարվածությունը սկսվեց, երբ 2015թ. նոյեմբերի 24-ին Թուրքիան Սիրիայում խոցեց ռուսական ռազմական ինքնաթիռը (Սու-24)<sup>1</sup> և ներողություն չխնդրեց Ռուսաստանից, ավելին, մեղադրեց Ռուսաստանին իր սահմանը հատելու մեջ: Այս քայլը սկիզբ դրեց Ռուսաստանի կողմից Թուրքիայի հանդեպ պատժամիջոցների կիրառմանը<sup>2</sup>: Արևմտյան մամուլը հեղեղվեց Ռուսաստան-Թուրքիա հնարավոր ռազմական բախման մասին կանխատեսումներով, որտեղ շեշտվում էր Թուրքիայի՝ ՆԱՏՕ անդամ լինելու փաստը: Բերենք մի քանի օրինակներ:

Թուրքիայի կողմից ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումից ընդամենը 2 օր անց ամերիկյան *Foxnews*-ը գրում է<sup>3</sup>. «Կես դարում առաջին անգամ էր, երբ ՆԱՏՕ անդամը կործանում է ռուսական ինքնաթիռ: Եթե Ռուսաստանն արձագանքի՝ հարվածելով թուրքական ինքնաթիռի, ապա ՆԱՏՕ անդամ Թուրքիան կարող է հայտարարել, որ ագրեսիայի է ենթարկվել և խնդրել դաշինքի ռազմական աջակցությունը»: Գերմանական *Spiegel*-ը գրում է<sup>4</sup>. «Սիրիան 2016թ. Կուրբան է, և միջազգային առճակատման ռիսկն աճում է օր օրի: Հինգ տարի է՝ այդ երկրում

<sup>1</sup> ՌԴ ՊՆ Գերագույն շտաբի գլխավոր օպերատիվ վարչության ղեկավար, փոխգնդապետ Սերգեյ Ռուդսկիի ճեպագրույցը, *HTB* հեռուստաալիք, <http://www.ntv.ru/video/1235500/>:

<sup>2</sup> ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նոյեմբերի 28-ին ստորագրեց Թուրքիայի դեմ առաջին պատժամիջոցների հրամանագիրը, *Указ о мерах по обеспечению национальной безопасности России и защите граждан России от преступных и иных противоправных действий и о применении специальных экономических мер в отношении Турции*, <http://www.kremlin.ru/acts/news/50805>:

<sup>3</sup> *Russia deploys missiles in Syria after Turkey shoots down bomber*, <http://www.foxnews.com/world/2015/11/25/russia-rescues-pilot-downed-warplane-from-rebel-territory.html>

<sup>4</sup> *Putin vs. Erdogan: NATO Concerned over Possible Russia-Turkey Hostilities*, <http://www.spiegel.de/international/world/nato-worried-about-possible-turkey-russia-hostilities-a-1078349.html>

դաժան քաղաքացիական պատերազմ է ընթանում, բայց հակամարտությունն այժմ կարող է վերաճել Ռուսաստանի և Արևմուտքի միջև լայնամասշտաբ բախման»։ Իսկ *BBC*-ն, անդրադառնալով ռուսական ռազմական ինքնաթիռի կործանմանը, գլխավոր կետերի շարքում նշում է<sup>1</sup>. «Թուրքիան ՆԱՏՕ անդամ է, որը նշել է, որ պատրաստ է պաշտպանել Թուրքիային, եթե Ռուսաստանը խախտի նրա օդային սահմանը»։ Ամերիկյան *CNN*-ը, կրկին շեշտելով Թուրքիայի՝ ՆԱՏՕ անդամ լինելը, մեջբերում է ԱՄՆ նախագահի խոսքերը. «ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն կաջակցեն Թուրքիային իր ինքնիշխանության իրավունքը պաշտպանելու գործում»<sup>2</sup>։ Ուշագրավ է ամերիկյան *The Washington Times* թերթի հոդվածը<sup>3</sup>, որի հիմնական թեզն այն է, որ սիրիական պատերազմը մեծացրեց աշխարհում անկայունության գոտիների քանակը։ Մասնավորապես, խոսվում է դարաբաղյան «սառեցված» հակամարտության մասին, որը, Ռուսաստան-Թուրքիա/ՆԱՏՕ հարաբերությունների լարվածության ֆոնին, տարածաշրջանում անկայունության ակտիվացման գլխավոր կետն է։ Ըստ հոդվածի, Հայաստանն ինքնըստինքյան ներքաշվում է սիրիական պատերազմի մեջ, քանի որ լինելով ՆԱՏՕ-ին սահմանակից երկիր՝ ունի ռուսական ռազմաբազա, որն անընդհատ թարմացվում է նոր զենքերով։

Իրենց հերթին, սկսեցին գործել նաև Սաուդյան Արաբիան և Թուրքիան։ Սաուդյան Արաբիան 2016թ. փետրվարի 4-ին պաշտոնապես հայտարարեց Սիրիա ցամաքային զորքեր մտցնելու պատրաստակամության մասին<sup>4</sup>։ Իսկ Թուրքիան սկսեց Սիրիայի քրդերի դեմ ցամաքային գործողությունները, այն քրդերի, որոնք պայքարում են «Իսլամական պետության» դեմ։

Ակնհայտ էր, որ իրադրությունն աստիճանաբար լարվում էր, ուստի ռուսական օդուժի հիմնական մասի դուրսբերումը Սիրիայից<sup>5</sup> կարևոր մարտավարական քայլ եղավ այս պարագայում։ Ռուսաստանը մի կողմից թողեց իր օդուժի մի մասը, որի աջակցությամբ սիրիական կառավարական բանակը շարունակեց հաղթանակներ տանել ահաբեկիչների դեմ պայքարում, ինչպես, օրինակ, ռազմավարական նշանակություն ունեցող Պալմիրայի և Էլ-Քարյատեյնի ազատա-

<sup>1</sup> As it happened: Russia warplane shot down in Syria: Key points, <http://www.bbc.com/news/live/world-middle-east-34908469>.

<sup>2</sup> Tensions rise as Russia says it's deploying anti-aircraft missiles to Syria, <http://edition.cnn.com/2015/11/25/middleeast/syria-turkey-russia-warplane-shot-down/>.

<sup>3</sup> Armenia pulled into Russia-Turkey clash in Syria, <http://www.washingtontimes.com/news/2016/mar/2/armenia-pulled-into-russia-turkey-clash-in-syria/?page=all>.

<sup>4</sup> Այս մասին հայտնեց Սաուդյան Արաբիայի պաշտպանության նախարարության մամուլ քարտուղար Ահմեդ ալ-Ասիրին *Al-Arabiya* հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, *The Guardian*, <http://www.theguardian.com/world/2016/feb/04/saudi-arabia-ground-troops-syria-fight-isis>:

<sup>5</sup> Մարտի 15-ից սկսվեց ռուսական օդուժի հիմնական մասի դուրսբերումը Սիրիայից, ըստ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հրահանգի, <http://syria.mil.ru/news/more.htm?id=12080633@egNews>:

գրումն էր ԻՊ ահաբեկիչների վերահսկողությունից<sup>1</sup>: Մյուս կողմից, նպաստելով լարվածության թուլացմանը Սիրիայում՝ Ռուսաստանը խուսափեց Թուրքիայի հետ պատերազմից, որը լիովին հավանական էր Թուրքիայի հանդուգն քաղաքականության պայմաններում: Այս քայլը հնարավորություն տվեց Ռուսաստանին պահպանել ազդեցությունը Սիրիայում՝ միաժամանակ չներքաշվելով իր համար կործանարար պատերազմի մեջ:

Իրադրության զարգացման մյուս տարբերակը, թե Թուրքիան դուրս է եկել ԱՄՆ վերահսկողությունից և նրա քայլերը Սիրիայում, ինչպես նաև Ռուսաստանի դեմ անկախ քայլեր են, կարելի է բացառել: Սա ակնհայտ է դառնում, երբ հետևում ենք զարգացումների ընթացքին: Մասնավորապես նրան, երբ Մաուդյան Արաբիան հայտարարեց իր ռազմաօդային ուժերի մի մասը Թուրքիայում տեղակայելու մասին<sup>2</sup>: Սա վկայում է, որ ԱՄՆ-ի կողմից համապարփակ և համակողմանիորեն օգտագործվում էին թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական բաղադրիչները՝ իր ազդեցությունը սիրիական հակամարտության կարգավորման արդյունքների վրա անվերապահորեն ապահովելու համար: Այս շրջանում տեղի ունեցած իրադարձություններից պարզ էր նաև մեկ բան. ինչքան էլ հակասություններ լինեն ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև, ինչքան էլ տպավորություն ստեղծվի, թե այս երկու երկրները տանել չեն կարողանում միմյանց, կարելի է բացառել այն, որ ՆԱՏՕ անդամ երկու երկիր իրար դեմ դուրս կգան միմյանց համար սկզբունքային նշանակություն ունեցող հարցերում:

Ինչպես տեսանք, Սիրիայում ԱՄՆ-ին չհաջողվեց Թուրքիայի հետ պատերազմի մեջ ներքաշել Ռուսաստանին: Այնուամենայնիվ, կարող է հարց առաջանալ, թե ինչու պետք է ԱՄՆ-ը ցանկանա Ռուսաստանի նման ճակատագիրը: Դրա համար կան մի շարք պատճառներ.

- Խորհրդային Միության փլուզումից հետո ԱՄՆ-ը դարձավ միակ պետությունը, որն իսկապես շահեր ուներ աշխարհի բոլոր ծայրերում: Միաբևեռ աշխարհի միակ բևեռը երկար տարիներ սովոր էր, որ լուրջ դիմայակության չի հանդիպելու՝ ինչ քայլ էլ որ ձեռնարկի: Ռազմական տեսանկյունից ամենահզոր պետությունն սկսեց մեծացնել նաև իր փափուկ ուժը<sup>3</sup>՝ առաջ

<sup>1</sup> Сирийские войска вошли в город Эль-Карьятейн, [http://www.bbc.com/russian/news/2016/04/160403\\_al\\_qaryatai\\_syria\\_entered](http://www.bbc.com/russian/news/2016/04/160403_al_qaryatai_syria_entered).

<sup>2</sup> Saudi Arabia sends troops and fighter jets to military base in Turkey ahead of intervention against Isis in Syria, <http://www.independent.co.uk/news/world/middle-east/saudi-arabia-sends-troops-and-fighter-jets-to-military-base-in-turkey-ahead-of-intervention-against-a6871611.html>.

<sup>3</sup> Փափուկ ուժ տերմինն առաջ է քաշել ամերիկացի պրոֆեսոր Ջոզեֆ Նայր 1990թ.: Ի տարբերություն կոշտ ուժի (ռազմական և տնտեսական), փափուկ ուժի դեպքում օգտագործվում են ոչ շոշափելի ռեսուրսներ՝ արժեքներ, մշակույթ, քաղաքական ուղղություններ և կառույցներ, որպեսզի օրակարգ սահմանելու և գրավելու միջոցով համոզեն այլ պետություններին կամ պետությունների խմբին ինչ-որ քայլ անել կամ չանել:

քաշելով մի հայեցակարգ, ըստ որի, եթե աշխարհի բոլոր պետություններն առաջնորդվեն միևնույն արժեքներով, ապա ԱՄՆ-ի համար ավելի անվտանգ և հեշտ կլիմա իր քաղաքականության իրականացումը: Այդ արժեհամակարգը դարձավ ժողովրդավարությունը, որը ներկայացվեց որպես ամերիկյան արժեհամակարգ [2, p. 17]: Ամերիկյան փափուկ ուժի քաղաքականությունն ուղղվեց այս նպատակի իրականացմանը՝ որպես ԱՄՆ անվտանգության երաշխիք [3, p. 37; 4, p. 131; 5, p. 86-88]: Ուստի, յուրաքանչյուր քայլ, որը կարող է ինչ-որ կերպ չեղարկել այս քաղաքականությունը, ԱՄՆ-ի կողմից խստագույն դիմակայության է հանդիպում: ԱՄՆ-ի համար անվտանգության սպառնալիք է այն, որ ոչ ժողովրդավարական երկիրը կարող է օրինակ լինել այլ պետությունների համար, քանի որ հենց ժողովրդավարական ԱՄՆ-ը պետք է լինի «լավ, արդար, իսկական» պետության օրինակը: Եթե Ռուսաստանին (կամ մեկ այլ ոչ ժողովրդավարական պետության) հաջողվի առանց լուրջ կորուստների իր հեղինակությունը բարձրացնել համաշխարհային ասպարեզում, ապա Ռուսաստանը կարող է օրինակ դառնալ այլ պետությունների համար, որոնք վերջնականապես կարող են հրաժարվել ժողովրդավարական կառավարման համակարգից: Այս խնդիրն, անշուշտ, պետք չէ ԱՄՆ-ին: Նա պետք է ձգտի յուրաքանչյուր նման «սպառնալիք» մեկուսացնել և թույլ չտալ զարգանալ ու աճել:

- Այն թեզը, թե ազդեցության գոտիների համար պայքարը մնացել է ոչ հեռավոր անցյալում, գործում էր մի քանի տարի առաջ: Ամեն դեպքում, ազդեցության գոտիների համար պայքար կա այն ժամանակ, երբ աշխարհը միաբնեռ չէ կամ որևէ պետություն չի ցանկանում այն տեսնել միաբնեռ: Տվյալ դեպքում Ռուսաստանը «մարտահրավեր է նետել» միաբնեռ աշխարհին և՛ տեսական, և՛ գործնական հարթություններում: Տեսական դաշտում այն առաջ է քաշել «բնեռների» փոխարեն «կենտրոնների» գաղափարը, եվրասիականության գաղափարախոսությունն՝ ընդդեմ եվրոպականի, այն թեզը, որ ԱՄՆ-ը և Արևմուտքը չեն ցանկանում համագործակցել Ռուսաստանի հետ, ուստի Ռուսաստանը գնում է դիմակայության: Գործնական դաշտում Ռուսաստանը հաջողությամբ առաջ է տանում իր շահերն Ուկրաինայում և Սիրիայում՝ աշխարհաքաղաքական կարևորություն ունեցող երկրներ, որոնք միշտ եղել են ԱՄՆ-ի և Եվրոպայի աչքի տակ: Ուկրաինայում արդեն 2-րդ հեղափոխությունը տեղի ունեցավ, սակայն այն վերջնականապես Արևմուտքինը չէ: Մերձավոր Արևելքում Իրաքից և Լիբիայից հետո արդեն 3-րդ երկրում՝ Սիրիայում է իշխանափոխության նույն սցենարը տեղի ունենում, սակայն տարածաշրջանը վերջնականապես

Արևմուտքի ազդեցության տակ չէ<sup>1</sup>: Որպեսզի ստեղծված իրադրությունն ավելի պարզ լինի, կարող ենք տարածաշրջանային և համաշխարհային իրադարձությունների միջև մի պարզ համեմատություն անել: Ինչպես ժամանակին Ռուսաստանը չէր ցանկանում, որ Վրաստանը դուրս գա իր ազդեցության գոտուց և արդյունքում Վրաստանը դրան գնաց տարածքների կորստի գնով, այնպես էլ այժմ ԱՄՆ-ը չի ցանկանում, որ Ռուսաստանը դուրս գա «իր ստեղծած աշխարհից» առանց լուրջ կորուստների:

Այս պատճառները հաշվի առնելով՝ կարող ենք հստակեցնել, որ ԱՄՆ-ի համար կենսական նշանակություն ունի իր անվտանգության պահպանման համար խաղն իր ձեռքում պահելը: ԱՄՆ քաղաքականությանը միշտ բնորոշ է եղել կանխարգելիչ քայլերի ձեռնարկումը, այսինքն, եթե ԱՄՆ-ը հաշվարկում է իրադրության ծայրահեղ վատթարացում ապագայում, ապա առաջին քայլով փորձում է օգտագործել բոլոր տարբերակները և կանխել դա, ոչ թե սպասել, թե երբ է իրադրությունը դառնալու ծայրահեղ ծանր:

Վերադառնալով դարաբաղյան հակամարտությանը՝ հարկ է ուշադրություն դարձնել այն դեպքերին, որ ռազմական գործողությունները նոր թափով բռնկվեցին այն բանից հետո, երբ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևը մարտի 16-ին Անկարայում հանդիպեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանի հետ<sup>2</sup>: Ալիև-Էրդոհան հանդիպմանը հետևեց մարտի 30-ին ԱՄՆ-ում Ադրբեյջանի նախագահի հանդիպումը ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի հետ<sup>3</sup>: Ըստ Պետքարտուղարության պաշտոնական հաղորդագրության, որն է խոսք չկա դարաբաղյան հակամարտության կարգավորման մասին ԵԱՀԿ Մինսկի խմբի, մադրիդյան սկզբունքների հիման վրա հակամարտության կարգավորման մասին: Որպես կարգավորման հիմքեր նշվում են միջազգային իրավունքի սկզբունքները, ՄԱԿ կանոնադրությունը և Հելսինկյան եզրափակիչ ակտը: Իսկ ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն Արցախում ռազմական գործողությունների բռնկման նախորդ օրը՝ մարտի 31-ին, տեղի ունեցավ Թուրքիայի և ԱՄՆ նախագահներ Ռ.Թ. Էրդոհանի և Բարաք Օբամայի հանդիպումը<sup>4</sup>: ԱՄՆ և Թուրքիայի

<sup>1</sup> Խոսքն Ուկրաինայում 2004թ. տեղի ունեցած նարնջագույն, 2014-2015թթ. տեղի ունեցած Մայդանի հեղափոխությունների մասին է: Իսկ Իրաքի և Լիբիայի դեպքերը տարբերվում էին «արաբական գարնան» մյուս երկրներից նրանով, որ այս երկրներում ԱՄՆ-ը գործում էր ոչ միայն քաղաքական, այլև ռազմական դաշտում:

<sup>2</sup> Ալիևն ու Էրդոհանը հանդիպել են, 2016, մարտի 15: Հանդիպումը նվիրված էր Թուրքիա-Ադրբեյջան բարձր մակարդակի խորհրդի 5-րդ նիստին, <http://armenpress.am/arm/news/839469/alievn-u-erdoxany-handipel-en.html>:

<sup>3</sup> Secretary Kerry's Meeting With Azerbaijani President Ilham Aliyev, <http://www.state.gov/r/pa/prs/ps/2016/03/255351.htm>.

<sup>4</sup> Readout of the President's Meeting with President Recep Tayyip Erdogan of Turkey, [/www.whitehouse.gov/the-press-office/2016/03/31/readout-presidents-meeting-president-recep-tayyip-erdogan-turkey](http://www.whitehouse.gov/the-press-office/2016/03/31/readout-presidents-meeting-president-recep-tayyip-erdogan-turkey).

նախագահների հանդիպման պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում է, որ կողմերը քննարկել են ԱՄՆ-Թուրքիա համագործակցությունը տարածաշրջանային անվտանգության ոլորտում, և ԱՄՆ-ը վերահաստատել է իր աջակցությունը Թուրքիայի անվտանգության հարցում:

Եթե դիտարկենք դարաբաղյան հակամարտությունում կողմերի վարած քաղաքականությունը, ապա կտեսնենք, որ հայկական կողմը երբեք պաշտոնական հայտարարություններ չի արել հակամարտությունն ուժով լուծելու օգտին, շեշտել է բանակցային լուծման տարբերակը: Մինչդեռ Ադրբեջանը բանակցային լուծման տարբերակի հետ մեկտեղ պաշտոնական մակարդակով շրջանառության մեջ է դրել այն հայտարարությունը, թե ցանկանում է լուծել հակամարտությունն ինչ ձևով էլ լինի: Այս նույն հայտարարությունն արեց նաև Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը CNN-ին տված հարցազրույցում<sup>1</sup>: Այսպիսով, կարող ենք փաստել, որ եթե անհրաժեշտ է լարել հակամարտությունը, դա կարող է անել այն կողմը, որը պաշտոնապես խնդիր չի տեսնում հակամարտությունը բացի բանակցային տարբերակից այլ ձևով լուծելու հարցում, այսինքն՝ Ադրբեջանը:

Մյուս կողմից, հարկ է ուշադրություն դարձնել, որ ներկայիս համաշխարհային քաղաքականությունն ավելի շատ միտված է բևեռացման, քան կոմպլեմենտարիզմի: ՌԴ-Թուրքիա հարաբերությունների լարման ֆոնին, եթե Ադրբեջանն ընտրի Ռուսաստանին, պետք է հրաժեշտ տա «եղբայրական» Թուրքիային: Թուրքիային, որը ՆԱՏՕ անդամ է, ամենին պետք չէ, որ ռուսական կողմում ևս մի երկիր ավելանա: Ուստի, եթե Ադրբեջանն ու Թուրքիան չեն համագործակցել միմյանց հետ լարվածության ստեղծման գործում, Թուրքիան պետք է որ Ադրբեջանին աջակցող հայտարարություններ չաներ: Մինչդեռ Թուրքիան թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական դաշտում աջակցում էր Ադրբեջանին:

Սա է փաստում այն, որ ռազմական գործողությունների բռնկումից հետո Թուրքիայի բարձրաստիճան ղեկավարությունն օգտագործում էր կտրուկ ու կոշտ հայտարարություններ՝ Հայաստանն անվանելով ագրեսոր, անվերապահ աջակցություն հայտնելով Ադրբեջանին<sup>2</sup>: Թուրքիան նույնիսկ իր անվստահությունը բարձրաձայնեց ԵԱՀԿ ՄԽ-ի հանդեպ, որի անդամ է նաև ինքը, բայց հաշվի չի առնում, որ ԵԱՀԿ ՄԽ անդամ պետությունը չի կարող ընդգծված միակողմանի հայտարարություններ անել:

<sup>1</sup> CNN: Tensions escalate between Armenia and Azerbaijan, Interviews with Ministers of Foreign Affairs Mammadyarov (Azerbaijan) and Mirzoyan (Nagorno Karabakh Republic), <https://www.youtube.com/watch?v=3eGslwx49SQ>:

<sup>2</sup> Էրդողանը շտապել է աջակցություն հայտնել «փոքր եղբորը», <http://armenpress.am/arm/news/841909/erdoxany-shtapel-e-ajakcutyun-haytnel-poqr-ebxory.html>:



Վերը նշված պաշտոնական հաղորդագրությունների և հայտարարությունների համադրությունից կարող ենք եզրակացնել, որ այս անգամ Ռուսաստանը չէ, որ սկսել է օգտագործել ադրբեջանական գործոնը տարածաշրջանային լարվածությունն ուժեղացնելու համար: Այդ գործոնն այժմ օգտագործում է Թուրքիան, որը ՆԱՏՕ անդամ է և լարված հարաբերություններ ունի Ռուսաստանի հետ:

Այս ամենին Ռուսաստանն արձագանքեց բավական սառը հայտարարություններով<sup>1</sup>, որոնք հակամարտության կողմերին կոչ էին անում դադարեցնել ռազմական գործողությունները և վերսկսել բանակցությունները: Ռուսական կողմից չեղավ ոչ մի հայանպաստ հայտարարություն: Մինչդեռ այդ հայտարարությունն իսկապես ակնկալվում էր ՀՀ ղեկավարության և հասարակության կողմից:

Ռուսական կողմի նման պահվածքը նպատակ ուներ ցույց տալու, որ եթե Միջին Արևմուտքը Ռուսաստանը չգնաց իրադրության լարման և չմտավ Թուրքիայի հետ ռազմական բախումների մեջ, ապա Լեռնային Ղարաբաղի դեպքում, առավել ևս, նման քայլի չի դիմի:

Այս համատեքստում կարևոր հաղորդագրություն էր նաև Ադրբեջանի կողմից հենց ռուսական ծանր զենքերի օգտագործումը ռազմական գործողությունների ժամանակ<sup>2</sup>: Թե՛ Արևմուտքը, թե՛ Ադրբեջանը քաջ գիտակցում են, թե ինչ մեծ բողոքի ալիք կբարձրանա Հայաստանում, երբ հայի վրա կրակեն այն պետության զենքից, որին ինքը դաշնակից է համարում:

Հակառուսական մեծ ալիքի բռնկումը «մեկ զենքով երկու նպաստակ խփելու» մտադրություն ուներ: Առաջին նպատակն այն էր, որ Հայաստանում ևս հակառուսական մեծ հասարակական դժգոհություն կառաջանա, ինչն իշխանություններին հիմք կտա Ռուսաստանին պնդել դրսևորել գործուն հայանպաստ քաղաքականություն, այլ ոչ թե հավասարություն դնել կողմերի միջև: Այստեղ հնարավոր է իրադրության զարգացման երկու սցենար: Առաջին դեպքում Ռուսաստանի նման քայլով հակամարտությունը, բնականաբար, ավելի կարվեր՝ հանգեցնելով դրա բռնկման գլխավոր նպատակին՝ ռուս-թուրքական բախմանը: Երկրորդ դեպքում Հայաստանը կարող էր պահանջել հեռացնել ռուսական բազան իր երկրից, որով ոչ միայն կթուլանային Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում, այլև Թուրքիայի վրա ազդեցության ևս մի կետ կփակվեր Ռուսաստանի համար: Սակայն այստեղ հաշվի չէր առնվել, որ Հայաստանն ամենևին էլ այն

<sup>1</sup> ՌԴ ԱԳՆ պաշտոնական հայտարարությունը՝ կատարված ապրիլի 2-ին, որտեղ կողմերին կոչ է անում զսպվածություն ցուցաբերել, «Заявление официального представителя МИД России М.В. Захаровой в связи с событиями вокруг Нагорного Карабаха», [http://www.mid.ru/web/guest/foreign\\_policy/international\\_safety/conflicts/-/asset\\_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/2199325](http://www.mid.ru/web/guest/foreign_policy/international_safety/conflicts/-/asset_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/2199325):

<sup>2</sup> ԼՂՀ ՊՆ հայտարարությունները, Ադրբեջանի կողմից «Սմերք» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ և «ՏՕՏ» ծանր հրետանային համակարգ կիրառելու մասին, <http://nkrmil.am/main/am/newsMore1257.html>, (05/04/16 [08:35]), <http://nkrmil.am/main/am/newsMore1253.html> (04/04/16 [13:30]):

ժողովրդավարական պետությունը չէ, որ հաշվի նստի հասարակության կարծիքի հետ, կամ այնքան հզոր չէ, որ դեմ գնա Ռուսաստանին:

Մյուս խնդիրը Հայաստանում հակառուսական ալիքի բորբոքումն էր ԱՄՆ և ԵՄ դրական կերպարի ֆոնին: Այն դեպքում, երբ Ռուսաստանը զենք է վաճառում Ադրբեջանին, որով վերջինս կրակում է Ռուսաստանի ռազմավարական դաշնակցին, Եվրոպական միության խորհրդարանում հնչում են հայանպաստ կամ չեզոք կարծիքներ, Ադրբեջանը մեղադրվում է ագրեսիայի, Ռուսաստանը՝ Ադրբեջանին զենք վաճառելու մեջ<sup>1</sup>: Այն դեպքում, երբ Ռուսաստանը ձգտում է ստատուս քվոյի պահպանմանը, ԵՄ-ը խոսում է դրա անթույլատրելիության մասին:

Այս ամենի հետ մեկտեղ ակտիվանում են ամերիկյան փափուկ ուժը ներկայացնող մի շարք հայաստանյան հասարակական կազմակերպություններ, հակառուսական դիրքորոշում ունեցող քաղաքական կազմակերպություններ և անհատներ, որոնք իրենց նպաստն են բերում ոչ միայն հակառուսականության տարածմանը, այլև Արևմուտքին և ԱՄՆ-ին ներկայացնում են որպես այն միակ կողմերը, որոնք ցանկանում են իսկապես լուծել դարաբաղյան հակամարտությունը<sup>2</sup>:

Այն, որ Ռուսաստանը միշտ էլ ձգտել է ստատուս քվոյի պահպանմանը, չենք կարող ժխտել, բայց որ Արևմուտքն իսկապես ցանկանում է լուծել խնդիրը՝ չենք կարող հաստատել, դրան գումարած նաև այն, որ մադրիդյան սկզբունքների իրականացումն այն չէ, ինչ ակնկալում է Հայաստանը որպես հակամարտության լուծում:

Չենք կարող բացառել նաև, որ նույն սցենարն ավելի կազմակերպված ձևով չի կրկնվի: Եթե ավելի քան 20 տարի շարունակ դարաբաղյան հակամարտության ռազմական և բանակցային դաշտում որևէ էական փոփոխություն չի արձանագրվել, դրա պատճառն այն է եղել, որ տարածաշրջանում իրադրության էական փոփոխություն չի եղել: Այսօր, սակայն, տարածաշրջանը բուռն աշխարհաքաղաքական մարտի մեջ է: Այդ մեծ խաղում յուրաքանչյուր հակամարտություն, այդ թվում՝ դարաբաղյանը, կարող է օգտագործվել որպես հաղթանակի հասնելու մի փոքր մաս:

Հաշվի առնելով ստեղծված դրությունը՝ իրավիճակային վերլուծության արդյունքում կարող ենք հանգել այն եզրակացության, որ Հայաստանի համար որպես արդյունավետ քայլ կարող է լինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը և ներգրավումը բանակցային գործընթացներում, որտեղ արդեն կքննարկվեն ԼՂՀ-ի և ԱՀ-ի միջև առկա մյուս խնդիրները, մասնավորապես՝ սահ-

<sup>1</sup> ԵՄ խորհրդարանի նիստ (12.04.2016), Situtaion in Nagorno-Karabakh (Debate), <http://www.europarl.europa.eu/ep-live/en/plenary/video?debate=1460489512342>:

<sup>2</sup> «Ձեռքներդ հեռու Արցախից» բողոքի երթ դեպի ՀՀ ԱԳՆ և ՌԴ դեսպանատուն, <http://www.lin.am/1896805.html>:

մանների ճշգրտումը, փախստականների հարցերը, սահմանում իրադրության հնարավոր փոփոխությունների սցենարների դեպքում իրադրության անկայունացում թույլ չտվող քայլերի հստակեցումը և այլն:

Մա Հայաստանին տալիս է մի շարք առավելություններ: Նախ՝ ՀՀ-ն կարող է այս դեպքում ցանկացած պահի դուրս գալ բանակցություններից՝ չխաթարելով բանակցային գործընթացը: Այն թեզը, թե ԼՂՀ ճանաչումը կազդի բանակցային գործընթացի վրա, այստեղ արդեն չի գործում, քանի որ բանակցային գործընթացն արդեն իսկ խաթարված է պատերազմի բռնկման պատճառով: Պատահական չէ, որ ԵԱՀԿ ՄԽ կոչերը վերաբերում են ոչ թե բանակցությունների շարունակմանը, այլ դրանց սկսմանը, հակամարտության կողմերի՝ բանակցությունների սեղանին վերադառնալուն: ԼՂՀ ճանաչումը ՀՀ-ի կողմից ավելի է ընդլայնում հնարավորությունները՝ ԼՂՀ-ին բերելու բանակցությունների դաշտ, քանի որ ՀՀ-ն ցանկացած պահի կարող է դուրս գալ բանակցություններից՝ թողնելով այն երկու պետություններին՝ Ադրբեյջանին և ԼՂՀ-ին:

Երբեք չի կարելի բացառել նաև այն հանգամանքը, որ Հայաստանի ճանաչումից հետո ԼՂՀ ճանաչումն այլ պետությունների կողմից տեղի չի ունենա: Խոսքն, իհարկե, միանգամից տեղի ունեցող գործընթացի մասին չէ, այլ հայկական սփյուռքի և լոբբիի կողմից նախապես կատարվելիք հետևողական աշխատանքի մասին:

Այս դեպքում Ադրբեյջանի ագրեսիան կդիտվի ոչ թե որպես ներքին, այլ որպես արտաքին ագրեսիա՝ անկախ պետության ագրեսիան մեկ այլ անկախ պետության նկատմամբ: Ռազմական գործողությունների բռնկման դեպքում դրանք պաշտոնապես կլինեն երկու անկախ պետությունների միջև:

ՀՀ-ի կողմից այս քայլի իրականացումից հետո հնարավոր է ադրբեյջանական ագրեսիայի ևս մեկ բռնկում, որին, սակայն, ավելի պատրաստ կլինենք: Հարկ է միշտ հիշել, որ ռազմական գործողությունների բռնկման հավանականությունը ցանկացած բանակցային արդյունքի դեպքում կպահպանվի, քանի դեռ ադրբեյջանական հասարակությունը սնվում է հակահայկական քարոզչությամբ:

Մա բավական լուրջ քայլ կլինի ստատուս քվոյից հրաժարվելու, հակամարտության շուրջ նոր իրավիճակ ստեղծելու, բանակցություններին նոր ընթացք տալու համար: Մակայն դրա իրականացումը պահանջում է քաղաքական վճռական կամքի առկայություն, պատմական շրջադարձի ցանկություն: Այս որոշման կայացումն ունի մեծ հնարավորություններ խնդրի հայանպաստ լուծումն ապահովելու համար, բայցև պահանջում է վճռական գործողություններ: Այն արտաքին ճնշումների և թուրքական հիստերիայի նոր ալիքի պատճառ կարող է դառնալ, սակայն թույլ չի տա, որպեսզի այլ պետություններ օգտվեն ստեղծված իրա-

վիճակից և Ադրբեջանին յուրաքանչյուրն իր կողմը գրավելու համար շահարկեն Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Այդ շահարկումներն, անշուշտ, շարունակական են դարձնելու սահմանային լարվածությունը:

*Մայիս, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *M. Albright*, Memo to the President Elect. How we can Restore America`s Reputation and Leadership, NY, 2008:
2. *Joseph S. Nye, JR.*, Soft Power: The Means to Success in World Politics, NY, 2004.
3. *Jerrold M. Post*, The Mind of the Terrorist: The Psychology of Terrorism from the IRA to Al Qaeda, NY, 2007:
4. *Henry Nau*, America`s Identity, Democracy Promotion and National Interests, Beyond Realism, Beyond Idealism, Michael Cox, American Democracy Promotion: Impulses, Strategies, and Impacts, NY, 2002:
5. *G. John Ikenberry*, Liberal Order Building, M. Leffler, J. Legro, To Lead the World, American Strategy After the Bush Doctrine, NY, 2008:

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ. ՄԵԾ ԽԱՂԻ ՓՈՔԻ ՄԱՍԸ

### Աստղիկ Գևորգյան

#### Ամփոփագիր

Ապրիլի 2-ին դարաբաղյան հակամարտության սրումը տեղիք տվեց վերլուծելու միջազգային աշխարհաքաղաքական դրությունը, որպեսզի հասկանալի լինի, թե ինչու դարաբաղյան հակամարտությունը լարվեց հենց այս ժամանակահատվածում և ինչ խնդիրներ լուծելու նպատակով: Հողվածում դարաբաղյան հակամարտությունը քննարկվում է սիրիական պատերազմում և ուկրաինական հեղափոխությունում աշխարհաքաղաքական կենտրոնների միջև հարաբերությունների համատեքստում:

Մասնավորապես, հիմնվելով պաշտոնական հաղորդագրությունների, մամուլի հրապարակումների, պետությունների գործողությունների, Հայաստանի ներքաղաքական դաշտում տեղի ունեցող իրադարձությունների վրա՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ Միացյալ Նահանգների, Ռուսաստանի և Եվրամիության միջև հարաբերություններն իրենց արտացոլումը գտան Ղարաբաղում: Մրանից ամենևին չի բխում, թե Ադրբեջանը բռնությունների սանձազերծման գործում կրավորական դեր է ունեցել: Աշխարհաքաղաքական կենտրոնների միջև հարաբերություններն ազդում են տարածաշրջանային գործընթացների վրա, բայց ագրեսիան գալիս է Ադրբեջանից:

Ուստի տարածաշրջանում արտացոլված միջազգային դրության փոփոխությունը հարկադրում է Հայաստանի Հանրապետությանը դիմելու վճռական քայլերի

ղարարական հակամարտությունը հնարավորինս հոգուտ Հայաստանի լուծելու համար: Նման քայլ կարող է լինել Հայաստանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումն ու ներգրավումը բանակցային գործընթացում, որի ընթացքում էլ կմշակվեն բանակցությունների նոր օրակարգ և նպատակներ:

## **КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ В КОНТЕКСТЕ МИРОВОЙ ПОЛИТИКИ: МАЛЕНЬКИЙ ФРАГМЕНТ БОЛЬШОЙ ИГРЫ**

*Աստիկ Գևորգյան*

Резюме

После эскалации ситуации в зоне Карабахского конфликта 2 апреля актуально проанализировать международную ситуацию, чтобы понять, почему эскалация произошла именно сейчас и какие проблемы она должна решить. В статье Карабахский конфликт рассматривается в контексте отношения мировых держав к сирийской войне и украинской революции.

Основываясь на официальных пресс-релизах, средствах массовой информации, действиях государств, событиях на внутренней политической арене Армении, мы можем заключить, что взаимоотношения Соединенных Штатов, России и Европейского союза отражаются на Карабахе. Вот почему изменения в региональной ситуации способствуют, чтобы РА делала решительные шаги и гарантировала решение Карабахского конфликта в пользу Армении. Таким шагом может быть признание Нагорно-Карабахской Республики с границами, которые будут определены в ходе переговоров.

## **KARABAKH CONFLICT IN THE CONTEXT OF GLOBAL POLITICS: A SMALL PART OF A BIGGER GAME**

*Astghik Gevorgyan*

Resume

The escalation of the Nagorno-Karabakh conflict on April 2, 2016 made it urgent to analyze the international situation in order to understand why the conflict was intensified exactly in that period of time, and what were the problems it intended to solve? The Nagorno-Karabakh conflict is discussed in the article in the context of the relations among world powers in Syrian war and Ukrainian revolution.

Based on the official press releases, mass media publications, actions taken by states, the events in Armenia's internal political arena, it can be concluded that the relations

among the United States, Russia and European Union were reflected in Karabakh. This does not mean Azerbaijan had a passive role in unleashing violence. The relations between geopolitical powers impact the regional developments, but aggression comes from Azerbaijan.

Therefore, the changes in the regional situation prompt Armenia to take decisive steps in order to ensure the solution of Nagorno-Karabakh conflict in favor of Armenia. The recognition of Nagorno-Karabakh Republic with its further involvement in negotiation process can be one of such steps.

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## *Աշոտ Թավադյան՝*

*Բանալի բառեր՝* հիմնարար և կիրառական գիտություն, ներդրումներ, զգայունության շեմ, հետազոտությունների հիմնադրամ, նպատակային ֆինանսավորում:

Ելնելով Հայաստանի Հանրապետության հիմնախնդիրների արդյունավետ լուծման անհրաժեշտությունից և այդ գործընթացում գիտության դերից՝ առանցքային են դառնում գիտության արդյունքների գնահատման սկզբունքները: Հաշվի առնելով հիմնարար ու կիրառական գիտության սերտ փոխկապվածությունը և դրանշանակությունը գիտահետազոտական կազմակերպություն – բուհ համագործակցության ապահովման գործում՝ առաջնային են դառնում գիտության արդյունքների պահանջարկի հիմնախնդիրների վերհանումը և դրանց ներդրման ուղղությունների ձևավորումը:

Առանց գիտության պատշաճ և նպատակային ֆինանսավորման հնարավոր չէ ապահովել մեկ համակարգում գտնվող ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտության ու փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունավետ իրականացումը: Առաջնահերթ է գիտական գործունեության ֆինանսավորման սկզբունքների ձևավորումը:

### ***1. Հիմնարար գիտության արդյունքների գնահատման սկզբունքները***

1. Հեղինակավոր գիտական ամսագրերում հրապարակումները, առավել ևս՝ մրցանակների ստացումը, էապես բարձրացնում են ցանկացած պետության հեղինակությունը: Անվիճելի է, որ առանց լուրջ ներդրումների հիմնարար գիտության մեջ հասնել այդպիսի արդյունքների հնարավոր չէ: Այդպիսի հրապարակումներն ու մրցանակները հնարավորություն են տալիս ներգրավել լրացուցիչ էական ֆինանսական միջոցներ արտասահմանյան գրանտերի տեսքով:
2. ՀՀ կառավարության ծրագրում<sup>1</sup> նշված է բուհ – գիտահետազոտական կազմա-

<sup>1</sup> ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր:

<sup>1</sup> Հավելված ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060 - Ա որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, <http://www.gov.am/files/docs/1950.pdf>

կերպություն համագործակցության ապահովման մասին: Ընդգծենք, որ առանց որակյալ հիմնարար գիտության բացառվում է որակյալ կրթությունը, քանզի միայն բարձրորակ մասնագետները կարող են դա իրականացնել: Որակյալ կրթությունը, որն ապահովում են բարձրորակ մասնագետները, բարձրացնում է կրթության գինը սովյալ երկրում, դրա հետ մեկտեղ գրավիչ է դառնում արտասահմանյան ուսանողների համար՝ երկրին բերելով լրացուցիչ եկամուտներ:

3. Առանց ներդրումների հիմնարար գիտության մեջ չեն լինի որակյալ մասնագետներ, որոնք ունակ են իրականացնել նորարարական ներդրումներ: Հակառակ դեպքում նորարարական ներդրումներ իրականացնելու համար ստիպված են լինում հրավիրել արտասահմանյան մասնագետներ՝ վճարելով անհամեմատ ավելի բարձր գին:
4. ՀՀ կառավարության ծրագրում նշված է, որ 2018թ. սկսված գիտության ֆինանսավորման ծավալների հիմնական մասն ուղղորդվելու է կիրառական և փորձակոնստրուկտորական ծրագրերին: Առանցքային կիրառական հիմնախնդիրները լուծելու համար, ելնելով կիրառական և համապատասխան հիմնարար ուղղությունների սերտ փոխկապվածությունից, անհրաժեշտ է սովյալ ուղղությամբ մեծացնել նաև հիմնարար հետազոտությունների ֆինանսավորումը, քանզի ակնհայտ է, որ գոյություն ունի ուղղակի կապ հիմնարար հետազոտությունների և կիրառական աշխատանքների արդյունավետ իրականացման միջև:

Հայաստանում, հաշվի առնելով ԳԱԱ ավանդույթները, գիտահետազոտական կազմակերպությունների ցանցը, գիտական հետազոտությունների կոորդինացման հնարավորությունները, ԳԱԱ-ի մասին համապատասխան օրենքի առկայությունը, վերը նշված սկզբունքները կարող է համակարգել և արդյունավետ իրականացնել ԳԱԱ-ն:

## ***2. Գիտության արդյունքների նկատմամբ պահանջարկի հիմնախնդիրները ՀՀ-ում***

ՀՀ գիտության արդյունքները 2014թ. աուդիտի ենթարկելուց հետո եվրոպական զարգացած երկրների մասնագետների կողմից կազմված հանձնաժողովի եզրակացության մեջ ուղղակիորեն նշվեց, որ ՀՀ-ում վատ է օգտագործվում գիտական մեծ ներուժը<sup>1</sup>:

Հայաստանում գիտության արդյունքների նկատմամբ պահանջարկը վտանգավոր ցածր է: Նորարարությունները կարևորագույն գործոն և անհրա-

<sup>1</sup> Inco-Net EaP, Report on the Review of the Armenian S&T Policy Mix, March, 2015.



Ժեշտ պայման են պետության զարգացման համար: Մեր երկրում ոչ բավարար պահանջարկի պատճառները հետևյալն են.

1. Ներկա իրավիճակում արդյունաբերության, այդ թվում նաև ռազմարդյունաբերական համալիրի փոքր ծավալը:
2. Տնտեսության մենաշնորհային վիճակը (օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով):
3. Առկա է նորարարությունների արտահանման խնդիր, քանզի, որպես կանոն, պետությունները խրախուսում և պատվիրում են նորարարություններ իրենց գիտական կազմակերպություններին՝ հատկապես տեղական արդյունաբերության էական զարգացման նպատակից ելնելով: Դա ակնհայտ է զարգացած երկրներում, որտեղ պահանջարկը նորարարությունների նկատմամբ զգալիորեն մեծ է: Պարզ է, որ պետությունները ձգտում են մեծացնել իրենց, այլ ոչ թե ուրիշ երկրների գիտական ներուժը: Այդ պատճառով ներկրվող նորարարությունների նկատմամբ ձևավորում են բավական կոշտ պահանջներ, որոնք երբեմն ունեն արհեստական բնույթ:

### ***3. Գիտության արդյունքների ներդրման հիմնախնդրի լուծման ուղղությունները***

Առկա է նորարարությունների ներդրման աջակցության հիմնախնդիր, որն ակնհայտորեն ՀՀ-ում հնարավոր չէ լուծել առանց պետական միջամտության:

1. Այն նորարարությունները, որոնք անհրաժեշտ են մեր երկրին, ունեն միջազգային կամ ռազմավարական նշանակություն և նպաստում են տնտեսական և այլ բնույթի անվտանգային խնդիրների լուծմանը, պարտադիր պետք է ֆինանսավորվեն պետության կողմից, նույնիսկ եթե շուկայական պահանջարկն այստեղ հստակ չէ: Այդ կարգի նորարարություններն ուղղակի նպաստում են պետության ներուժի աճին, ինչպես նաև պետության վարկանիշի բարձրացմանը:

2. Հրամայական է օրենսդրորեն հստակեցնել ներդրումների խթանման մեխանիզմը.

տրամադրել բյուջետային երաշխիքներ վարկեր ստանալու համար՝ նորարարությունները ներդնելու տեսանկյունից, կիրառել բանկային տոկոսների լրիվ կամ մասնակի փոխհատուցման մեխանիզմը,

կիրառել հարկային արտոնությունների սկզբունքը,

նորարարություններ ներդնելու համար կարող է կիրառվել բյուջետային վարկավորման մեխանիզմը:

3. Առաջին փուլում ընդունելի են նաև վարչական մեթոդները, երբ հիմնավորված նորարարության ներդրումն անտեսվում է:

#### **4. Գիտական գործունեության արդյունավետ ֆինանսավորման սկզբունքները**

1. ՀՀ-ում գիտությունը ֆինանսավորվում է ՀՆԱ 0.24%-ի չափով, բացարձակ թվերով դա կազմում է մոտ \$25 մլն: Այս կարգի ֆինանսավորման պարագայում, ինչպես տոկոսային առումով, այնպես էլ բացարձակ թվերով գիտության արդյունավետությունը բարձրացնելու հավանականությունը շատ ցածր է:

Ջարգացած երկրներում այդ ցուցանիշը զգալիորեն բարձր է, ասենք՝ Շվեդիայում և Ֆինլանդիայում կազմում է ՀՆԱ 3.3%-ը, Ճապոնիայում՝ 3.5%-ը, Իսրայելում՝ 4.2%-ը: ԵՄ-ում մեր գործընկերների մոտ՝ Ռուսաստանում և Բելառուսում, այդ ցուցանիշը նույնպես բարձր է՝ համապատասխանաբար կազմում է ՀՆԱ 1.1% և 0.7%-ը<sup>1</sup>: Բացարձակ թվերով ցուցանիշներն ընդհանրապես անհամեմատելի են. Ռուսաստանում այն կազմում է \$22 մլրդ, Բելառուսում՝ \$0.5 մլրդ:

Ադրբեջանում գիտությունը նույնպես ֆինանսավորվում է 0.24%-ով, սակայն բացարձակ թվերով դա կազմում է մոտ \$125 մլն, հինգ անգամ ավելի, քան Հայաստանում: Նույնիսկ այդ պարագայում գիտական արդյունքներով մենք զգալիորեն գերազանցում ենք Ադրբեջանին<sup>2</sup>:

Ֆինանսավորման «զգայունության շեմը», այսինքն՝ նվազագույն ծախսերը, որոնք անհրաժեշտ են իրար հետ սերտ փոխկապակցված հիմնարար և կիրառական էական արդյունքներ ստանալու համար, մեր գնահատականներով՝ կազմում են \$100 մլն: Հայաստանի համար դա ՀՆԱ 1%-ն է: Հետևաբար, որպեսզի մենք կարողանանք ապահովել մեր երկրի կայուն զարգացումը, հնարավորինս արագ պետք է հասնել այդ ցուցանիշին:

Այստեղ պետք է շեշտադրել, որ ներկայում աշխարհում բավական ծախսատար գործընթաց է փորձարարական գիտություն իրականացնելը: Առանց բարձրորակ փորձարարական գիտության փաստացի բացառվում են անհրաժեշտ կիրառական արդյունքները: Ընդգծենք որ, որ ՀՀ-ում արդյունավետ կիրառական ծրագրերը տասնյակ տարիների հիմնարար հետազոտությունների արդյունքների հետևանք են:

2. Առաջնահերթ պետք է դառնա գիտության գերակա ֆինանսավորման սկզբունքը, սակայն գերակա ընտրված ուղղություններն անհրաժեշտ է ֆինանսավորել հնարավորինս լայն միջակայքում, այլ ոչ թե կետային ձևով: Կետային ֆինանսավորման դեպքում շատ մեծ է հավանականությունը, ինչպես ասում են,

<sup>1</sup> The United Nations Statistical Yearbook 2014

<http://unstats.un.org/unsd/publications/statistical-yearbook/files/syb58/Table-41.pdf>

<sup>2</sup> «Наукометрия свидетельствует о наших высоких результатах», интервью "ГА" президента НАН РА Р.Мартirosяна (24.06.2016), <http://www.golosarmenii.am/article/42402/naukometriya-svidetelstvuet-ounashix-vysokix-rezultatax->

ջրի հետ միասին դուրս մղել նաև հիմնական արդյունքը, որն, ի դեպ, ունի ստեղծագործական բնույթ: Կետային ֆինանսավորման փորձի պարագայում գերակա ֆինանսավորման սկզբունքը վերածվում է *վիճակախաղային սկզբունքի*<sup>1</sup> իր բոլոր բացասական հետևանքներով և սպասվող արդյունքներով: Այդ դեպքում չհիմնավորված խնայողությունը կբերի նրան, որ խնայողը կվճարի կրկնակի, ընդ որում՝ արտարժույթով, նորարարությունների համար՝ փաստացի զարգացնելով այլ երկրի գիտությունը:

3. Մեր իրավիճակում, երբ բոլոր անվանի գիտնականներն իրար ճանաչում են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ տեսանկյունից, նվազագույն սուբյեկտիվ է դառնում գերակա ֆինանսավորման իրականացման պետական պատվերը՝ հաշվի առնելով իրականացնողի գիտական անցյալը: Գերակայությունները սահմանելիս նպատակահարմար է գնահատել ֆինանսական, գիտական և տեխնիկական իրական հնարավորությունները: Այստեղ, իհարկե, իր դերը կարող է ունենալ միջազգային աուդիտը:

Երկրորդ փուլում, տվյալ աշխատանքների պետական պատվերն իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել, որ արդյունքները կարող են լինել հիմնարար գիտական աշխատանքներից մինչև կիրառական արդյունքները: Էական արդյունքներ ստանալու պարագայում պարտադիր պետք է նախատեսվեն խրախուսման լուրջ միջոցներ: Նախնական վճարն աշխատանքի գործընթացը բարեխիղճ իրականացնելու համար է:

4. Պետպատվերների ժամանակ խնդիրները նպատակահարմար է լուծել կոոպերացիայում, ինչի հնարավորությունը ստեղծում է ԵԱՏՄ Պայմանագիրը, որի դրույթներն այս առումով հստակեցման կարիք ունեն: Այստեղ մենք պետք է նախաձեռնող լինենք, քանզի ակնհայտորեն կօգտվենք այդ կոոպերացիայից: ԵԱՏՄ հիմնարար հետազոտությունների հիմնադրամ ստեղծելու առաջարկն<sup>1</sup> ունի բարձր արդյունավետություն և ակներևաբար կնպաստի մեր ռազմավարական խնդիրների լուծմանն ու տնտեսության զարգացման հնարավորությունների մեծացմանը: Այս խնդիրը պետք է հնարավորինս արագ լուծել՝ օգտագործելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մեր հնարավորությունները:

*Նոյեմբեր, 2016թ.*

<sup>1</sup> «Инновационные преобразования требуют скоординированных усилий», "ГА" (29.06.2016), <http://www.golosarmenii.am/article/42574/innovacionnye-preobrazovaniya-trebuyut-skoordinirovannyx-usilij->

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

*Աշոտ Թավադյան*

Ամփոփագիր

Անհրաժեշտ է ապահովել համապատասխան ֆինանսավորում մեկ համակարգում գտնվող ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտության ու փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Գիտության ֆինանսավորումը պետք է լինի ոչ պակաս, քան նրա «զգայունության շեմը», այսինքն՝ այն նվազագույն ծախսերը, որոնք անհրաժեշտ են իրար հետ սերտ փոխկապակցված հիմնարար և կիրառական էական արդյունքներ ստանալու համար: Առաջնահերթ պետք է դառնա գիտության գերակա ֆինանսավորման սկզբունքը, սակայն գերակա ընտրված ուղղություններն անհրաժեշտ է ֆինանսավորել հնարավորինս լայն միջակայքում, այլ ոչ թե կետային ձևով:

**МИНИМАЛЬНЫЙ УРОВЕНЬ ФИНАНСИРОВАНИЯ НАУКИ  
И ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ СПРОСА  
НА НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ И ИХ ВНЕДРЕНИЕ**

*Ашот Тавадян*

Резюме

Необходимо обеспечить соответствующее финансирование для эффективного выполнения находящихся в одной системе как фундаментальных, так и прикладных и экспериментально-конструкторских работ. Финансирование науки должно быть не меньше, чем ее «порог чувствительности», то есть тех минимальных затрат, которые необходимы для получения тесно взаимосвязанных фундаментальных и прикладных результатов. Первоочередным должен стать принцип приоритетного финансирования науки, однако приоритетные направления необходимо финансировать по возможности в широком диапазоне, а не точно.

**THE MINIMUM THRESHOLD FOR SCIENCE FUNDING  
AND THE PROBLEMS OF CREATING DEMAND  
FOR RESEARCH RESULTS AND THEIR IMPLEMENTATION**

*Ashot Tavadyan*

Resume

Adequate funding needs to be ensured for the effective implementation of a system of fundamental, applied as well as experimental research and development. Funding of science should not be below its "sensitivity threshold", that is, the minimum cost necessary to obtain closely interrelated fundamental and applied results. The main principle should be the priority financing of science, but the primary areas need to be funded in as broad range as possible, rather than in narrowly targeted manner.

# ԻՄՐԱՅԵԼԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## *Վարդան Աթոյան՝ Ռուզաննա Թաղևոսյան՝*

*Բանալի բառեր՝* Իսրայել, ուղեղային կենտրոններ, հանրային քաղաքականություն, ազգային անվտանգություն, ինտելեկտուալ ռեսուրս, փորձագիտական հանրություն:

21-րդ դարում տարբեր երկրների ուղեղային կենտրոնները վեր են ածվում ոչ միայն ներպետական, այլև, շատ դեպքերում՝ հանրային քաղաքականության գլոբալ դերակատարների: Այդ հանգամանքով պայմանավորված՝ հրատապ խնդիր են դառնում աշխարհի տարբեր երկրների ուղեղային կենտրոնների (ՈւԿ) փորձի ուսումնասիրությունը և մեզանում դրա ներդրման հնարավորությունների գնահատումը:

Վերոնշյալի համատեքստում նշենք, որ իսրայելական ՈւԿ-ների ուսումնասիրությունը մեզ համար կարևորվում է մի շարք հանգամանքներով: Նախ, Իսրայելն իր պատմական անցյալով, տարածաշրջանային հակամարտություններով, մեծաթիվ սփյուռքով, իր չափերով և մի շարք այլ առումներով Հայաստանի հետ ունի բազմաթիվ նմանություններ: Բացի այդ, Իսրայելի ուսումնասիրությունը, որպես ազգային պետության մոդել, իր բոլոր ասպեկտներով և տարբեր ոլորտներում հաջողված փորձով, այդ թվում ինտելեկտուալ ռեսուրսները համախմբող կառույցների ստեղծման գործում, ժամանակի հրամայականն է: Այդ համատեքստում պետք է նշել, որ հայրենական մասնագիտական գրականության մեջ, թերևս որոշ բացառություններով, Իսրայելի ՈւԿ-ների գործունեությանն ու դերակատարությանը նվիրված աշխատանքների մեծ բաց կա: Այս աշխատանքը փորձ է մի փոքր լրացնելու այդ բացը և կարևորելու իսրայելական ՈւԿ-ների գործունեության ուսումնասիրությունը թե՛ տեսական, թե՛ կիրառական իմաստով:

Ինչպես նշում է Վան Լիր Երուսաղեմ (*Van Leer Jerusalem*) ինստիտուտի աշխատակից Բենջամին Բալինթը (*Benjamin Balint*), Իսրայելում ՈւԿ-ների տարածումը պայմանավորված է Իսրայելի «արևմտյան քաղաքական մշակույթով»: Երկրորդը կապված է ԱՄՆ-ում ապրող կամ սովորող մեծաթիվ իսրայելցիների

<sup>1</sup> «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՀՊՏՀ Քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.:

<sup>2</sup> ՀՊՏՀ Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ:

հետ: Նրա խոսքով՝ Իսրայելում ՈւԿ-ների հիմնադիրներն ուղղակիորեն կապված են ԱՄՆ-ի հետ, նրանք կամ այնտեղի բնակիչներ են, կամ սովորել են այնտեղ<sup>1</sup>:

Ըստ ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տնօրեն Ջեյմս ՄաքԳանի (*J.G. McGann*) 2016թ. հրապարակած զեկույցի<sup>2</sup>՝ Իսրայելում գործում է 58 ՈւԿ, որոնցից շատերը դասվում են աշխարհում լավագույնների շարքին: Մասնավորապես, Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտը (ԱԱՀԻ) աշխարհի լավագույն ՈւԿ-ների շարքում 108-րդն է: Վերջինս 42-րդն է նաև պաշտպանությանն ու ազգային անվտանգությանն առնչվող լավագույն ՈւԿ-ների շարքում և 4-րդը՝ Միջին Արևելքի ՈւԿ-ների շարքում: Ընդհանուր առմամբ, Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի լավագույն 75 ՈւԿ-ներից 13-ը իսրայելական ՈւԿ-ներն են, որոնց թվում են Բեզին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտը, Իսրայելի սոցիալական և տնտեսական առաջընթացի կենտրոնը և այլ կենտրոններ:

Ուսումնասիրության ընթացքում մեր կողմից դիտարկվել են Իսրայելի 58 ՈւԿ-ներից 10-ը, որոնցից լավագույն երեքը ներկայացնենք առավել մանրամասն:

### ***Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտ (Institute for National Security Studies)***

Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտն (ԱԱՀԻ) իրականացնում է նորարարական, ժամանակին համահունչ, բարձրորակ հետազոտություններ, որոնք Իսրայելի ազգային անվտանգության վերաբերյալ հանրային քննարկումների առիթ են տալիս<sup>3</sup>: ԱԱՀԻ-ն ինչպես Իսրայելի, այնպես էլ արտերկրի քաղաքական գործիչների համար իրականացնում է քաղաքական վերլուծություններ, միաժամանակ առաջարկություններ է ներկայացնում որոշումներ կայացնողներին:

ԱԱՀԻ-ն շահույթ չհետապնդող, ապակուսակցական ՈւԿ է, որի հիմնական նպատակն է ապահովել Իսրայելի՝ որպես անվտանգ, ժողովրդավարական և հրեական պետության ապագան: Ինստիտուտը ձգտում է ձևավորել և իր ազդեցությունը տարածել Իսրայելի քաղաքականություն մշակողների և որոշումներ կայացնողների վրա, ամեն տարի կազմակերպում է միջազգային կոնֆերանսներ,

<sup>1</sup> Does Israel Need Think Thanks, by Hannah Elka Meyers *Middle East Quarterly* Winter 2009, pp. 37-46. URL: <http://www.meforum.org/2061/does-israel-need-think-tanks>

<sup>2</sup> *McGann J.G.*, 2015 Global Go To Think Tank Index Report, Think Thanks and Civil Societies Program, International Relations Program University of Pennsylvania, Philadelphia, PA USA (Feb/9/2016). URL: [http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think\\_tanks](http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks)

<sup>3</sup> The Institute for National Security Studies official web page. <http://www.inss.org.il/index.aspx?id=4447>

որին մասնակցում են ճանաչված պետական գործիչներ և ազգային անվտանգության ոլորտի ներկայացուցիչներ ինչպես Իսրայելից, այնպես էլ ամբողջ աշխարհից: Կոնֆերանսները հիմնականում վերաբերում են 21-րդ դարում Իսրայելի ազգային անվտանգության մարտահրավերներին: 2016թ. իններորդ ամենամյա կոնֆերանսին, որը կրում էր «Փոխվո՞ւմ են խաղի կանոնները» (*Changing Rules of the Game*) խորագիրը, մասնակցում էին Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլին (*Reuven Rivlin*), արտաքին գործերի, պաշտպանության, ֆինանսների, էկոնոմիկայի, արդարադատության նախարարները, ինչպես նաև Իսրայելում մի շարք երկրների դեսպաններ<sup>1</sup>:

*ԱԱՀԻ-ն իրականացնում է 14 հետազոտական ծրագիր.*

- Սպառազինությունների վերահսկողություն և տարածաշրջանային անվտանգություն
- Իսրայելա-պաղեստինյան հարաբերություններ
- Կիրեռանվտանգության ծրագիր
- Օրենք և ազգային անվտանգություն
- Ռազմական և ռազմավարական հարցեր
- Ահաբեկչություն և սառեցված հակամարտություններ
- Իսրայելի հասարակություն և հանրային կարծիք
- Ռազմական հավասարակշռություն
- Հայրենիքի անվտանգություն
- Տեխնոլոգիական կանխատեսում
- Կիրառական բանակցությունների կենտրոն
- Տնտեսագիտություն և ազգային անվտանգություն
- Չինաստան
- Միրիա:

*ԱԱՀԻ հիմնական հրապարակումներն են.*

- Իսրայելի ռազմավարական հետազոտություն (*Strategic Survey for Israel*). տարեգիրք, որում ուսումնասիրվում են Իսրայելի ռազմավարական միջավայրի վրա ազդող հիմնական զարգացումները, ինչպես նաև ներկայացվում են առաջարկություններ Իսրայելի ազգային անվտանգության ներկա և ապագա հնարավոր մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ:
- Զեկույցներ, որոնցում արտացոլվում են ընթացիկ խնդիրների և դրանց քաղաքական հետևանքների վերաբերյալ վերլուծական աշխատանքները:

<sup>1</sup> 9th Annual International Conference: Changing Rules of the Game?

URL: <http://www.inss.org.il/index.aspx?id=4480&eventid=10709>



- Ռազմավարական գնահատում (*Strategic Assessment*). ԱԱՀԻ-ի եռամսյակային պարբերականը, որում ներկայացված են Իսրայելի ռազմավարական իրավիճակի ընթացիկ իրադարձությունների և ժամանակակից միտումների վերաբերյալ ակնարկներ:
- Ռազմական և ռազմավարական հարցեր (*Military and Strategic Affairs*). տարեկան երեք անգամ հրատարակվող ամսագիր ռազմական ոլորտում Իսրայելի մարտահրավերների վերաբերյալ:
- ԱԱՀԻ-ի հայացք (*INSS Insight*). ընթացիկ իրադարձությունների արագ արձագանքման վերաբերյալ լրագիր, որը թողարկվում է էլեկտրոնային եղանակով, շաբաթական մեկ-երկու անգամ:

ԱԱՀԻ աշխատակազմը բաղկացած է ավելի քան 50 փորձագետից, որոնց թվում են համալսարանների պրոֆեսորներ, ռազմասօդային ուժերի նախկին սպաներ, Ատոմային էներգիայի հանձնաժողովի նախկին աշխատակիցներ, Քնեսեթի նախկին պատգամավորներ, նախկին նախարարներ և նախարարների տեղակալներ: Կենտրոնի տնօրեն Ամոս Յադլին (*Amos Yadlin*) 40 տարի աշխատել է Իսրայելի պաշտպանական ուժերում, եղել է ռազմական հետախուզության ղեկավար, ռազմասօդային ուժերի փոխհրամանատար:

Թեև հաստատության պաշտոնական կայքում դրամական արտահայտությամբ տեղեկատվություն չկա եկամուտների չափերի վերաբերյալ, բայց դրանց գոյացման աղբյուրները հայտնի են: Լինելով շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ ինստիտուտն իր առաքելությունն իրականացնում է անհատներից, խոշոր կորպորացիաներից և առաջատար հիմնադրամներից միջոցների ներգրավման՝ նվիրատվությունների շնորհիվ: Ինստիտուտը նվիրատվություններն ընդունում է վճարային քարտերի, չեկերի, դրամական փոխանցումների միջոցով, որոնք հարկային նվազեցումներ են՝ համաձայն Իսրայելի օրենսդրության: Մասնավորապես, «Եկամտային հարկի որոշման» 46-րդ հոդվածը դոնորների համար ապահովում է հարկային նվազեցումներ, եթե նրանց նվիրատվություններն ուղղված են հավաստագրված հանրային հաստատություններին: Դոնորները կարող են ստանալ 35% հարկային նվազեցում, եթե նրանց նվիրատվությունը գերազանցում է 180 շեկելը (մոտավորապես \$50), բայց ոչ ավելի, քան 9 մլն շեկելը (մոտավորապես \$2.6 մլն), կամ մինչև նրանց վճարելիք ամբողջ հարկի 30%-ը<sup>1</sup>:

Պետք է նշել, սակայն, որ թեև օրենսդրությամբ տրված է այդպիսի շահադրդիչ հնարավորություն, այնուամենայնիվ, ըստ Աշխարհի նվիրատվության ցուցիչի 2015թ. զեկույցի, իսրայելական մասնավոր կազմակերպությունների և ան-

<sup>1</sup> Council on Foundations, Israel, Tax Allowances. URL: <http://www.cof.org/content/israel#allowances>

հասուների նվիրատվությունները մեծ չեն՝ 75-րդ տեղն աշխարհում<sup>1</sup>:

### ***Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտ*** ***(Israel Democratic Institute)***

Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտն (ԻԺԻ) անկախ, ապակուսակցական ՈւԿ է, որի գործունեությունն ուղղված է Իսրայելում ժողովրդավարության հիմքերի ամրապնդմանը<sup>2</sup>: Հիմնադրվելով 1991թ.՝ ԻԺԻ-ն աջակցում է պետական պաշտոնյաներին և քաղաքացիական ծառայողներին հետևյալ 4 ձևերով.

- *Հետազոտություններ.* իրականացնում է Իսրայելի ժողովրդավարական կարևոր խնդիրներին վերաբերող քաղաքական հետազոտություններ:
- *Երկխոսություն.* գումարում է բաց խորհրդածողովներ, կազմակերպում ակտիվ հանրային քննարկումներ և ստեղծում կոնսենսուս հասարակության և կառավարության միջև:
- *Բարեփոխումներ.* ԻԺԻ-ն բարեփոխումների համար մշակում է հետազոտական հիմք ունեցող նախագծեր, որոնք ուղեկցվում են գործնական կիրառություն ունեցող ռազմավարությունների մշակմամբ:
- *Արժեքների արմատավորում.* ԻԺԻ-ն նպաստում է Իսրայելի՝ որպես հրեական և ժողովրդավարական պետության ինքնության համար կենսական նշանակություն ունեցող արժեքների և նորմերի արմատավորմանը:

ԻԺԻ-ի տեսլականը հիմնվում է Իսրայելի անկախության հռչակագրի սկզբունքների վրա: Այդ սկզբունքները հրեական, մարդասիրական, ազատական և եղբայրական արժեքներով պետություն ստեղծելու սիոնիստական նկրտումների արտահայտությունն են<sup>3</sup>: Ինստիտուտը բավական մեծ ազդեցություն ունի Իսրայելի քաղաքական կյանքում, որի վկայությունը դրա ձեռքբերումներն են.

- ԻԺԻ-ի գործունեությունը հանգեցրել է Քնեսեթի հետազոտությունների և տեղեկատվական կենտրոնի հիմնադրմանը: Այն ստեղծվել է 2000թ.՝ Քնեսեթի անդամներին, հանձնաժողովներին, վարչություններին օբյեկտիվ տեղեկատվությամբ, արժանահավատ տվյալներով և անհրաժեշտ հետազոտություններով ապահովելու, ինչպես նաև ընթացիկ քննարկումների, օրենսդրության և խորհրդարանական համապատասխան գործունեության վերաբերյալ հենքային ուսումնասիրություններ իրականացնելու համար<sup>4</sup>,

<sup>1</sup> CAF World Giving Index, November 2015, page 9. URL: [http://philanthropy.ru/wp-content/uploads/2015/11/WGI2015\\_Report\\_PRINT\\_2015.pdf](http://philanthropy.ru/wp-content/uploads/2015/11/WGI2015_Report_PRINT_2015.pdf)

<sup>2</sup> Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտի պաշտոնական կայք՝ <http://en.idi.org.il/about-idi/>

<sup>3</sup> IDI Vision, official web page. URL: <http://en.idi.org.il/about-idi/>

<sup>4</sup> Knesset Research and Information Center official web-page. URL: [https://www.knesset.gov.il/mmm/eng/MMM\\_about\\_eng.htm](https://www.knesset.gov.il/mmm/eng/MMM_about_eng.htm)

- մշակել է Իսրայելի սահմանադրության առաջնային նախագիծը,
- 2015թ. կազմել է Իսրայելի և տարածաշրջանի պետությունների միջև լարվածության թուլացման առաջին համապարփակ նախագիծը<sup>1</sup>,
- նպաստել է Իսրայելի ազգային տնտեսական խորհրդի և կառավարությունում փոքրամասնությունների հարցերով հատուկ մարմնի ստեղծմանը: Ազգային տնտեսական խորհուրդը ստեղծվել է 2006թ.՝ վարչապետի անմիջական ենթակայության տակ բարձր վերլուծական կարողություններով օժտված և մակրոտնտեսական խնդիրներին արհեստավարժ լուծումներ առաջարկող մարմին ունենալու նպատակով<sup>2</sup>,
- մասնակցել է ազգային անվտանգության ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, Իսրայելում կրոնական լարվածության թուլացման ուղղությամբ տասնյակից ավելի օրենքների մշակմանը:

*ԻԺԻ-ի հիմնական հետազոտական կենտրոններն են.*

1. *Կառավարման և էկոնոմիկայի կենտրոն (The Center for Governance and the Economy)*. ԻԺԻ-ի փորձագետները ձգտում են ամրապնդել Իսրայելում ժողովրդավարության հիմքերը՝ քաղաքականություն մշակողներին Իսրայելի քաղաքական համակարգի և տնտեսության վերաբերյալ կիրառական առաջարկություններ ներկայացնելով: Կենտրոնի ծրագրերն են.  
ա) Քաղաքական ռեֆորմը (*Political reform*), որը ստեղծվել է 2009թ. Քնեսեթի գործունեության բարելավման հրատապ անհրաժեշտությունից ելնելով: Տասը հոգուց բաղկացած հետազոտական խումբը մշակել է քաղաքական բարեփոխումների իրականացման մի շարք առաջարկություններ, որոնք ներկայացվել և քննարկվել են Քնեսեթում:  
բ) Տնտեսության և հասարակության Էլյա Հուրվիցի (*The Eli Hurvitz Conference on Economy and Society*) անվան կոնֆերանս. հայտնի է որպես Իսրայելի ամենաազդեցիկ տնտեսական կոնֆերանս, որի տարեկան համաժողովին մասնակցում են տարբեր պետական գործիչներ, այդ թվում Իսրայելի վարչապետը:
2. *Կրոնի, ազգի և պետության կենտրոն (The Center for Religion, Nation and State)*. Ինստիտուտի փորձագետներն իրենց լուծումներն են առաջարկում այնպիսի խնդրահարույց հարցերում, ինչպիսիք են ներգաղթը, պետության

<sup>1</sup> A Plan to Reduce Tension between Religion and State in Israel. Recommendations for Policy Makers - Elections 2015. URL: <http://en.idi.org.il/analysis/idi-press/publications/hebrew-books/a-plan-to-reduce-tension-between-religion-and-state-in-israel/>

<sup>2</sup> Prime Minister's office official page. URL: <http://www.pmo.gov.il/English/PrimeMinistersOffice/DivisionsAndAuthorities/TheNationalEconomicCouncil/Pages/TheNationalEconomicCouncil.aspx>

վերափոխումը, ամուսնությունը և մարդու իրավունքները: Կենտրոնի ծրագրերն են՝ ա) Կրոն և պետություն (*Religion and State*), բ) Մարդու իրավունքներ և հուդայականություն (*Human Rights and Judaism*), գ) Իսրայելի վերափոխում (*Israeli Conversion*):

3. *Ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների կենտրոնը* (*The Center for Democratic Values and Institutions*) բաղկացած է հետևյալ ծրագրերից՝ Ժողովրդավարության սկզբունքներ (*Democratic Principles*), Մեդիա բարեփոխումներ (*Media Reform*), Թափանցիկ կառավարում (*Open Government*), Արաբա-հրեական հարաբերություններ (*Arab-Jewish Relations*), Համաչափությունը հանրային քաղաքականության մեջ (*Proportionality in Public Policy*), Դատախիրավական բարեփոխումներ (*Reform of the Judiciary*), Ռազմաքաղաքական հարաբերություններ (*Civil-Military Relations*):
4. *Անվտանգության և ժողովրդավարության կենտրոն* (*The Center for Security and Democracy*) ԻԺԻ-ն ձգտում է օրենքի գերակայության շրջանակներում ամրապնդել Իսրայելի ինքնապաշտպանական կարողությունները: ԻԺԻ-ի փորձագետները գնահատում են Իսրայելի հակահարձակչական միջոցառումները, խորհուրդներ տալիս Քնեսեթին, կառավարությանը, ներկայացնում են ահաբեկչության դեմ պայքարի իրենց նորարարական առաջարկությունները, որոնք ուղղված են հավասարակշռելու Իսրայելի ազգային անվտանգությունը:

ԻԺԻ-ն հրապարակում է հոդվածներ, վերլուծականներ, մենագրություններ, որոնք, սակայն, հստակ պարբերականություն չունեն: Ինստիտուտի տնօրենների խորհուրդը բաղկացած է ճանաչված քաղաքական գործիչներից, Իսրայելի գործարար միջավայրի, գիտական շրջանակների կարկառուն ներկայացուցիչներից: Տնօրենների խորհուրդը հավաքվում է տարեկան 4 անգամ, իրականացնում է վերահսկողություն ինստիտուտի պլանավորման, քաղաքականության և գործունեության վերաբերյալ, կրում ֆիդուցիար պատասխանատվություն (այլ սուբյեկտի շահերի անունից հանդես գալու իրավունք) ինստիտուտի բյուջեի և ֆինանսական ակտիվների վերաբերյալ: Տնօրենների խորհրդի անդամ է ծագումով հրեա, ծնունդով ամերիկացի հայտնի գործարար և բարեգործ Բերնարդ Մարկուսը (*Bernard (Bernie) Marcus*)<sup>1</sup>, ինչպես նաև «Ինտել» կորպորացիայի նախկին գործադիր կառավարիչ Ամիր Էլսթեյնը (*Amir Elstein*)<sup>2</sup>: Խորհրդի անդամների թվում

<sup>1</sup> IDI board of directors, official web page. URL: [http://en.idi.org.il/about-idi/board-of-directors/mr-bernard-\(bernie\)-marcus/](http://en.idi.org.il/about-idi/board-of-directors/mr-bernard-(bernie)-marcus/)

<sup>2</sup> IDI board of directors. URL: <http://en.idi.org.il/about-idi/board-of-directors/mr-amir-elstein/>

են նաև ֆիզիկոսներ, տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչներ: Հետազոտողների թվում են Քնեսեթի նախկին պատգամավորներ, մաթեմատիկոսներ, իրավաբաններ, պատմաբաններ, Իսրայելի նավատորմի նախկին հրամանատարներ, խորհրդատուներ և համալսարանների պրոֆեսորներ:

ԻԺԻ-ի եկամուտները հիմնականում ձևավորվում են նվիրատվությունների հաշվին: 2015թ. բյուջեն կազմել է ավելի քան \$9 մլն, որի 80.5%-ը ձևավորվել է ամերիկյան հիմնադրամների և մասնավոր դոնորների նվիրատվություններից, 12%-ը՝ իսրայելյան հիմնադրամներից և մասնավոր դոնորներից, իսկ մնացածը՝ Եվրոպական հետազոտական խորհրդի և այլ կազմակերպությունների կողմից:

### ***Բեզին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոն (Begin-Sadat Center for Strategic Studies)***

Բեզին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (ԲՍՌՀԿ) առաջնորդվում է իրատեսական, պահպանողական և սիոնիստական օրակարգով<sup>1</sup>: Կենտրոնը հիմնադրվել է 1993թ. Կանադայի հրեական համայնքի առաջնորդներից մեկի կողմից՝ որպես ապակուսակցական և անկախ հետազոտական կենտրոն, փոխկապակցված Բար Իլան համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետին: ԲՍՌՀԿ-ն իրականացնում է ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքական խնդիրների վերաբերյալ հետազոտություններ, մասնավորապես՝ Իսրայելի ազգային անվտանգությանն ու արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև Միջին Արևելքին առնչվող հետազոտություններ: Կենտրոնը կազմակերպում է կոնֆերանսներ, դասախոսություններ, ճեպագրույցներ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային լսարանների համար: Այն նաև համագործակցում է աշխարհի լավագույն ՈւԿ-ների, այդ թվում ամերիկյան ՌԵՆԴ (RAND) կորպորացիայի, Ջոնս Հոփկինսի առաջադեմ միջազգային հետազոտությունների դպրոցի (*The Johns Hopkins School of Advanced International Studies*) և այլ կենտրոնների հետ<sup>2</sup>:

Կենտրոնում հետազոտություններ իրականացվում են առանց հստակ առանձնացված ծրագրերում դրանք ընդգրկելու: Հետազոտության թեմաները բազմազան են, հիմնականում վերաբերում են տարածաշրջանի երկրներին, ինչպես նաև Իսրայելի համար ռազմավարական նշանակություն ունեցող երկրներին և դրանց ղեկավարներին, մասնավորապես՝ առանձին հետազոտական թեմաներ կան, որոնք կրում են «Բարաք Օբամա», «Բաշար ալ Ասադ», «Բենիամին Նաթա-

<sup>1</sup> Բեզին-Սադաթ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի պաշտոնական կայք, տե՛ս URL: <http://besacenter.org/>

<sup>2</sup> BESA Global Reach, official page. URL: <http://besacenter.org/about/global-reach/>

նյառու» և այլ առաջնորդների անուններ: Այդ թեմաների շրջանակում սովորաբար պատրաստվում են այնպիսի հոդվածներ, որոնցում քննարկվում են տվյալ ղեկավարի գործողությունները կոնկրետ իրադրություններում: Օրինակ, «Բարաք Օբամա» թեմայի շրջանակներում ընդգրկված է հոդված սիրիական քաղաքացիական պատերազմի վերաբերյալ, որտեղ ընդհանուր իրավիճակից զատ ներկայացված են նաև Օբամայի գործողություններն այդ պատերազմի ընթացքում:

ԲՄՌՀԿ-ն հրապարակում է Միջին Արևելքի և Իսրայելի վերաբերյալ ուսումնասիրություններ, տարածաշրջանի հեռանկարին առնչվող պարբերականներ (օրինակ, «Միջին Արևելքի անվտանգության և քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրություններ» (*Mideast Security and Policy Studies*), մենագրություններ, գրքեր և տեսանյութեր:

Կենտրոնի հետազոտողների թիվը հասնում է 32-ի, որի մեկ երրորդը պաշտպանության նախարարության, Իսրայելի պաշտպանական ուժերի, Ազգային անվտանգության խորհրդի, ռազմական հետախուզության, ֆինանսների նախարարության, արտաքին գործերի նախարարության նախկին աշխատակիցներ են, մասնավորապես՝ փորձագետներ, վերլուծաբաններ, խորհրդականներ և դեսպաններ:

ԲՄՌՀԿ պաշտոնական կայքում դրամական արտահայտությամբ տեղեկատվություն չկա եկամուտների չափերի և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ:


Այսպիսով, ներկայացված ՈւԿ-ների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք էական ազդեցություն ունեն Իսրայելում քաղաքականություն մշակողների վրա: Մակայն պետք է նշել, որ այս ազդեցությունը չի կարող համեմատվել ամերիկյան կամ բրիտանական ՈւԿ-ների՝ համապատասխանաբար ամերիկյան և բրիտանական գործերի վրա ունեցած ազդեցության հետ<sup>1</sup>: Այդ տեսակետին են հանգել նաև ԱԱՀԻ-ի կողմից կազմակերպված քննարկման մասնակից ՈւԿ-ների ղեկավարները, որի հիման վրա ԱԱՀԻ հետազոտող Յուել Գուզանսկին (*Yoel Guzansky*) պատրաստել է «ՈւԿ-ների դերը և ազդեցությունն Իսրայելի օրինակով» հոդվածը: Այդ հոդվածում նշվում է, որ թեև իսրայելական ՈւԿ-ների աշխատանքը շատ կարևոր է, սակայն դրանք այդքան էլ չեն ազդում որոշումների կայացման վրա: Մյուս կողմից, Իսրայելում ՈւԿ-ները ոչ այնքան բազմազան են, ոչ էլ այնքան ազդեցիկ, որքան Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում<sup>2</sup>: Այնուամենայնիվ, Իսրայելում նկատվում է ՈւԿ-ների թվի աճի կայուն շարժընթաց (ՈւԿ-ների թվաքանակի շարժընթացը ներկայաց-

<sup>1</sup> *Մարուխանյան Ս.*, «Ուղեղային կենտրոնները» Իսրայելում. Ազգային և ցանցային կառույցների համադրություն», «21-րդ դար», թիվ 6 (28), 2009թ., էջ 61:

<sup>2</sup> Guzansky Yoel, The Role and Influence of Think Tanks in the Israeli Experience, (January 22, 2014). URL: <http://www.inss.org.il/index.aspx?id=4480&eventid=6601>

ված է *Գծապատկեր 1*-ում), և արդեն նկատելի է, որ որոշ ՈւԿ-ներ հետևողականորեն փորձում են իրենց ազդեցությունն առավել ընդլայնել պետական և հասարակական կարևոր հարցերում որոշումների կայացման գործընթացում:

*Գծապատկեր 1<sup>1</sup>*



ԱԱՀԻ-ի կողմից 2014թ. հունվարի 22-ին կազմակերպված քննարկման մասնակից ՈւԿ-ների ղեկավարները նաև անդրադարձել են այն հիմնական խոչընդոտներին, որոնք խանգարում են ՈւԿ-ներին քաղաքական որոշումների վրա ազդեցություն ունենալ: Այդ խոչընդոտներն, ըստ այդ քննարկման մասնակիցների, հետևյալն են.

1. Ակադեմիական հետազոտություններն, անկասկած, առավելություն ունեն, սակայն հաճախ դրանք չեն համապատասխանում որոշումներ կայացնողների պահանջներին:
2. Քաղաքականություն մշակողները չեն կարողում ծավալուն աշխատանքներ, նրանք պարզապես ժամանակ չունեն հողվածները խորությամբ ուսումնասիրելու համար:
3. «Գիտական ճշմարտությանը» հավատարիմ մնալու փորձը կարող է հակասել բարձրաստիճան պաշտոնյաների քաղաքական և բարոյական տեսակետներին<sup>2</sup>:

Մեկ այլ փորձագետ՝ ամերիկյան Հադսոն ինստիտուտի (*Hudson Institute*) նախկին աշխատակից Հաննա Էլկա Մեյերսը (*Hannah Elka Meyers*) Միջին

<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի Լատուերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տարեկան զեկույցների արդյունքների ուսումնասիրության հիման վրա:

<sup>2</sup> *Guzansky Yoel*, The Role and Influence of Think Tanks in the Israeli Experience, (January 22, 2014).

URL: <http://www.inss.org.il/index.aspx?id=4480&eventid=6601>

Արևելքի ֆորումում հրատարակած «Արդյո՞ք Իսրայելն ուղեղային կենտրոնների կարիք ունի» հոդվածում առանձնացնում է ամերիկյան ՈւԿ-ների համեմատ դրանց փոքր ազդեցության հետևյալ պատճառները.

1. Հիմնական պատճառն Իսրայելի քաղաքական կառուցվածքն է: Ինչպես շատ եվրոպական երկրների խորհրդարանները, այնպես էլ Իսրայելի Քնեսետը մուտքի ավելի փոքր հնարավորություններ են թողնում Քնեսեթից դուրս քաղաքական խորհրդատուների ներգրավման համար, քան ԱՄՆ-ի Կոնգրեսը և գործադիր իշխանությունը: Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տնօրեն Ջեյմս ՄաքԳանը բացատրում է. «Խորհրդարանական մոդելում օրենսդիրն ու գործադիրը միահյուսված են. ամերիկյան մոդելում գործադիր և օրենսդիր մարմիններն առանձին են, հետևաբար ուղեղային կենտրոնը ներգրավման ավելի մեծ հնարավորություններ ունի և ստիպված չէ գործ ունենալ միայն մեկ առանձին մարմնի հետ»: Բացի այդ, ամերիկյան ֆեդերալիզմը հանգեցրել է թույլ քաղաքական կուսակցությունների ձևավորմանը: «Ապակենտրոնացված համակարգը, որում իշխանությունը բաժանված է դաշնային, պետական և տեղական մակարդակների միջև, ՈւԿ-ների համար իրենց ազդեցությունը տարածելու ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում», - նշում է ՄաքԳանը<sup>1</sup>: Ընդհակառակը, խորհրդարանական համակարգում կուսակցություններն ավելի ազդեցիկ են, ինչը խոչընդոտում է դրսից քաղաքական հարցերում խորհրդատվություն ստանալուն:
2. Ամերիկյան ՈւԿ-ները շահում են նաև նրանից, որ ավանդաբար ամերիկացիներն անվստահություն ունեն իշխող կառավարության հանդեպ: Այդ պատճառով նրանք ավելի մեծ վստահությամբ են լցվում արտաքին փորձագետների հանդեպ: Մյուս կողմից, քիչ հավանական է, որ Իսրայելի քաղաքացիներն ուշադրություն կդարձնեն քաղաքական խնդիրների վերաբերյալ ոչ կառավարական ուժերի կողմից առաջարկվող լուծումներին: Արդյունքում՝ Իսրայելում հիմնական ռազմավարական որոշումները կայացվում են առանց հանրային մակարդակում քննարկումների:
3. Ամերիկյան ՈւԿ-ների համեմատ, Իսրայելի ՈւԿ-ներն ավելի շատ ակադեմիական կողմնորոշում ունեն, որն էլ երևում է հենց հրապարակված գրքերի քանակից: Միջին Արևելքի ՈւԿ-ները տարեկան հրապարակում են 800 գիրք, հյուսիսամերիկյան կենտրոնները՝ 540: Ինչպես նշում է ՄաքԳանը՝

<sup>1</sup> James McGann, "Development of Think Tanks and Their Role as Catalysts for Ideas and Actions in the U.S. Political System", Briefing, Foreign Press Center, Washington D.C., Feb. 28, 2006.



«Վատ չէ այդքան գրքեր ունենալը, բայց քաղաքականություն կերտողները դա չեն կարողում: Ինչո՞ւ էք հրապարակում դրանք: Այստեղ մեկ պարզ բացատրություն կա. դա ակադեմիական կողմնորոշումն է»:

4. Ավելի խոր մակարդակում, Իսրայելի ՈւԿ-ների պակաս ազդեցիկ լինելը պայմանավորված է մարդկանց գործունեության և բիզնեսի վարման մի շարք մշակութային նորմերով: Օրինակ, Իսրայելում, հանրային քննարկումների ժամանակ իրենց գաղափարներն առաջ տանելու համար կարիք չկա ՈւԿ-ների անունից կամ նրանց միջոցով հանդես գալ, քանի որ Իսրայելի քաղաքական գործիչները ժողովրդի կողմից ավելի ընդունելի են, քան ՈւԿ-ները: Իսրայելը չափսերով գրեթե ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի չափ է: Դրան համապատասխան էլ կառավարությունն ավելի փոքր է, նրանց միջև առկա են անձնական կապեր, որը քիչ շերտեր է թողնում արտաքին խորհրդատուների ներթափանցման համար: Քաղաքական կարիերա սկսելն այսպիսի կառավարություն մուտք գործելով ավելի դյուրին է, քան ԱՄՆ-ում, որտեղ գրեթե անհնար է մուտք գործել կառավարություն, քանի դեռ մարդկանց կողմից մեծ ուշադրության չես արժանացել, որը հնարավոր է ՈւԿ-ների միջոցով հանդես գալու դեպքում:
5. Իսրայելի քաղաքական մշակույթում ոչ պաշտոնական երևույթների առկայությունը ևս հանգեցրել է նրան, որ պետական պաշտոնյաներն ավելի շատ հակված են խորհուրդներ ընդունել անձնական ծանոթներից, քան պաշտոնական ինստիտուտներից: Դա պայմանավորված է ոչ միայն Իսրայելի չափերով, այլև նրա սոցիալական և գաղափարական արմատներով: Դրա վառ օրինակը, ինչպես նշում է ամերիկյան Բարուք Քոլեջի (*Baruch College*) ասոցացված պրոֆեսոր Դով Ուաքսմանը (*Dov Waxman*), նախկին վարչապետ Գոլդա Միրի (*Golda Meir*) հայտնի «խոհանոցային սենյակն» է («*Kitchen Cabinet*»): Գ.Միրի տան խոհանոցում սուրճի սեղանի շուրջ, ծխախոտի ընկերակցությամբ ընդունվում էին բոլոր կարևոր որոշումները<sup>1</sup>:

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք կատարել մի շարք հետևություններ.

- իսրայելական ՈւԿ-ների գործունեությունն ուղղված է Իսրայելի՝ որպես անվտանգ, ժողովրդավարական և հրեական պետության, հիմքերի ամրապնդմանը: Վերջիններս մասնակցում են ինչպես ազգային անվտանգության ամրապնդմանը, այնպես էլ կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, Իսրայելում կրոնական լարվածության թու-

<sup>1</sup> Does Israel Need Think Tanks? // by Hannah Elka Meyers, *Middle East Quarterly*, Winter 2009, pp. 37-46. URL: <http://www.meforum.org/2061/does-israel-need-think-tanks>

լացման ուղղությամբ օրենքների մշակմանն ու փոփոխմանը: Միաժամանակ, Իսրայելի ՈւԿ-ները նաև մշակում են քաղաքական տարբեր խնդիրների վերաբերյալ այլընտրանքային լուծումներ և ներկայացնում կառավարությանը կամ Քնեսետին:

- ՈւԿ-ների աշխատակազմում ընդգրկված են ոչ միայն ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, այլև հաճախ Իսրայելի պաշտպանական ուժերի նախկին աշխատակիցները, Քնեսետի նախկին պատգամավորներն ու նախարարները, իսկ տնօրենների խորհրդում ընդգրկվում են տարբեր ոլորտի ազդեցիկ ներկայացուցիչներ ամբողջ աշխարհից, այդ թվում՝ ֆիզիկոսներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչներ և հայտնի գործարարներ:
- ՈւԿ-ները կազմակերպում են կոնֆերանսներ, որոնց մասնակցում են ամենատարբեր մակարդակի քաղաքական գործիչներ՝ կուսակցությունների ներկայացուցիչներ, Քնեսետի պատգամավորներ, նախարարներ, ինչպես նաև երկրի վարչապետն ու նախագահը:
- Իսրայելում ՈւԿ-ները ֆինանսավորվում են հիմնականում նվիրատվությունների հաշվին, իսկ որոշ ՈւԿ-ների դեպքում դրանց գերակշռող մասը ստացվում է ԱՄՆ-ից:

Ավելացնենք նաև, որ վերջերս (2016թ. փետրվարին) Իսրայելի Քնեսետում քննարկվել է մի օրինագիծ, ըստ որի՝ այն հասարակական, ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք իրենց ֆինանսավորման 50%-ից ավելին ստանում են արտերկրից, պարտավոր են հայտարարագրել այդ փաստն իրենց բոլոր հրապարակումներում: Օրինագիծն առաջին ընթերցմամբ ընդունվել է, սակայն օրենքի ուժ ստանալու համար անհրաժեշտ է դրա ընդունումը նաև հաջորդ երկու ընթերցումներում: Իսրայելի արդարադատության նախարար Այելեթ Շակեդը (*Ayelet Shaked*) նշում է, որ դա արվում է այդ կազմակերպություններում թափանցիկության բարձրացման և օտարերկրյա պետությունների միջամտությունն Իսրայելի ներքին գործերին կրճատելու նպատակով: Մինչդեռ Իսրայելի քաղաքացիական իրավունքի ասոցիացիան (*Association for Civil Rights in Israel*) գտնում է, որ դրա նպատակը ոչ թե թափանցիկության բարձրացումն է, այլ կոնկրետ կազմակերպություններին հալածելը, որոնք կառավարությունից տարբերվող կողմնորոշում ունեն: Կազմակերպությունը բերում է այն փաստարկները, որ առկա օրենսդրությունն արդեն իսկ ապահովում է այդ կազմակերպություն-

<sup>1</sup> У Израиля появятся свои иностранные агенты // Журнал "Коммерсантъ Власть" № 6 от 15.02.2016, с. 34. URL: <http://www.kommersant.ru/doc/2901156>

ների թափանցիկությունը, քանի որ այն կազմակերպությունները, որոնք ստացել են 20 հազար շեկելը (մոտ \$5200) գերազանցող նվիրատվություն, պարտավոր են հայտնել դոնորի ինքնությունը և տարեկան 4 անգամ հաշվետվություն ներկայացնել օտարերկրյա նվիրատվությունների վերաբերյալ: Հետևաբար, ըստ վերոնշյալ ասոցիացիայի տնօրենի՝ օրինագծի նպատակն է ազդել ձախակողմյան ուժը ներկայացնող կազմակերպությունների գործունեության վրա, այլ ոչ թե բարձրացնել դրանց թափանցիկությունը<sup>1</sup>: Պարզ է, որ նման օրինագծի ընդունումը որոշ չափով կխոչընդոտի նվիրատվությունների ներգրավմանը:

Այսպիսով, առանձնացված բնորոշումները փաստում են, որ Իսրայելի հանրային քաղաքականության մեջ ՈւԿ-ներն իրենց էական դերն ունեն, իսկ ՈւԿ-ների թվի պարբերական ավելացումը, վերջիններիս կողմից կազմակերպված միջոցառումներին բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունը, օրենքների մշակման գործում ներգրավվածությունը, ներկայացված առաջարկությունների քննարկումը Քնեսետում՝ խոսում են ՈւԿ-ների դերի կայուն բարձրացման և ազդեցության աճի մասին:

*Հունիս, 2016թ.*

**ԻՍՐԱՅԵԼԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

***Վարդան Աթոյան, Ռուզաննա Թադևոսյան***

**Ամփոփագիր**

Աշխատանքը նվիրված է իսրայելական ուղեղային կենտրոնների գործունեության ուսումնասիրությանը: Այդ նպատակով առավել մանրամասն ներկայացվում են իսրայելական առավել ազդեցիկ ուղեղային կենտրոններից երեքը:

Հոդվածում քննարկվում է իսրայելական ուղեղային կենտրոնների ոլորտում առկա իրավիճակը, ներկայացվում են իսրայելական ՈւԿ-ների առանձնահատկությունները, հետազոտությունների ուղղվածությունը, դերակատարությունը հանրային քաղաքականությունում, փոխառնչությունները պետական կառավարման մարմինների հետ և ազդեցությունը որոշումների կայացման գործընթացում:

Հեղինակների կարծիքով՝ իսրայելական ՈւԿ-ներն աչքի են ընկնում հանրային քաղաքականության ոլորտում նշանակալի դերակատարությամբ, իսկ վերջիններիս

<sup>1</sup> Anti-NGO Legislation in Israel Updated February 2016, Debbie Gild Hayo, Adv. Director of Policy Advocacy, Association for Civil Rights in Israel, p. 3. URL: <http://www.acri.org.il/en/wp-content/uploads/2016/02/Anti-NGO-Bills-Overview-Updated-February-2016.pdf>

թվաքանակի պարբերական ավելացումը և քաղաքական վերնախավի հետ փոխառնչությունների ուսումնասիրությունը թույլ են տալիս եզրակացնել վերջիններիս ազդեցության կայուն աճի մասին:

## МОЗГОВЫЕ ЦЕНТРЫ ИЗРАИЛЯ В ПУБЛИЧНОЙ ПОЛИТИКЕ

*Вардан Атоян, Рузанна Тадевосян*

### Резюме

Работа посвящена изучению индустрии мозговых центров Израиля. Рассматриваются текущее состояние сферы, специфика и отличительные характеристики израильских мозговых центров, направленность исследований, роль последних в публичной политике страны, а также отношения с государственными органами и влияние на процесс принятия решений. Более подробно описано деятельность трех влиятельных израильских мозговых центров.

По мнению авторов, израильские мозговые центры играют значительную роль в публичной политике, а рост их количества и изучение механизмов взаимодействия последних с политической элитой страны позволяют утверждать о динамичном повышении уровня их влияния.

## THINK TANKS OF ISRAEL IN PUBLIC POLICY

*Vardan Atoyan, Ruzanna Tadevosyan*

### Resume

The article discusses activities of Israel think tanks. The three main influential think tanks are reviewed in the article. The article touches upon current state of the art, peculiarities, main directions of research, influence on public policy, relations with state governing bodies and role in decision making process of the think tanks.

In the authors' opinion think tanks of Israel play a significant role in public policy, while the regular increase of number and study of their relations with the political elite allows concluding about stable increase of their influence.

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

## *Նունուֆար Ստեփանյան՝*

*Բանալի բառեր՝* խորհրդարան, քաղաքական որոշումներ, որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոններ, «մտքի կենտրոններ» կամ «ուղեղային կենտրոններ», շահերի կամ ճնշման խմբեր, ՋԼՄ, հասարակական կարծիք, ինտելեկտուալ ծառայությունների շուկա:

Այսօր քաղաքագիտական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում քաղաքական որոշումների ընդունման կառուցակարգերին. ովքե՞ր են հանդիսանում որոշումների ընդունման գործող անձինք (ակտորները), ինչպե՞ս է տեղի ունենում որոշումների ընդունման բուն գործընթացը, և որո՞նք են դրա վրա ազդող գործոնները:

Չ.Լինդբլոմն իր «*The Policy-Making Process*» աշխատության մեջ կոչ էր անում ուսումնասիրել փոխգործողությունները որոշումների ընդունման ֆորմալ և ոչ ֆորմալ ազենտների միջև: Հասկանալու համար, թե ովքեր են կերտում քաղաքականությունը, առաջինը պետք է հասկանանք մասնակիցների առանձնահատկությունները՝ ի՞նչ դեր են նրանք խաղում, ի՞նչ իշխանություն կամ այլ հնարավորություններ ունեն, ինչպե՞ս են նրանք գործերը վարում և վերահսկում մեկը մյուսին: Լինդբլոմն առանձնացնում է տարբեր տիպի մասնակիցներ, ովքեր քաղաքական որոշումների ընդունման գործընթացում առանձնահատուկ դեր են խաղում՝ շարքային քաղաքացիներ, շահերի խմբերի լիդերներ, օրենսդիրներ, օրենսդիր լիդերներ, կուսակցական ակտիվիստներ, կուսակցական լիդերներ, դատավորներ, քաղաքացիական ծառայողներ, փորձագետներ և բիզնես մենեջերներ [1, pp. 2-3]:

Այս հոդվածի շրջանակներում կանդրադառնանք որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոններին, այսինքն՝ այն արտաքին ազդեցության կենտրոններին, որոնք պառլամենտի անդամ չեն (գործարարներ, հեղինակություններ, պետական պաշտոնյաներ, շահերի կամ ճնշման խմբեր, ՋԼՄ, հասարակական կազմակերպություններ, հասարակական կարծիք), սակայն ամենաանմիջական ազդեցությունն են ունենում պառլամենտում որո-

<sup>1</sup> ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ:

շումների ընդունման գործընթացի վրա<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով օրենսդիր մարմնում որոշումների ընդունման գործընթացն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել նաև այն արտախորհրդարանական ուժերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ խորհրդարանում ընդունվող որոշումների վրա:

Արտաքին միջավայրի կարևոր բաղկացուցիչներից, հետևաբար՝ նաև որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոններից են մշտական «կոնտրադենտները», որոնք ուրույն կերպով մասնակցում են որոշումների ընդունմանը: Դրանց շարքին են դասվում կառավարող էլիտայի ընտրվող (պատգամավորներ) և նշանակվող (պետական պաշտոնյաներ, պետական բյուրոկրատիա) մասը, հզոր բիզնես-կորպորացիաները, հասարակական կարծիքը, քաղաքական ընդդիմությունը, քաղաքական կուսակցությունները, ՋԼՄ-ն (ներառյալ լրատվամիջոցների սեփականատերերը և գովազդատուները), փորձագիտական-ակադեմիական շրջանակները, քաղաքացիական և միջազգային կառույցները: «Կոնտրադենտների» կարգավիճակի ամրապնդումը պայմանավորված է նրանով, որ նրանց դիրքորոշումները և շահերը կարող են ոչ միայն ազդել հասարակական նպատակների և պետության գործունեության կողմնորոշիչների վրա, այլև որոշակի պայմաններում փոխել դրանք: Դրա համար էլ պատկերացումներն այն մասին, թե պետությունը միշտ իրականացնում է համընդհանուրի շահերը, չի համապատասխանում իրականությանը [2, c. 20]:

Որպես որոշումների վրա արտախորհրդարանական ազդեցության յուրօրինակ կենտրոններ կարող ենք դիտարկել «մտքի կամ ուղեղային կենտրոնները» (*think tank* կամ *think factory*), որոնք այսօր լայն տարածում ունեն: Ռուսական քաղաքագիտական գրականության մեջ կիրառվում են «*фабрики мысли*» [3, c. 99-116] կամ էլ «*мозговые центры*» տերմինները: Համաձայն *think tank*-երի ինդեքսի 2015թ. գլոբալ զեկույցի, այսօր աշխարհում *think tank*-երի ընդհանուր թիվը 6846 է: ԱՄՆ-ում դրանց թիվը 1835 է, Ռուսաստանում՝ 122, Հայաստանում՝ 14: 2015թ. տվյալներով՝ ԱՄՆ-ում առաջատարներ են Բրուքինգյան ինստիտուտը (*Brookings Institution*), Քարնեգի ֆոնդը (*Carnegie Endowment for International Peace*), Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնը (*Center for Strategic and International Studies - CSIS*), *RAND* կորպորացիան և այլն, Ռուսաստանում նման կենտրոններ են համարվում Քարնեգի մոսկովյան կենտրոնը, Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը (*МГИМО*), «*Никколо М*» ռազմավարական հաղորդակցությունների գործակալու-

<sup>1</sup> Այս տարբերակման համար հիմք է հանդիսանում այն, որ չնայած և՛ պետական իշխանության մարմինները, և՛ բազմաթիվ հասարակական ու քաղաքական կազմակերպությունները որոշումների ընդունման կենտրոններ են, սակայն դրանց մի մասն ունի պետական որոշումներ ընդունելու իշխանություն, իսկ մյուս մասը կարող է միայն ազդեցություն գործել այդ որոշումների վրա:

թյունը, «Имидж КОНТАКТ» ընկերությունը, Քաղաքական տեխնոլոգիաների կենտրոնը և այլն, իսկ Հայաստանում ամենահայտնիներից են Ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության զարգացման «Արմատ» կենտրոնը, Միջազգային քաղաքականության հետազոտությունների հայկական խումբը (AIPRG), Ազգային և միջազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոնը (ACNIS), «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը և այլն:

*Think tank*-երի գաղափարն առաջին անգամ առաջ քաշեց Հերման Կանը: *Think tank*-երը նույն հայացքներով մարդկանց թիվ են ներկայացնում: Վերջիններիս գործունեության արդյունքում ստեղծվում է միասնական տեսակետ, որն ազդում է ինչպես քաղաքական գործիչների, այնպես էլ զանգվածների գիտակցության վրա: Օրինակ, *Merriam Webster* բառարանում *think tank*-ը սահմանվում է որպես կազմակերպություն, որը բաղկացած է մարդկանց խմբից, ովքեր առաջ են քաշում նոր գաղափարներ կոնկրետ թեմայի շուրջ և խորհուրդ տալիս դրանց լուծման վերաբերյալ<sup>1</sup>: *Think tank*-երի գրեթե համանման սահմանումներ ենք հանդիպում նաև Քեմբրիջի և Օքսֆորդի հեղինակավոր բառարաններում: Թեմաների շրջանակը կարող է տարբեր լինել՝ սոցիալական քաղաքականություն, քաղաքական ռազմավարություն, տնտեսություն, ռազմական ոլորտ, տեխնոլոգիաներ, մշակութային քաղաքականություն, կրթության ոլորտ և այլն: Կարող ենք նաև փաստել, որ *think tank*-երի գործունեությունը չի սահմանափակվում միայն նոր գաղափարներ առաջ քաշելով և զարգացնելով, այլ նաև կարևոր է այն, որ վերջիններս առաջարկություններ են ներկայացնում տվյալ խնդրի հետ կապված որոշումների ընդունման համար: *Think tank*-երի գործունեության համար կարևոր են ինքնավարությունը, ինքնուրույնությունը: Փաստորեն, այդ կառույցները, համարվելով հետազոտական ինստիտուտներ կամ հանրային քաղաքականության կենտրոններ, կատարում են միջնորդի գործառնություն փորձագիտական-վերլուծական կենտրոնների և իշխանության, երբեմն նաև բիզնես կառույցների միջև՝ մասնակցելով որոշումների նախապատրաստման և ընդունման գործընթացին: Կարծիքի ձևավորման գործում մեծ նշանակություն ունի հետևյալ կապը՝ *ով է խոսում - ինչ է ասում - որտեղ է խոսում*: Ոչ մի տեղ այս շղթայում պատահականություններ հնարավոր չեն:

Ինտելեկտուալ ծառայությունների շուկայում մրցակցությունը բնական երևույթ է, դրա համար էլ անխուսափելիորեն տեղի է ունենում մրցություն հովանավորների, մամուլի ուշադրության, քաղաքական գործիչների մոտ մուտք ունենալու և այլնի համար: Այս խմբերից յուրաքանչյուրը հարկադրված է փնտրել իր «որմնախորշը» (գիտական և քաղաքական) և մրցել՝ ազդելու ընդունվող որոշումների վրա: Ցանկացած «ուղեղային կենտրոն» (դիտարկում ենք որպես քաղա-

<sup>1</sup> Merriam-Webster dictionary, 10.05.2016, <http://www.merriam-webster.com/dictionary/think%20tank>

քական որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոններ), որը հավակնություններ ունի ազդելու քաղաքական վերնախավի վրա, պետք է իր հետազոտությունների ռազմավարությունը կառուցի այնպես, որ ճանաչված լինի քաղաքական գործիչների, դիվանագետների, կուսակցական բուրգի գագաթին գտնվողների, պետական պաշտոնյաների, գործարար մարդկանց շրջանակներում: Պատահական չէ, որ «գաղափարների շուկայում ծանր մրցակցությունը հանգեցրեց նրան, որ շատ գիտնականներ սկսեցին ուղեղային կենտրոնները դիտարկել որպես շահերի խմբերի տեսակներից մեկը, որը նպատակ ունի ազդել հասարակական քաղաքականության վրա» [4, c. 191]: Եվ հենց որոշումների ընդունման կենտրոնների մոտ մուտք ունենալն էլ գիտնականների համար համարվում է ազդեցության ամենաբարձր ձևերից մեկը:

Մյուս արտախորհրդարանական դերակատարները, որոնք մեծ ազդեցություն ունեն քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա, այն բարձրաստիճան պաշտոնյաները (նախարարներ, զինվորականներ, դատավորներ և այլն), խորհրդականները, օգնականները և վերլուծաբաններն են, որոնք ունեն ազդեցության մեծ ռեսուրսներ և մուտք դեպի քաղաքական որոշումների ընդունման կենտրոններ: Վերջիններս պետք է լավ տեղեկացված լինեն որոշումների ընդունման գործընթացի, մասնավորապես՝ այն մասին, թե ինչով է այսօր զբաղված ղեկավարությունը, ինչն էլ նրանց թույլ կտա ավելի ադեկվատ գնահատել ռազմավարական նախագուշացումները: Բերենք ԱՄՆ օրինակը Ջ.Բուշ-կրտսերի կառավարման տարիներից. Ջ.Բուշին մոտ գտնվողներից էր իր աշխատակազմի ղեկավար Է.Քարդը, որին դիտարկում էին որպես բոլոր տեսակի որոշումների ընդունման գլխավոր մասնակից: Նրան բնութագրում էին որպես առաջին և վերջին մարդը, որին նախագահը տեսնում էր ամեն օր (իր կնոջից՝ Լաուրայից բացի): Ինչպես ասում էին ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաները. «Նա նախագահի հետ է ողջ ժամանակ, դրա համար էլ նա լսում և տեսնում է այն, ինչը լսում և տեսնում է նախագահը: Դա էլ նրան դարձնում է արտակարգ ռեսուրս»<sup>1</sup>:

Քաղաքականության մեջ կարևոր խաղացողներից էր Ք.Ռայսը, որին քաղաքական որոշումների ընդունման ժամանակ բնութագրում էին որպես առավել ռացիոնալ, քան էմոցիոնալ անձնավորություն: Ռայսի՝ որպես գլխավոր խաղացողի դերը պայմանավորված էր ոչ միայն իր զբաղեցրած պաշտոնով, այլև նրա հանդեպ Ջ.Բուշի վստահությամբ, որն ազգային անվտանգության խորհրդի առաջին նիստի ժամանակ ասաց. «Քոնդին կվարի այդ հանդիպումները: Ես ձեզ

<sup>1</sup> Goldstein S., A powerful player in the White House Behind the scenes, chief of staff Andy Card rules with a firm hand, 20.09.2015, [http://articles.philly.com/2004-01-26/news/25366611\\_1\\_andy-card-josh-bolten-staff-and-transportation-secretary](http://articles.philly.com/2004-01-26/news/25366611_1_andy-card-josh-bolten-staff-and-transportation-secretary)



բոլորիդ պարբերաբար կտեսնեմ, սակայն ես կցանկանայի, որ բոլոր հարցերը քննարկվեին այստեղ, իսկ հետո Քոնդին այդ ամենը կհաղորդի ինձ: Նա իմ խորհրդականն է ազգային անվտանգության գծով» [5, p. 70]:

Ազդեցության մեծ աղբյուրներ ուներ նաև Քառյ Ռոուլը, որը նախագահի վարչակարգի գլխավոր ստրատեգն էր և խորհրդականը:

Որպես որոշումների ընդունման ազդեցության կենտրոն նշում էին նաև Ջ.Թենեթին (ԿՀՎ տնօրեն), քանի որ ցանկացած ճգնաժամային իրավիճակում կտրուկ աճում է հատուկ ծառայությունների դերը, որոնք էլ սկսում են մյուսներից ակտիվ մասնակցություն ունենալ որոշումների ընդունման գործընթացում, ինչն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ կարևոր տեղեկատվությունն անցնում է հենց նրանց միջոցով [6, c. 235]:

Ամերիկյան քաղաքական համակարգն ուսումնասիրող արտասահմանյան հետազոտողներն առանձնացնում են 2 հիմնական կատեգորիա, որոնցից յուրաքանչյուրն օգտագործում է ազդեցության սեփական մեթոդները՝ 1. քաղաքական գործունեության հանձնաժողովներ և 2. ճնշման խմբեր (լոբբի) [7, c. 495-498], որոնց նույնպես մենք դիտարկում ենք որպես որոշումների ընդունման վրա ազդեցության արտախորհրդարանական կենտրոններ: Քաղաքական գործունեության հանձնաժողովների շարքին կարելի է դասել ցանկացած քաղաքական կազմակերպություն, որը ֆորմալ առումով որևէ կուսակցության կազմի մեջ չէ և չի աջակցում կոնկրետ թեկնածուի, սակայն ծախսում է որոշակի միջոցներ, որպեսզի ազդի ընտրարշավի արդյունքների վրա: Քաղաքական գործունեության հանձնաժողովները կուսակցություններից տարբերվում են հետևյալով. 1. նրանք չեն առաջադրում իրենց թեկնածուներին, 2. նրանց առաջին հերթին հետաքրքրում է այս կամ այն բարձրաստիճան պաշտոնյայի կողմից իրականացվող քաղաքական կուրսը, այլ ոչ թե այն, թե որ կուսակցության կողմնակիցն է նա: Այդ իսկ պատճառով նրանք սովորաբար աջակցում են 2 հիմնական կուսակցությունների թեկնածուներին էլ, որոնք հակված են լուծելու այն քաղաքական խնդիրները, որոնք քաղաքական գործունեության հանձնաժողովների համար առաջնային են: Տարբերակում են քաղաքական գործունեության հանձնաժողովներ, որոնք՝ 1. հետապնդում են նեղ նյութական շահեր (նրանք հիմնականում զբաղված են այն թեկնածուների ֆինանսավորմամբ, որոնք դրական էլքով ընտրությունների դեպքում օրենսդրական աջակցությամբ կապահովեն որոշակի ձեռնարկությունների. օրինակ՝ սեփական քաղաքական գործունեության հանձնաժողովներ են ստեղծում այնպիսի խոշոր կորպորացիաներ, ինչպիսիք են «Քրայսլեր»-ը, «Կոկա-կոլա»-ն, «Ջեներալ Մոթորս»-ը և այլն), 2. աջակցում են թեկնածուների, որոնք կոնկրետ, ոչ նյութական հարցերի պաշտպանությամբ են հանդես գալիս (օրինակ, Հղիության արհես-

տական ընդհատման ազգային լիզան, որը բացառապես զբաղվում է այդ խնդրով), 3. գաղափարախոսական քաղաքական գործողությունների հանձնաժողովներ (աջակցում են լիբերալ կամ էլ պահպանողական սկզբունքների համար):

Ամբողջ աշխարհում, հատկապես ԱՄՆ-ում, հասարակության և կառավարության փոխգործողություններն ապահովում են, այսպես կոչված, շահերի կամ էլ ճնշման խմբերը, որոնք էլ հանդիսանում են որոշումների վրա ազդեցության արտախորհրդարանական ամենակարևոր կենտրոնները և ունեն մեծ ռեսուրսներ իշխանության վրա ազդելու համար: Այդպիսի ռեսուրսներ կարող են լինել նրանց տնտեսական և ֆինանսական հնարավորությունները, կարևոր տեղեկատվության տիրապետումը և այլն: Շահերի խմբերին զուգահեռ օգտագործվում են նաև «լոբբի», «լոբբիզմ», «լոբբինգ» տերմինները, որոնք փոխառված են անգլիական քաղաքագիտական տերմինաբանությունից (անգլ. *lobby* – միջանցք բառից): «Լոբբիզմ» տերմինը քաղաքական երանգավորում ստացել է ի հայտ գալուց երկու հարյուր տարի անց, ընդ որում՝ ոչ թե Անգլիայում, այլ Ամերիկայում, երբ 1864թ. այս տերմինը սկսեց ձեռք բերել «Կոնգրեսի միջանցքներում փողի դիմաց ձայների գնում» նշանակությունը [8, c. 649]: Առավել լայն առումով լոբբիզմը շահագրգիռ անձնանց գործունեությունն է, որը նպաստում է իշխանության մարմինների կողմից այս կամ այն քաղաքական որոշման ընդունմանը՝ իշխանության մարմիններում ոչ ֆորմալ հաղորդակցության օգտագործման միջոցով: Լոբբիստական գործունեության կարգավորման վերաբերյալ դաշնային մակարդակով առաջին բանաձևն ընդունվել է 1876թ., համաձայն որի՝ Կոնգրեսի նստաշրջանի ընթացքում լոբբիստները պետք է գրանցվեին Ներկայացուցիչների պալատի խոսնակի մոտ: Հետագայում՝ 1946թ. ընդունվեց «Լոբբիստական գործունեությունը կարգավորող դաշնային ակտը» [9], իսկ 1995թ.՝ «Լոբբիստական գործունեության բացահայտման մասին ակտը» [10]: Կոնգրեսի վրա լոբբինգ իրականացնող խոշոր ճնշման խմբերից են՝ արհեստակցական միությունները, կորպորացիաները («Մոբիլ օյլը», «Ջեներալ Մոթորսը»), բիզնես խմբերը, որոնցից ամենահզորներն են Արդյունաբերողների ազգային ասոցիացիան, Ամերիկյան առևտրի պալատը, Բիզնեսի կլոր սեդանը, ինչպես նաև ազգային լոբբինգ իրականացնող խմբերը, մասնավորապես՝ հայկական, հրեական, հունական, որոնք մուտք ունեն Կոնգրեսի անդամների մոտ: Նման քաղաքական ենթահամակարգի (*policy subsystem*) շրջանակներում ձևավորվում են բիզնեսի, քաղաքական գործիչների և պետական կառավարիչների միջև փոխադարձ աջակցության փակ համակարգեր, որոնք հիմնվում են ոչ միայն պաշտոնական, այլև ստվերային շփումների վրա: Սակայն դեռևս 1977թ. լույս տեսած «Քաղաքականություն և շուկաներ» աշխատության մեջ Չ.Լինդբլոմը ձևակերպում է քաղաքական անհա-

վասարության վերաբերյալ թեզը և չարդարացված համարում խոշոր բիզնեսի կորպորատիվ խմբավորումների կողմից պետական որոշումների ընդունման վրա ազդեցության բարձր աստիճանը [11]:

Հասարակական շահերի հետ կապված շահերի խմբերի գործունեության խնդիրն այն է, որ հավակնելով արտահայտել ամբողջ հասարակության շահերը՝ այդ խմբերը կամ որոշումների վրա ազդեցության կենտրոնները չեն ընտրվում հասարակության կողմից: Բացի այդ, շահերի խմբերը կատարում են նաև միջնորդի դեր քաղաքացիների և պետության միջև՝ ներկայացնելով սոցիալական, ազգային, կրոնական և այլ տիպի շահեր, և այդպիսով լրացնում են քաղաքական ինստիտուտների ամբողջությունը: Մասնակցելով շահերի խմբերի գործունեությանը՝ քաղաքացիները քայլ են կատարում սոցիալական ակտիվությունից դեպի քաղաքական ակտիվություն: Փաստորեն, շահերի խմբերը քաղաքացիների քաղաքական ակտիվության հիմնական ուղիներից են: Ինչքան լայն է շահերի խմբերի սոցիալական պահանջումների ներկայացուցչությունը, այնքան բազմակողմանի է կապը հասարակության և պետության միջև, այնքան կառավարչական ինստիտուտները ճկուն են արձագանքում բնակչության սոցիալական հարցերին, իսկ քաղաքացիներն ունենում են ազդեցության լայն լծակներ ընդունվող քաղաքական որոշումների վրա:

Ուղիղ լոբբինգ իրականացնելը փորձ է՝ ազդելու կառավարության և օրենսդիրների կողմից որոշումների ընդունման գործընթացի վրա: Ինչպես արդեն նշեցինք, որոշումների ընդունման գործընթացում սառցաբեկորի գազաթը մշտական հանձնաժողովներն են, այնուհետև՝ ենթահանձնաժողովները և այլն, և հենց Կոնգրեսի անդամների մեծամասնության համար էլ (ինչպես նաև լոբբիստների համար) հանձնաժողովները ճնշման կիրառման կենտրոնատեղին կամ թիրախն են հանդիսանում:

Հատկապես վերջին տարիներին մեծացել է տարբեր ճնշման խմբերի կողմից կոալիցիայի ստեղծման կարևորությունը՝ միասնական լոբբիստական գործողություններ կատարելու և իրենց ազդեցությունը որոշումների ընդունման գործընթացի վրա մեծացնելու նպատակով: Այսպիսի համատեղ գործողությունները ցույց են տվել իրենց բարձր արդյունավետությունը: Ճնշման խմբերը, որոնք ունեն հակադիր շահեր, երբեմն կազմում են ժամանակավոր կոալիցիաներ՝ ընդհանուր նպատակների հասնելու համար: Ճնշման խմբերն իրականացնում են ներկայացուցչական գործառույթ՝ ներկայացնելով շատ ամերիկացիների, ինչպես նաև ԱՄՆ-ում մեծ համայնք ունեցող այլազգիների շահերը: Հաշվի առնելով նրանց ներկայացուցչական գործառույթը՝ շատերը ճնշման խմբերն անվանում են Կոնգրեսի 3-րդ պալատ (Մենատից և Ներկայացուցիչների պալատից հետո):

Ազդեցության այս կենտրոնները հնարավորություն են ընձեռում իրենց անդամների և պաշտոնյաների միջև շփմանը: Նրանցից շատերը խոստովանում են, որ ճնշման խմբերը մասնագիտացված և մանրակրկիտ տեղեկատվության թանկարժեք աղբյուր են: Շփման գործընթացը, սակայն, միակողմանի երթևեկությամբ փողոց չէ: Հաճախ ճնշման խմբերը ստանում են կարևոր տեղեկատվություն պաշտոնյաներից, որի մասին էլ նրանք տեղեկացնում են իրենց անդամներին: Այլ կերպ ասած, այդ խմբերն իրականացնում են հասարակական կարծիքի փոխհարդորում: Արտահայտելով բնակչության այս կամ այն մասի տեսակետը որոշակի խնդրի վերաբերյալ՝ շահերի խմբերը պետական մարմիններին հնարավորություն են տալիս վարել ավելի արդյունավետ քաղաքական կուրս: Ճնշման խմբերի մյուս կարևոր գործառույթներից է նաև այն, որ օգնում են վերահսկել այդ ճնշման խմբերի և պաշտոնատար անձանց գործունեությունը: Կարևոր գործառույթներից է նաև քաղաքական ընտրանու, այդ թվում նաև քաղաքական որոշումների ընդունման կենտրոնների ձևավորման գործընթացին մասնակցությունը: Ներկայացնելով քաղաքական պահանջներ, կառավարչական և այլ կառույցներում սատարելով կոնկրետ գործիչների՝ շահերի խմբերը հնարավորություն են ստանում աջակցել իրենց խմբերի անդամներին պետական մարմիններում աշխատելու համար, ազդել քաղաքական որոշումների ընդունմանը մասնակցող կադրերի ընտրության վրա (որոնք հետագայում դառնում են քաղաքական որոշումների ընդունման կենտրոններ), որոնք էլ արդյունքում որևէ խնդրի լուծման ժամանակ ազդեցության թիրախ են դառնում շահերի խմբերի համար:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում լոբբիստական խմբերի գործունեությանը, ապա, ըստ ՀՀ ԱԺ քաղաքական որոշումների ընդունման կենտրոնների, լոբբիստական խմբերը որպես այդպիսին մեզ մոտ կայացած չեն, սակայն որոշ հարցերի շուրջ կոնկրետ խմբեր կարող են ազդեցություն գործել քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա: Համաձայն Լ.Պայի՝ ոչ արևմտյան քաղաքական գործընթացներում գոյություն ունեն քիչ թվով կազմակերպված շահերի խմբեր: Չնայած ոչ արևմտյան երկրներում գոյություն ունեն բազմաթիվ ոչ ֆորմալ ասոցիացիաներ, սակայն այդ խմբերը ներկայացնում են տարբեր կողմնորոշումներ, որոնք վերաբերում են կյանքի տարբեր ոլորտների՝ հաճախ դրսևորելով նույն վարքագիծը, ինչը հատուկ է քաղաքական կուսակցություններին ու կլիկներին [12, p. 480]: Դեռևս 2004թ. սեպտեմբերի 14-ին մի խումբ պատգամավորներ շահերի խմբերի գործունեությունը կարգավորելու նպատակով ներկայացրել են «Լոբբիստական գործունեության մասին» օրենքի նախագիծ, սակայն մինչև 2005թ. սեպտեմբերի 12-ը նստաշրջանի օրակարգ ընդգրկվելը հետաձգվել է մի քանի անգամ: Այնուհետև, 2005թ. դեկտեմբերի 5-ին համանուն օրենքի նախագիծ է ներկայացրել ՀՀ

կառավարությունը, որը 2006թ. մայիսի 22-ին ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ: Սակայն մինչև այսօր այս դաշտը կարգավորող օրենք չկա:

Ի տարբերություն մեր ուսումնասիրած երկրների, որտեղ որպես որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոններ կարևորվում են հատկապես լոբբիստական խմբերը, արհեստակցական միությունները, մեզ մոտ ավելի ակտիվ են հասարակական կազմակերպությունները, որոշակի միությունները, շարժումները, ինչպիսիք են, օրինակ՝ Արդյունաբերողների միությունը, ուսանողական խորհուրդները, բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները և այլն: Հաճախ այդ խմբերի հիմնական գործառույթը բնակչության որոշակի հատվածի աջակցության մոբիլիզացումն է: Այս միությունները սերտորեն համագործակցում են ՋԼՄ-ի հետ, որոնք նույնպես դիտարկում ենք որպես որոշման վրա արտախորհրդարանական ազդեցության կենտրոններ, քանի որ դրանք կարող են մեծ աղմուկ բարձրացնել որևէ որոշման ընդունման կապակցությամբ և այդպիսով ձևավորել հասարակական կարծիք: Բերենք հասարակական հնչեղություն ունեցած մի քանի օրինակներ. կառավարությունը 2014թ. սեպտեմբերի 25-ի նիստում հավանություն էր տվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի ներկայացրած «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթին, որոնցով նվազեցվում է աշխատող կանանց տրվող հղիության և ծննդաբերության փոխհատուցման չափը, դրա փոխարեն սահմանվում է մայրության նպաստ հասկացությունը, որը տրամադրվելու է նաև չաշխատող մայրերին: Սույն օրինագիծը լուրջ դժգոհություններ առաջացրեց աշխատող հղի կանանց, ինչպես նաև մայրանալ պատրաստվող կանանց շրջանակներում, ինչի արդյունքում 2014թ. հոկտեմբերի 23-ին կառավարության շենքի դիմաց նախաձեռնողական խմբի անդամների կողմից կազմակերպվեց բողոքի ակցիա: Հատկանշական է, որ նախաձեռնության անդամները կոչով դիմեցին նաև ՋԼՄ-ին՝ լայնորեն տարածելու ակցիայի մասին տեղեկատվությունը, մասնակցելու միջոցառմանը և լայնորեն լուսաբանելու այն: Արդյունքում՝ հասարակական կարծիքի ազդեցության տակ 2014թ. հոկտեմբերի 27-ին ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպեց խորհրդարանական լսումներ, և վերոնշյալ նախագծերն այդպես էլ չմտան ԱԺ օրակարգ: Ցայտուն օրինակ է նաև «Նաիրիտ» գործարանի աշխատակիցների աշխատավարձերի վճարման հետ կապված հարցը: Տեսական ժամանակ կառավարության, նախագահական նստավայրի դիմաց անցկացվեցին բողոքի ակցիաներ, նստացույցեր, ինչի արդյունքում արդեն 2015թ. օգոստոսի 4-ին

բոլոր 2400 աշխատակիցներն էլ ստացան իրենց աշխատավարձերը: Փաստորեն, հասարակական կարծիքի ազդեցության տակ և՛ ԱԺ-ն, և՛ կառավարությունը կարող են զիջել՝ հետաձգելով տվյալ որոշման ընդունումը կամ էլ ընդհանրապես հրաժարվել այդ որոշման ընդունման գաղափարից:

Ինչպես հայտնի է, ժամանակակից աշխարհում մարդիկ քաղաքականության մասին տեղեկություններ են ստանում գերազանցապես ՁԼՄ-ից կամ էլ շրջապատից, որոնք էլ, իրենց հերթին, դրա մասին տեղեկացել են ՁԼՄ-ից: Դա նշանակում է, որ ՁԼՄ-ն (առաջին հերթին հեռուստատեսությունը) ոչ միայն իրականությունն արտացոլող հայելի են, այլև հասարակական գիտակցության մեջ աշխարհի քաղաքական պատկերը ստեղծող գործիք, և այն հանգամանքը, թե ինչպես է հեռուստատեսությունն արտացոլում իրականությունը և ստեղծում պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, կախված է տեղեկատվական տարածության կառուցվածքից, որով էլ պայմանավորված է, թե ինչպես է տեղեկատվությունը հավաքվում, տարածվում, ընտրվում և ընկալվում: Տարբերակում են տեղեկատվական տարածության 2 տեսակ՝ մենաշնորհատիրական և բազմակարծիք [13, c. 155]: Առաջին դեպքում տեղեկատվական տարածության կառուցվածքը շատ պարզ է: Նման պայմաններում զանգվածային լրատվամիջոցներն անխուսափելիորեն վերածվում են «զանգվածային ապատեղեկատվության միջոցների» ոչ միայն նրա համար, որ կառավարող ընտրանին պարտադրում է նրանց փոխհաղորդել աշխարհի խեղաթյուրված պատկերը, այլև նրա համար, որ ավտորիտար և տոտալիտար հասարակություններում բազմաթիվ թեմաներ և իրադարձություններ փակ են ազատ քննարկման համար: Ակնհայտ է, որ տեղեկատվական մենաշնորհի համար պահանջվում է ուժեղ իշխանություն (ավտորիտար կամ տոտալիտար), քանի որ այն պետք է փակի այլընտրանքային տեղեկատվության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրները: Եթե մենաշնորհատիրական տեղեկատվական տարածությունում հասարակությունն ի վիճակի չէ ազդելու իշխանության գործունեության վրա, ապա բազմակարծիք տեղեկատվական տարածությունում հասարակության ազդեցությունը քաղաքականության վրա շատ բարձր է: Արդյունքում՝ խորհրդարանի համար դժվար է դառնում որոշումներ ընդունելը, եթե նույնիսկ դրանք շատ անհրաժեշտ են: Ավտորիտար և տոտալիտար ռեժիմի պայմաններում հեշտ է համոզել հասարակությանը նույնիսկ ամենախելագար միջոցառումների արդարացիության մեջ: Դեմոկրատական երկրներում, նույնիսկ երբ պնդում էք, որ  $2 \times 2 = 4$  է, միշտ կգտնվեն մարդիկ, որոնք կկասկածեն ստացված արդյունքների ճշմարտացիության մեջ կամ էլ կսկսեն վիճարկել հաշվարկների ողջ համակարգը: Սյդպիսի աններդաշնակությունը դժվարացնում է որոշումների ընդունման գործընթացը, որը պահանջում է հասարակական համաձայնություն:

Այդ պատճառով այժմ դեմոկրատական երկրներում քաղաքական ընտրանին իր քաղաքական կուրսի արդյունավետության համար ստիպված է մշակել հասարակական աջակցության կառուցակարգեր: Համապատասխանաբար, քաղաքական ընտրանին պետք է ուշադիր հետևի զանգվածների տրամադրություններին, ինչն էլ էականորեն բարձրացնում է տեղեկատվական միջավայրի քաղաքական նշանակությունը: Ժամանակակից պայմաններում տեղեկատվական տարածությունն արդեն ոչ միայն ՁԼՄ-ի և հասարակության հարաբերությունների ոլորտ է, այլև քաղաքական մարտերի դաշտ [13, c. 157]:

Այն հանգամանքը, որ հեռուստատեսությունը դարձել է քաղաքական ազդեցության առանցքային գործիքներից մեկը, հիմնավորվում է մի քանի գործոններով: Առաջինը և ամենակարևորը հեռուստալսարանի ընդարձակությունն է: Հեռուստատեսության լսարանն ընդգրկում է ողջ տարիքային կատեգորիաները և սոցիալական խմբերը, և դրա համար էլ հեռուստատեսության օգնությամբ կարելի է դիմել ողջ ազգին: Բացի այդ, հեռուստատեսությունը, տեխնոլոգիական տեսանկյունից, տեղեկատվության փոխանցման արդյունավետ գործիք է. դինամիկ պատկերը ձայնի հետ միասին ստեղծում է օպտիմալ պայմաններ ընկալելու համար: Հենց այն հանգամանքը, որ նախագահը, վարչապետը, պատգամավորները հեռուստատեսությամբ ելույթներ ունենալու մեծ հնարավորություն ունեն, դա էլ ժամանակակից քաղաքականության մեջ ազդեցության միջոց է նոր «խաղի կանոններով», երբ բազմաթիվ հեռուստադիտողներ տեսնում և լսում են նրանց: Եվ արդեն այսօր քաղաքական որոշումների ընդունման կենտրոնների նոր սերունդը, հրաժարվելով հին մեթոդներից, «խաղի հին կանոններից», այսինքն՝ «գործերը կուլտարներում վարելուց», լայնորեն կիրառում են «տեսաքաղաքականությունը»: Փաստորեն, եկել է «խաղի նոր կանոնների», քաղաքական նոր մարտավարության և ռազմավարության ժամանակը: Հեռուստատեսության այս հատկություններն ակտիվորեն օգտագործվում են քաղաքական սոցիալիզացիայի գործընթացում, ի դեպ, ոչ միայն քաղաքական «անգրագիտության վերացման», այլև քարոզչության նպատակներով: Թերթերից, հեռուստատեսությունից բացի՝ այսօր արդեն մեծ դերակատարում ունեն տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրները, սոցիալական ցանցերը: Եվ քանի որ ՁԼՄ-ին է պատկանում հասարակական կարծիքի ձևավորման առաջատար դերը, ապա արդյունքում վերջինս է ձևավորում քաղաքացիների վերաբերմունքը քաղաքական ինստիտուտների և գործընթացների վերաբերյալ: Այսպիսով, զանգվածային լրատվամիջոցները կատարում են զանգվածների գիտակցության մեջ գաղափարական-քաղաքական կողմնորոշումների ներդրման դեր և հանդիսանում են քաղաքական որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կարևորագույն կենտրոններ:

Քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա որպես ազդեցության կենտրոն կարևոր է նաև հասարակության դերը: XII դարում անգլիացի գրող և պետական գործիչ Ռ.Սոլսբերին առաջին անգամ մտցրեց հատուկ տերմին՝ «*public opinion*», որը բնորոշում է բնակչության կողմից խորհրդարանին ցուցաբերվող բարոյական աջակցությունը [14, c. 409]: Ընդհանուր առմամբ, հասարակական կարծիքը դատողությունների և գնահատականների ամբողջությունն է, որը բնութագրում է զանգվածային (խմբային) գիտակցության իրավիճակը. վերջինս էլ ազդեցություն է գործում տարբեր քաղաքական գործընթացների բովանդակության և բնույթի վրա: Որպես կանոն, հասարակական կարծիքի կառուցվածքի մեջ մտնում են զանգվածային (խմբային) տրամադրությունները, զգացմունքները, ինչպես նաև ձևայնացված գնահատականները և դատողությունները: Հասարակական կարծիքը հաճախ քաղաքական որոշումների ընդունման կենտրոնների կողմից դիտարկվում է որպես մանիպուլյացիայի առարկա, քանի որ նորությունների կառավարման միջոցով տեղի է ունենում տեղեկատվության վրա վերահսկողություն: Այսպես, օրինակ, Ռեյգանի վարչակարգի պաշտոնյաներն «օրվա թեման» օգտագործում էին նախագահի տեսակետների վրա ազդեցություն գործելու համար [15, p. 146]: Եվ պատահական չէ, որ իտալացի քաղաքական մտածող Ն.Մաքիավելլին իր հայտնի «Իշխանը» աշխատության մեջ մեծ ուշադրություն է դարձնում հանրային կարծիքին: Նա ժողովրդի մեջ տեսնում էր «մեծ ուժ», հզոր հենարան. «...այն իշխաններին, որոնք ավելի շատ վախենում են ժողովրդից, քան արտաքին թշնամիներից, անհրաժեշտ են ամրոցներ, իսկ նրանց, ովքեր ավելի շատ վախենում են արտաքին թշնամիներից, քան ժողովրդից, ամրոցներ անհրաժեշտ չեն: Այդ իսկ պատճառով լավագույն ամրոցը ժողովրդի կողմից աստելի չլինելն է» [16, c. 65-66]:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ օրենսդիր իշխանության համակարգում քաղաքական որոշումների ընդունումը բավական բարդ գործընթաց է, քանի որ դրանում խորհրդարանականներից բացի մասնակցություն են ունենում տարբեր դերակատարներ՝ կառավարության անդամները, շահերի կամ ճնշման խմբերը, ՋԼՄ-ն, հասարակական կազմակերպությունները, խորհրդականները, որոշումների ընդունման կենտրոնների շրջապատը, «ուղեղային կենտրոնները» (*think tank*), սոցիալական շարժումները և այլք (որոնց մենք դիտարկում ենք որպես քաղաքական որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոններ), որոնք, պայմանավորված իրենց ռեսուրսների տեսակով և չափով, ազդեցություն են գործում քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա: Եվ քանի որ քաղաքական գործընթացն առաջին հերթին իշխանության համար խմբային մրցակցային պայքար է, որի գլխավոր նպատակն իշխանական ռե-



սուրսների բաշխումն է, այդ պատճառով իրար հետ մրցակցող խմբերը մուտք են փնտրում դեպի քաղաքական որոշումների ընդունման առանցքային կենտրոններ: **Մայիս, 2016թ.**

### Աղբյուրներ և գրականություն

1. *Lindblom Ch.*, The Policy-Making Process. Second Edition. Prentice-Hall, INC., Englewood Cliffs, New Jersey, 1980.
2. *Соловьев А.И.*, Колебательно-маятниковый механизм принятия государственных решений: к обоснованию когнитивной модели (I), Полис, #5, 2005.
3. *Сунгуров А.Ю., Распопов Н.П., Беляев А.Ю.*, Институты – медиаторы и их развитие в современной России. II. Фабрики мысли и центры публичной политики, Полис, #4, 2012.
4. *Макарычев А.С.*, Идеи для политики, Нижний Новгород, изд. ННГУ им. Н.И. Лобачевского, 1998.
5. *Suskind R.*, The price of loyalty: George W. Bush, the White House, and the Education of Paul O’Neill. Simon & Schuster. New York, 2004.
6. *Почепцов Г.Г.*, Стратегический анализ. Стратегический анализ для политики, бизнеса и военного дела, Киев, 2004.
7. *Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.*, Сравнительная политология сегодня, М., Аспект Пресс, 2002.
8. *В. И. Жуков, Карпов А.В.*, Политический менеджмент, Изд. Институт психотерапии, 2004.
9. Federal Regulation of Lobbying Act of 1946.
10. Lobbying Disclosure Act of 1995.
11. *Lindblom Ch.*, Politics and Markets, 1977.
12. *L. W. Pye*, The Non-Western Political Process -Journal of Politics, vol. 20, 1958.
13. *Доброхотов Р.А.*, Политика в информационном обществе, Полис, #3, 2004.
14. *Соловьев А.И.*, Политология: Политическая теория, политические технологии, М., Аспект Пресс, 2001.
15. *Anderson J.E.*, Public Policymaking. Third ed., Houghton Mifflin Company. Boston, N.Y., 1997.
16. *Макиавелли Н.*, Государь, Москва, Планета, 1990.

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՏԱԽՈՐՀՐԱՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

#### Նունուֆար Ստեփանյան

#### Ամփոփագիր

Այսօր քաղաքագիտական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում քաղաքական որոշումների ընդունման կառուցակարգերին, այսինքն՝ թե ովքեր են որոշումների ընդունման գործող անձինք (ակտորները), ինչպես է տեղի ունենում որոշումների ընդունման բուն գործընթացը, որոնք են դրա վրա ազդող գործոնները:

Այս հոդվածի շրջանակներում անդրադարձել ենք որոշումների ընդունման արտախորհրդարանական ազդեցության կենտրոններին, այսինքն՝ այն արտաքին ազդեցության կենտրոններին, որոնք պառլամենտի անդամ չեն, սակայն ամենաանմիջական ազդեցությունն են ունենում պառլամենտում որոշումների ընդունման գործընթացի վրա:

## **ВНЕПАРЛАМЕНТСКИЕ ЦЕНТРЫ ВЛИЯНИЯ НА ПРИНЯТИЕ ПОЛИТИЧЕСКИХ РЕШЕНИЙ**

*Нунуфар Степанян*

Резюме

Сегодня в политической литературе особое внимание уделяется механизмам принятия политических решений, то есть тому, кто являются акторами принятия решений, как происходит сам процесс принятия решений и какие факторы влияют на него. В рамках этой статьи исследуются внепарламентские центры влияния принятия политических решений, то есть те внешние центры влияния, которые не являются членами парламента, но имеют самое непосредственное влияние на процесс принятия решений.

## **EXTRAPARLIAMENTARY CENTERS OF INFLUENCE ON POLITICAL DECISION-MAKING**

*Nunufar Stepanyan*

Resume

Today, in political science literature much attention is focused on the decision-making policy mechanisms, that is, who are the actors of the decision-making, how the main decision-making process take place, what factors can influence on it, etc. In the framework of this article extraparliamentary centers of influence on political decision-making were studied, that is, the external centers of influence, which are not members of Parliament, but have the most immediate impact on the decision-making process.

# «ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

## Գևորգ Մկրտչյան՝

*Բանալի բաներ՝* երիտասարդություն, եկեղեցի, պետություն, հոգևոր անվտանգություն, արժեհամակարգ, հետազոտություն, կրոն, հավատացյալ:

«Հոգևոր անվտանգություն» հասկացությունը և նրա ընկալումը ՀՀ-ում առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում ժամանակակից մարտահրավերների համատեքստում:

Յուրաքանչյուր պետության ազգային նպատակների կամ դրանց ամբողջական համակարգ հանդիսացող ազգային գաղափարախոսության իրականացման գործում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում անվտանգությունը: Արդի համաշխարհային գլոբալիզացիայի և աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում անվտանգություն տերմինը՝ իր բոլոր տարրերով, ամենաշոշափվող թեմաներից է: Այս առումով բացառություն չէ նաև Հայաստանը՝ ազգային անվտանգության սեփական առանձնահատկություններով ու դերակատարությամբ, և գաղտնիք չէ, որ հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում երկար ժամանակ եղել է այլ հոգևոր արժեհամակարգ ունեցող պետությունների (ինչպես մուսուլմանական, այնպես էլ քրիստոնեական) տիրապետության ներքո, պատմական փաստ, որն ստիպել է հայ ժողովրդին միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու սեփական անվտանգությունն ընդհանրապես և հոգևոր անվտանգությունը՝ մասնավորապես<sup>1</sup>: Ուստի «հոգևոր անվտանգություն» (այսուհետ՝ ՀԱ) հասկացության ժամանակակից ուսումնասիրություններում կարևորվում են ինչպես ժամանակակից միտումների, այնպես էլ հայոց պատմության տարբեր ժամանակաշրջաններում հոգևոր բնույթի մարտահրավերների քննական վերլուծությունը և արժևորումը:

Ազգային և հոգևոր անվտանգության բավական ուշագրավ ուսումնասիրություններ և ուսումնական ձեռնարկներ են հրատարակվել Ռուսաստանի Դաշնու-

<sup>1</sup> Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման կենտրոնական գրասենյակի տնօրեն, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի կրոնի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ:

<sup>1</sup> Այդպիսի օրինակ է Վարդանանց պատերազմը, որն էական նշանակություն է ունեցել հայ ժողովրդի կյանքում ինչպես հոգևոր (նաև կրոնական), այնպես էլ ազգային անվտանգության տեսանկյունից:

թյունում: Մեզանում այս ուղղությամբ շնորհակալ գործ է կատարում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որը վերջին տասը տարիների ընթացքում ընթերցողին է ներկայացրել մի շարք արժեքավոր աշխատանքներ և հաշվետվություններ ազգային անվտանգության և դրա առանձին բաղադրիչների վերաբերյալ<sup>1</sup>:

Անրադառնալով ժամանակակից մարտահրավերներին և ՀԱ ընկալումներին՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրեն Գագիկ Հարությունյանը գրում է. «Հայկական ընդհանրական հանրության մի զգալի մասը, տարբեր գնահատականներով՝ 10-20%-ը, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ չեն: Ավելին, բացի հայ կաթոլիկներից, ավետարանականներից և ուղղափառներից, առկա է իսլամացված հայերի մի ստվար զանգված: Ակնհայտ է, որ տարադավան և տարակրոն հայության վերաբերյալ զարգացած փորձագիտական պատկերացումների ձևավորումը ոչ միայն մեր ինքնաճանաչողության, այլև ազգային անվտանգության (ԱԱ) կարևոր մաս հանդիսացող հոգևոր անվտանգության (ՀԱ) հրատապ խնդիրներից է: Կասկած չի հարուցում նաև այն, որ առանց տարադավան և տարակրոն հատվածների վերաբերյալ հստակ պատկերացումների՝ անհնարին է մշակել հայկական հանրության համերաշխ և արդյունավետ գործունեության մեխանիզմները: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ ԱԱ համակարգում սկզբունքորեն չեն կարող լինել մեկուսացված ոլորտներ, և անգամ տարաբնույթ խնդիրներն այս կամ այն չափով փոխկապակցված են: Այդ առումով ՀԱ-ին վերաբերող հարցերը, մասնավորապես, անմիջապես առնչվում են.

- Սփյուռքի անվտանգության խնդիրների հետ. հայտնի է, որ տարադավան և տարակրոն հայերի զգալի մասը բնակվում է ՀՀ և ԼՂՀ սահմաններից դուրս:
- Հայաստանի ներքաղաքական ակտուալ խնդիրների հետ, որոնք վերաբերում են տարադավան հատվածների փոխհարաբերություններին, աղանդավորական արտահայտումներին, հարկային-գույքային խնդիրներին, հուշարձանների պահպանման հարցերին և այլն:
- Արտաքին քաղաքական զարգացումներին՝ հաշվի առնելով տարակրոն և տարադավան հայության առկայությունը և քաղաքական ներուժը Թուր-

<sup>1</sup> Մանրամասները տե՛ս *Ա. Աղայան*, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը և առաջնահերթությունները, «Նորավանք», Ե., 2002, *Ա. Թադևոսյան*, Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, «Նորավանք», Ե., 2002, *Ա. Մարկոսյան*, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «Նորավանք», Ե., 2005, *Մ. Շահգեղյան*, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք», Ե., 2002, *Մ. Սաֆարյան*, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները (թեմայի հաշվետվություն), «Նորավանք», Ե., 2002, *Մ. Գաբրիելյան*, *Ա. Դարբադյան*, *Ա. Թադևոսյան*, *Ն. Մարգարյան*, Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթներն ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք», Ե., 2002, Իդեոլոգիաները Հայաստանի տեղեկատվական տարածքում, Ե., 2013, О некоторых проблемах информационной безопасности, «Нораванк», 2009 և այլն:

քիայում, Մերձավոր Արևելքում, ինչպես նաև Եվրոպայում և ամերիկյան մայրցամաքում»<sup>1</sup>:

Ակնհայտ է, որ հեղինակը շեշտը դնում է հայկական գործոնի և կրոնական հարցերի վրա: Եվ սա, իհարկե, պատահական չէ, որովհետև եթե ժամանակակից մարտահրավերներից դիտարկում ենք հայապահպանության խնդիրը, ապա ակնհայտ է դառնում ՀԱ խնդրի ուսումնասիրության էլ ավելի կարևորումը, քանի որ պատմականորեն կրոնական գործոնը մեծ նշանակություն է ունեցել հայոց ազգային անվտանգության համակարգում:

Կարող ենք մեջբերել ևս մեկ ուշագրավ միտք ՀՀ անվտանգության համակարգի համար հոգևորի դերակատարության մասին, որի անբաժան մասնիկն է նաև սփյուռքը. «Հայության ու Հայաստանի Հանրապետության գոյությունը, հայոց քաղաքակրթական հնարավոր զարգացումը, ազգի հավաքական ուժի կենտրոնացումն ու անվտանգության ապահովումն առանց հոգեբարոյական ու մշակութային նվաճումների պատկերացնել հնարավոր չէ: Այն հասարակությունը, որը գուրկ է այդ ամենից կամ դրանց տալիս է երկրորդական, աճանցյալ նշանակություն, անհեռանկար է, ինքնաքայքայվող ու ոզեզուրկ»<sup>2</sup>:

Ներկայացվող հետազոտության մեջ առավել կարևորել ենք երիտասարդության շրջանում հոգևոր-կրոնական հիմնախնդիրներին առնչվող հարցերը, որոնց ուսումնասիրության և վերլուծության համար ՀՀ բուհական միջավայրում «Երիտասարդություն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպել և իրականացրել ենք «Հոգևոր կյանքի առանձնահատկությունները Երևանում» հետազոտությունը (այսուհետ՝ հետազոտություն)<sup>3</sup>:

Հետազոտության միջոցով փորձել ենք վեր հանել և ստանալ այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են. ի՞նչ միտումներ և ի՞նչ մոտեցումներ կան ՀԱ-ի վերաբերյալ ՀՀ ակտիվ, կրթված և նոր կյանք մտնող երիտասարդության շրջանում: Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում ՀԱ հասկացությունը որպես այդպիսին դեռևս վերջնական սահմանում չունի՝ հարցաթերթիկներում հիմնա-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Սփյուռքի դավանանքային հատվածների խնդիրները և հնարավորությունները, Երևան, 2011, «Նորավանք» ԳԿՀ, 2011, էջ 8-9:

<sup>2</sup> Տե՛ս Մարգարյան Ա. և ուրիշ., ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները / Տնտեսագետ, «Ամբերդ» մատենաշար, Երևան, 2014, էջ 27:

<sup>3</sup> Հետազոտությունն անցկացվել է սոցիոլոգիական ուսումնասիրությունների պահանջներին համապատասխան, իսկ ամբողջական ուսումնասիրությունը տպվելու է մեկ այլ ուսումնասիրության մեջ: Հետազոտության ընտրանքի կազմման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԱՎԾ 2010թ. ՀՀ ժողովրդագրական ժողովածուն: Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին և դինամիկ շարքեր (2005-2010), ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011, էջ 125:

խնդրի վերաբերյալ ներառել ենք հետևյալ հարցը՝ *ըստ Ձեզ, հոգևոր անվտանգությունն իր մեջ ներառո՞ւմ է արդյոք հետևյալ հասկացությունները.*

- *Ազգային փոքրամասնությունների կրոնական իրավունքների պաշտպանությունը:* Հարցվածների 62,7%-ը տվել է դրական պատասխան և կարծում է, որ այն հոգևոր անվտանգության մաս է կազմում, իսկ 27,6%-ը կարծում է, որ չի կարող մեր կողմից ուսումնասիրվող հարցի մաս կազմել: Նշենք նաև, որ 9,7%-ը դժվարացել է պատասխանել: Այս առումով, թերևս, ավելորդ չէ նշել, որ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերի համաձայն՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները ՀՀ-ում պաշտպանված են:
- *Կրոնական կազմակերպությունների դեմ պայքարը<sup>1</sup>:* Այս հարցի դեպքում պատասխանը հետևյալն է՝ 70,2%-ը կարծում է, որ ՀԱ-ն, այո՛, ենթադրում է կրոնական կազմակերպությունների դեմ պայքար, 22,4%-ը կարծում է, որ ո՛չ, իսկ 7,4%-ը դժվարացել է պատասխանել: Այստեղ հարկ է հավելել, որ ՀՀ հասարակությունում առկա են կրոնական կազմակերպությունների և նրանց գործունեության վերաբերյալ ձևավորված որոշակի մոտեցումներ, որոնք, սակայն, առանձին քննարկման առարկա են:
- *Կրոնական հավաքույթներին, ժողովներին մասնակցության ազատությունը:* Այս հարցը որոշակիորեն կապված է նախորդի տրամաբանության հետ, իսկ պատասխանները հետևյալն են՝ 38,8-ը կարծում է, որ, այո՛, ՀԱ-ն ներառում է այն, իսկ 52,5%-ը կարծում է, որ ո՛չ, 9,3%-ը դժվարացել է պատասխանել:
- *Քաղաքացիների պաշտպանվածությունը կրոնական քայքայիչ հոսանքներին:* Այս դեպքում հարցվածների 69,6%-ը կարծում է, որ, այո՛, ՀԱ-ն սա ևս ներառում է, 23,2%-ը կարծում է, որ ո՛չ, իսկ 7,2%-ը դժվարացել է պատասխանել:
- *Կրոնական կազմակերպությունների իրավունքների պաշտպանությունը:* Կրոնական կազմակերպությունների իրավունքների պաշտպանությունը, ըստ հարցվածների 61,5%-ի, չպետք է ներառվի ՀԱ ոլորտ, իսկ 30,3%-ը դրա կողմնակիցն է, 8,1%-ը դժվարացել է պատասխանել:
- *Մեկական հոգեկան հավասարակշռությունը* (այս հարցը կոնկրետ անձի հոգեբանական շեշտադրում ունի): Հարցվածների 74,4%-ը կարծում է, որ պետք է ներառվի, 19,4% կարծում է, որ ոչ, 6,2%-ը դժվարացել է պատասխանել:

<sup>1</sup> Կրոնական կազմակերպության անվան տակ, որպես կանոն, ընկալվում են վերջին տարիների չայաստանում ակտիվ գործունեություն ծավալած բողոքական ծագման որոշ հարանվանություններ կամ ուղղակի աղանդներ:

- *Ազատ դավանանքի իրավունքի ապահովումը*: Այս հարցին ի պատասխան ստացել ենք հետևյալ պատկերը՝ 45,2%-ը կարծում է, որ պետք է ներառվի, 46,6%-ը կարծում է, որ ոչ, իսկ 8,2%-ը դժվարացել է պատասխանել:
- *Բարոյական արժեքների, նորմերի ապահովումը*: Այս հարցի դեպքում հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 73,8%-ը, կարծում է, որ սա պետք է ներառվի ՀԱ ոլորտում, 20,5%-ը դեմ է արտահայտվել, իսկ 5,7%-ը դժվարացել է պատասխանել: Այս հարցի համար ստացված պատասխանները բխում են նաև մեր ազգային էթնոմշակութային ու կրոնական պատկերացումներից, և, թերևս, գաղտնիք չէ, որ բարոյական արժեքները դարեր շարունակ հայ ժողովրդի համար կարևոր դերակատարություն են ունեցել և այսօր էլ հասարակական աշխարհընկալման ու արժեհամակարգի հիմնական մասն են:
- *Քաղաքացիներին կրոնական կազմակերպություններից պաշտպանությունը*. տոկոսային պատկերը հետևյալն է. 61,5%-ը կարծում է, որ պետք է ներառվի, 31,1%-ը կարծում է, որ ոչ, 7,4%-ը դժվարանում է պատասխանել:
- *Ազգային արժեքների պահպանումը*: Այս հարցի դեպքում պատկերը հետևյալն է՝ 73,8%-ը կարծում է, որ պետք է ներառվի, 20,5%-ը կարծում է, որ ոչ, 5,7%-ը դժվարացել է պատասխանել: Ազգային արժեքների պահպանումը հոգևոր անվտանգության շրջանակում տեսնելը խոսում է այն մասին, որ երիտասարդության շրջանում առկա են օտարածին և ներմուծված արժեքների արժևորում և գնահատում, ինչը քննարկվող հիմնախնդիրների համատեքստում է՛լ ավելի է բարձրացնում գիտակից և ազգային-հոգևոր արժեհամակարգին տիրապետող երիտասարդության դերը հասարակական կյանքում:
- *Հայ Առաքելական եկեղեցու արժեքների պահպանումը*: Այս յուրահատուկ հարցի ներառումը կարող ենք հիմնավորել այն կարևոր հանգամանքով, որ ավանդաբար Հայոց եկեղեցին հայ ժողովրդի համար ոչ միայն համարվել է հոգևոր-կրոնական պահանջմունքների բավարարման միջոց, այլև պատմականորեն իրականացրել է ազգապահպան, մշակութաստեղծ և հասարակական կյանքի կարգավորիչ գործառույթներ: Այս հարցի դեպքում ունենք հետևյալ պատկերը. հարցվածների 82,5%-ը կարծում է, որ այն պետք է ներառվի ՀԱ, 12,7%-ը կարծում է, որ ոչ և 5,7%-ը դժվարացել է պատասխանել: Այս դեպքում ևս ակնհայտ է, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը, լինելով Հայոց եկեղեցու հետևորդ և տվյալ արժեհամակարգի կրող, մտահոգ է այդ խնդրով և ուզում է անպայման ապահովված տեսնել Հայոց եկեղեցական արժեհամակարգի պահպանումը:

- Հարցաշարում ներառված է եղել նաև ընդհանրական *«հոգևոր արժեքների պահպանում»* բազմանշանակ հարցը, որի մասին արդեն նշել ենք այն կարևոր հանգամանքը, որ «հոգևոր արժեք» երևույթի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ, և այն առանձին ուսումնասիրության թեմա է: Ուստի մենք այս հարցադրումով այդ երևույթի ընկալումը և մեկնաբանությունը թողել ենք հարցվողների հայեցողությանը, որի արդյունքում նրանք իրենք են սեփական ընկալումներով ներկայացրել հարցի պատասխանը: Եվ այսպես, ըստ հարցման արդյունքների, հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 90,7%-ը, կարծում է, որ պետք է ներառվի, 5,6%-ը կարծում է, որ ոչ, իսկ 3,7%-ը դժվարանում է պատասխանել: Այս հարցադրման դեպքում հստակ երևում է, որ հարցվածները բոլոր հարցերից առավել կարևորել են հոգևոր արժեքների ապահովումը, ինչը նաև տրամաբանական է, որովհետև հասարակական ընկալումներում «հոգևոր արժեք» ասելով, որպես կանոն, հասկացվում են այնպիսի կարևոր արժեքներ, ինչպիսիք են ընտանիքը, հայրենիքը, ազգային մշակույթը, ավանդական տոները, ծեսերը, սովորությունները, ի հակադրություն նոր ներմուծված և խորթ արժեքների, որոնք այսօր երբեմն գերակայող են դառնում հասարակական կյանքի որոշ ոլորտներում:

Այսպիսով, հետազոտության այս մեկ հարցի վերաբերյալ ստացված պատասխանների հպանցիկ ուսումնասիրությունն արդեն ի հայտ է բերում ոչ միայն ՀՀ երիտասարդության (այնուամենայնիվ, հաշվի պետք է առնենք այն հանգամանքը, որ խոսքն ուսանողներին է վերաբերում) շրջանում առկա հոգևոր անվտանգությանն առնչվող առավել հրատապ հարցերի շրջանակը, այլև տալիս է մի շարք կարևոր հարցերի պատասխաններ, որոնք կարող են դառնալ ավելի խոր և համապարփակ ուսումնասիրությունների օբյեկտ: Ակնհայտ է, որ տրված պատասխանների արդյունքում կարող ենք «հոգևոր անվտանգություն» հասկացության համար առավել կարևոր տարրեր համարել հավատացյալի հոգևոր պահանջմունքների անվտանգ իրացումը, անձի հոգեբանական հավասարակշռությունը, ազատ դավանանքի, բարոյական արժեքների պահպանումը, ազգային եկեղեցու՝ որպես հոգևոր-մշակութային արժեքների պահպանի, անվտանգությունը և այլն:

Հետազոտության հաջորդ հարցը նախորդի տրամաբանական շարունակությունն է՝ *«Ձեր կարծիքով Երևանում ընդհանուր առմամբ որքանո՞վ է վտանգված երիտասարդների հոգևոր անվտանգությունը»*: Այս հարցի դեպքում (գնահատումը կատարվել է 1-10 բալանոց համակարգով, որտեղ 1-ը նշանակում, որ ընդհանրապես վտանգված չէ, իսկ 10-ը՝ շատ է վտանգված) ստացված պատասխանները



պայմանականորեն բաժանել ենք երկու մասի՝ գնահատված մինչև «5» և «5» ու ավելի բարձր գնահատականներով, որի արդյունքում ստացել ենք այսպիսի պատկեր.

ա. երիտասարդների հոգևոր անվտանգության վտանգավորությունը հարցվածների կողմից գնահատվել է «1» 5,2%-ի, «2»՝ 1,4%-ի, «3»՝ 3,7%-ի և «4»՝ 7,6%-ի դեպքում, ինչը կազմում է ընդհանուր հարցվածների 17.9%-ը: Արդյունքում՝ հարցվածների փոքր տոկոսն է կարծում, որ ժամանակակից հայ հասարակությունում երիտասարդության հոգևոր անվտանգությունը վտանգված չէ:

բ. երիտասարդների հոգևոր անվտանգության վտանգավորությունը «5» և ավելի բարձր գնահատականով է գնահատել հարցվածների 80.6%-ը, մասնավորապես՝ «5»՝ 16.5%, «6»՝ 11.6%, «7»՝ 16.2%, «8»՝ 16.2%, «9»՝ 7.3% և «10»՝ 11.1%:

Հարցվածների 1.5%-ը դժվարացել է պատասխանել:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ներկայացված տվյալները բավական մտահոգիչ են և խոսուն, ուստի այս ուղղությամբ անհրաժեշտ է անցկացնել բազմակողմանի և լիարժեք վերլուծական աշխատանք և համապատասխան ուսումնասիրություններ:

Վերոհիշյալ պատասխաններն արդիական են նաև ներկայում ՀՀ-ում գործող տարատեսակ կրոնական կազմակերպությունների գործունեության ֆոնին և պահանջում են առանձին ուսումնասիրությունների առարկա դարձնել կրոնական կազմակերպությունների գործունեությանը և կարգավիճակին առնչվող բազմազան հարցեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ հասարակական ընկալումներն ու մոտեցումները:

Անկախության վերականգնումից հետո ՀՀ-ում կրոնական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ հասարակական ընկալումները միանշանակ չեն, առկա են տարբեր մոտեցումներ, հնչում են տարբեր տեսակետներ, մասնավորապես նաև այն, որ դրանք մեր հասարակությունը մասնատում են և ազգային անվտանգության տեսանկյունից վտանգավոր են: Հասարակական ընկալումներում առկա այդ մոտեցումը մենք ներառեցինք հետազոտության մեջ հետևյալ հարցի տեսքով՝ *ի՞նչ էք կարծում, վտանգավո՞ր են արդյոք կրոնական կազմակերպությունները մարդու հոգևոր անվտանգության համար*: Այս դեպքում, ի դեպ, հատուկ պետք է շեշտենք, որ կրոնական կազմակերպություններ ասելով առաջին հերթին նկատի ենք ունեցել ոչ ավանդական կրոնական կազմակերպությունները: Ստացված արդյունքներն այսպիսին են՝ 88,4%-ը, այսինքն՝ հարցվածների ճնշող մեծամասնությունը, կարծում է, որ դրանք վտանգ են ներկայացնում, իսկ 11,6%-ը կարծում է, որ վտանգ չեն ներկայացնում: Ինչպես և սպասելի էր, ստացված արդյունքը փաստում է, որ հասարակության մեջ կա լուրջ մտահոգություն, և մեծամասնության համար կրոնական որոշ կազմակեր-

պոլիտոնոմի գործունեությունը վտանգավոր է դիտարկվում: Այս առումով կարծում ենք, որ պետական և հասարակական համապատասխան խնդիրներով զբաղվող կառույցները պետք է հետևություններ անեն:

Նախորդ հարցի տրամաբանական շարունակությունն է հետազոտության հետևյալ հարցադրումը՝ *ինչո՞ւ*: Հարցման արդյունքները հետևյալն են. հարցվածների 31,1%-ը կարծում է, որ կրոնական կազմակերպությունները շեղում են մարդկանց ճիշտ ուղուց, իսկ 28,0%-ը կարծում է, որ խեղաթյուրում են մարդու հոգևոր արժեքները, 18,3%-ը դժվարացել է պատասխանել, 5,6%-ը կարծում է, որ դրանք քարոզում են սխալ գաղափարախոսություն՝ Հայ Առաքելական եկեղեցուց դուրս: Այնուհետև հարցվածների 4,6%-ը գտնում է, որ դա յուրաքանչյուր մարդու ընտրությունն է, 3,9%-ը կարծում է, որ դրանք մարդուն դրդում են ինքնասպանության: Այսպիսով, այս դեպքում ևս ստացել ենք պատասխաններ, որոնք բավական մտահոգիչ են: Ուստի արդյունքներն ավելի կոնկրետացնելու համար ընտրել ենք այս հարցի տրամաբանական շարունակությունը՝ *եթե այո, ապա ո՞ր խմբերի համար են առավել շատ վտանգ ներկայացնում*: Այս հարցը հատկապես կարևորել ենք այն նպատակով, որ պարզաբանենք, թե հարցվածները հատկապես ի՞նչ խոցելի խմբեր են դիտարկում՝ հաշվի առնելով նաև ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը և բնակչության աղքատության մակարդակը՝ 32.4%<sup>1</sup>:

Այսպիսով՝ *եթե այո, ապա ո՞ր խմբերի համար են շատ վտանգ ներկայացնում* հարցին տրվել են հետևյալ պատասխանները (յուրաքանչյուր հարցվածի տրվել է երեք պատասխանի հնարավորություն).

*Առաջին պատասխան*

- 64,2%-ը կարծում է, որ առավել խոցելի են սոցիալապես անապահովները, ինչը հանրապետության մեծագույն մարտահրավերներից է,
- 17,7%-ը կարծում է, որ գործազուրկներն են առավել խոցելի,
- 9,8%-ը կարծում է, որ դրանք առավել վտանգավոր են երեխաների համար:

*Երկրորդ պատասխան*

- 29,8%-ը կարծում է, որ դրանք առավել վտանգավոր են երեխաների համար,
- 16,1%-ը կարծում է, որ ծերերն են ավելի խոցելի,
- 11,6%-ը կարծում է, որ գործազուրկներն են առավել խոցելի:

<sup>1</sup>Տվյալները վերցված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայքից: Ըստ տվյալների՝ 2012թ. աղքատության մակարդակը կազմել է 32.4%: Մանրամասն տե՛ս <http://www.armstat.am/file/doc/99477218.pdf>: Վիճակագրական տվյալները մեջբերված են հետազոտությունից առաջ տիրող իրավիճակից:

*Երրորդ պատասխան*

- 33,9 %-ը կարծում է, որ առավել խոցելի են կրթական ցածր մակարդակ ունեցող մարդիկ,
- 6,5%-ը կարծում է, որ դրանք առավել վտանգավոր են երեխաների համար,
- 7,3%-ը կարծում է, որ ծերերն են ավելի խոցելի:

Հետազոտության հարցերի շարքում վերոհիշյալ պատասխաններն ի վերջո հանգում են տրամաբանական այն հարցադրմանը, թե՝ *կարծում եք պե՞տք է պայքարել կրոնական այդ կազմակերպությունների դեմ*: Այս հարցադրումը հատկապես կարևորել ենք այն հանգամանքով, որ հասարակության մեջ գերակշռող է այդ կրոնական կազմակերպությունների դեմ պայքարի պահանջը: Այսպես՝ հարցվածների 89.7%-ը կարծում է, որ պետք է պայքարել, իսկ 10.3%-ը կարծում է, որ ոչ:

Որպեսզի նախորդ պատասխանն ավելի հստակ լինի և մանրամասն ներկայացնի երիտասարդության մտահոգությունները, հարցվածներին ուղղեցինք հաջորդ հարցը՝ *ինչո՞ւ*.

- 29,7%-ը գտնում է, որ դրանք շեղում են ճիշտ ճանապարհից,
- հարցվածների 23,1%-ը կարծում է, որ դրանք պառակտում են ազգը, պետությունը և հասարակությունը,
- 19,6%-ը կարծում է, որ պետք է պայքարել, բայց դժվարանում է ասել, թե ինչու,
- 8,0%-ը կարծում է, որ դրանք շատանում են և վտանգավոր են,
- 7,8%-ը կարծում է, որ դրանք ազդում են մարդու ներաշխարհի վրա,
- 3,3%-ը կարծում է, որ դրանք հանգեցնում են հոգեկան շեղումների, անզիտակից գործողությունների,
- 1,5%-ը պատասխանել է, որ դրանք անհանգստացնում են իրենց այցերով:

Այս պատասխանները, փաստացի, լիարժեքորեն պարզաբանում են կրոնական կառույցների վերաբերյալ երիտասարդության շրջանում առկա մտահոգությունները, և կարծում ենք, որ ՀՀ հոգևոր անվտանգության տեսանկյունից նմանատիպ հարցերի բարձրացումը և երիտասարդության շրջանում առկա մտահոգությունների բազմակողմանի և լիարժեք ուսումնասիրությունը խիստ արդիական են: Եվ այս հետազոտությունը որոշ չափով կարող է առնվազն հստակեցնել ապագա ուսումնասիրությունների օբյեկտ հանդիսացող հիմնախնդիրների շրջանակը:

Այսպիսով, ներկայացված հետազոտության շրջանակներում քննարկված հարցերը և դրանց պատասխանները որոշակի լույս են սփռում ՀՀ ազգային և

հոգևոր անվտանգությանն առնչվող արդի հիմնախնդիրների վրա և թույլ տալիս որոշակի հետևություններ կատարել այդ կապակցությամբ: Մասնավորապես, ակնհայտ է, որ այս ուղղությամբ ավելի խոր և մասնագիտական բազմաբնույթ հետազոտություններ պետք է անցկացվեն թե՛ գիտական ուսումնասիրությունների մակարդակով, թե՛ եկեղեցու կողմից: Իսկ ներկայացված հետազոտությունն ընդամենը փորձ է՝ ի մի բերելու ՀՀ երիտասարդության կարծիքն ու մտահոգությունները քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ:

*Ապրիլ, 2016թ.*

**«ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

*Գևորգ Մկրտչյան*

Ամփոփագիր

Ուսումնասիրությունը «Հոգևոր կյանքի առանձնահատկությունները Երևանում» հետազոտության արդյունքների ամփոփ վերլուծությունն է: Ուսումնասիրության նպատակն է հստակեցնել ՀՀ երիտասարդության շրջանում հոգևոր անվտանգության հասկացության, կրոնական կազմակերպությունների գործունեության, հոգևոր կյանքի առանձնահատկությունների, նոր սերնդի կրոնական պատկերացումներում Հայ Առաքելական եկեղեցու տեղի, դերի և նշանակության հիմնախնդիրների շրջանակը և դրանց ուսումնասիրության հետագա ընթացքը: Անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին. հոգևոր անվտանգությունն ի՞նչ հասկացություններ է ներառում; Երևանում ընդհանուր առմամբ որքանով է վտանգված երիտասարդների հոգևոր անվտանգությունը; վտանգավո՞ր են արդյոք կրոնական կազմակերպությունները մարդու հոգևոր անվտանգության համար; էթե՞ այո, ապա ո՞ր խմբերի համար են դրանք առավել շատ վտանգ ներկայացնում; պե՞տք է պայքարել կրոնական այդ կազմակերպությունների դեմ:

## СОВРЕМЕННЫЕ ИССЛЕДОВАНИЯ О ПОНЯТИИ «РЕЛИГИОЗНАЯ БЕЗОПАСНОСТЬ» В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*Геворг Мкртчян*

Резюме

В работе представлены краткий анализ, выявление и обсуждение глобальных вопросов и исследования по теме «Особенности религиозной жизни в Ереване». Цель исследования: уточнить понятия религиозной безопасности, деятельности религиозных организаций, особенности религиозной жизни среди молодежи Республики Армения, а также место, роль и значение Армянской Апостольской церкви и дальнейший процесс исследования. Исследование относится к следующим вопросам: что входит в понятие религиозной безопасности; в какой мере религиозная безопасность ереванской молодежи в целом под угрозой; опасны ли религиозные организации для религиозной безопасности человека; если да, то для каких групп они представляют угрозу; надо ли бороться против религиозных организаций?

## MODERN STUDIES ON “SPIRITUAL SECURITY” CONCEPT IN THE REPUBLIC OF ARMENIA

*Gevorg Mkrtchyan*

Resume

The study represents a brief analysis and discussion of the issues raised in the research “The Features of Spiritual Life in Yerevan”. The aim of the study is to clarify the meaning of the of “Spiritual Security” concept, activities of religious organizations, features of spiritual life among the youth of the Republic of Armenia RA and the scope of key issues of position, role and importance of the Armenian Apostolic Church in the life of the new generation, as well as further research process. The research touches upon the following questions: What ideas does the spiritual security include? Generally, how much is the youth’s spiritual security endangered in Yerevan? Do religious organizations pose a danger to people’s spiritual security? If yes, then which are the most endangered target groups? Is it necessary to struggle against these religious organizations?

**«ՄԵԴԻԱՏԻԶԱՑԻԱՅԻ» ՄԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

***Լիլիթ Շաքարյան՝***

*Բանալի բառեր՝* տեղեկատվական հասարակություն, մեդիա, մեդիատիզացիա, հարիտուս, մշակութային կապիտալ, հաղորդակցային միջավայր:

20-րդ դարի նախաշեմին տեղի ունեցող տրանսֆորմացիոն գործընթացների համատեքստում (նոր տեխնոլոգիաների մշակում և ներմուծում, կապի և հաղորդակցման նոր միջոցների ձևավորում) հասարակագետներն առաջադրեցին տեղեկատվական հասարակության հայեցակարգը՝ բացատրելու հասարակությունում և առհասարակ ամբողջ աշխարհում տեղի ունեցող որակական փոխակերպումները: Տեղեկատվական հասարակության կարևորագույն բնութագրիչը տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների արմատական թափանցումն էր մարդու կյանքի և գործունեության բոլոր ոլորտներ: Այսօրինակ իրականությունում գոյություն չունեին հասարակական գործունեության բնագավառ, որն այս կամ այն չափով կապված չլիներ տեղեկատվության ստացման և մշակման գործընթացների հետ, ինչն էլ աստիճանաբար հանգեցրեց մարդկության կախվածությանը տեղեկատվական հոսքերից և մեդիայից ընդհանուր առմամբ:

Հոդվածը նվիրված է հասարակության և մշակույթի վրա մեդիայի ազդեցության տեսության վերլուծությանը, որի շրջանակներում փորձ է կատարվում պատասխանելու այն հարցադրմանը, թե ինչպիսին է մշակույթի և սոցիալական ինստիտուտների գործունեությունը մեդիայի միջնորդության դարաշրջանում: Այս համատեքստում նախ անդրադարձ է կատարվում մեդիայի սոցիոլոգիական տեսությունների վերլուծությանը, ապա ժամանակակից տեղեկատվական իրողությունը բնութագրող սոցիալական պայմաններին, որոնց մեկնաբանման համար գիտական գրականություն է ներմուծվել մեդիատիզացիա եզրույթը՝ որպես հայեցակարգ և տեսական հիմք մեդիայի, մշակույթի և հասարակության միջև փոխազդեցության դիտարկման համար: Ավանդաբար մեդիան ընկալվել է

---

<sup>1</sup>ԵՊՀ, սոցիոլոգիայի ֆակուլտետ, սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս:

հասարակությունից և մշակույթից առանձին, հետևաբար հետազոտողները, որպես կանոն, ուսումնասիրում էին կոնկրետ մեդիա հաղորդագրությունների ունեցած ազդեցությունն անհատների և սոցիալական ինստիտուտների վրա (օրինակ, գովազդների ազդեցությունը սպառողական նախընտրության ձևավորման գործընթացում կամ քաղաքական կարգախոսների ազդեցությունն էլեկտորատի վարքագծի վրա):

Մակայն այսօր մեդիան այնքան է թափանցել ժամանակակից հասարակություն, որ այլևս չի կարող մեկնաբանվել մշակութային և այլ սոցիալական ինստիտուտներից առանձին: Ուստի կարևոր է դառնում այն հիմնահարցը, թե ինչպես են սոցիալական ինստիտուտները և մշակութային գործընթացները փոխել իրենց բնույթը, կառուցվածքը և գործառույթներն ի պատասխան մեդիայի ամենուրեքության:

Մեդիան այլևս պարզապես տեխնոլոգիաներ չի նշանակում, որոնք կազմակերպությունները, անհատները կամ կուսակցությունները կարող են որոշել՝ օգտագործել, թե ոչ: Մեդիայի նշանակալի ազդեցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններս դարձել են այլ սոցիալական ինստիտուտների բաղկացուցիչ մասը, այն պարագայում, երբ իրենք էլ իրենց հերթին ձեռք են բերել ինքնորոշման այնպիսի աստիճան, որ ստիպում են մնացած ինստիտուտներին հաշվի առնել իրենց տրամաբանությունը: Այս երկակիությունն առաջադրում է հարցեր, թե ինչպես են տվյալ իրականությունում մեդիա հաղորդագրություններն օգտագործվում և ընկալվում ուղարկողների և ստացողների միջև՝ դրանով իսկ ազդելով մարդկանց հարաբերությունների վրա: Հետևաբար, մեդիայի օգտագործման և մեդիա-ազդեցության դասական հարցերը պետք է դիտարկել այն հանգամանքների ներքո, որ այսօրվա հասարակությունը և մշակույթը դարձել են մեդիատիզացված:

Առանցքային հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս հասկանալ մեդիայի կարևորությունը մշակույթի և հասարակության համար, մեդիատիզացիայի հայեցակարգն է: Այս տերմինն օգտագործվել է ամենատարբեր համատեքստերում՝ բնութագրելու համար մեդիայի ազդեցությունը տարբեր երևույթների վրա, սակայն աշխատանքների միայն փոքրաթիվ քանակությունում է փորձ կատարվել սահմանել հասկացությունը: Միայն վերջերս են մեդիա-հետազոտողները զարգացրել մեդիատիզացիայի՝ որպես մշակութային և սոցիալական գործընթացի վերաբերյալ առավել հետևողական և ճշգրիտ սահմանում [1, 2], թեև այս պատկերացումների նախադրյալներն առկա էին դեռևս ավելի վաղ աշխատություններում:

Մեդիատիզացիա հասկացությունն ի սկզբանե օգտագործվել է քաղաքական հաղորդակցության գործընթացների վրա մասմեդիայի ազդեցությունը բնու-

թագրելու համար: Շվեդ հետազոտող Կենտ Ասպն առաջիններից մեկն էր, որը խոսեց քաղաքական կյանքի վրա մեդիայի ազդեցության մասին. նա նկատի ուներ մի գործընթաց, որում «քաղաքական համակարգը մեծապես ազդեցության է ենթարկվում և հարմարվում է մասմեդիայի պահանջներին քաղաքականության լուսաբանման ժամանակ» [3, էջ 106]: Այս ադապտացիայի դրսևորման ձևերից մեկն այն է, երբ քաղաքական գործիչները կառուցում են իրենց հանրային ելույթները՝ ձգտելով անձնականացնել կամ պոլյարիզացնել քննարկվող պրոբլեմը, որպեսզի մեծանա մեդիայով հաղորդագրությունների լուսաբանման հավանականությունը: Հեղինակը նաև անդրադարձել է քաղաքական ինստիտուտներից մեդիայի աճող անկախությանը որպես մեդիատիզացիայի մեկ այլ բնութագրիչ: Հետագա ուսումնասիրություններում հետազոտողները դիտարկում են մեդիատիզացիայի գործընթացը ոչ միայն քաղաքական ոլորտում, այլ նաև այլ սոցիալական միավորումներում, ինչպես նաև ամբողջ հասարակությունում:

Մեդիատիզացիայի՝ որպես հաղորդակցային գործընթացի ուսումնասիրության հիմքերն առկա են դեռևս Յու.Հաբերմասի, Պ.Բուրդյոյի, Ժ.Բոդրիյարի և Ն.Էլիասի սոցիոլոգիական մոտեցումներում:

Յուրգեն Հաբերմասն իր կոմունիկատիվ գործողության տեսությունն ադապտացնում է հասարակության կենսաշխարհի հայեցակարգին և կենսաշխարհի կառուցվածքների տարբերակմանը: Սոցիալապես ինտեգրված կենսաշխարհը, որտեղ մարդիկ փորձարկում են պատկանելության նմուշները, ավելի ու ավելի ռացիոնալիզացված է դառնում: Սա մոդեռնիզացիոն գործընթացների մի մասն է: Կենսաշխարհը միաժամանակ և՛ տարանջատվում է, և՛ կախված է դառնում տնտեսական և պետական կառավարման համակարգերից: Այս մեդիատիզացիան կախված է Հաբերմասի կողմից «մեդիային» տրված շատ ընդհանրական սահմանումից, օրինակ՝ մեդիան որպես փող և իշխանություն: Այսպիսի «մեդիան» կարող է «գաղութացնել» կենսաշխարհը [4, p. 305]: Հաբերմասի հայեցակարգն առավել մոտ է մեդիատիզացիայի պատմական հայեցակարգին, որը հիմնականում օգտագործվում է՝ նկարագրելու համար, թե ինչպես գերմանական կառավարության նախկին չմիջնորդավորված ինստիտուտը դարձավ միջնորդավորված՝ պետության ժամանակակից ընկալման իմաստով: Այնուամենայնիվ, իր տեսակետում միջնորդավորված հաղորդակցությունը գործընթաց է, որն անհատին ավելի ու ավելի է ինտեգրում հասարակության և տնտեսության համակարգայնորեն կառուցակցված աշխարհին:

Պիեռ Բուրդյոյի մոտեցումը առանվազն երկու տեսակետից՝ կապիտալի և հաբիտուսի տեսության, ինչպես նաև սիմվոլիկ իշխանության տեսության շրջանակներում, շատ կարևոր է մեդիատիզացիայի հայեցակարգի համար: Սա պայ-



մանավորված է նրանով, որ տեսությունը միայն չի նկարագրում և քննարկում, թե ինչ է պատահել, այլ կարող է վերագրել իր արդյունքները հասարակության՝ որպես ամբողջության վրա: Բուրդյոյի աշխատանքներն օգտակար են հետազոտության արդյունքների գնահատման և հասարակությունում իմաստի հաղորդման տեսանկյունից:

Մշակութային, սոցիալական և սիմվոլիկ կապիտալների հայեցակարգը Մարքսի տնտեսական կապիտալի գաղափարի ընդհանրացումն է: Պ.Բուրդյոն վերջիններս սահմանում է այդ կերպ տրված մշակույթում և հասարակությունում անձի հնարավորությունները տարբեր տեսանկյուններից վերլուծելու համար: Մշակութային կապիտալը բաղկացած է կուտակված փորձերից, մշակութային բարիքներից և ինստիտուցիոնալ կոչումներից: Մշակութային կապիտալը կարող է լինել միավորված, օբյեկտիվորեն գոյություն ունենալ և ինստիտուցիոնալ լինել: Սոցիալական կապիտալը ներառում է նաև ճիշտ անհատների ճանաչում, ովքեր հեղինակավոր են հատուկ հարցերում՝ աշխատանքի կամ այլ տեղեկատվության հետ կապված: Եվ սիմվոլիկ կապիտալը հայեցակարգ է, որը նկարագրում է յուրաքանչյուր ազդեցությունը և առավելությունը, որը անձն ունի շնորհիվ իր համբավի և վստահելիության [5]:

Այս երեք հայեցակարգերն այժմ կարող են դիտվել որպես տնտեսական կապիտալի ընդհանրացումներ, քանի որ.

- ունեն հասարակության և մշակույթի կողմից սահմանված արժեք,
- կարևոր են իշխանության և կյանքի հնարավորությունների տեսանկյունից,
- կարող են կուտակվել,
- կարող են փոխարկվել այլ կապիտալների:

Այսպիսով, Բուրդյոյի ընդհանրացումը կարող է օգտագործվել՝ նկարագրելու համար, թե ինչպես է հասարակությունը գործառում ակտորների ռեսուրսներից կախված, և թե ինչպես են կապիտալի այս չորս ձևերը կապում բոլոր սոցիալական երևույթներն իշխանության և հեգեմոնիայի կատեգորիաներին: Հետևաբար, կապիտալի տարբեր տեսակներն առավել լավ են նկարագրում անհավասարությունները, քան թվային բաժանման մոտեցումը:

Մեդիատիզացիայի հարաբերակցությամբ Բուրդյոյի կապիտալների տեսությունը կարող է օգտագործվել՝ նկարագրելու համար մարդկանց կենսական հնարավորությունների փոփոխությունները մեդիայի և հաղորդակցության զարգացումների համատեքստում: Մշակութային կապիտալը կարող է արժեգրկվել ծրագրային համակարգի միջոցով, քանի որ յուրահատուկ հմտություններ կարող են այլևս անհրաժեշտ չլինել. բառերը ճիշտ արտասանելու և գրելու գիտելիքն

այսօր շատ քիչ կարևորություն ունի անձի համար, քանի որ մարդը ճիշտ գրելու աջակցություն կարող է ստանալ աղեկվատ ծրագրային համակարգի միջոցով: Դա նաև հնարավոր է սոցիալական փոփոխություններով, որ գրագիտության նոր ձևերը կարող են աջակցել մարդկանց մշակութային կապիտալին: Նույնը կարող է լինել կապիտալի մյուս ձևերի հետ:

Պ.Բուրդյոյի զարգացրած հաջորդ հայեցակարգը, որը վերաբերում է մեդիատիկացիային, սիմվոլիկ բռնությունն է, որը «սիմվոլիզմի և նշանակության համակարգերի պարտադրումն է խմբերին կամ դասակարգերին այնպես, որ վերջիններս գործառում են որպես լեգիտիմ»: Սիմվոլիկ բռնությունն աշխատում է՝ վկայակոչելով մարդկանց հաբիտուսը՝ դիսպոզիցիաները, օգտագործվող կատեգորիաները և արտադրող սխեմաները, ինչպես նաև ներառելով նրանց սոցիալական պրակտիկաները, անհատական փորձը, մշակութային և հասարակական սպասելիքներն ու կարծիքները [6, p. 33]:

Բուրդյոն այս հայեցակարգը զարգացրել է Ֆրանսիայում կրթության վերաբերյալ իր ուսումնասիրությունների շրջանակներում. «Երբ մենք մեծանում ենք, մենք ոչ միայն սովորում ենք այս կամ այն, այլև սովորել նշանակում է հասարակության կանոնները դրոշմել մեր մարմիններում, մեր մտածելակերպում, մեր զգացմունքներում և մտադրություններում: Մենք ինչ-որ իմաստով բաղկացած ենք այս կանոններից, որոնք տալիս են մեզ կառուցվածք, որը մենք սովորում ենք մեր ծնողների, հասակակիցների և այսօր նաև մեդիայի հետ փոխազդեցությունների միջոցով» [6, p. 34]:

Պահպանելով Բուրդյոյի հեղինակային իրավունքները՝ մենք կարող ենք նույնիսկ ենթադրել, որ մեդիատիկացված հասարակություններում մեդիան հզոր գործիք է մարմնի և հաբիտուսի վրա ազդելու տեսանկյունից, ինչպես նաև նորմերի ու կանոնների սերնդեսերունդ փոխանցման համար, չնայած այս ենթադրությունները պահանջում են էմպիրիկ վերլուծություններ՝ բացահայտելու համար, թե ինչպես է սա տեղի ունենում և որ բնագավառներում:

Մեդիատիկացիայի և պոստմոդեռնիզմի առավել ռադիկալ կապը բացահայտվում է Ժան Բոդրիյարի [7] աշխատանքներում, որը մեդիա-մշակույթի սիմվոլները կամ նշանները (իմիջ, ձայն, գովազդ) ընկալում է՝ ձևավորելու համար սիմուլյակր՝ իրականության համանմանություն, որը ոչ միայն առավել իրական է թվում, քան ֆիզիկական և սոցիալական իրականությունը, այլ նաև փոխարինում է վերջիններին: Այն նման է աշխարհի քարտեզին, որն այնքան վառ է դարձել, այնքան մանրամասն ու ընդգրկուն, որ ավելի ռեալ է թվում, քան այն աշխարհը, որն այդ քարտեզը ներկայացնում է: Բոդրիյարի տերմինաբանությամբ՝ մեդիան ձևավորում է հիպերռեալություն: Մեդիան առաջնորդվում է սեմիոտիկ տրամաբանու-

թյամբ, և նրանց կենտրոնական ազդեցությունն այն է, որ վերջիններս բոլոր տեսակի հաղորդակցություններն ու դիսկուրսները ներկայացնում են մեկ դոմինանտ կողմով. «Այն, ինչ մեղիացված է, մեզ չի հասնում օրվա մամուլից, հեռախոսից կամ ռադիոյից, դա այն է, ինչ մեկնաբանվում է նշանային համակարգով, ձևակերպված է մոդելով և կառավարվում է «կողմով» [7, ք. 175]: Սիմուլյակրների տեսությունը Բոդրիյարին բերում է այն եզրահանգման, որ մեղիայի սիմվոլիկ աշխարհը փոխարինել է իրական աշխարհին: Հեղինակն անգամ պնդում է, որ 1990-1991թթ. Սառը պատերազմը տեղի չի ունեցել, այն ավելի շատ մեղիա-սիմուլյակրի ֆիկցիա է եղել: Բոդրիյարի խոսքերով, դա տեղեկատվության դիմակահանդես է. բրենդավորված դեմքերը հանգեցրել են դժբախտության անհասկանալի կերպարի անբարոյականացմանը: Չկան կերպարներ կովի դաշտից, փոխարենը առկա են դիմակների կերպարներ, կույր կամ պարտված դեմքերի կերպարներ, կեղծիքի կերպարներ [8, ք. 40]: Ժ.Բոդրիյարի տեսությունը չի հերքում մեղիայից դուրս ֆիզիկական և սոցիալական իրականությունների գոյությունը, անգամ եթե նրա ձևակերպումները նման ընկալում են ձևավորում: Հեղինակի տեսակետը հետևյալն է. մեղիայի կողմից իրականության արտացոլումը ստանձնել է այնպիսի դոմինանտություն մեր հասարակությունում, որ իրականության մեր ընկալումները, կառուցումները և վարքը սկիզբ են առնում մեղիացված ներկայացուցչություններից և կառավարվում են մեղիայի կողմից այն աստիճանի, որ այնպիսի երևույթը, ինչպիսին պատերազմն է, այլևս այն չէ, ինչ երբևէ նշանակում էր: Հետևաբար, մեղիայի կողմից լրամշակված պատերազմը պատերազմ չէ այն իմաստով, որը մենք գիտենք, քանի որ պատերազմի մասին մեր պատկերացումները կառավարվում են մեղիայի կողմից մեզ ներկայացվող կերպարների և սիմվոլների միջոցով:

Դիտարկենք նաև Նորբերտ Էլիասի Քաղաքակրթության տեսությունը: Էլիասը նպատակ ուներ ցույց տալ հասարակությունը և մշակույթը որպես շարունակական և հավերժ գործընթաց, որը նա անվանում էր քաղաքակրթության գործընթաց: Նրա կոնցեպտուալ գաղափարն էր հաղթահարել անհատի և հասարակության դուալիզմը, ինչն արմատացած էր արևմտյան մտածողությունում: Հետևապես, նա անդրադառնում է երկու առանցքային հայեցակարգի.

1. Ֆիզուրացիաների հայեցակարգ, որում մարդիկ ապրում և գործում են փոխկախվածության հիմքով: Այսպիսի ֆիզուրացիաներ են ընտանիքը կամ հասարակությունն ամբողջությամբ, ինչպես նաև նավի վրայի ուղևորների խումբը: Ֆիզուրացիան կարող է տևել որոշ ժամանակ կամ գոյություն ունենալ կարճատև: Յուրաքանչյուր դեպքում ֆիզուրացիան կախված է իր համատեքստից (եթե նավը խորտակվի, սա կազդի ուղևորների ֆիզուրացիայի վրա համապատասխան հարթությունում):

2. Անձի ձևավորման կամ հաբիտուսի հայեցակարգ, որը նկարագրում է անհատին որպես ֆիզուրացիայի անդամ, որը պահանջում և ձևավորում է յուրահատուկ վարքագիծ և հատուկ նորմերի կատարում իր անդամների կողմից: Որպես օրինակ Ն.Էլիասը դիտարկում է հասարակությունը որպես պար, ինչը հստակ ցույց է տալիս ֆիզուրացիայի գոյությունը միայն իր անդամների գործունեության շնորհիվ: Մակայն ֆիզուրացիան ունի նաև իր սեփական կանոնները և իրականությունը, և որպես նրա անդամներ հանդես են գալիս պարողները [6, p. 35-36]:

Ներկայում Ն.Էլիասի երկու հայեցակարգերը՝ ֆիզուրացիան և հաբիտուսը, ինչ-որ իմաստով միևնույն մետաղադրամի երկու կողմերն են, քանի որ հաբիտուսը ձևավորվում է ֆիզուրացիային անդամակցելու արդյունքում, իսկ ֆիզուրացիաներն աշխատում են, քանի որ մարդիկ փոխազդում են և իրենց պահում են ադեկվատ ձևով:

Էմպիրիկ դիտանկյունից Էլիասը վերլուծում է նորմերի, կանոնների և վարքի ձևերի, օրենքների և սովորույթների, ինչպես նաև հնարավորության դեպքում նրանց ռեալ վարքագծի էվոլյուցիան: Օրինակ, սովորել ուտել սեփական ափսեից՝ օգտագործելով դանակ և պատառաքաղ՝ ընդհանուր ափսեից ձեռքերով ուտելու փոխարեն. սրանք վարքի ձևեր են, որոնք ընդհանուր զարգացումների արտացոլում են: Ոչ միայն օրենքներն են անհրաժեշտ հաջողության համար, այլև ինքնասոցիալականացման բոլոր ձևերը, որի միջոցով մարդիկ սովորում են, թե ինչն է նորմալ, և որ նորմալ չլինելը կարող է լինել զգվելի և այլն: Այս նորմերը սկզբում զարգացել են երկրի արքունիքներում, իսկ հետո տարածվել են սովորական մարդկանց շրջանում: Հետևապես, կարելի է ասել, որ այս կանոնների ադապտացումը միախառնում է իշխանությունն ու բռնությունը հասարակությունում բարձր ստատուս ձեռք բերելու ցանկության հետ՝ բարելավելով վարքագիծը [6, p. 36]:

Ըստ էության, Ն.Էլիասը գլխավորապես վերլուծում է մեդիան: Այս աշխատանքը ներառում է նրա տեսակետը, որ մարդիկ օգտագործում են այս մեդիան՝ հասկանալու համար այլ գաղափարները և սա անելու ընթացքում կարող են փոխել իրենց, այսինքն՝ փոփոխվող պայմանների ներքո սոցիալիզացիայի ակտիվ գործընթաց անցնել առավել հարմար կյանքի համար: Անշուշտ, այլ գործընթացները նույնպես համապատասխան են այս զարգացման համար, օրինակ՝ ինստիտուտների կողմից արժեքների և նորմերի փոփոխությունը, նոր օրենքների նախագծումը, ինչպես նաև հարևանների, ընկերների և այլ անձնաց հետ երես առ երես հաղորդակցությունները:

Հաղորդակցությունն այն առանցքն է, որից կարող ենք անդրադառնալ մեդիատիզացիային: Հաղորդակցային գործընթացում անհատականության ձևավորումը դառնում է տիպական և փոփոխվում է հասարակության անհրաժեշտություններին համապատասխան: Հասարակության այս անհրաժեշտություններն իրականացվում են փոխկախված ֆիզուրացիաներում, որոնց մասը մենք ստիպված ենք կազմել, որպեսզի կազմակերպենք մեր կյանքը (բարիքներ արտադրելու, բոնությունից ապաստան ապահովելու համար) տնտեսապես, քաղաքականապես, մշակութայնորեն և սոցիալապես: Ինչպես արդեն նշվել է, այսօրվա մեդիացված մշակույթների և հասարակությունների դարաշրջանում որևէ եզակի ֆիզուրացիա չի կարող հասկացվել՝ առանց հաշվի առնելու մեդիային առնչվող հաղորդակցային պրակտիկաները: Սրանից հետևում է, որ մեդիան այսօր անհատի հաբիտուսի և ֆիզուրացիաների միջև առկա առանցքն է. հեռուստատեսությունը, ռադիոն և գրքերը բացատրում են մեզ, թե ինչպես է աշխարհը գործում՝ ցույց տալով, թե ինչ են «իրականում» անում մարդիկ և ինչ ձևով: Նման կերպ բջջային հեռախոսներն իրենց սեփականատերերին հասանելի են դարձնում ամենուր և բոլոր ժամանակներում: Միևնույն ժամանակ, վերջիններս հեռախոսի սեփականատիրոջ համար հնարավոր են դարձնում նաև հեռանալը ցանկացած պահի՝ անկախ նրանից, թե որտեղ է սեփականատերը գտնվում: Հեռախոսները հնարավորություն են ընձեռում նաև անմիջապես կիսելու յուրաքանչյուր փորձ ընտրված ուրիշի հետ, որին տվյալ սեփականատերը զանգահարում է: Այս ամենը երաշխավորում է, որ նույնիսկ այսօրվա արագ փոփոխվող աշխարհում սոցիալական կապակցվածությունը կարող է գոյություն ունենալ առնվազն հատուկ խմբի շրջանակներում և հնարավոր է նոր կարճատև ձևերում:

Այն ժամանակ, երբ մեդիայի վերաբերյալ դասական սոցիոլոգիական մոտեցումները փորձում են մեկուսացնել (իզոլացնել) որոշ «փոփոխականներ» մեդիայի ազդեցության համար՝ անտեսելով, թե ինչպես է մեդիան ազդում մշակութային կյանքի վրա, ժամանակակից հետազոտողները փորձում են ցույց տալ, թե ինչպես է մեդիայի տրամաբանությունը ձևավորում գիտելիքի պաշար, որը գեներացվում և շրջանառվում է հասարակությունում: Ամերիկացի հետազոտողներ Դեյվիդ Ալթեյիդը և Ռոբերտ Մնոուն իրենց ուրույն ներդրումն են ունեցել մեդիատիզացիայի տեսության զարգացման գործընթացում՝ առաջարկելով մեդիայի միջնորդությամբ տրանսֆորմացված սոցիալական ինստիտուտների վերլուծությունը [9, p. 7]: Նրանք ներմուծեցին մեդիա-տրամաբանություն տերմինը՝ սահմանելու համար մեդիա-մշակույթի արտադրանքի սպեցիֆիկ շրջանակներն ընդհանուր առմամբ և լրատվության համար՝ մասնավորապես: Մեդիա-տրամաբանությունը բնութագրում է սոցիալական երևույթների ընկալման և վերարտադրության գործ-

ընթացք: Մա գործընթաց է, որի միջոցով մեղիան ներկայացնում և տրանսֆորմացնում է տեղեկատվությունը: Այն ներառում է տարատեսակ մեղիաները և նրանց կողմից օգտագործվող ձևաչափերը: Վերջինս ենթադրում է, թե ինչպես և ինչ չափանիշների համապատասխան է նյութն ընտրվել, կազմվել և ներկայացվել, ինչի վրա է կենտրոնացած ուշադրությունը և ինչպիսին է մեղիա-հաղորդակցության քերականությունը: Հեղինակները հիմնվում են սոցիոլոգիայի դասական Գ.Ջիմելի աշխատությունների վրա՝ բխեցնելով պնդումը, որ «ձևը գերակայում է բովանդակության նկատմամբ» [10, p. 206]: Հեղինակներն ուշադրություն են դարձնում սպորտի և կրոնի մեղիատիզացիային, սակայն առաջին հերթին կարևորում են քաղաքական հաղորդակցությունը: Քննադատելով այս մոտեցումը՝ Նիկ Կոուլդրին ենթադրում է, որ մեղիայի ազդեցությունները բավական տարասեռ են, որպեսզի հանգեցվեն մեկ մեղիա-տրամաբանության. «ասես թե բոլորը գործում են մեկ ուղղությամբ, միևնույն ուժգնությամբ, նմանատիպ մեխանիզմների միջնորդությամբ և միևնույն հավանականությունների համապատասխանությամբ» [11]:

Բացի նրանից, որ մեղիատիզացիայի հայեցակարգն օգտագործվում է տարբեր բնագավառներում՝ քաղաքականություն, սպառողական մշակույթ կամ գիտություն, մեղիայի ազդեցությունը նկարագրելու համար որոշ հետազոտողներ կապում են այն նաև արդիականության լայն տեսության հետ: Սոցիոլոգ Ջոն Թոմսոնը [12, 13] դիտարկում է մեղիայի զարգացումը որպես ժամանակակից հասարակության զարգացման անբաժանելի մաս: Թոմսոնը խոսում է «ժամանակակից մշակույթի մեղիատիզացիայի» մասին, որը ևս մեղիայի ազդեցության հետևանք է: Տպագիր սարքի առաջացումը 15-րդ դարի կեսերին տեխնոլոգիայի ծնունդ էր, որը հնարավոր դարձրեց հասարակությունում տեղեկատվության տարածումն աննախադեպ աստիճանով: Այս հեղափոխական տեխնոլոգիական իրադարձությունն ինստիտուցիոնալացրեց մասմեղիան որպես նշանակալի ուժ հասարակությունում և հնարավոր դարձրեց հաղորդակցությունն ու փոխազդեցությունը հեռավոր տարածություններում և մեծաքանակ մարդկանց շրջանում: Բացի այդ, այն նաև հնարավորություն տվեց պահպանել և կուտակել տեղեկատվությունը ժամանակի ընթացքում: Որպես հետևանք՝ մասմեղիան օգնում է ագրարային հասարակությունը տրանսֆորմացնել ֆեոդալական հասարակության և ստեղծել մոդեռն ինստիտուտներ, ինչպիսիք են պետությունը, հասարակական ոլորտը և գիտությունը: Մեղիայի այլ միջոցների՝ ռադիո, հեռուստատեսություն և ինտերնետ, հերթական զարգացումն էլ ավելի խորացրեց մոդեռնիզացիայի գործընթացը: Հաղորդակցությունը, որը մինչ այդ սահմանափակված էր անհատների երես առ երես ֆիզիկական հանդիպումներով, փոխարինվեց մեղիացված հաղորդակցությամբ, որտեղ ուղարկողի և ստացողի հարաբերությունները նշանակալիորեն փոփոխ-

ված են: Թոմսոնը տարբերակում է հաղորդակցության երեք տեսակ. երես առ երես փոխազդեցություն (որում խոսքային և ոչ խոսքային դրսևորումներն ակնհայտ են բոլոր ներկա կողմերի համար), մեդիացված քվազի-փոխազդեցություն (թերթերը, ռադիոն և հեռուստատեսությունն ապահովում են մեդիացված քվազի-փոխազդեցությունը, որն ուղղված է անհայտ մարդկանց խմբի) և մեդիացված փոխազդեցություն (հեռախոսի միջոցով տեղի ունեցող փոխազդեցություն կոնկրետ մարդկանց միջև, ովքեր կարող են փոխազդել հավասարը հավասարի) [13, 14]:

Թոմսոնը լուրջ կապ է տեսնում մեդիատիզացիայի, նրա մշակութային հետևանքների և ազգային ու համաշխարհային մակարդակների մեծության մեդիա-կազմակերպությունների առաջացման միջև: Այս կորպորացիաների սիմվոլիկ արտադրանքների արտադրությունը և սպառումը փոփոխել են հաղորդակցային հոսքերը հասարակությունում, ինչպես ինստիտուտների ներսում, այնպես էլ ինստիտուտների և անհատների միջև [13, p. 46]:

Գերմանացի սոցիոլոգներ Վինֆրիդ Շուլցը և Ֆրիդրիխ Կռոտցը նույնպես օգտագործում էին մեդիատիզացիայի հասկացությունը սոցիալական փոփոխություններում մեդիայի դերը լայն իմաստով սահմանելու համար: Մասնավորապես, Վինֆրիդ Շուլցն առանձնացնում է չորս տեսակի գործընթացներ, որոնց միջոցով մեդիան փոփոխում է մարդկային շփումը և փոխազդեցությունը: Դրանք են՝ ընդլայնում, փոխարինում, միավորում և հարմարեցում: Նախ և առաջ մեդիան ընդլայնում է հաղորդակցության հնարավորությունները ժամանակի և տարածության մեջ, երկրորդ՝ մեդիան փոխարինում է գործունեության այն ձևերը, որոնք նախկինում իրականացվում էին միայն երես առ երես (օրինակ, ինտերնետ-բանկինգը): Երրորդ՝ մեդիան նպաստում է սոցիալական ակտիվության տարբեր ձևերի միավորմանը (միջանձնային հաղորդակցությունը կոմբինացվում է միջնորդավորվածի հետ, և մեդիան թափանցում է առօրյա կյանք): Չորրորդ՝ տարբեր ոլորտների ակտորները ստիպված են ադապտացնել իրենց աշխատանքը և վարքը մեդիայի արժեքների, ձևաչափերի և ընթացակարգերի պահանջներին: Օրինակ, քաղաքական գործիչները սովորում են արտահայտվել լրագրողների հետ էքսպրոմտ փոխազդեցությունների ժամանակ [2, p. 87-101]:

Ֆրիդրիխ Կռոտցը դիտարկում է մեդիատիզացիան որպես մետագործընթաց, որը ձևավորում է արդիականությունը գլոբալիզացիայի, ինդիվիդուալիզացիայի և հատկապես կոմերցիալիզացիայի հետ համատեղ: Կռոտցը նշում է. «Մեդիատիզացիայի ներքո մենք նկատի ունենք պատմական տեղաշարժերը/փոփոխությունները, որոնք տեղի ունենին և ունենալու են մեդիայի (հաղորդակցության) փոփոխության արդյունքում, ինչպես նաև այդ փոփոխությունների հետևանքները» [14, p. 23]: Հեղինակը հստակեցնում է, որ վերջինս չի նշանակում տեխնոլո-

գիական դետերմինիզմ, քանի որ, չնայած այն հանգամանքին, որ մեդիան փոփոխում է մարդկային շփումը՝ առաջարկելով հաղորդակցային նոր հնարավորություններ մարդկանց, հասարակության և մշակույթի համար, այս պրոցեսը ևս համարվում է «ձեռակերտ»: Այսպիսով, Կոռուցի համար մեդիատիզացիան շարունակական գործընթաց է, որը վերափոխում է հարաբերությունները սոցիալական իրականության բոլոր մակարդակներում:

Դանիացի հետազոտող Սթիգ Հյարվարդը, հիմք ընդունելով Կոռուցի և Շուլցի մոտեցումները, առաջարկում է մեդիատիզացիայի սոցիոլոգիական տեսության սեփական տարբերակը, որն ունի առնվազն երկու տարբերակիչ առանձնահատկություն: Նախ՝ տվյալ տեսությունը կիրառում է ինստիտուցիոնալ հեռանկար մեդիայի, ինչպես նաև մշակույթի ու հասարակության հետ նրա հարաբերությունների դիտարկաման տեսանկյունից: Մեդիայի գործառույթներն այստեղ այն են, որպեսզի «ինտերֆեյս» լինեն սոցիալական ինստիտուտների ներսում և սոցիալական ինստիտուտների միջև տեղի ունեցող հարաբերությունների համար, կառուցակցեն ընդհանուր իրականություն և ստեղծեն հասարակական, քաղաքական բնագավառ, որի շրջանակներում յուրաքանչյուր ինստիտուտ կարող է պաշտպանել սեփական շահերը և ամրապնդել սեփական լեգիտիմությունը:

Երկրորդ՝ հեղինակի մոտեցման համաձայն, մեդիատիզացիան ունի վերսալ գործընթաց չէ, որը բնութագրական է բոլոր հասարակություններին: Մեդիատիզացիան զարգացում է, որն ուժգնացել է մասնավորապես 20-րդ դարի վերջին տարիներին՝ մոդեռն, բարձր արդյունաբերական և արևմտյան երկրներում, երբ մասմեդիան ձեռք էր բերել ինքնավար սոցիալական ինստիտուտի կարգավիճակ [3, p. 110]:

Ըստ Հյարվարդի՝ մեդիատիզացիան նորմատիվ հասկացություն չէ և կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Յու.Հաբերմասի մոտեցումից հետո տարածվել էր բացասական տենդենց, որ մեդիատիզացիան հանգեցնում է հանրային ոլորտի անկմանը կամ քաղաքացիական հասարակության փլուզմանը: Հյարվարդն այնքան էլ համաձայն չէր այս տեսանկյան, ինչպես նաև Ժան Բոդրիյարի պոստմոդեռնիստական կանխատեսումների հետ, որոնք պնդում էին մեդիա-իրականության անբաժանելի իշխանության և մնացյալ գոյաբանական տարբերությունների անկման մասին: Մեդիատիզացիայի դրական կամ բացասական ազդեցությունները չեն կարող որոշվել ընդհանուր բնութագրիչներով. սա կոնկրետ վերլուծական հարց է, որը պետք է դիտարկվի կոնկրետ սոցիալական համատեքստում, որտեղ գնահատվում է մեդիայի ազդեցությունն ինստիտուտների առմամբ:

Հեղինակը նշում է, որ մեդիատիզացիան չպետք է շփոթել մեդիացիայի լայն հայեցակարգի հետ: Մեդիացիան վերաբերում է մեդիայի միջոցով տեղի ունեցող




հաղորդակցությանը և կարող է ազդել ինչպես հաղորդագրության, այնպես էլ ուղարկողի և ստացողի միջև առկա հարաբերությունների վրա: Օրինակ, եթե քաղաքական գործիչը որոշում է օգտագործել բլոգը թերթի փոխարեն իր ընտրողների շրջանում հաղորդակցվելու համար, ընտրությունը կարող է դրական ազդել հաղորդակցության ձևի և բովանդակության վրա, մինչդեռ մեդիումի օգտագործումը, կլինի դա բլոգ, թե թերթ, նշանակալի ազդեցություն չի ունենա քաղաքականության՝ որպես սոցիալական ինստիտուտի վրա [3, p. 113]: Ի տարբերություն սրա՝ մեդիատիկացիան վերաբերում է ավելի երկարատև գործընթացներին, որի արդյունքում սոցիալական ու մշակութային ինստիտուտները, ինչպես նաև փոխազդեցության ձևերը փոխվում են մեդիայի ազդեցության աճի հետևանքով: Հարկ է նշել, որ որոշ գիտնականներ, օրինակ՝ Ալթեիդը և Մնոուն, օգտագործում են մեդիացիա տերմինը մեդիատիկացիայի իմաստով:

Մեդիատիկացիայի գործընթացի շրջանակներում Հյարվարդը տարբերակում է մեդիատիկացիայի ուղղակի (ուժեղ) և անուղղակի (թույլ) ձևերը: Ուղղակի մեդիատիկացիան վերաբերում է այն իրավիճակներին, երբ նախկինում չմիջնորդավորված գործունեությունը վերափոխվում է միջնորդավորվածի, այսինքն՝ գործունեությունն իրականացվում է մեդիայի հետ համագործակցության հենքով: Ուղղակի մեդիատիկացիայի պարզ օրինակը շախմատի հաջողակ տրանսֆորմացիան է շախմատի տախտակից համակարգչային խաղի: Նախկինում պահանջվում էր խաղացողների ֆիզիկական ներկայություն շախմատի տախտակի շուրջ, այժմ այն հնարավոր էր խաղալ համակարգչով կոնկրետ ծրագրի օգնությամբ: Մեծ մասամբ խաղը մնում է նույնը. օրենքները նույնն են, շախմատի տախտակն ունի նույն տեսքը և այլն: Սակայն համակարգչի օգտագործումը բացահայտում է բազմաթիվ նոր հնարավորություններ: Խաղացողները կարող են խաղալ համակարգչի դեմ մեկ այլ անձի փոխարեն, կարող են խաղալ հեռավոր հակառակորդների հետ ինտերնետի օգնությամբ, կարող են պահպանել և վերանայել նախկին խաղերը և այլն: Այս նոր հնարավորություններն աստիճանաբար ազդում են շախմատ խաղալու փորձի և այն մշակութային համատեքստի վրա, որում խաղը խաղում են: Ուղղակի մեդիատիկացիայի առավել բարդ օրինակը օն-լայն բանկային ծառայությունն է՝ ինտերնետի միջոցով: Բանկային ծառայությունների բոլոր տեսակները (վճարումներ, վարկեր, փոխարժեքներ, ֆինանսական վերլուծություն) կարող են կատարվել ինտերնետին միացված համակարգչի միջոցով, և մեդիումը զգալիորեն ընդլայնել է բանկերին և նրանց հաճախորդներին հասանելի տարբերակները, մինևույն ժամանակ երկու կողմերի վարքը փոփոխվել է:

Անուղղակի մեդիատիկացիան տեղի ունի, երբ գործունեության կոնկրետ տեսակն իր ձևի, բովանդակության առումով ավելի շատ է ազդեցություն կրում

մեդիայի սիմվոլների և մեխանիզմների կողմից: Սրա պարզ օրինակը յուրահատուկ մշակութային համատեքստի ստեղծումն է *Burger King* կամ *McDonald's* ռեստորանային ցանցի շուրջ (որտեղ երեխաները հավաքում են հոլիվուդյան մուլտֆիլմերի հերոս-կերպարներին, առկա է ռեստորան այցելելու գրավչությունը): Անուղղակի մեդիատիզացիայի առավել բարդ օրինակը ինտերտեքստային դիսկուրսի զարգացումն է մեդիայի և հասարակության այլ ինստիտուտների միջև: Օրինակ՝ դանիացիների գիտելիքը ԱՄՆ-ի վերաբերյալ արդյունք է տվյալ երկրի վերաբերյալ մեդիայի ներկայացրած նյութերի (փաստեր և հորինվածքներ), և որպես հետևանք՝ Դանիայի քաղաքական քննարկումները ԱՄՆ-ի վերաբերյալ միահյուսված են ամերիկյան մշակույթի, բարոյականության և պատմության վերաբերյալ մեդիայի պատկերումներին [3, 8, p. 114]:

Մեդիատիզացիայի ուղղակի և անուղղակի ձևերը հաճախ գործառուում են համատեղ, ինչի արդյունքում ոչ միշտ է հեշտ տարբերակել նրանց:



Հյարվարդն ընդգծում է, որ շրջապատող մեդիա-միջավայրն ընդլայնվում և զարգանում է տարբեր ուղղություններով, այնպես որ ոչ ոք չի կարող ասել, թե մեդիան շարժում է հասարակությունը այս կամ այն կոնկրետ ուղղությամբ: Մասնավորապես, Հյարվարդը խոսում է նոր սոցիալական աշխարհագրության մասին, որը ձևավորվում է մեդիատիզացիայի ազդեցությամբ: Տեղի է ունենում սոցիալական ինստիտուտների վիրտուալիզացիա, որը բերում է մշակութային փորձի և սոցիալական փոխազդեցության ապատեղայնացմանը: Առանձնացնե-

լով վերլուծության երկու առանցքները՝ համասեռացում/տարբերակում և կենտրոնախույս/կենտրոնամետ, նա առանձնացնում է մեդիատիզացիայի գործընթացի չորս հիմնական վեկտորները. անհատականացում, տեղայնացում, ազգայնացում և գլոբալացում՝ ցույց տալով մեդիայի դերը յուրաքանչյուր տենդենցի զարգացման մեջ [3, p. 131]:

Այսպիսով, վերոնշյալ մոտեցումներում մեդիատիզացիայի հայեցակարգը շեշտադրում է ՋԼՄ-ի և հասարակության միջև փոխազդեցության ասպեկտները: Որոշ դեպքերում (Վալիվերոնեն 2001) մեդիատիզացիան օգտագործվում է՝ սահմանելու համար մեդիայի պարբերական աճող ազդեցությունը ժամանակակից հասարակությունում, այլ դեպքերում նպատակն է զարգացնել պատշաճ տեսություն այն միջոցների մասին, որով մեդիան առնչվում է քաղաքականությանը (Ասպ, 1986, 1990): Եվս մեկ հանգամանք է այն, թե որ մակարդակում կամ որ ոլորտներում է հայեցակարգը կիրառվում: Ումանք օգտագործում են մեդիատիզացիան՝ նկարագրելու համար տվյալ ոլորտի (քաղաքականություն, գիտություն կամ սպառողական մշակույթ) զարգացումները, մինչդեռ մյուսներն օգտագործում են այն որպես հասարակությունում ձևավորված նոր իրավիճակի հիմնական բնութագրիչ՝ լինի դա արդիականության (Թոմսոն, 1995), թե հետարդիականության (Բողրիյար, 1981) շրջանակներում: Ինչպես նշում է Հյարվարդը, հասարակության մեդիատիզացիան տեղի է ունենում ինչպես մակրո-, այնպես էլ միկրոմակարդակներում: Այն ժամանակ, երբ միկրոսոցիալական մակարդակում մեդիատիզացիան արտացոլվում է միջանձնային փոխազդեցությունների վրա կառուցվածքային ազդեցությամբ, մակրոմակարդակում վերջինիս բնորոշ են ազդեցությունները, թե ինչպես են ինստիտուտները փոխհարաբերվում մեդիայի միջնորդության հանգամանքներում: Հյարվարդը տարբերակում է երեք ֆունկցիա, որոնք մեդիան իրականացնում է: Առաջին՝ մեդիան կազմում է ինտերֆեյս ինստիտուտների ներքին և ինստիտուտների միջև հարաբերություններում. հետուստատեսային թողարկումները քաղաքականությունը բերում են մարդկանց սենյակներ, գովազդը կարևոր պլատֆորմ է մասնավոր կազմակերպությունների և իր պոտենցիալ սպառողների միջև հաղորդակցությունների համար: Երկրորդ՝ մեդիան փորձի փոխանակման ոլորտ է, ինչը նշանակում է, որ մեդիան շարունակական կերպով ներկայացնում և մեկնաբանում է այն, թե ինչպես պետք է իրերը լինեն՝ դրանով իսկ նպաստելով ինքնության և համայնքի զգացողության ձևավորմանը: Երրորդ՝ մեդիան օգնում է ստեղծել քաղաքականության հանրային ոլորտ, որի ներքո ինստիտուտները կարող են պաշտպանել իրենց սեփական շահերը և հաստատել իրենց լեգիտիմությունը [3, p. 125-126]:

Այլ կերպ ասած՝ մակրոմակարդակում մեդիայի իրականացրած գործառույթները հետևյալն են. հանդիսանալ որպես կապ ինստիտուտների միջև, որպես մեկնաբանության ֆրեյմ/շրջանակ հասարակության հասկացման համար և որպես ասպարեզ, որում հասարակության անդամները կարող են քննարկել և որոշել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Որպես այս երեք ֆունկցիայի հետևանք մեդիա-տրամաբանությունը, այսինքն՝ մեդիայի ինստիտուցիոնալ, տեխնոլոգիական և արտահայտչական բնութագրիչները, ավելի ու ավելի շատ են ազդեցություն ունենում հասարակության վրա: Հետևաբար, մեդիատիզացիայի հայեցակարգն ավելին է, քան պարզապես այն երևույթների պիտակ հանդիսանալը, որոնք վկայում են մեդիայի ազդեցության մեծացման մասին:

Այսպիսով, ժամանակակից տեղեկատվական իրողությունում մարդիկ կառուցակցում են իրենց սոցիալ-մշակութային իրականությունը կոմունիկատիվ գործողության միջոցով, որն իրականացվում է մեդիա-միջավայրի միջնորդությամբ: Միջավայր, որտեղ առօրյա սոցիալական փոխազդեցությունը միաօրյա-վել է օն-լայն սոցիալական փոխազդեցությանը, իսկ հաղորդակցությունը փոխարինվել է մեդիացված հաղորդակցությամբ: Հետևապես, կարելի է ենթադրել, որ մարդկության պատմության ընթացքում մեդիան առավել արդիական է դարձել իրականության սոցիալական կառուցակցման համար, քանի որ տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաները միջնորդավորում են ժամանակակից հասարակության բոլոր բնագավառները: Մեդիա-միջավայրը և մեդիացված հաղորդակցությունները ժամանակակից իրականության անբաժանելի մասն են կազմում, ինչի արդյունքում սոցիալական և մշակութային իրողությունը, ինչպես նաև յուրաքանչյուր սոցիալական և մշակութային երևույթ կախվածության մեջ են ընկնում մեդիայից: Ինչպես այս կապակցությամբ նշում է Լաշը (*Lash 2005*), «գոյություն ունի երկու տիպի արդիականություն, և երկրորդ արդիականությունը կամ հետարդիականությունն ընդհանրացված մեդիատիզացիայի դրսևորում է ներկայացնում: Սա արդիականությունն է, որում մեդիան տարածվում է հիվանդության նման»:

Մեդիատիզացիան՝ որպես ժամանակակից իրականության կարևորագույն հասկացություն, չի կարող սահմանափակվել բանալ միջնորդության գործառույթով: Այն մետագործընթաց է, որում հասարակությունն առավելագույն աստիճանով ներկայացվում է կամ դառնում է կախյալ մեդիայից և նրա տրամաբանությունից: Այս գործընթացը բնութագրվում է երկակիությամբ այն իմաստով, որ մեդիան ինտեգրվել է այլ սոցիալական ինստիտուտների գործունեությանը, այն ժամանակ, երբ նրանք ձեռք են բերել սոցիալական ինստիտուտի կարգավիճակ: Որպես հետևանք՝ սոցիալական փոխազդեցությունն ինստիտուտների ներսում,

ինստիտուտների միջև և ամբողջ հասարակությունում տեղի է ունենում մեդիայի միջոցով, ինչի արդյունքում երկարատև հեռանկարում մեդիան դառնում է առօրյա իրականության, հասարակության և մշակույթի կառուցակցման առանցքը: Մեդիան այլևս հաղորդագրության փոխանցման պարզ միջոց չէ, այլ ամբողջական միջավայր, որում արտադրվում և հեռարձակվում են մշակութային կողեր: Այն հաղորդակցման միջոցից փոխակերպվել է հաղորդակցային միջավայրի՝ դրանով նշանավորելով մեդիա-մշակույթի յուրահատուկ կոմունիկատիվ տարածության ձևավորումը, որտեղ կերպարային սիմվոլային հաղորդագրություններն անհատի, սոցիալական ինստիտուտների, մշակույթի և ամբողջ հասարակության ինքնորոշման առանցքն են հանդիսանում:

*Մայիս, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Krotz, Friedrich* (2007) *Mediatisierung: Fallstudien zum Wandel von Kommunikation*, Wiesbaden: VS Verlag für Socialwissenschaften.
2. *Schulz, Winfried* (2004) 'Reconstructing Mediatization as an Analytical Concept', *European Journal of Communication* 19(1): 87-101.
3. *Hjarvard Stig*, *The Mediatization of Society. A Theory of the Media as Agents of Social and Cultural Change*, *Nordicom Review* 29 (2008) 2, pp. 105-134.
4. *Habermas Jürgen* (1987), *The Theory of Communicative Action*, 2 vol., Cambridge.
5. *Bourdieu, Pierre* (1993) *The Field of Cultural Production: Essays on Art and Literature*, Cambridge: Polity Press.
6. *Knut Lundby* (2009), *Mediatization*, New York.
7. *Baudrillard, Jean* (1994) *Simulacra and Simulations*. Ann Arbor: University of Michigan Press.
8. *Baudrillard, Jean* (1995) *The Gulf War Did Not Take Place*. Bloomington: Indiana University Press.
9. *Altheide, David L. & Snow, Robert P.* (1979) *Media Logic*, Beverly Hills, CA: Sage.
10. *Altheide, David L. & Snow, Robert P.* (1988) 'Toward a Theory of Mediation', in J.A. Anderson (red.) *Communication Yearbook* 11: 194-223.
11. *Couldry N.*, *Mediatization or mediation*, p. 378.
12. *Thompson, John B* (1990) *Ideology and Modern Culture*, Cambridge: Polity Press.
13. *Thompson, John B* (1995) *The Media and Modernity: A Social Theory of the Media*, Cambridge: Polity Press.
14. *Krotz F.*, *Media connectivity: Concepts, conditions, and consequences / Network, Connectivity and Flow: Key concepts for Media and Cultural Studies*. New York: Hampton Press, 2008, p. 23.

**«ՄԵԴԻԱՏԻԶԱՑԻԱՅԻ» ՄԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՏԵՂԵԿՍԿՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

*Լիլիթ Շաքարյան*

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվում է հասարակության և մշակույթի վրա ՁԼՄ-ի ունեցած ազդեցության տեսությունը՝ փորձելով պատասխանել այն հարցին, թե մշակութային և հասարակական ինստիտուտներն ինչպես են փոխգործում ՁԼՄ-ի միջամտության պայմաններում: Այս համատեքստում նախ վերլուծության են ենթարկվել սոցիոլոգիական տեսությունները, այնուհետև՝ ընդունելով մեդիատիզացիան որպես ՁԼՄ-ի, մշակույթի և հասարակության միջև փոխգործողության ըմբռնման առանցքային դրույթ և տեսական հիմք, բացահայտվել են սոցիալական նոր պայմանները:

Ավանդաբար համարվել է, որ զանգվածային լրատվամիջոցները տարանջատված են հասարակությունից և մշակույթից, և արդյունքում՝ հետազոտողներն ավելի շատ հակված են եղել դեպի անհատների և հասարակական ինստիտուտների վրա միջնորդավորված առանձին հաղորդագրությունների ուսումնասիրմանը (օրինակ՝ գովազդի ազդեցությունը սպառողների նախասիրությունների ձևավորման վրա, կամ քաղաքական կարգախոսների ներգործությունն ընտրողների վարքագծի վրա): Մակայն արդի հասարակությունն այն աստիճան է հագեցված ՁԼՄ-ով, որ վերջիններս այլևս չեն կարող ընկալվել մշակութային և հասարակական ինստիտուտներից զատ: Այս հանգամանքներում առավել կարևորվում է այն հարցը, թե ի պատասխան ՁԼՄ-ի համատարած ներկայության, ինչ փոփոխությունների են ենթարկվել հասարակական ինստիտուտների և մշակութային գործընթացների բնույթը, կառուցվածքը և գործառույթները:

**ОСОБЕННОСТИ ОПРЕДЕЛЕНИЯ И ПРИМЕНЕНИЯ  
«МЕДИАТИЗАЦИИ» В КОНТЕКСТЕ АНАЛИЗА  
СОВРЕМЕННОГО ИНФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА**

*Лилит Шакарян*

Резюме

В статье представлена теория влияния СМИ на общество и культуру. Предпринимается попытка ответить на вопрос, как взаимодействуют культурные и общественные институты в условиях вмешательства СМИ. В этом контексте сначала были проанализированы социологические теории, затем медиатизация была принята в качестве ключевого положения и теоретической основы для понимания взаимодействия между СМИ, культурой и обществом, были выявлены новые социальные условия.

Традиционно считалось, что СМИ отделены от общества и культуры, в результате исследования больше были направлены на изучение отдельных опосредованных сообщений индивидов и общественных институтов (например, влияние рекламы на предпочтения потребителей или влияние политических лозунгов на поведение избирателей). Но современное общество настолько насыщено СМИ, что последние уже не могут восприниматься отдельно от культурных и общественных институтов. В этих условиях особую важность приобретает вопрос о том, как изменился характер, структура и функции общественных институтов в связи с повсеместным присутствием СМИ.

## THE ASPECTS OF THE DEFINITION AND APPLICATION OF "MEDIATIZATION" CONCEPT WITHIN THE FRAMEWORK OF MODERN INFORMATION SOCIETY

*Lilit Shakaryan*

### Resume

The article presents a theory of the influence media exert on a society and culture trying to answer the question how cultural and social institutions interact within the presence of intervening media. In this context, firstly, sociological theories were analyzed, and secondly, new social conditions were uncovered using mediatization as a key concept and theoretical basis for understanding interaction between the media, culture and society.

Traditionally, media have been conceived of as separate from society and culture, therefore researchers tend to study the effects certain mediated messages had on individuals and social institutions (e.g., the impact of advertising on consumer preference formation process, or political slogans effect on the people's voting behavior). However, contemporary society is permeated by the media to an extent that the media can no longer be interpreted as separate from cultural and social institutions. Under these circumstances, it becomes a more important issue how social institutions and cultural processes have changed their nature, structure and functions in response to the media's ubiquitous existence.

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### *Մասուն Սարիբեկյան՝*

*Բանալի բառեր՝* աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիա, մարտահրավեր, ռիսկ, վտանգ, սպառնալիք, էքսպանսիա, պետության աշխարհաքաղաքական անվտանգություն, պաշտպանվածություն, ապահովվածություն, վնասի համակշռում:

Պետության աշխարհաքաղաքական անվտանգության նկատմամբ ուշադրության կարևորությունը պայմանավորված է հատկապես հետևյալ իրողություններով.

- աշխարհաքաղաքական անվտանգությունը պետության աշխարհաքաղաքական կարևոր բնութագրիչներից է, պետության աշխարհաքաղաքական անվտանգությունը՝ կոնկրետ աշխարհաքաղաքական կարևոր հասկացություններից, իսկ այս բնութագրիչի հետազոտության մեթոդաբանության մշակումը՝ աշխարհաքաղաքականության արդի կարևոր խնդիրներից [1],
- հետսառըպատերազմյան բարդ աշխարհում, որտեղ ավելացել են աշխարհաքաղաքական ակտորները, վտանգներն ու սպառնալիքները, յուրաքանչյուր պետության համար արդիական է իր աշխարհաքաղաքական անվտանգության ապահովման գիտական հիմքի մշակումը,
- պետության աշխարհաքաղաքական անվտանգության տեսական-մեթոդաբանական թերմշակության հաղթահարումը հնարավորություններ կստեղծի աշխարհաքաղաքական տարածության ենթակարգային տարբեր մակարդակներին և աշխարհաքաղաքական այլ ակտորներին վերաբերող ինչպես տեսական-մեթոդաբանական, այնպես էլ գործնական խնդիրների լուծման համար:

Պետության աշխարհաքաղաքական անվտանգություն հասկացությունն աշխարհաքաղաքական գրականության մեջ հազվադեպ է օգտագործվում, և մինչ այժմ հստակեցված չէ դրա բովանդակությունը, մինչդեռ կենսագործունեության

---

<sup>1</sup> ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ:



ուլորտների անվտանգությունը համալիր ուսումնասիրելու հայտ ներկայացրած սելյուրիտոլոգիան՝ անվտանգությունագիտությունը (գիտություն կենսագործունեության անվտանգության մասին) անվտանգության հիմնական ոլորտների շարքում առաջինը ներկայացնում է հենց աշխարհաքաղաքականը [2, с. 21]: Ժամանակակից աշխարհաքաղաքականության դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում հիմնական հասկացությունների մեջ թեև ոչ հաճախ, սակայն «անվտանգություն» հասկացության համակարգի որևէ բաղադրիչ, այնուամենայնիվ, ներառվում է [3-7]: Ավելի հաճախ շրջանառվում է «ազգային անվտանգությունը», այնուհետև՝ «պետության անվտանգությունը»:

Գիտական գրականության մեջ առկա են «անվտանգություն» հասկացության տարբեր սահմանումներ: Մասնավորապես, Վ.Ի. Յարոչկինն այս հասկացությունը սահմանում է որպես արտաքին և ներքին սպառնալիքներից սահմանադրական, օրենսդրական և գործնական միջոցներով անձի, հասարակության և պետության կենսական կարևոր շահերի երաշխավորված պաշտպանվածություն ու ապահովվածություն [2, с. 24]՝ համարելով, որ «անվտանգության» ամենատարածված սահմանումը («անվտանգությունը վտանգներից և սպառնալիքներից հասարակության, անձի և պետության պաշտպանվածությունն է») նեղացնում է անվտանգության իմաստը. «պաշտպանվածություն» տերմինով պաշտպանության գործողությունը փաստացի անջատում է հարձակումից: Համաձայն նրա, պաշտպանել (*защищать*) նշանակում է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան պաշտպանել (*оборонять*), ծածկել, փակել: Այդ դեպքում պակասեցվում և կորչում են անվտանգության կարևորագույն այլ հատկություններն ու գործառույթները՝ անվտանգության ապահովման կանխիչ գործողությունները. վտանգների և սպառնալիքների նախագգուշացումը, պակասեցումը, թուլացումը և վերացումը [2, с. 27]: Այդուհանդերձ, կենսագործունեության ոլորտների հետազոտությունների տեսական-մեթոդաբանական հիմքերի մշակման և ընդհանրապես անվտանգությունագիտության կայացման գործում էական ներդրում ունեցած այս մասնագետն անվտանգության առանձին տեսակները (աշխարհաքաղաքական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, ժողովրդագրական) սահմանելիս անտեսում է «ապահովվածությունը»՝ բավարարվելով «պաշտպանվածություն» հասկացությամբ [2, с. 63, 64, 66, 72, 73]:

«Անվտանգություն» հասկացության տարբեր իմաստները ներկայացնող «Геополитика: Популярная энциклопедия»-ն այս հասկացությունը սահմանում է որպես՝ 1. մարտահրավերներից, ռիսկերից, վտանգներից և սպառնալիքներից պաշտպանվածություն, 2. օբյեկտի կայուն գոյության (զարգացման) վիճակ, որի դեպքում նրա կենսագործունեության (գործառության) ինչ-որ պարամետրերի

(բնութագրիչների) անցանկալի փոփոխության հավանականությունը մեծ չէ, Յ. վտանգ հրահրող գործոնները սահմանափակող գործողություններին ուղղված ծախսերից կախված վտանգի ընդունելի մակարդակ (սպառնալիքներից պաշտպանվածության ընդունելի աստիճան) [8, c. 39]: Այստեղ փորձ է արվում ներկայացնել օբյեկտի այս վիճակի հիմնական ընկալումներն ու բնութագրիչները: Թեև չի օգտագործվում «ապահովվածություն» հասկացությունը (ինչպես այս հասկացության ամենատարածված սահմանման մեջ), սակայն «վտանգ հրահրող գործոնները սահմանափակող գործողություններ» և «օբյեկտի կայուն գոյության (զարգացման) վիճակ» հասկացությունների միջոցով, անուամենայնիվ, ապահովվածությունը կարևորվում է: Որպես անվտանգության բնութագիր հատուկ ուշադրության է արժանի վտանգ հրահրող գործոնները սահմանափակող գործողություններին ուղղված ծախսերի սահմանափակությամբ պայմանավորված վտանգի ընդունելի մակարդակը (սպառնալիքներից պաշտպանվածության ընդունելի աստիճանը), որն այս հասկացության սահմանումներում (բնութագրումներում) քիչ հանդիպողներից է:

«Անվտանգություն» հասկացության՝ «Պաշտպանական անվտանգության տերմինների բացատրական բառարանի» ուշադրության արժանի սահմանումն այս հասկացությունը սահմանում է որպես հնարավոր վնասից պաշտպանվածության վիճակ, վտանգավոր ներգործությունները զսպելու կամ հետ մղելու, ինչպես նաև հասցված վնասն արագ կերպով համակշռելու կարողություն, համակարգի կողմից կայունության, հաստատունության և ինքնազարգացման հնարավորության պահպանում [9, էջ 66]: Այստեղ թեև նույնպես չի օգտագործվում «ապահովվածություն» հասկացությունը, սակայն պաշտպանվածության հետ շեշտադրվում է ապահովվածության կարևոր բնութագրիչ զսպելու, ինչպես նաև ապահովվածություն ենթադրող կայունության, հաստատունության և ինքնազարգացման հնարավորության պահպանման կարևորությունը: Սա «անվտանգություն» հասկացության սակավաթիվ այն սահմանումներից է, որտեղ ներկայացված է հասցված վնասն արագ համակշռելու կարևորությունը:

Անվտանգության օբյեկտների համակարգում առանձնահատուկ կարևորություն ունի պետությունը, որը նոոսֆերայի, տարածաշրջանի, հասարակության ու անձի հետ ներկայացվում է որպես անվտանգության օբյեկտների ենթակարգային համակարգի բաղադրիչ, նոոսֆերայից և տարածաշրջանից հետո՝ անվտանգության օբյեկտների ենթակարգային երրորդ մակարդակ [2, c. 20]:

Վ.Բ. Յարոչկինն աշխարհաքաղաքականը համարելով անվտանգության կարևոր ոլորտ, իսկ «աշխարհաքաղաքական անվտանգությունը»՝ անվտանգության կարևոր տեսակ, վերջինս՝ անվտանգության քաղաքական, տնտեսական,

սոցիալական, ժողովրդագրական, պարենային, մշակութաբանական, էներգատեղեկատվական, ռազմական, տեղեկատվական, գիտատեխնիկական և բնապահպանական տեսակների հետ ներկայացնում է որպես անվտանգության հիմնական տեսակներ, իսկ սրանց հետագոտությունները՝ անվտանգության հետագոտությունների հիմնական ուղղություններ [2, c. 21-22]:

Կարևոր է արձանագրել, որ բացի առավել ուսումնասիրված աշխարհաքաղաքական ակտորներից՝ պետություններից, աշխարհաքաղաքական անվտանգության օբյեկտներ կարող են լինել ամբողջ աշխարհը, աշխարհամասերը, աշխարհառազմավարական մարզերը, աշխարհաքաղաքական տարածաշրջանները, պետության տարածաշրջանները, աշխարհաքաղաքական այլ ակտորներ (էթնոսներ, քաղաքակրթություններ, միջազգային կազմակերպություններ և այլն): Պետություններից որպես աշխարհաքաղաքական անվտանգության օբյեկտներ կարևոր են ինչպես բարձր կարգի աշխարհաքաղաքական ուժերը (ԱՄՆ, Ռուսաստան, ԵՄ, Ճապոնիա, Չինաստան, Թուրքիա, Իրան, Իսրայել և այլն), այնպես էլ ցածր (նաև ՀՀ-ն): Եթե բարձր կարգի ուժերի աշխարհաքաղաքական անվտանգության կարևորությունը պայմանավորված է հատկապես աշխարհում և մակրոտարածաշրջաններում ուժերի հավասարակշռության պահպանման կարևորությամբ, ապա ցածր կարգի ուժերի աշխարհաքաղաքական անվտանգության կարևորությունը պայմանավորված է դրանց խոցելիության ավելի բարձր մակարդակով, դա փոքրացնելու կարևորությամբ:

«Անվտանգության» և հասկացության այս համակարգի բաղադրիչների սահմանումներում (բնութագրումներում) լարվածության էսկալացիայի դրսևորումներից առավել հաճախ հանդիպում է սպառնալիքը, դրանից քիչ՝ վտանգը, էլ ավելի քիչ՝ ռիսկն ու մարտահրավերը: Հիմնականում բավարարվում են միայն «սպառնալիք» հասկացությունն օգտագործելով կամ «վտանգ» ու «սպառնալիք» համատեղ օգտագործելով: Մեր կարծիքով, «պետության աշխարհաքաղաքական անվտանգության» բովանդակության հստակեցման համար կարևոր է «աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիա» հասկացությունը, որը ներառում է աշխարհաքաղաքական մարտահրավերը, ռիսկը, վտանգն ու սպառնալիքը: Հիմք ընդունելով հասկացության սահմանման պահանջները [10, 11, 12], «լարվածության էսկալացիա», «մարտահրավեր», «ռիսկ», «վտանգ», «սպառնալիք» հասկացությունների սահմանումներն ու բնութագրումները [8, c. 619-620, 107, 499, 364, 573, 2, c. 42, 9, էջ 305], ինչպես նաև «աշխարհաքաղաքականի» բովանդակությունը [13]՝ փորձենք սահմանել «աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիա» և հասկացության այս համակարգի հիմնական բաղադրիչները:

*Աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիան* աշխարհաքաղաքական գործընթացների աստիճանական վերաճումն է ռազմական հակամարտության կամ (և) մեծ ազդեցության բարձր հավանականությամբ սուր ճգնաժամային իրավիճակի կամ էլ պատերազմի:

*Աշխարհաքաղաքական մարտահրավերը* աշխարհաքաղաքական ակտորի (ակտորների խմբի)՝ այլ ակտորին (ակտորների խմբին) մրցակցության հրավիրող հակազդեչու ձգտումն է:

*Աշխարհաքաղաքական ռիսկը* աշխարհաքաղաքական ակտորի (ակտորների խմբի) գործունեության անբարենպաստ կամ անցանկալի հետևանքների առաջացման հնարավորությունն (հավանականությունն) է, աշխարհաքաղաքական ահազանցող վտանգի պայմաններում երջանիկ էլքի, հաջողության հույսով գործողությունը կամ աշխարհաքաղաքական մարտահրավերին պատասխան անգործությունը:

*Աշխարհաքաղաքական վտանգը* Երկրին, մակրոտարածաշրջանին, պետությանը, պետությունների միությանը, քաղաքակրթությանը, էթնոսին, հասարակությանը, ընտանիքին, մարդուն ու մարդկությանը կորուստ, վնաս (բայց ոչ աղետալի) պատճառելու հնարավորությամբ հնարավոր կամ իրական աշխարհաքաղաքական երևույթը, իրադարձությունը կամ գործընթացն է:

*Աշխարհաքաղաքական սպառնալիքը* Երկրին, մակրոտարածաշրջանին, պետությանը, պետությունների միությանը, քաղաքակրթությանը, էթնոսին, հասարակությանը, ընտանիքին, մարդուն ու մարդկությանն անմիջական վնաս, կորուստ պատճառելու հնարավորությամբ աշխարհաքաղաքական երևույթը, իրադարձությունը կամ գործընթացն է, աշխարհաքաղաքական ակտորի (ակտորների խմբի) կողմից դրանց շահերի նկատմամբ ոտնձգությունը, դրանց վնաս, կորուստ պատճառելու ցանկացած ձևով արտահայտված մտադրությունը:

Աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիայի դրսևորումներ են աշխարհաքաղաքական ակտորների (հատկապես բարձր կարգի ուժեր, ազդեցիկ էթնոսներ, քաղաքակրթություններ, վերագգային խորհրդապաշտական (գաղտնի) կազմակերպություններ, կորպորացիաներ և այլն) շահերը ներկայացնող աշխարհաքաղաքական ծրագրերը, հատկապես դրանցով պայմանավորված աշխարհաքաղաքական մրցակցությունը, հարաբերություններն ու էքսպանսիան, համաշխարհայնացումը (գլոբալացում), տարածաշրջանացումը (ռեգիոնալացում), հատվածականացումը (ֆրագմենտացում) և այլն: Աշխարհաքաղաքական վտանգների ու սպառնալիքների մեջ (ինչպես աշխարհաքաղաքականության համար ընդհանրապես) առանձնահատուկ կարևորություն ունի աշխարհաքաղաքական ակտորների (հատկապես բարձր կարգի ուժերի, ազդեցիկ էթնոսների,

քաղաքակրթությունների, վերագրային խորհրդապաշտական կազմակերպությունների, կորպորացիաների) կողմից տնտեսական, ռազմական, քաղաքական, կրոնական և այլ մեթոդներով ազդեցության ոլորտների ընդլայնումը՝ աշխարհաքաղաքական էքսպանսիան (էքսպանսիայի օրենքը աշխարհաքաղաքականության հիմնական օրենքն է [14]): Հետաառըպատերազմյան աշխարհում կարևոր են աշխարհաքաղաքական էքսպանսիայի համաաշխարհային, ռազմական, իրավական, տնտեսական, քաղաքական, սոցիոաշխարհային, գաղափարական, ժողովրդագրական, տեղեկատվական տեսակները: Սրանք, կախված տարբեր ազդեցությամբ իրացման ձևերից (ներկայությունից մինչև տիրապետում), կարող են հասցնել ինչպես թուլատրելի, այնպես էլ կրիտիկական և աղետալի վնասներ:

Ինչպես «անվտանգության» համար ընդհանրապես, պետության աշխարհաքաղաքական անվտանգության համար՝ մասնավորապես, կարևոր են պաշտպանվածության և ապահովվածության միջոցները, այս դեպքում՝ միջազգային իրավունքի սկզբունքները, միջազգային պայմանագրերը, սահմանադրական, օրենսդրական և գործնական միջոցները:

Միջազգային իրավունքի սկզբունքներն ու միջազգային պայմանագրերը աշխարհաքաղաքական որոշ գործընթացների (մասնավորապես՝ տարածքային էքսպանսիայի) համար զսպող նշանակություն ունեն: Սակայն միջազգային կազմակերպություններին ինտեգրումը (որն այդ կազմակերպությունների աջակցությունը ստանալու, նրանց հնարավորություններից օգտվելու գրեթե միակ պայմանն է), բացի դրանց օժանդակությունը ստանալու հնարավորությունից, պետությունների վրա դնում է որոշակի պարտավորություններ, որոնց մեջ քիչ չեն վերագրային խորհրդապաշտական կազմակերպությունների և բարձր կարգի ուժերի էքսպանսիայի համար հնարավորություններ ստեղծողներն ու ավելացնողները: Իսկ դրանք չկատարելը կարող է տվյալ պետության նկատմամբ «միջազգային հանրության» պատժամիջոցների պատճառ դառնալ: Միջազգային այդ կազմակերպությունները՝ որպես աշխարհաքաղաքական ակտորներ, հիմնականում դեկավարվում են վերագրային խորհրդապաշտական կազմակերպությունների, ինչպես նաև աշխարհաքաղաքական առաջին կարգի ուժերի կողմից և դրանց համար հանդիսանում են աշխարհաքաղաքական գործակալներ: Այսինքն՝ միջազգային կազմակերպությունները, մի կողմից, հանդիսանում են պետությունների պաշտպանվածության և ապահովվածության միջոցներ, մյուս կողմից՝ դրանց պետությունների ինտեգրումը մեծացնում է վերջիններիս աշխարհաքաղաքական խոցելիությունը:

Պաշտպանվածության և ապահովվածության սահմանադրական և օրենսդրական միջոցների կարևորությունը պայմանավորված է նրանով, որ իրավա-

կան այդ միջոցները կարող են կանխել այլ պետությունների, վերազգային խորհրդապաշտական կազմակերպությունների ու այլ ակտորների կողմից կիրառվող էքսպանսիան, փոքրացնել դրա արդյունավետությունն ու աշխարհաքաղաքական այլ գործընթացների բացասական հետևանքները: Դրա համար անհրաժեշտ են աշխարհաքաղաքական էքսպանսիայի տարբեր տեսակներից (հատկապես ժամանակակից) ու աշխարհաքաղաքական այլ գործընթացներից (մասնավորապես՝ համաշխարհայնացումից) պաշտպանող և ապահովող սահմանադրություն և օրենքներ, որոնց ընդունման ժամանակ առանձնահատուկ կարևորություն ունի ազդեցիկ ակտորների աշխարհաքաղաքական ծրագրերի, ինտեգրման գործընթացի բացասական հետևանքների ու միջազգային կազմակերպությունների իրական՝ աշխարհաքաղաքական գործակալների գործառույթների հստակ իմացությունը: Միայն այս դեպքում պետության սահմանադրությունն ու օրենքները կարող են ունենալ նրա աշխարհաքաղաքական պաշտպանվածության և ապահովվածության միջոցների նշանակություն, և միայն դրանց վրա հենվող գործնական միջոցները պետության համար կարող են արդյունավետ լինել: Հակառակ դեպքում իրավական այս միջոցները կարող են պարարտ հող ստեղծել էքսպանսիայի տարբեր տեսակների մեծ ազդեցությամբ իրացման և աշխարհաքաղաքական այլ գործընթացների բացասական մեծ ազդեցության համար:

Աշխարհաքաղաքական որոշ գործընթացներ, ինչպիսիք են աշխարհաքաղաքական էքսպանսիան և մրցակցությունը, կարող են հանդես գալ որպես աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիայի դրսևորումներ (աշխարհաքաղաքական վտանգ, սպառնալիք), այնպես էլ աշխարհաքաղաքական պաշտպանվածության և ապահովվածության գործնական միջոցներ: Որպես այդպիսի միջոցներ հատկապես կարևոր են նաև արտաքին քաղաքական այլ ակցիաները՝ համագործակցությունն ու գործընկերությունը: Իհարկե, բոլոր այս ակցիաների արդյունավետությունը կախված է պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներից, խոցելիությունից ու աշխարհաքաղաքական այլ բնութագրիչներից:

Քանի որ թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներով ո՛չ միշտ և ո՛չ լիովին է հնարավոր իրականացնել պաշտպանության և ապահովման արդյունավետ գործողություններ ինչպես «անվտանգության» համար ընդհանրապես, այնպես էլ «պետության աշխարհաքաղաքական անվտանգության» համար՝ մասնավորապես, կարևոր է հասցված վնասն արագ համակշռելու կարողությունը:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև հասկացության սահմանման պահանջները [10-12]՝ կարելի է ասել, որ *պետության աշխարհաքաղաքական անվտանգությունը միջազգային իրավունքի սկզբունքներով, միջազգային*

*պայմանագրերով, սահմանադրական, օրենսդրական և գործնական միջոցներով աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիայից պետության պաշտպանվածությունն ու ապահովվածությունն է, հասցված վնասն արագ համակշռելու կարողությունը:*

Խոսքն աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիայի մակարդակներից պետության հատկապես ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և ազգային արժեքների պաշտպանվածության ու ապահովվածության մասին է, հատկապես տարբեր ազդեցությամբ իրացված էքսպանսիան և աշխարհաքաղաքական այլ գործընթացների բացասական ազդեցությունն արագ համակշռելու և ընդհանրապես պետության՝ որպես աշխարհաքաղաքական օբյեկտի, կայուն գոյության, հաստատունության և ինքնազարգացման հնարավորության պահպանման մասին, որը հնարավոր է միայն կարևոր այս ակտորի կողմից սեփական ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու դեպքում:

Աշխարհաքաղաքական անվտանգության տարբեր մակարդակ ունեն ոչ միայն տարբեր, այլև նույն կարգի պետությունները: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունեն պետությունների աշխարհաքաղաքական դիրքն ու տարբեր ակտորների (մասնավորապես՝ բարձր կարգի ուժերի, ազդեցիկ էթնոսների, վերազգային խորհրդապաշտական կազմակերպությունների) շահերի և դրանց շահերի փոխառնչությունները:

Աշխարհաքաղաքական անվտանգության օբյեկտների մեջ հատուկ ուշադրության է արժանի ՀՀ-ն՝ աշխարհաքաղաքական առանձնահատուկ և անբարենպաստ դիրք ունեցող ցածր կարգի խոցելի ու աշխարհի առաջին կարգի ուժերի, ազդեցիկ էթնոսների ու վերազգային խորհրդապաշտական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում գտնվող ակտորը, որի աշխարհաքաղաքական անվտանգության ուսումնասիրությունը ՀՀ թե՛ անվտանգության ապահովման և թե՛ արդյունավետ գործառության և զարգացման համար ունի շատ կարևոր նշանակություն:

Պետության աշխարհաքաղաքական անվտանգության հետազոտության տեսական-մեթոդաբանական թերմշակության հաղթահարման համար կարևոր են կենսագործունեության տարբեր ոլորտների (քաղաքական, տնտեսական (մասնավորապես՝ արժույթային-վարկային, էներգետիկ), ռազմական, ժողովրդագրական, մշակութային, բնապահպանական), տարաբնույթ ակտորների (հատկապես պետությունների և էթնոսների) և աշխարհագրական տարածության ենթակարգային տարբեր մակարդակների (համաշխարհային տարածության, մակրոտարածաշրջանների, պետական տարածքների) անվտանգության հետազոտության տեսական-մեթոդաբանական ժառանգությունն ու գործնական նշանակության ար-

դյունքները (հիմնախնդիրներ, մեթոդաբանություններ, հասկացություններ, գաղափարներ, հայեցակարգեր, տեսություններ, դոկտրիններ և այլն): Մրանցից հատկապես կարևոր են ընդհանրապես անվտանգության հետազոտությունների համար կարևոր նշանակության հասկացությունների («անվտանգության չափանիշներ», «անվտանգության ապահովման քաղաքական համակարգ», «անվտանգության ռազմավարություն», «անվտանգության ռազմավարության իրացման ապահովման համակարգ», «անվտանգության ռեժիմ», «ազգային անվտանգության տեսակներ և ոլորտներ», «տարածաշրջանային անվտանգություն», «միջազգային անվտանգություն», «սպառնալիք», «վտանգ», «ռիսկ», «մարտահրավեր», «ագրեսիա», «ինտերվենցիա», «օկուպացիա», «անեքսիա», «վնաս», «վնասագրերծում», «վստահության միջոցներ» և այն) մասին պատկերացումները՝ դրանց սահմանումներն ու բնութագրումները, ինչպես նաև կենսագործունեության ոլորտների անվտանգության հետազոտության մշակված մեթոդաբանությունները:

Պետության աշխարհաքաղաքական այս կարևոր բնութագրիչի հետազոտության տեսական-մեթոդաբանական թերմշակության հաղթահարման համար հատկապես կարևոր են նաև՝

- աշխարհաքաղաքական գործոնների մասին գիտելիքները,
- հետսառըպատերազմյան աշխարհի աշխարհաքաղաքական հիմնական բնութագրիչների մասին գիտելիքները, մասնավորապես՝ տարաբնույթ ակտորների (հատկապես վերազգային խորհրդապաշտական կազմակերպություններ, բարձր կարգի պետություններ, ազդեցիկ էթնոսներ և այլն) աշխարհաքաղաքական ծրագրերի, դրանց նպատակների ու խնդիրների մասին պատկերացումները, այդ ծրագրերով պայմանավորված, հատկապես միջազգային կազմակերպությունների միջոցով պետություններին, էթնոսներին ու ամբողջ աշխարհին ներկայացված-պարտադրված գաղափարների, հայեցակարգերի, տեսությունների և միջազգային պայմանագրերի հնարավոր ազդեցության մասին գիտելիքները,
- աշխարհաքաղաքական էքսպանսիայի տարբեր տեսակների (համաշխարհային, ռազմական, իրավական, քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային, գաղափարական, ժողովրդագրական, տեղեկատվական և այլն), դրանց իրացման ձևերի և աշխարհաքաղաքական այլ գործընթացների (աշխարհաքաղաքական մրցակցություն, հարաբերություններ, համաշխարհայնացում, տարածաշրջանացում, հատվածականացում և այլն) մասին գիտելիքները,
- աշխարհաքաղաքական գործառույթներ ունեցող տարածքների (մասնավորապես՝ «ազդեցության ոլորտի», «աշխարհաքաղաքական դաշ-



- տի» («Էնդեմիկ (տեղական) դաշտի», «սահմանային դաշտի», «խաչաձև դաշտի», «տոտալ դաշտի», «աշխարհաքաղաքական հենակետի», «մետադաշտի»), «բուֆերային գոտու», «սանիտարական կորդոնի», «լիմիտրոֆի (սահմանամերձ պետության)», «տարանցիկ պետության», «աշխարհաքաղաքական կղզու», «բեկման տարածաշրջանի», «ձգնաժամային աղեղի», «կենսական կարևոր հանգույցի», «պլացդարմի» և այլն) մասին գիտելիքները,
- պետության աշխարհաքաղաքական բնութագրիչների (աշխարհաքաղաքական շահեր, մրցակցություն, հարաբերություններ, գործառույթներ, զարգացում, ռեսուրսներ, հզորություն, կարգ, իրադրություն, միջավայր, դիրք) մասին գիտելիքները:
  - Աշխարհաքաղաքականությունը, ուսումնասիրելով պետության աշխարհաքաղաքական անվտանգությունը, իր հերթին կարող է օժանդակել տեսական ընդհանրացումների փուլում գտնվող անվտանգությունագիտության զարգացմանը, նրա կարևորագույն այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝
  - անվտանգության ուսումնասիրությունների առանձին ուղղությունների և ասպեկտների միջև կապերի բացահայտումը, դրա հիման վրա գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորումն ու անվտանգության ընդհանուր տեսության մշակումը,
  - կենսագործունեության համալիր անվտանգության հայեցակարգերի և ծրագրերի մշակումը,
  - մարդկության անվտանգ զարգացման օրինաչափությունների և տենդենցների բացահայտումն ու դրանց չափանիշների հիմնավորումը:

Արդյունքում՝ աշխարհաքաղաքականությունը կարող է օժանդակել անվտանգությունագիտության նպատակի իրագործմանը՝ մարդկության կենսագործունեության անվտանգության բնագավառում բարդ իրադարձությունների, գործընթացների, երևույթների ուսումնասիրությանը, դրանց կանխման, մեկուսացման և վերացման համապատասխան միջոցառումների մշակմանը:

*Հունիս, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Սարիբեկյան Ս.Լ.*, Աշխարհաքաղաքականության արդի խնդիրները // Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր: Հումանիտար գիտություններ, Եր., 2014, N 2-3 (21-22), էջ 64:
2. *Ярочкин В.И.*, Секьюритология. Наука о безопасности жизнедеятельности, М., 2002.
3. *Сирота Н.М.*, Геополитика. Краткий курс, Спб., 2006, с. 14.

4. *Желтов В.В., Желтов М.В.*, Геополитика: история и теория. Учебное пособие, М., 2009, с. 39.
5. *Тузиков А.Р.*, Основы геополитики. Учебное пособие, М., 2004, с. 11.
6. *Маринченко А.В.*, Геополитика. Учебное пособие, М., 2010, с. 22.
7. *Нартов Н.А., Нартов В.Н.*, Геополитика. Учебник для студентов вузов. 4-е изд., перераб. и доп. М., 2007, с. 32-33.
8. Геополитика. Популярная энциклопедия. Авторы сост. *В.Баришполец, Д.Баришполец, В.Манилов*. Под общей ред. В.Манилова. М., 2002.
9. *Հիլինգարյան Դ.Ս., Մարգարյան Ա.Ե.*, Պաշտպանական անվտանգության տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան, Եր., 2012:
10. *Բրուտյան Գ.Ա.*, Տրամաբանության դասընթաց: Դասագիրք բուհերի համար / [Խմբ.՝ Ռ.Զ. Զիջյան և ուրիշ.], Երևանի պետ. համալս. 4-րդ վերամշ. և լրաց. հրատ., Եր., 1987, էջ 77-91:
11. *Горский Д.П.*, Определение (Логико-методол. проблемы). М., 1974, с. 103-115.
12. *Войшвилло Е.К.*, Понятие как форма мышления: Логико-гносеолог. анализ. М., 1989, с. 223-229.
13. *Սարիբեկյան Ա.Լ.*, Ադանդների աշխարհաքաղաքական բնութագիրը // ՎԷՄ համահայկական հանդես, Եր., 2015, էջ 112:
14. *Ашенкамф Н.Н., Погорельская С.В.*, Геополитика. Учебник для вузов, М., 2010, с. 26.

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Մասուն Սարիբեկյան

#### Ամփոփագիր

Պետության աշխարհաքաղաքական անվտանգությունը միջազգային իրավունքի սկզբունքներով, միջազգային պայմանագրերով, սահմանադրական, օրենսդրական և գործնական միջոցներով աշխարհաքաղաքական լարվածության էսկալացիայից պետության պաշտպանվածությունն ու ապահովվածությունն է, հասցված վնասն արագ համակշռելու կարողությունը:

Պետության աշխարհաքաղաքական անվտանգության հետազոտության համար հատկապես կարևոր են կենսագործունեության տարբեր ոլորտների (քաղաքական, տնտեսական, ռազմական, ժողովրդագրական, մշակութային, էկոլոգիական), տարաբնույթ ակտորների (հատկապես պետությունների և էթնոսների) և աշխարհագրական տարածության ենթակարգային տարբեր մակարդակների (համաշխարհային տարածության, մակրոտարածաշրջանների, պետական տարածքների) անվտանգության հետազոտության տեսական-մեթոդաբանական ժառանգությունն ու գործնական նշանակության արդյունքները:

Կարևոր են նաև աշխարհաքաղաքական ծրագրերի, դրանցով պայմանավորված գաղափարների, հայեցակարգերի, տեսությունների, միջազգային պայմանագրերի և աշխարհաքաղաքական գործընթացների (աշխարհաքաղաքական էքսպան-

սիւս, գլոբալացում, ռեգիոնալացում, ֆրագմենտացում և այլն) ազդեցության մասին գիտելիքները:

## О ГЕОПОЛИТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВА

*Сасун Сарибекян*

Резюме

Геополитическая безопасность государства – это защищенность государства от эскалации геополитической напряженности принципами международного права, международными соглашениями, конституционными, законодательными и практическими мерами, способность быстрого компенсирования нанесенного ущерба.

Для исследования геополитической безопасности государства особенно важны теоретико-методологическое наследие и результаты, имеющие практическое значение исследования безопасности жизнедеятельности разных сфер (политической, экономической, военной, демографической, культурной, экологической), разнородных акторов (особенно государств и этносов) и разных иерархических уровней географического пространства (мирового пространства, макрорегионов, государственных территорий). Важны также знания о влиянии геополитических программ, обусловленных ими идей, концепций, теорий, международных договоров и геополитических процессов (геополитической экспансии, глобализации, регионализации, фрагментации и т.д.).

## ABOUT GEOPOLITICAL SECURITY OF A COUNTRY

*Sasun Saribekyan*

Resume

Geopolitical security of a country is the safety and security of the country from the escalation of geopolitical tension and the ability to quickly balance out the caused damage through the principles of international law, international treaties, constitutional, legislative and practical measures.

The especially important aspects for the geopolitical security of a country include the theoretical-methodological heritage and practically significant results of security research of different spheres of life (political, economic, military, demographic, cultural, ecological), various actors (particularly, of a country or ethnicity) and different subcategory levels of geographical space (world space, macro-regions, state territories). Importance is also attached to the knowledge about geopolitical programs and relevant ideas, concepts, theories, impact of international treaties and geopolitical processes (geopolitical expansion, globalization, regionalization, fragmentation etc).

# ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## *Հասմիկ Խուրշուդյան՝*

*Բանալի բառեր՝* մրցունակություն, միջազգային առևտուր, զարգացած և զարգացող երկրներ, արտաքին շուկա, տնտեսություն, ձեռնարկություն, մրցունակության տեսություն:

Վերջին քառորդ դարի ընթացքում համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցած փոփոխություններն ուժեղացրել են մրցակցությունը զարգացող երկրների և ներքին և արտաքին շուկաներում: Այդ փոփոխությունները մեծացրել են զարգացող երկրներում կառավարության աջակցության կարիքը զարգացման կամ ինդուստրացման վաղ փուլերում գտնվող արդյունաբերական նոր ճյուղերի համար: Այնուամենայնիվ, դրա համար անհրաժեշտ միջոցները նվազել են զարգացող երկրների քաղաքականության նկատմամբ միջազգային առևտրային կանոնների կողմից պարտադրված սահմանափակումների և զարգացող երկրների նկատմամբ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՆ) և երկկողմ դոնորների կողմից պարտադրված պայմանների պատճառով: 1980-ականներից մինչև այսօր մի շարք գործոններ են փոխվել, որոնք հանգեցրել են ներքին և արտաքին շուկաներում մրցակցության ուժեղացմանը, մասնավորապես՝ զարգացող երկրներում:

*Առաջին* և ամենակարևոր փոփոխությունները տեղի ունեցան տնտեսական փիլիսոփայության մեջ՝ հոգուտ շուկայական կողմնորոշման և կառավարությանը տնտեսական որոշումների կայացման և ռեսուրսների տեղաբաշխման գործընթացից դուրս թողնելու գնով: Փիլիսոփայության այս փոփոխությունն ուղեկցվեց միջազգային առևտրի և օտարերկրյա ուղղակի ներդրումների ազատականացմամբ: *Երկրորդ*՝ փոփոխություններ եղան միջազգային արտադրության կազմակերպման գործընթացում՝ հոգուտ գլոբալացման:

ՕՈՆ հոսքերի, առևտրի ազատականացումը, միջազգային առևտրային կանոնների փոփոխությունը, արագ տեխնոլոգիական փոփոխությունները, ինչպես նաև կապի և տրանսպորտի ծախսերի նվազումը հեշտացրին գլոբալացումը: Արագ տեխնոլոգիական փոփոխությունները մեծացրին ուսման երկարու-

<sup>1</sup> ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի կառավարման ամբիոնի հեռակա ասպիրանտ:

թյունը, ձեռքբերման արժեքն ու տեխնոլոգիայի զարգացումը և զարգացող երկրների ընկերությունների նոր գործունեության մեջ ներդրումների ռիսկերը: Գիտելիքի և հմտությունների վրա հիմնված արտադրության ընդլայնումը, արտադրության մեջ մասշտաբի էֆեկտի կարևորության մեծացումը, մարքեթինգը և տեղաբաշխումը, հիմնված ընկերությունների օգտին շուկայի բարձր կենտրոնացման հետ միասին մեծացրել են անդրազգային կորպորացիաների դերը և մրցակցային առավելությունը նորաստեղծ ընկերությունների նկատմամբ: Նորաստեղծ ընկերությունները կարող են շահել գնային առավելության գործոնից, որի կարևորությունը մրցակցային առավելության նկատմամբ նվազել է՝ կապված անդրազգային կորպորացիաների ռազմավարական առավելության հետ, որոնք նույնպես մրցակցում են ոչ գնային ատրիբուտների և ապրանքների հարցում: Անդրազգային կորպորացիաների ուժի աճը շուկայում իր հերթին նպաստել է զարգացող երկրներից անկախ ընկերությունների՝ արտադրության նոր ճյուղեր հիմնելու և արտահանումների արգելքների աճին: *Երրորդ*՝ «կազմակերպման և արտադրության նոր մեթոդների» ի հայտ գալը, ինչպիսին, օրինակ, մշակող արդյունաբերությունն է, նույնպես հանգեցրեց շուկայում մրցակցության մեջ խաղի կանոնների փոփոխությունների: *Չորրորդ*՝ անդրազգային կորպորացիաների օգնությամբ տեղի ունեցավ փոփոխություն աշխատատար արտադրության և հավաքագրման աշխատանքների մեջ սահմանափակ քանակությամբ երկրներում, մասնավորապես՝ Չինաստանում: Միջազգային առևտրում Չինաստանի աճող կարևորությունն արտահայտվեց ոչ միայն «աշխատատար» ապրանքներով, այլև հատկապես բարձրտեխնոլոգիական արտադրանքի վերջնական հավաքագրման աշխատանքների միջոցով: Կառուցվածքային սխալի հավանականությունը, փոխարժեքների բարձր անկայունությունը և համաշխարհային տնտեսության անընդհատ փոփոխականությունը, որը հանգեցրեց արտաքին պահանջարկի փոփոխականությանը, մեծացրին ներդրումների ռիսկերը: Վերը նշված գործոններն ավելի ու ավելի են մեծացրել զարգացող երկրներում ինդուստրացման և զարգացման սկզբնական փուլերում գտնվող նորաստեղծ ընկերությունների՝ կառավարությունից աջակցություն ստանալու կարիքը: Սակայն միջազգային ֆինանսական ինստիտուտների և երկկողմ դոնորների միջազգային առևտրային կանոնները և գործելակերպը սահմանափակել են զարգացող երկրների կառավարությունների՝ իրենց նորաստեղծ ընկերություններին անհրաժեշտ օժանդակություն տրամադրելու քաղաքական տիրույթը:

Մակրոեկոնոմիկայի մրցունակության մասին գրականությունը ներկայումս այնքան հարուստ է և բազմազան, որ հնարավոր չէ ներկայացնել տնտեսագիտության բնագավառում առկա բոլոր կարևոր աշխատությունները մեկ միասնական

ցանկում: Այդ պատճառով ենթադրվում է, որ խնդրին անդրադառնալու լավագույն և գուցե միակ հնարավոր տարբերակը մրցունակության հաճախակի օգտագործվող մակրոէկոնոմիկայի հասկացություններին անդրադառնալն է:

Վերջին քառորդ դարի ընթացքում, այսինքն՝ շուկայական ուղղվածության և առևտրի ազատականացման օգտին նոր փիլիսոփայության ի հայտ գալուց ի վեր, մրցունակության խնդիրը սկսել է մեծ ուշադրություն գրավել ինչպես ակադեմիական, այնպես էլ գործնական մակարդակներում: Նման զարգացումն իր հերթին հանգեցրել է բիզնեսում և միջազգային առևտրում խաղի կանոնների փոփոխությունների: Ոմանք դիտարկում են մրցունակությունը որպես հաջողության կարևոր բաղադրիչ տնտեսական ցուցանիշներում [1], մյուսները՝ որպես սխալ հասկացություն և ցնորք (օր. [2]): Խնդիրն այն է, որ երբ մրցունակություն հասկացությունը վերաբերում է զարգացող երկրներին, այն տարանջատվում է տնտեսական զարգացումից, կարծես մրցունակությունն ըստ էության վերջնական կետն է: Եթե դա այդպես լիներ, կարելի է ծայրահեղ տեսակետ հայտնել, որ միջազգային շուկայում հնարավոր է վաճառել ամեն ինչ զրոյական գներով:

Միջազգային առևտրի նեոդասական տեսության որոշ կողմնակիցներ մատնանշում են շուկայի ձախողման գերակշռումը, հատկապես զարգացող երկրների դեպքում: Այնուամենայնիվ, մրցունակության ուղղակի տեսական հիմքը արժեքի համեմատական առավելության զուտ նեոդասական տեսությունն է, որը «Վաշինգտոնյան համաձայնության», միջազգային ֆինանսական ինստիտուտների գործունեության և զարգացող երկրներում տնտեսական բարեփոխումների ու համընդհանուր, սահմաններից դուրս առևտրի ազատականացման հարցում նրանց առաջարկությունների փիլիսոփայական և գաղափարական հիմքն է: Այն ընկած է նաև այնպիսի բազմակողմ առևտրային կազմակերպության փիլիսոփայության հիմքում, ինչպիսին է Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, որի ստեղծման հիմք է հանդիսացել Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրը (ՄԱԳՀ), որը սահմանում է միջազգային առևտրի կանոնները: Ըստ նեոդասական տեսության, որը ծագել է Ադամ Սմիթի միջազգային առևտրի տեսությունից, համեմատական առավելությունը հիմնված է ռեսուրսի առկայության, կապիտալի (ներառյալ բնական ռեսուրսները) և աշխատանքի վրա: Նյութական կապիտալը աշխատանքի բաժանման և աճի հիմնական աղբյուրն է: Արժեքի առավելության ուսմունքը ստատիկ տեսությունն է՝ հիմնված բազմաթիվ անիրական ենթադրությունների վրա և չի նպաստում երկարաժամկետ զարգացմանը: Օրինակ՝ ենթադրվում է, որ տեխնոլոգիական գիտելիքն ազատորեն հասանելի է շուկայում, և որ ձեռնարկությունը, որը ժամանակակից աշխարհում տնտեսական գործունեության միջուկն է, միատարր չէ և պասիվ է: Այս տեսությունն անտեսում է

այն փաստը, որ տնտեսական զարգացումը պահանջում է արտադրության կառուցվածքի արդիականացում, որը քաղաքականության հետ կապված գործունեություն է և պահանջում է կառավարության միջամտությունը դինամիկ համեմատական առավելության վրա հիմնված մասնագիտացման համար:

Չնայած մրցունակությունը բացատրող մի շարք այլընտրանքային տեսությունների առկայությանը՝ զարգացող երկրների դեպքին համապատասխանող բավարար տեսական շրջանակ գոյություն չունի: Ջարգացնելով վերլուծության մի շրջանակ, հիմնվելով մրցունակության վերաբերյալ Ռեյնհերտի տեսակետի վրա՝ կարելի է եզրակացնել, որ մրցունակությունը զարգացման տարր է, որը վերաբերում է գործունեությունների, որոնք, «լինելով մրցունակ» միկրո առումով, նաև նպաստում են զարգացմանը, եկամտի բարձրացմանը, ինչպես նաև ազգաբնակչության կենսամակարդակի բարելավմանը [3]: Դա անելու համար օգտվել ենք մի շարք տնտեսագետների կարծիքներից և տեսություններից, ինչպիսիք են Լիստը (1856), Կալեցկին (1955), Շումպետերը (1934), Պենրոուզը (1959), Հիրշմանը (1958) և Լագոսիկը (1991), կարողության կառուցման տեսության կողմնակիցները և Շաֆաեդդինը (2005, [4]):

Ըստ Լիստի՝ արտադրական ուժը համեմատական առավելության հիմնական աղբյուրն է, և զարգացումն ու մտավոր կապիտալը (գիտելիքը) և ոչ թե նյութական կապիտալն են արտադրական ուժի հիմնական աղբյուրը: Աշխատանքի բաժանումը և կապիտալի կուտակումը զարգացման արդյունք են: Գիտելիքը հենց այնպես չի տրվում, այն պետք է ձեռք բերվի կրթության, գիտության, ուսուցման, հայտնագործությունների, գյուտերի, փորձի և աշխատանքի բաժանման միջոցով: Լիստը գտնում է նաև, որ գիտելիքը սահմանվում է հասարակական պահանջով, օրինակ՝ սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ գործոններով: Լիստի տեսությունը դինամիկ է, և չնայած այն դեպի առաջ արված կարևոր քայլ է, ձեռնարկության դերը նրա տեսության մեջ լավ զարգացած չէ:

Կալեցկին, ինչպես Լիստը, կարևոր է համարում սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ գործոնները տնտեսական զարգացման մեջ: Ըստ նրա՝ կապիտալի կուտակման աջակցումը կարողության կառուցմանն ու զարգացմանը սահմանափակվում է սոցիալ-քաղաքական, ինստիտուցիոնալ, ենթակառուցվածքային և այլ կառուցվածքային գործոնների պատճառով: Նա, մասնավորապես, հաստատում է, որ կառավարության շահը կարող է և չհամընկնել հասարակության շահի հետ ընդհանուր առմամբ: Այլ կերպ ասած՝ կառավարության «անտարբեր որոշումների կորերը» կարող են տարբերվել համայնքի անտարբերության կորերից [5]: Այնուամենայնիվ, կարողության կառուցման և զարգացման իր տեսության մեջ նա անտեսում է ընկերության կարևոր դերը, այն դեպքում, երբ իր

կապիտալիստական տնտեսության տեսությունում, որը ստեղծված է զարգացող երկրների դեպքի համար, ընկերությունները կարևոր դեր են կատարում: Շումպետերն առաջինն էր, որ իր մրցունակության և զարգացման տեսության կենտրոնում դրեց ընկերության և ձեռնարկատիրության դերը: Նրա տեսության մեջ ընկերությունն ակտիվ է, ունի ռազմավարություն և կարող է ունենալ տեխնոլոգիան փոխելու գիտելիքներ և կարողություն: Ավելին՝ այն ազդում է ոչ միայն շուկայի, այլև ընկերությունների արտադրողականության վրա իր «ստեղծարար ոչնչացման» միջոցով:

Ընկերության շումպետերյան հասկացությունը մեր վերլուծության հիմքն է կազմում: Այնուամենայնիվ, օգտագործելով Ֆ.Լիստի համեմատական առավելության, արտադրողական ուժի, Մ.Պորտերի մրցունակության առավելության, Լազոնիկի բիզնեսի կազմակերպման տեսությունների, ինչպես նաև կարողության կառուցման տեսության որոշ տարրեր և զարգացնելով դրանք, կարելի է պնդել, որ ձեռնարկությունն արստրակտ հասկացությունն չէ: Այն տնտեսական գործունեության հիմնական համակարգողն է, ունի կապեր այլ ձեռնարկությունների, շուկայի, կառավարության և սպառողների հետ [6]: Ավելին՝ ձեռնարկատերերը ոչ միայն համակարգող, այլև, ինչպես նշում է Հիրշմանը, «ստեղծարար» և «համագործակցող» դեր են կատարում: Պենրոուզը և այլ տեսաբաններ դիտարկում են ընկերությունը որպես հավաքական ուսումնական միություն: Ըստ Պենրոուզի՝ ընկերությունները «կենդանի օրգաններ են»՝ իրենց ուրույն մշակույթով, հավաքական կարողություններով և կոնկրետ գիտելիքներով: Վերջապես, դիտարկում ենք մրցունակությունը որպես զարգացման միջոց և ոչ որպես վերջնական կետ՝ ըստ էության: Եկամուտը և ընկերության ու պետության վրա հաշվեգրված վարձավճարն ավելացնելու համար ընկերությունը կարող է գործել այնպես, որ բարդացնի այլոց մրցակցությունն իր հետ, այսինքն՝ ստեղծել այնպիսի իրավիճակ, որը կրկնօրինակելը հեշտ չլինի: Շուկա մուտք գործելու համար պատնեշների ստեղծումը հաճախ համարվում է այս նպատակին հասնելու միջոց: Ավելին՝ կարևոր է գնորդների համար արժեքի ստեղծումը յուրահատուկ ձևով: Դա կարող է իրականացվել այնպիսի չափանիշների հիման վրա, ըստ որոնց՝ բարի համբավը և յուրահատուկ մշակույթ ստեղծելը համարվում են ամենակարևորը:

Մրցակցային առավելություն հասկացությունը տարբերվում է համեմատական առավելությունից: Համեմատական առավելության տեսությունը, թե՛ ստատիկ, թե՛ դինամիկ տարբերակով, հիմնականում առնչվում է արժեքի և գների մասին եզրահանգմամբ սահմանափակ ենթադրություններին, հատկապես մրցակցային շուկայի գերիշխանության մասին ենթադրությանը: «Մրցակցային առավելություն» հասկացությունը, ընդհակառակը, հաշվի է առնում նաև ոչ



արժեքային/գնային գործոնները: Այն ընկերության կամ երկրի մրցունակության հարցին մոտենում է թերի մրցունակության և շուկայի օլիգոպոլ կառուցվածքի ներքո: Մրցակցային առավելությունը դինամիկ հասկացություն է, որը պահանջում է գիտելիքների, տեխնոլոգիայի և կազմակերպման զարգացում, ինչը կարող է ձեռք բերվել, ընդլայնվել և օգտագործվել ուսման միջոցով: Իբրև դինամիկ հասկացություն՝ մրցակցային առավելությունը կարող է փոխվել ժամանակի ընթացքում՝ պահանջելով արդիականացում, որն իր հերթին անհրաժեշտ է դարձնում ապրանքների, գործընթացի, գիտելիքի և կազմակերպման արդիականացումը: Մրցունակության հասնելը շարժական թիրախ է: Մրցունակությունը հարաբերական հասկացություն է, քանի որ մնացածները նույնպես ձգտում են բարելավել իրենց առավելությունը: Այսպիսի փոփոխությունները, սակայն, չեն կարող տեղի ունենալ ինքնաբերաբար, շուկայական ուժերի տեղաբախման գործոնի միջոցով, որը հանդիսանում է ստատիկ համեմատական առավելության ոլորտը: Մրցունակությունը՝ որպես դինամիկ հասկացություն և զարգացման միջոց, գտնվում է դինամիկ համեմատական առավելության տեսության և շուկայի «ստեղծարար գործառույթի» ոլորտում: Անհրաժեշտ կարողություններ զարգացնելն իր հերթին պահանջում է կիրառել ընկերության, սեկտորների և ազգային տնտեսության մակարդակի ռազմավարության վրա հիմնված քաղաքական միջոցներ և գործողություններ: Մրցունակությունը վերացական հասկացություն չէ: Այն առաջանում է հատուկ բնույթ և միջավայր ունեցող, հատուկ երկրում գտնվող ընկերության գործողությունների միջոցով՝ ընդդեմ այլ ազգային, ինչպես նաև միջազգային ընկերությունների, որոնք ունեն հատուկ ապրանքներ յուրահատուկ կառուցվածք ունեցող շուկայում, որոշակի համաշխարհային տնտեսական պայմաններում, և ձգտում է հասնել ընկերության և ազգային մակարդակում որոշակի նպատակների իրականացմանը: Իրենց նպատակակետին հասնելու համար ընկերությունները և նրանց կառավարությունները ժամանակի ընթացքում իրականացնում են որոշակի գործողություններ և որդեգրում են որոշակի ռազմավարություն:

Մրցունակության հասկացությունը ճիշտ համատեքստում ներկայացնելու համար պետք է հղում կատարել առնչվող հարցերին՝ հասկացություններ (մրցունակության տեսություններ), «համատեքստ» կամ պայմաններ, որոնց համաձայն՝ երկրները մրցում են միջազգային շուկայում, և ուղիները, որոնցով ընկերությունները և երկրները լուծում են կամ պետք է լուծեն մրցունակության խնդիրն իրենց զարգացման ռազմավարությունում: Յուրաքանչյուր դեպքում մի շարք հարցեր են ծագում. ի՞նչ է նշանակում մրցունակություն, ինչո՞ւ է դրա նկատմամբ հետաքրքրությունն աճել վերջին տասնամյակների ընթացքում, զարգացող երկրների տնտեսության զարգացման մրցունակության նկատմամբ տարբեր մոտեցումներ

րը որքանո՞վ են տեղին, մրցունակության նպատակը շուկայում բաժին ստանալն է, թե՞ արտահանող երկրի քաղաքացիների կենսամակարդակի բարձրացումը, ի՞նչ է նշանակում մրցունակության ռազմավարություն, ինչպե՞ս են տնտեսական փիլիսոփայության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, առևտրի ազատականացումը և օտարերկրյա ուղղակի ներդրումները, արագ տեխնոլոգիական փոփոխությունները և արտադրության նոր կազմակերպումն ու շուկայի կառուցվածքի փոփոխություններն ազդում զարգացող երկրների մրցունակության դիրքի վրա, ինչպիսի՞ մրցունակության ռազմավարություն է նախատեսվում զարգացող երկրների համար թե՛ ընկերության և թե՛ ազգային մակարդակներում, որպեսզի կարողանան հարմարվել նոր իրավիճակին՝ առանց իրենց կայուն աճն ու զարգացումը զոհաբերելու:

Այս հարցերի պատասխանները գտնելը մտահոգում է զարգացող երկրներում քաղաքականություն իրականացնողներին, և բազմաթիվ վերլուծաբաններ իրենց աշխատություններում անդրադարձել են դրանց: Ստորև փորձենք ներկայացնել մրցունակության վերաբերյալ լայն գրականության մեջ գոյություն ունեցող հիմնական մոտեցումները:

### ***Մրցունակության հիմնական մոտեցումները***

Մրցունակության նկատմամբ գրականության մեջ գոյություն ունի երկու տարբեր մոտեցում, որոնք կապված են ընկերությունների կառուցվածքի և վարքագծի հիման վրա արված ենթադրությունների հետ.

1. ստատիկ, ըստ որի՝ ընկերությունները փոքր են և պասիվ, և մրցունակությունը կախված է արժեքից և գնից,
2. դինամիկ, ըստ որի՝ ընկերությունները խոշոր են, ունեն ակտիվ ռազմավարություն, մրցակցությունը դինամիկ գործընթաց է՝ իր շումպետերյան իմաստով:

Այս մոտեցումների տեսական հիմքերը տարբեր են:

### ***Ստատիկ մոտեցում***

Մրցունակության նկատմամբ ստատիկ մոտեցումը հիմնված է ստատիկ համեմատական արժեքի առավելության նեոդասական տեսության վրա: Համապատասխանաբար՝ Հեկշեր-Օհլինի տեսությունը համեմատական առավելությունը բացատրում է գործոնի նվիրաբերմամբ՝ նյութական կապիտալի և աշխատանքի: Ուստի, երկրները մասնագիտանում են այնպիսի ապրանքների արտադրության կամ այդ ապրանքների արտահանման մեջ, որում ամենաշատն է լայնորեն կիրառվում իրենց արտադրության գործոնը: Մրցակցության նկատմամբ այսպի-

սի մոտեցումը տեսական արտարակցիա է՝ փոքր գործնական արժեքով: Այն հիմնված է հետևյալ անիրական ենթադրությունների վրա. ապրանքային շուկան կատարելապես մրցունակ է, ցանկացած արդյունաբերության մեջ բազմաթիվ փոքր ընկերություններ գործում են առանց շուկայի գների նկատմամբ որևէ ուժ ունենալու, մասշտաբին հաստատուն վերադարձը գերակշռում է ընկերության մակարդակում, ինչը ենթադրում է, որ եթե ընկերության մուտքերն աճում են կոնկրետ համամասնությամբ, ապա ելքերը նույնպես աճում են այդ նույն համամասնությամբ, ընկերությունները նույնական են երկրի և միջազգային մակարդակներում, ընկերությունները պասիվ են, դրա համար էլ ռազմավարական գործողություններ չեն ձեռնարկում, չկան ընկերությանը կամ արդյունաբերությանը բնորոշ առանձնահատկություններ, չկան արտաքին գործոններ, չկան խոչընդոտներ շուկա մուտք գործելու համար և շուկայից դուրս գալն անվճար է, մինևույն արդյունաբերության տարբեր ընկերությունների կողմից արտադրված ապրանքները միատարր են, ընկերություններն առնչվում են տեխնոլոգիաների հաստատուն խմբի հետ, որոնք ազատորեն հասանելի են նրանց համար, ներկայիս արժեքը և գները կախված չեն անցյալի (ապագայի) արժեքից և գներից, փորձը որևէ դերակատարում չունի արժեքի սահմանման հարցում, կատարյալ մրցակցությունը նույնպես գերակշռում է գործոնների շուկայում, և արտադրության գործոններն ամբողջովին շարժական են ինչպես աշխարհագրորեն, այնպես էլ մի արդյունաբերությունից մյուսն անցնելու առումով, շուկայի կատարյալ տեղեկատվությունը հասանելի է առաջարկում, պահանջարկում և ապագա գներում բոլոր ապրանքների համար և արտադրության բոլոր գործոնների համար, ուստի չկա անորոշություն և չկան ռիսկեր, գնորդները բազմաթիվ են և չունեն ուժ շուկայի նկատմամբ, կա որոշակի ճաշակ մի խումբ հայտնի ապրանքների համար, տնտեսական ինստիտուտները և կազմակերպությունները որոշակի են և օժանդակում են շուկայական ուժերի գործունեությանը:

Ստատիկ համեմատական առավելության տեսությունն ունի մրցունակության համար մի շարք կարևոր հետևանքներ. *առաջին*. քանի որ ընկերությունները պասիվ են, չունեն ռազմավարություն և չեն կարող ազդել շուկայի վրա, նրանք արձագանքում են շուկային և մրցակցում են իրար հետ արժեքով: Չկա մրցակցություն գների հարցում: *Երկրորդ*՝ նորարարությունը և ձեռնարկատիրությունը դերակատարում չունեն: *Երրորդ*՝ մասշտաբի էֆեկտը որևէ դեր չի կատարում արժեքի նվազեցման և մրցունակության հարցում՝ բացառությամբ Մարշալյան մասշտաբի էֆեկտի: *Չորրորդ*՝ ոչ գնային գործոնները որևէ կարևորություն չունեն մրցունակության մեջ թե՛ ընկերության՝, թե՛ ազգային տնտեսության մակարդակում: *Հինգերորդ*՝ քանի որ ապրանքներն արդյունաբերության մեջ

նույնական են, ապրանքի ոչ գնային ատրիբուտներն էական դեր չեն խաղում մրցունակության մեջ: *Վեցերորդ*՝ համեմատական առավելությունը, ուստի և մրցունակությունը բացատրվում են ազգային և մակրոտնտեսական գործոններով, ինչպիսիք են ներկայիս շուկայի գործոններով պայմանավորված արժեքները, օրինակ՝ աշխատավարձը, հետաքրքրության մակարդակը, հումքը և փոխարժեքը: Փոխարժեքը կարևոր է միջազգային մրցունակության հասնելու հարցում, քանի որ այն փոխակերպում է ներքին գները միջազգայինի:

Նաև չկա շուկայի ձախողում թե՛ ապրանքների, թե՛ գործոնների շուկայում: Այդ պատճառով ենթադրվում է, որ տնտեսական քաղաքականությունը պետք է սահմանափակվի մակրոմակարդակի հարցերում՝ կապված աշխատավարձի արժեքի կամ, լավագույն դեպքում, հարաբերական աշխատուժի/աշխատանքի միավոր արժեքի և փոխարժեքի հետ:

Մրցունակության նկատմամբ ստատիկ մոտեցման մեջ կան բազմաթիվ թերացումներ: Իրականում, գյուղատնտեսությունից դուրս կատարյալ մրցակցությունը բացառություն է և ոչ թե կանոն [7, p. 78-79]: Շատ արդյունաբերական ընկերություններ մեծ են և գերիշխում են շուկայում, արդյունաբերությունների մեծ մասում մասշտաբի էֆեկտը գերակշռում է ընկերությունների և գործարանների մակարդակում, շուկա մուտք գործելու խոչընդոտներ իսկապես գոյություն ունեն, տեխնոլոգիան ազատորեն հասանելի չէ, տարբեր ընկերությունների կողմից արտադրված ապրանքները միատարր չեն, արտադրության կուտակումը ժամանակի ընթացքում ազդում է և՛ արժեքի, և՛ գների վրա փորձի ձեռքբերման միջոցով, շուկայի տեղեկատվությունը կատարյալ չէ, և անորոշություններն ու ռիսկերը սպառնալիք են հանդիսանում: Ընկերությունները տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր մշակույթը, մասնագիտացման հմտությունները և այլ բնորոշ առանձնահատկություններ: Կան նաև շուկայի ձախողման բազմաթիվ աղբյուրներ ապրանքների և գործոնների շուկաներում, հատկապես զարգացող երկրներում ինդուստրացման և զարգացման վաղ փուլերում: Ավելին՝ գոյություն ունեցող տեսական փորձառական փաստերը ցույց են տալիս, որ բացի արժեքներից, գներից և փոխարժեքից՝ կան նաև այլ գործոններ, որոնք նույնպես կարևոր են մրցունակության մեջ: Օրինակ՝ տեխնոլոգիան դիտարկվել է որպես աճի հիմնական հզոր աղբյուր, և տեխնոլոգիական բացով է պայմանավորված երկրներում արտադրողականության աճի տարբերությունը [8]:

### ***Դինամիկ մոտեցում***

Կատարյալ մրցակցության աշխարհը ստատիկ է: Իրականում մրցակցությունը գործընթաց է, և ընկերությունները պասիվ չեն: Ձեռնարկատերերը նախաձեռնում

են նորարարություններ և ռազմավարական գործողություններ ապրանքները, գները, տեխնոլոգիան փոխելու և ճաշակի ու շուկայի կառուցվածքի վրա ազդեցություն գործելու համար: Ուստի, մրցունակությունը դինամիկ հասկացություն է: Մրցունակության նկատմամբ դինամիկ մոտեցումն ունի հետևանքներ մրցունակության սահմանման և այն օժանդակող գործոնների համար և՛ ընկերության, և՛ պետության մակարդակներում [9]: Ընկերության մակարդակում միայն շուկայում մասնաբաժին ունենալը չէ նպատակը, այլ նաև եկամուտը և աճը: Այդ պատճառով ազգային մակարդակում արտահանման ընդլայնումը չպետք է դիտարկվի որպես երկրի քաղաքականության նպատակ, և մրցունակությունն է, որ պետք է օժանդակի բնակչության կենսամակարդակի բարելավմանը և զբաղվածության աճին: Հետևանքներից մեկն էլ այն է, որ գնային և ոչ գնային գործոնները մրցունակության մեջ պետք է դիտարկվեն դինամիկ համատեքստում: Այս շրջանակի և համատեքստի միջոցով է հնարավոր սահմանել մրցունակությունն ընկերության և ազգային մակարդակներում՝ կապելով այն ինդուստրացման և զարգացման գործընթացի հետ, ինչպես արվում է զարգացած երկրներում:

*Հոկտեմբեր, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. OECD (Organisation for Economic Co-operation and Development). 1992. *Technology and the Economy: The Key Relationships*. Paris: OECD.
2. *Krugman, P.* 1984. 'Import Protection as Export Promotion: International Competition in the Presence of Oligopoly and Economies of Scale'.
3. *Reinert, E.* 1994. 'Catching-up from Way Behind: A Third World Perspective on First World History'. In J. Fagerberg, B. Verspagen and N.V. Tunzelmann (eds), *The Dynamics of Technology, Trade and Growth*, 168–97. Northampton: Edward Elgar.
4. *Shafaeddin, M.* 2005. *Trade Policy at the Crossroads: Recent Experience of Developing Countries*. New York and Basingstoke: Palgrave Macmillan
5. *M.Kalecki*, 1971. *Selected Essays on the Dynamics of the Capitalist Economy, 1933–70*. Cambridge: Cambridge University Press.
6. *Shafaeddin, M.* 2005. 'Towards an Alternative Perspective on Trade and Industrial Policies'. *Development and Change* 36.6: 1143–62.
7. *Schumpeter, J. A.* 1934/1976. *Capitalism, Socialism and Democracy*. London: George Allen and Unwin Ltd.
8. *Krugman*, 1986. 'A Technology Gap Model of International Trade'. In K. Jungenfeld and D. Hague (eds), *Structural Adjustment in Advanced Economies*. London: Macmillan.
9. *Almeid, R.* and *A.M. Fernandes*. 2008. 'Openness and Technological Innovations in Developing Countries: Evidence from Firm-Level Surveys'. *Journal of Development Studies* 44.5: 701–27.
10. *Corsino, M., G.Espa, G.* and *R.Micciolo*. 2008. 'R&D, Firm Size, and Product Innovation Dynamics'. Department of Computer and Management Science, University of Trento, Italy, Working Paper No. 3.
11. *Justo, R.* 2003. 'Beyond the Local Productive Systems Model: Towards an Approach Combining Local and Global Sources of Competitiveness'. Paper presented at the 'Conference on Clusters, Industrial Districts and Firms: The Challenge of Globalization', Modena, 12–13 September.

**ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՆՐԱ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

*Հասմիկ Խուրշուդյան*

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում են վերջին երեք տասնամյակներում գլոբալ տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները և դրանց հետևանքները զարգացող երկրների մրցունակության վրա: Հիմնվելով տարբեր հեղինակների աշխատությունների վրա՝ ներկայացվում են մրցունակության սահմանումը և մրցունակության խնդրին վերաբերող մոտեցումներն ու բազմաթիվ, բայց և հակասական կարծիքները տնտեսագիտական գրականության մեջ: Դիտարկելով և համեմատելով տարբեր տեսական մոտեցումների թերություններն ու առավելությունները՝ փորձ է արվում հասկանալ մրցունակության բնույթը և հստակեցնել այն գործոնները, որոնցով պայմանավորված է մրցունակությունը:

**ПОНЯТИЕ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ  
И ЕГО ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ**

*Асмик Хуршудян*

Резюме

В статье рассматриваются изменения в мировой экономике за последние три десятилетия и их влияние на конкурентоспособность развивающихся стран. Основываясь на работах разных авторов, представлено определение конкурентоспособности и подходы, касающиеся вопросов конкурентоспособности, а также различные, в том числе противоположные, мнения по данному вопросу в экономической литературе. Изучая и сравнивая преимущества и недостатки различных теоретических подходов делается попытка понять суть конкурентоспособности и прояснить обуславливающие ее факторы.

**THE CONCEPT OF COMPETITIVENESS AND ITS ECONOMIC CONTENT**

*Hasmik Khurshudyan*

Resume

Changes in the global economy during the last three decades and their implications for the competitiveness of the developing countries are analysed in the article. Based on the works of different authors the definition of the competitiveness, as well as the approaches to and numerous, but contradictory opinions regarding the issue of competitiveness that exist in the economic literature are presented. Observing and comparing the advantages and disadvantages of different theoretical approaches, an attempt is made to understand the essence of the competitiveness and clarify its underlying factors.

## ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնասխնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

### Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
  - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
  - *Շարիպովա Ք.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
  - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

*Խմբագրություն*

**«21-ԲԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես**  
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ Արդարադատության նախարարության  
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.  
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ՝ [21dar@noravank.am](mailto:21dar@noravank.am), [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46  
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղդասյան

Հանձնված է տպարան 14.11.2016թ.  
Թիվ 6 (70), 2016թ.  
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16  
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen  
Տպագրվել է «ԹԱՄԿ» ՍՊԸ տպարանում